0-90

ԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՏՈՀՄԻՆ
ԱԲԵԹԵԱՆ

րինեցեալ ՚ի Մովսէսէ֊
որենացւոյ, յեռամեծ Վար֊
դապետէ, և յոգներախտ
Քերթողահօրէ։

276

Ի խնդրոյ Պայազատասպետի
Սահակայ Բագրատունւոյ։

Հարազատ, և բուն Պատմութիւն Նախ֊
նեացն Առաջնոց, Թագաւորաց, Իշխանաց,
Նախարարաց, և Հայրապետաց
Արամեան Ազգին։

Սկսեալ ՚ի Հայկայ Քաջէ, մինչև ց՚Ար֊
տաշէր Թագաւորն մեր։

Ի լոյս ածեալ Տպիւք, և Ծախիւք
Թովմայ Վանանդեցւոյ, Վեհափայ֊
լի Եպիսկոպոսի, և բազմաջան
Վարդապետի։

այրապետութե՟ն Սրբոյ Էջմիածնի Տ՟ն
ապետի ա՟մ Հայոց Կաթողիկոսի։

ԱՄԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ
ԲԱՆԻՆ, 1695։

ԱՄՍՏԵԼՕԴԱՄ

ՍՏՈՒԳՎԱԾ Է

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1958

Թորգոմազնեայս այր պատուական.
յօգնահանճար, և քաջաբան:
Ող ոսկեշար երեք կարգեան.
տըրոհելով ըստ պահանջման.
Սերայնոյ իսկ լեալ Տէրութեան.
և այլազնեայցըն դիմեցման:
Ամանակաւ նոցին կալման.
ցուցանէ մեզ անսխալական.
Հիմն զրուցաց մեր նախնական.
ըզ Հայկ ասեմ՝ զմեծ ախոյեան:
Գանգուր վարսիւք գեղանշան.
զբէլ կործանեաց՝ զոստ քանանեան:
[illegible]մ կըցորդ նորին արեան.
[illegible] դհատ նոյն քաջութեան:
[illegible]ա՝ զօրեղ Արքայն Տիգրան.
նոր նորոգեաց ըզ ցեղ Հայկեան:
Առիւծաբա՛ր մռնչելով.
զխումբ թշնամեաց հալածելով:
Նպաստ առեա՛լ իսկ յԱստուծոյ.
անու՛ամբ հըզօր յորջորջելոյ:

Prover. 8. 15, 16.
Per me Reges regnant, & legum conditores juſta decernunt.
Per me Principes imperant, & potentes decernunt juſtitiam.

Ա յոյնէն բառ առ բառ։
Ինեւ թագաւորք թագաւորեն, եւ օրինադիրք զարդարս դարակեն։
Ինեւ իշխանք հրամայեն, եւ կարօղք վճռեն զարդարութիւն։

Որ է ըստ մերոյ թարգմանութեան։
Ինեւ թագաւորք թագաւորեն, եւ հզօրք գրեն զարդարութիւն։
Ինեւ մեծամեծք մեծանան, եւ բռնաւորք ինեւ ունին զերկիր։

Առակաց Գլուխ, 8։ 15, 16։
Աստուածաշունչ Ոգին այն ո-
գեաց մեզ,
որ էր.

Մեռնի Զերմաղ՝ Տոհմի Ռնջեղ.
Արեամբ Աչնիւ, Ոստամբ Ճրէղ։

Առ համայն Ընթերցօղս Հայաստանեայց ։

Քաջավարժից և Հմտագունից, Հարց, և Եղբարց Ուսումնասիրաց բացայայտութիւն սակաւուք, սակս առաջիկացելոյ Գրոյս, Առնս մեծի Մովսէսի Խորենացւոյ․ զորոյ զգտանելն, ամ՟ուրեք սուղ՝ և պակաս․ որպէս պարզագոյն է բանասէր Տեսողաց։ Աստի և իմ նայելով յայսպիսի աղէտ անբերելի, բարւոք վարկայ տպագրել Թուովք նուազիւք, վասն անձեռնտու գոլոյ տեղւոյս․ քանզի յարուցմունք պատերազմաց՝ և հեղմունք անբաւից արեանց, սասանեցուցին զբնաւ՝ և զբոլոր կալուածս Եւրոպայու, որք միշտ՝ հնչեն՝ և գոչեն յունկն լսողաց ամենեցուն։ Աստի ես անպիտան, ունայն, և թափուր յամենից լաւաց՝ և օգտակարաց, Թովմաս ծառայ ծառայից Ա՟. Տ՟ ՚ի վայելուչ Քաղաքէ Վանանդու Գողթնեաց, ձեռնամու՝խ եղեալ տպեցի զԶքնաղավէպ՝ և զԳեղեցկաշար Պատմութիւնս, Նախնեաց մերոց, և Հայկազունեաց Տոհմի․ համեղ՝ և ախորժալուր ոճիւ։

Սկսեալ 'ի հօրէն հանուրց Ադամայ ց'Նոյ. և անտի յառաջ մինչև ցաշտարակն, և ց'Աբրահամ, համառօտիւ, և կարճախօսիւք. սակս բազմաց` և յոլովից Պատմագրաց, որք նախ, քան` զնա խօսեցան լիով` և անթերի զյառաջնոց նախնեաց իրողութեանց. և սա ևս զերիս որդւոյն` Նոյի, զսերունդս` և զտոհմունս առեալ իջանէ. 'ի յիշատակ` և յանդիման առնելով զիրս գլխաւորս, և արժանիս ճառելոյ` և լսելոյ. և այսու տարազու խաղայ ց'յամն մեծին Աղեկսանդրի, և քաջին Արշակայ Պարթևի: Իսկ զկնի այսորիկ` բուռն հարէ̃լ զմերայնոց տոհմից. զՔաջաց` և զԱտոց, յաճախաբար, և երկայն խօսիւք ածէ ց'ժամանակ, և ց'ամն կենաց իւրոց. յարելով 'ի նոյնս` և զտէրութ̃ն Պարսից, վ̃ն ընտանի, և մերձաւոր գոլոյ նոցին, 'ի պատճառս Վաղարշակայ, Եղբօր մեծին Արշակայ Պարթևի. յորոց Սերընդոց, և Տոհմէ, բողբոջեցաւ, և Լուսաւորիչն մեր, Սբ̃ն Գրիգոր: Որով ծաղկեցաւ, և շքեղազարդ պայծառացաւ հանուր Ազգ մեր, և Նորկեր, Ուղղափառ հաւատով՝ և բարեպաշտ վարուք։ Գնէ կից սոցին, և զՄեծազօր Կայսերական Իշխանութի՟ն Հռովմայեցւոց· որք ո՛չ սուղ՝ և պակաս իշխեցին՝ և ընդ ձեռամբ արարին զերկիր մեր, և զԱզգ, որք կային ՚ի բաժնի կողմանցն Յունաց, առնլով զհարկս յայնցանէ, ամ յամէ։ Եւ զայսոսիկ ծանրութի՟՝ և զաշխատ յանձն առնու, Մեծահանճար, և յոքնիմաստ Այրս Մօսէս, ՚ի հասակի ծերութե իւրոյ, որ ուսուցանէ մեզ առած նորին՝ և բան· ՚ի խնդրոյ Սւմեա՟ն Մեծի, և բարեպաշտի Իշխանի, Սահակայ Բագրատունւոյ։ Այլ և ունիմք արտաքոյ սմին Գրոյ, զբազում Արդիւնս Յեկեղեցւոյ մերում· որ, [illegible] նման Շարականաց, և յոլով երգս նո[illegible]· Մեղեդեաց, և Տաղից ղոնաղանեաց։ Այլ և զԳիրս, և հնամաւոր զրոյց· յաղագս Բոլորից աշխարհաց՝ Երից մասանցն· Եւրօպայոյ, Ափրիկոյ, և Ասիոյ ընդարձակապէս։ Իսկ ժամանակ Երանելոյ առնս 148 ամաւ յետ Գրիգորի Լուսաւորչին մերոյ· և 110 ամաւ յառաջ քան զԹուականն Հայոց։ Արդ՝ ես նուաստս Թօմաս, աղաչեմ զդասս պարզունակ Մեհից

րն

ընթերցողաց զարժանի սիրոյ, և մեծարանաց ունիլ՝ զայս այր բազմահմուտ և աշխատասէր, յայտածօղ՝ և հաւաքօղ զրուցացս Ճշմարտագունից։ ըստ յորդորելոյ Առաքելոյն. առաջին Թեսաղոնիկեցւոց 5. 12։ Աղաչեմ զձեզ եղբարք, ճանաչել զվաստակաւորս ձեր և այլն։ զի Նոքօք ազատիցուք և մեք, լեալք երախտահատոյցք մերոց բարերարաց։ 'ի փառս, և'ի Գովութիւն, 'ի Պատիւ, և յերկրպագութիւն Ամենասրբոյ Երրորդութեանն, միշտ՝ և յաւէտ յաւիտեանս. Ամէն։

✠

Ընծայէ ծաղիկ բերկրութեան.
ցանկալի ազգին Արամեան։
Լուսամեծն Սանանդեան.
Թօմաս Նուրիջանեան։
Սորին Հօրեղբօր որդի.
Ես մատթէոս շարեցի։

Յանձնարարութեան և համառօտեալ հրաւէ
րութե, առ խումբս ընտրելագունից դասուց,
Սրբազանից Առաքելոց Մերոց. աղերսե
լով յօգնութե և յայցելութեան մեզ Աղօթա
ւորելոյս:

Ճ՛ՇՄԱՐՏ-ՕՐԷ՛Ն ԵՒ

քաջ ուղէշ արմաւենիք, 'ի տան Ա՟յ տնկեցեալք, բազմազան, և քաղցրաճաշակ պտղովք առլցեալք. որոց մատուցմամբ և տարածմամբ. զմեծ մասն ազգի մարդկան, ուռկանաւ սիրոյ համահաւաքեալ յօդեցիք 'ի Գաւիթ Ք՟Ի Ա՟յ մերոյ: Աղբիւրք Յելիմայ, յորոյ քաղցրահոս վտակաց անսպառաբար արբուցանէք միշտ՝ զծարաւ և զպասքումն հօտին Ք՟Ի. 'ի վայրի դալարույ տածելով զնոսա: Այլ և ըստ ջրոյն մեռայի, 'ի քաղցրութ՟ն փոխարկեալ զդառնութ՟ն թունաւորին, զոր եհեղ 'ի բնութիւնս մեր. որոմնացան թշնամին, զոր ձերովք քրտամբք և արեամբք 'ի բաց խըլեալ յարմատոց՝ սրբեցիք զանդս և զտաղաւարս հոգւոց մերոց. կաղմելով և յարդարելով զմեզ տա ճար և օթեվան Սրբոյ Երրորդութեանն։ Ակունք պատուականք ը վակասին Ահարոնեան· իսկ դուք ’ի վակասում Անմահին ընդելուզեալք յեկեղեցի և ’ի հաւատ Քի· զանազանիւք օրինակօք յիրս երկոտասանս տարորոշեալ· որովք յարազուարճ բերկրութբք զարդարեալք և պճնաւորեալք, անսայթաք ընթանան զհետ Քրիստոսի Այ մերոյ։ Աղ և Լոյս անուանեցեալք, ’յԱնեղ և յանստեղծ լուսոյն· որ զանհամութի ազգի մարդկան, և զխաւար տգիտութե մերժեալ· լցիք լուսով իմաստութե ձերոյ· այլ և զքաղցրութի և զանուշութի գեղեցկաճաշակ հոգևորաց վայելմանց, մատուցանէք և ջամբէք միշտ խնդրողաց ամենեցուն։ Տնտեսք հաւատարիմք, և իմաստունք· ’ի տան ամենակալին Այ· առ ’ի զկերակուրն հոգւոց պարգևելոյ և ’ի ժամանակի իւրում մատուցանելոյ· զոր Որդին Մարդոյ տայ յաւէտ ըստ խոստմանն իւրոյ։

Դրունք Երկոտասանք ըստ Տեսլեան Սրբոյն Յոհաննու· Քաղաքին Սրբոյ· ուստի և մեք անարժանք ժա՛նք և անարդիւնք. արդիւնաւոր լիցուք մտանել ընդ Դրունսն ընդ այնոսիկ. 'ի Քաղաքն Սբ̄, հայցմամբ և մաղթանօք ձերովք:

Այլ և Դատաւորք և հատուցանողք կարգեալք և կնքեալք յԱրարչէն ամենեցուն, յաւուրն աներեկի. զնոյն զինքն Եկեղեցին. առ ձեզ կալցուք միջնորդ և բարեխօս, ո՛չ առնել անտես. զԳինս Արեան Տ̅ն ձերոյ և մեր իսկ. մանաւանդ զտոռամբ մեղաց կապեալս զԹօմա՛ս՝ սպասաւոր բանի, հանդերձ առընթեր եղելովքս իմովք Մաթէոսիւ և Ղուկասու. 'ի փառս՝ և 'ի Պատիւ, Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն Սրբոյ.

Ամէն:


ԵՍ
ԵՄ
ԴՈՒՌՆ
ՈՉԽԱՐԱՑ:
Յոհ. Գլ. ժ: տ. 7:
Ճշմարտութի
Պատմութի
Գընայք Գետոց յարահընչէն,
զճշմարտութիւն միշտ քարոզէն :

Մովսէս Խորենացի Սահակայ Բագրատունւոյ՝ խնդրանաւ։

ԶԱՆՁՍ ՊԱՐԳԵՒ ԳԱՑՄՈՒՆՍ ԱՍՏՈՒԱԾԱՅՆՈՑՆ Ի ՔԵԶ ՇՆՈՐՀԱՅՆ, և զանդուլ հոգւոյն ՚ի վերայ քոյ իմացուածոյդ զշարժմանն՝ ծանեայ ՚ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, առաջ քան զմարմնոյդ, զհոգւոյդ ընկալեալ զծանօթութ՟ի. որ և սիրելի իմոց իսկ ախորժացս է՛, առաւել և՛ս սովորութե՟յս։ Սորոյ, և ո՛չ միա՛յն գովել արժա՛ն է՝ զքեզ. այլ և ՚ի վերայ քո աղօթել՝ առ ՚ի լինել քեզ միշտ այսպիսի։ Զի եթէ մա՟ բանին. Մեք (ոպ՟ ասի՝) Պատկեր Ա՟յ։ Նաւ դարձեալ՝ առաքինութ՟ի բանականին, է՛ խոհականութ՟ի, և քո յայսմիկ անհատ ցանկութի՟ ապա՛ ուրեմն գեղեցիկ մտածութե՟ զխոհականութե՟դ քո՝ վառ, և բորբոք պահելով զկայծակն, զարդարես զբանն, որով մնաս առ՚ի լինիլն պատկեր․ ՚ի ձեռն որոյ և զայսորիկ զՍկզբնատիպն ասիս ուրախացուցանել․ գեղեցիկ, և չափաւոր մոլութե՟ յայսմիկ մոլեալ և զակատեալ։ Ու որով տեսանեմք և զայս․ զի եթէ, որք յառաջ քան զմեզ՝ և կամ առ մեօք եղեն ÷արուստք, և Իշխանք աշխարհիս ÷սյոց, ո՛չ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեօք գտեցելոց իմաստնոց, զայսպիսեցս հրամայեցին կարգել զյիշատակս բանից՝ և ո՛չ յարտաքուստ ուստեք այսոցիկ ՚ի ներքս ածել խորհեցան, զօժանդակութի՟ս իմաստից, և քեզ այսպիսի այժմ եղեալ ծանեաք։

Ապա՛ յա՛յտ է՛ ուրեմն թէ, ամենեն քան զքեզ նախադունիցն Ճանաչիս մեհագոյն, և բարձրագունից արժանաւոր գովութեանց, և յայսպիսիս պատկանաւոր գտնիլ յարձանագրութիս բանից։ Յաղագս որոյ, հեշտաբար ընկալեալ զքո խնդիրդ՝ աշխատասիրեցայց ածել ՚ի կատա րումն, յանմահ 'ի յիշատակ թողուլ զայս քեզ. և որ զկնի քոյ ինքնեն գալոց ազգք: Օի, և ազգի ևս նախնականի, և քա՛ջ՝ և արգասաւոր, ո՛չ միա՛յն 'ի բանս և 'ի պիտանաւոր խոհականութիւն: այլ և 'ի մեծամեծս և 'ի բազում գործս արժանափառս՝ զորս յիշատակեսցուք 'ի կարգի պատմութեանս, յորժամ զորդի 'ի հօրէ ծննդաբանելով, ազգաբանիցեմք զբովանդակն: Իսկ զՀայաստանեայցս նախարարութիս զամենեցուն զնւաստն. և ընդ՝ զի՛ արդն՝ յայտնելով համառօտ, որպէս հաւաստի. 'ի Յունականս ոմանս կա՛յ պատմութիւնս:

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Գլուխ ա̅ I

Թէ՝ ընդէ՞ր ճառանք ՚ի Քաղդէացւոց՝ և յԱսորեստանեայց մատենից, յանհնագոյն են մեր երք․ ՚ի Յունականէն հաւաքեալ մեք ցուցանել։

ԵՒ ԸՆԴ ԱՅՍ՝ ՄԻ ՈՔ ԶԱՐՄԱՍցի, եթէ բազում ազգաց լեալ Մատենագիրք, ոպ̃ ամենեցուն է յայտնի, մանաւանդ Պարսից, և Քաղդէացւոց․ յորս առաւել ազգիս մերոյ կտանին բազում ինչ՝ իրաց յիշատակք․ մեք զՅունաց միայն յիշեցաք զՊատմագիրս, և անդուստ զյայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս․ խոստացաք յան յանդիման կացուցանել: Վասնզի, ո՛չ Թագաւորք Յունաց միայն, ո՟ք աշխարհակալութե՟. այլ և որ ինչ իմաստութ՟են ջանք՝ փոյթ յանձին կալան, աւանդել Յունաց՝ յետ զաւանին իւրեանց յարմարեալ իրս: Ո՟պ և Պտօղոմէոսն, որ և Եղբայրասէրն, պէտ արարեալ՝ զա՟մ ազգաց. զՄատեանս և զպէտս՝ 'ի Յոյն լեզու փոխարկեալ: Բայց միոք աստանօր՝ անուսումն զմեզ համարեալ բամբասիցէ՝ իբր զանվարժս ոմանս և զտգէտս՝ ո՟պ թէ Եգիպտացւոյ լեալ Թագաւոր. մեք այժմ զնա Յունաց գրեցաք: Վասնզի նուաճեալ ն՟ր և զՅո՛յնս՝ ընդ իւրով ձեռամբ՝ անուանեցաւ Աղեկսանդրի և Յունաց Թ՟գր. ո՟պ և ո՛չ մի զոք 'ի Պտօղոմեանցն. կամ յայլոցն տիրելոյ Եգիպտացւոցն, անուանեցաւ ո՛ք երբեք: որ և վ՟ն առաւել Յունասէր բարս ունելոյ՝ 'ի Յոյն լեզու՝ զիւր աշխատութիւնն ժողովեաց: Է՛ և այլ բազում այսպիսի՝ ինչ պատճառ՝ վ՟ն ասելոյն մեր զնա Յունաց Թ՟գւր: այլ վ՟ն համառօտելոյ մեզ զճառս՝ բաւական լիցի՝ ասացեալս վ՟ն ն՟ր: Այլ և

բա

բազում Արք անուանիք՝ և իմաստութե՟ պարապեալք ՚ի Յունաց աշխարհէն հոգացան, ո՛չ միայն զգիր Դիւանաց այլոց ազգաց Թագաւորաց՝ և զՄեհենից յեղուլ ՚ի Յոյն բան. ո՟պ գտանեմք զայն, որ և զԼերիոս ա՟մն յայս յորդորեաց. Այր Քաղդէացի՛ և վա՛րժ ա՟մ իմաստութե՟: Այլ՝ և զմեծամեծս՝ և զզարմանալեաց արժանաւորս յարուեստից. և ուրե՞ք ուրե՞ք գտեալ աշխատութե՟. հաւաքեալ փոխեցին ՚ի Յոյն լեզու: ո՟պ՝ զա՛յբ՝ առ քէ՛: և ըզ՝ զա՛յ, և ըզ՝ Թօ՛յ, առ փիւր: և ըզ՝ կէ՛նն, առ Ե՛չ: և ըզ՝ շայ, առ սէ՛: (Այսինքն, Ալէֆ՝ Քաղդէացւոց՝ առ Խէ՝ Յունաց: Օէ՝ և Թէ՝ Քաղդէացւոց՝ առ Փսէ՝ Յունաց: Պայէն՝ Քաղդէացւոց՝ առ Նոխր՝ Ե՛ Յունաց: Շէն՝ Քաղդէացւոց՝ առ Սէգմա՝ Յունաց:) Եւ ժողովեալ զայսոսիկ արանց՝ զորոց և մեք զանուանսն հաւաստի գիտեմք նուիրեցին ՚ի փառս Հելլենացւոց աշխարհին: Եւ գովելիք են՝ ո՟պ իմաստասիրեցեալքն յաղագս ջանին և իմաստութեանն՝ առ ՚ի յայլոցն լինելոյ գրտակք, առաւել ևս՝ որք ընկալան՝ և պատու եցին զայսպիսի Գիւտս իմաստից ։ Սորոյ՝ և զբոլոր եւս զՅոյնս, ո՛չ գա՛նդաղիմ, Մայր՝ կամ Դայեակ աւել իմաստից. և վասն Յունացն զրուցաբանս՝ զակնարկութի մերոց պիտոյից առնելոյ՝ բաւական է այսչափ ։

Պրակ Բ 2

Յաղագս՝ անիմաստասէր բարբառոյ. Առաջնոցն մերոց Թագաւորաց՝ և Իշխանաց ։

ՍԱմիմ և ո՛չ զանիմաստասէր բարբառս, Առաջնոցն մերոց Նախնեաց, առանց յիշատակի բամբասանաց թողուլ՝ այլ և առաւել իսկ 'ի սկզբան մերոց գործառնութե՟ս, զի՛ լոնց կշտամբութե՟ յարմարել զբանս ։ Օ՛ի թէ՝ արդարև՝ գովութե՟ արժանի այնք 'ի Թագաւորաց իցեն. որք գրով և պատմութեամբ՝ զիւրեանց կարգեցին հաստատել զժամանակս, և զգործս իմաստութե՟, և զքաջութի իւրաքանչիւր՝ արձանացուցին, 'ի վէպս և 'ի պատմութիս ։ Ըստ նոցանէ, և պարապելքն այսպիսեաց ճգնութե՟ց. Դիւանագիրք մատենից. ներբողականաց 'ի մէնջ արժանի եղեն ասից ։ 'Ի ձեռն որոց, և մեր ընթեռնուլն՝ զառ 'ի նոցանէ շարածս բանից, ըստ աշխարհօրէն կարգաց, իմաստնանալ առեմք, և քաղաքականս ուսանիլ կարգս։ յորժամ զայսպիսիս ընթերցասիրեմք իմաստութ՟ե ճառս և զրուցատրութ՟իս, որք են Քաղդէացւոց, և Հելլենացւոց, Ասորեստանեայց՝ և Եգիպտացւոց։ Առայսոքիւք, և փափագիցեմք ևս արդեօք՝ իմաստութ՟ե արանցն այնոցիկ, որք՝ զայսպիսի փոյթ յանձին կալան։ Ապա՛ ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է՝ Թագաւորացն մերոց, և այլոցն Առաջնոց, առ 'ի յիմաստն աղամարութ՟ի, և անկատարութ՟ի ոգւոյն բանականի։ Զի թէպէտ, և եմք ածու փո՛քր. և թուով յոյժ՝ ընդ փոքու սահմանեալ՝ և զօրութ՟ե տկար, և ընդ այլով՝ յոլով անգամ նուաճեալ Թագաւորութ՟ե։ Սակայն՝ բազում գործք արութ՟ե գտանին գործեալ և'ի մերում աշխարհիս. և արժանի գործոյ յիշատակի. զորոց՝ և ո՛չ մի ոք 'ի նոցանէ պէտ յանձին կալաւ մատենագրել։ Արդ՝ այնոքիկ՝ որք, և ո՛չ անձանց խորհեցան բարի առնել՝ և ա նուն յիշատակի աշխարհի թողուլ. զի՞ արդեօք և մեղադրութիւն մեր՝ այնպիսեացն 'ի ձեռն պատահիցէ. զևս մեծագոյնս 'ի նոցանէ պահանջել՝ և որ ինչ հընագոյն քան զնս: Այլ՝ ասիցէ ոք արդեօք. մի՞ ոչ լինելոյ Գիր, և Դպրութի 'ի ժամանակին. կամ, մի՞ պէս պէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի անհետ 'ի վերայ դային: Այլ ոչ արդարև՝ այսոքիկ կարծեցելք լինին. քանզի, գտանին, և միջոցք լեալ պատերազմացն՝ և գիր Պարսից, և Յունաց՝ որովք այժմ, գեւղից՝ և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեց, և հանուրց հակառակութեց, և դաշանց այժմ առ մեզ գտանին անթիւ զրուցաց մատեանք. մանաւանդ՝ որ սեփհական ազատութե Պոյազատութի: Այլ ինձ թուի ոչ այժմ, և առ հինն Հայաստանեայց, լեալ՝ անսիրելութի իմաստութե, և երգարանաց բանաւորաց. մի՞ որոյ, աւելորդ է մեզ, և սոյլ՝ յաղագս անբանից արանց՝ թուլամտաց վայրենեաց ձառել: Բայց ես քո յոյժ զարմացեալ եմ, ընդ մտացդ ծնընդականութի.

որ ՚ի սկզբանց մերոց Ազգաց մինչև ՚ցայժմուս միայն գտար՝ զայսպիսւոյ իրէ՝ բուռն հարկանել. և մեզ խո՛յզ խնդրոյս առաջի արկանել՝ երկա՛ր, և շահաւոր գործով՝ զազգիս մերոյ կարգել զՊատմութ̅ի, ճշդիւ զԹագաւորացն և զՆախարարականացն ազգաց և տոհմից. թէ, ո՞վ յումմէ. և, զի՛նչ՝ իւրաքանչիւրոք ՚ի նոցանէ գործեաց. և ո՛վ ոք ՚ի ցեղից որոշելոց՝ ընտանի, և մեր ազնիւ. և՝ ո՛յք ումանք ե՞կք ընտանացեալք, և մեր ազնւացեալք։ Եւ ըզգործս՝ և զժամանակս իւրաքանչիւր գրով դրոշմել՝ ՚ի ժամանակէ անկարգ Ամբարտակին շինուածո՛յ մինչև ՚ցայժմ։ Գեղեցիկ զայս քեզ համարեալ ՚ի փառս՝ և անջան հաշտութ̅ի։ Ու որ այսչափ միայն ասացից։ Մի՛ թէ մատեան մերձ կայցէ ինձ ո՞չ ասէ Յօբ. կամ դպրութ̅իք քոց Հայրենեաց. որովք նմանագոյնք արդեօք Եբրայեցւոցն Պատմագրաց. ՚ի վերուստ ՚ի քեզ իջուցանեմ անսխալ. կամ ՚ի Քէն՝ և այլոց սկսեալ՝ անդր ՚ի վեր հանիցեմ, ՚ի սկիզբն։ Բայց սակայն՝ ըսկսայց թէպէտ և ջանիւ միայն. թէ և շնորհա կալ ո՛ք մերոյս դատանիցի լեալ աշխատութենց։ Եւ սկսայց յորոց և այլքն. որք՝ յեկեղեցւոջ, և ոչ ըստ Եի՟։ Աւելորդ համարելով զարտաքնոյն երկրորդել՝ յաղագս 'ի սկզբանն առասպելս։ Բայց եթէ՝ զկնիսն ժամանակ ինչ արդեօ՛ք. և զարս յայտնիս. որում և Ծայինքն 'ի ճահ գայցեն պատմութիւնք բանից. մինչև 'ի հարկէ երթեալ հասանիցեմք 'ի Հեթանոսականսն՝ զրուցակարգութիւն. սակայն՝ և 'ի նոցանէ, զոր ինչ հաւաստին կարծեմք առնուլ։

Պրակ Գ՟ 3

Յաղագս՝ զի՛ ոչ՝ ամաց Ադամայ. և այլոց Նահապետացն՝ միաբանեցան Այլք 'ի Պատմագրաց։

Յաղագս Արմատոյն հանուրց մարդկութեան. կամ թէ՝ հաճոյ ումեք թուեսցի ասել ծայրին. պարտէր մեզ սակաւ ինչ անցանել բանիւ. թէ ընդէ՞ր հակառակ Հոգւոյն խորհիլ անմիաբանեցան՝ Այլքն 'ի Պատմագրաց։ զԲերոս ասեմ, զբազմավէպն՝ և զԱբիւդենայ։ կամ զնոյն ինքն զՆաւակառուցեն՝ և զայլոց Նահապետացն։ ո՛չ

մի

միայն վ՟ն անուանց՝ և ժամանակաց՝ այլ՝ վ՟ն ո՛չ ընկլիզըն զառ՚ի մէնջն հաւացն կարգելոյ ազգի մարդկան: Քանզի ասէ վ՟ն Նորա Աբիւդենոս՝ հանգոյն այլոյն: այսպէս և զնա ամենախնամն Ա՟ծ՝ եցոյց հովիւ՝ և առաջնորդ ժողովրդեանն: Յետ՝ որոյ ասէ թագաւորեաց Աղորոս շա՛րս տասն. որք լինին ամք. 36000. նոյնպէս՝ և յաղագս ՙՆոյի. այլով անուամբ վարին՝ և ժամանակօք անբաւիւք. թէպէտ և վ՟ն ջրոյն սաստկութե՟ն՝ և ապականութե՟ն երկրի՝ զոյգ հոգևորայն բարբառին բանից:

ՙՆոյնգունակ՝ և զթի՛ւ ՙՆահապետացն՝ տասն Քսիսութրեաւ համդերձ թուէն: որ ո՛չ միայն՝ ըստ բոլորման առ՚ի յարեգակնէ. չորեք ժամանակեան ըստ մեզ լինելոյ տարւոյն հեծանւոյ յամաց մերայնոցն, մանաւանդ՝ թէ և յԱ՟ծայնոցն: այլ՝ և ո՛չ ոմ՟ն Եգիպտացիքն զլուսնականսն հաշուին ծագմունս. նա՛ և ո՛չ զառ՚ի դիցն ոմանս ասացեալս. եթէ տարիս ոք վարկցի զուգեալ համեմատեն Յոյն թուոց առարկութե՟ցս առ՚ի հաւաստել ճշմարտութե՟ն. երբեմն նուազ՝ և երբեմն

աւել

սաստիկ՝ զհաւաքումն գումարելով։ Արդ՝ օրէն է մեզ աստանօր զկարծիս նց՟ յայտնել՝ թէ զինչ իւրաքանչիւրոք 'ի նոցանէ խորհեցան այսպէս, զայսոսիկ գրել։ Այլ վ՟ երկարութեան առաջի կայ գործոյս՝ այլում տեղւոյ՝ և ժամանակի՝ զայսոսիկ թողել՝ հատուսցուք աստանօր զբանս։ Սկսանելով յաղագս այսորիկ՝ ոպ՟ և՝ հաւատացեալ եմք։ Ադամ նախաստեղծն։ Սա կեցեալ ամս, 230 ծնանի զՍէթ։ Սէթ կեցեալ ամս՝ 205. ծնանի զԵնովս։ սր՟ երկուքն յարձանագրութեան՝ ընդդէմ երկուց հանդերձելոցն։ ոպ՟ ասէ Յովսեփոս. թէպէտ և ուրանան յոյժ։ Ենովս՝ որ յառաջին յուսացաւ կոչել զԱծ՟։ Նա ընդէր արդեօք այս, և կամ, վասն որոյ պատճառանաց նախնիս՝ կոչեցեալ կոչեցելոյն զԱծ՟։ և կամ, որպէս՝ կոչելն իմանի։

Քանզի՝ է Ադամ ճշմարտապէս Ա՟ծաստեղծ։ Նա սա՝ 'ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր։ սոյն և յանցուցեալ՝ և թագաւորեան եղեալ։ զո՞ւր եան՝ յԱյ. և ո՛չ՝ յայլմէ ումեքէ հարցանի։ սապէս՝ և զվճիռ վարկին՝ 'ի նորին բերանոյ լուէ։

Իսկ յետոյ՝ և Աբէլ՝ մերձաւոր՝ և ծանօթ Ա՟յ լեալ Պատարագ մատուցանէ՝ և ընկալեալ լինի: արդ՝ ս՟ք այսպէս յընդունելութի՟ և՛ի ծանօթութի՟ Ա՟յ լինիլ. Ե՞ր աղագաւ՝ սա առաջին ասի՝ կոչել զԱ՟ծ՝ և այս Յուսով: Արդ՝ զայլն վ՟ս մ՟ր 'ի տեսութե՟ց 'ի հրաւիրեալն մեր 'յուղարկեսցուք տեղի: Իսկ՝ որ 'ի ձեռն պատրաստն է՝ ասասցուք: Վ՟անզի՝ 'ի պատուիրանազանցութե՟ դատեալ Առաջինն 'ի մարդկանէ· 'ի դրախտէն՝ և յԱ՟յ, չարութե՟ աղագաւ՝ ո՟ր ասացեալ է՝ դատան արտասահմանեալ: Օ կնի և ընտանեգոյն Ա՟յ 'յորդւոցն Ա՟դամայ, 'ի հարազատէն իւրմէ սպանանի 'յեղբօրէն: Յետ՝ որոյ՝ ոչ բանի ինչ Ա՟ծայնոյ՝ և ոչ՝ յայտնութե՟ ինչ իրիք՝ եղելոյ· 'ի տարակուսանս, և 'յանյուսութի՟ ազգ մարդկան հատեցեալ լինի: այլ՝ և ինքնահաճոյ արդարև գործ Յորոց միջի սա՛ քաջայոյս եղեալ՝ ուղղութե՟ հանդերձ, կոչէ զԱ՟ծ: Իսկ՝ կոչելդ՝ կրկնակի իմանի· կամ անուանեալ՝ ո՟ր զմոռացեալ, կամ յօգնականութի՟ կարդալ: Ա՛րդ՝ անուանելն՝ իբրև զմոռացեալ՝ ոչ է 'ի դէպ 'ի դէպ։ զի ո՛չ բազմութիւն ամաց՝ ընդմէջ անցեալ՝ որ 'ի մոռացումն նոցա զԱստուածդ ածէր անուն. և կամ զնոյն ինքն՝ որոյ անունն. և ո՛չ դարձեալ մահու՝ և թաղման դեռևս ըստեղծեալն 'յԱդամ հասեալ։ Ապա՛ ուրեմն՝ յօգնականութիւն կոչէ սա՛ զԱստուած։ Սա կեցեալ ամս՝ 190, ծնանի զԿայնան։ Կայնան կեցեալ ամս՝ 170 ծնանի զՄաղաղիէլ։ Մաղաղիէլ կեցեալ ամս, 165. ծնանի զՅարեդ։ Յարեդ կեցեալ ամս, 162. ծնանի զԵնովք. Ենովք կեցեալ ամս, 165 ծնանի զՄաթուսաղայ. երկերիւր ամս արժանի՝ և հաճոյ՝ վարս ստացեալ՝ ո՞վ գիտէ՝ որ հաճեցաւն, փոխեալ աստի 'ի միջոյ ամբարշտաց՝ զորոյ զպատճառն՝ յետոյ հատուսցուք։ Մաթուսաղայ կեցեալ ամս, 167, ծնանի զՂամէք։ Ղամէք կեցեալ ամս, 188. ծնանի որդի և անուանեաց զանուն նորա Նոյ։

Յաղագս Նոյի։

Եւ ընդէ՛ր արդեօք զսա միայն Որդւոյ անուամբ յորջորջեաց։ Ի՞սկ՝ վասն այլոցն ամենեցուն պարզաբար ասէ թէ՝ ծնաւ. զոր ընդդէմ իմն մարգարէանայ Հայրն. սա՛՝ ա-

մէ

սէ՝ հանգուսցէ զմեզ 'ի գործոց. և 'ի տրտմութենէ ձեռաց. և յերկրէ՝ զոր անէծ Տ՟ր Ա՟ծ ։ Որ եղև՝ ո՛չ հանգիստ՝ այլ ջնջումն՝ որ ինչ միանգամ՝ 'ի վերայ երկրի ։ Ինձ թուի հանգուցանելն՝ դադարեցուցանելն է ։ Իսկ դադարեցուցանելն՝ զամբարշտութ՟ի՝ և զչարիս՝ սաստակմամբ մարդկան զաղտագործաց՝ դարուն երկրորդի ։ Վասնզի՝ դեղեցկաբար ասաց՝ թէ 'ի գործոց մերոց, որ է՛ յանօրէնութենց. և 'ի տրտմութենէ ձեռաց. որովք կատարեմք զպղծութի՟ս ։ Բայց՝ և հանգչին արդարև՝ ըստ այսմ մարգարէութեան. ո՛չ ամենեքին. այլ կատարեալքն յառաքինութենէ ոգիք ։ յոր ժամ չարիք՝ ո՛չ հեղեղաւ ջնջեալ մաքրին, իբրև առ Նոյիւ, մնեալքն 'ի չարիս ։ Իսկ Որդւոյ անուամբ՝ մեծարեաց զնա Գիր, իբր զյայտնի՝ և զնշանաւոր. և արժանաւոր ժառանգ հայրենականացն առաքինութեանց ։

Գլուխ Դ 4

Յաղագս համառօտ գոլոյ. Աշխարհաբնակութ՟է ծննդոց որդւոցն Նոյի. ց'Աբրահամ, և ցը'

Նինոս, և ց'Արամ։ Նոյնէ Նինոս, ոչ Բէլ՝ նոյն որդի Բէլայ։

Նա՛յս յայտնի է ամենեցուն՝ զի դժուարահաւաք, և տաժանելի է՝ ոչ գիտ ժամանակացն 'ի սկզբանէ մինչև առ մեզ. առաւել ևս գիտ որդէծնութ̅ե Նախաբարականաց ծննդոց. յերից անտի որդւոցն Նոյի։ Ց'որքան կամք իցեն խուզել ումեք ը̅ իւրաքանչիւր դարուց։ Մանաւանդ՝ զի Ա̅ծայնոյն գրոյ զիւրումն 'ի բաց հատեալ յինքն սեփհական ազգ Սեմայ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհելեացն. և իւրոցն անարժան կարգելոյն բանից։ Յորոց մեք ընկսեալ ճառեսցուք, որքա՛ն է կարողութ̅ի, որպէս գտաք զհաւաստին 'ի հնոց պատմութ̅եց, մերով մասամբ ամենեւիմբ անսուտ։ Ա՞սկ դու՝ ո՞վ ուշիմ, Ընթերցասէրդ՝ հայեաց աստանօր ը̅ հաստատութ̅ի կարգի՝ երից ազգացդ, մինչև ց'Աբրահամ, ց'Նինոս՝ և ց'Արամ, և զարմացիր։ Սեմ կեցեալ ամն, 100. յետ երկուց ամաց ջրհեղեղին, ըստ Աստուածային բանից ծնանի զԱրփաքսադ։

Ա.Մ

276

ՍԵՄ

1 Սեմ ամս 100 ծնանի զԱրփաքսաթ։
2 Արփաքսաթ ամս 135 ծնանի զԿայնան։
3 Կայնան ամս 120 ծնանի զՍաղայ։
4 Սաղայ ամս 130 ծնանի զԵբեր։
5 Եբեր ամս 134 ծնանի զՓաղեկ։
6 Փաղեկ ամս 134 ծնանի զՌագաւ։
7 Ռագաւ ամս 132 ծնանի ըզՍերուք։
8 Սերուք ամս 130 ծնանի ըզՆաքովր։
9 Նաքովր ամս 179 ծնանի ըզԹարայ։
10 Թարայ ամս, 70 ծնանի զԱբրահամ։

ՔԱՄ

1 Քամ ծնանի զՔուշ։
2 Քուշ ծնանի զՄեստրիմ։
3 Մեստրիմ ծնանի զՆեբրովթ։
4 Նեբրովթ ծնանի զԲաբ։
5 Բաբ ծնանի զԱնեբիս։

6 Անեբիս ծնանի զԱրբէլ։
7 Արբէլ ծնանի զՔայաղ։
8 Քայաղ ծնանի զմիւս Արբէլ։
9 Արբէլ ծնանի զՆինոս։
10 Նինոս ծնանի զՆինուաս։

ՅԱԲԵԹ

1 Յաբեթ ծնանի զԳամեր։
2 Գամեր ծնանի զԹիրաս։
3 Թիրաս ծնանի զԹորգոմ։
4 Թորգոմ ծնանի զՀայկ։
5 Հայկ ծնանի զԱրմենակ։
6 Արմենակ ծնանի զԱրամայիս
7 Արամայիս ծնանի զԱմասիայ
8 Ամասիայ ծնանի զԳեղամ։
9 Գեղամ ծնանի զՀարմայ։
10 Հարմայ ծնանի զԱրամ։

Արդ՝ զԿայնան չորրորդ 'ի Նոյէ՝ ամենայնք 'ի ժամանակագրացն գրեն. և 'ի Սեմայ երրորդ։ Նոյնպ̃ և զԹիրաս չորրորդ 'ի Նոյէ։ Իսկ Յաբեթայ երրորդ։ Թէպէտ՝ ըստ մերում Թարգմանութե̃, ոչ ուրեք 'ի բնագրին՝ գտանի։ Իսկ՝ զՄեստրայիմ չորրորդ 'ի Նոյէ և երրորդ 'ի Քամայ, ոչ 'ի մերում Թարգմանութե̃ն՝ և 'ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք։

այլ

Ա՛յլ՝ այսպէս զսա կարգեալ գտաք ՚ի յՄշմադունէ ումեմնէ՝ եւ Ընթերցասիրէ Ասորոյ։ եւ հաւատարիմ թուեցաւ մեզ ասացեալն։ Քանզի Մեսոպոտամայիմէ՝ Մծբնայիմ․ որ խմանի՝ Եգիպտոս։ Եւ բազումք ՚ի Ժամանակագրաց․ զՆեբրովթ՝ որ է Բէլ Եթովպացի գոլ՝ ասելով։ հաւանեցուցին զմեզ այսպէս՝ հաւաստի լինել․ յաղագս բնակութեան սահմանացն ընդ Եգիպտոս։ Յետ որոյ ասասցուք եւ զայս։ զի թէպէտ եւ ամք ժամանակաց ծննդոցն Քամայ՝ մինչեւ ց՚Նինոս՝ ոչ ուրեք գտանին թուեալ․ եւ կամ թէ առ մեզ՝ ոչ հասեալ․ այլ հաւաստեաւ՝ եւ ոչ նորին ինքեան Նինոսի։ Իսկ մերոյն Յաբեթի ամենեւին ոչ։ Սակայն ասացեալ ազգաբանութ՟իդ հաւաստի է՝ երեցունց ցեղիցն մետասան գոլով ց՚Աբրահամ․ եւ ցը Նինոս․ եւ ց՚մերն Արամ։ զի Արայն երկոտասան երորդ է՝ յետ Նինոսի․ մանուկ տիովք վախճանեալ․ եւ է՛ ճշմարիտ․ եւ մի ոք յերկուասցի․ քանզի՝ պատմէ մեզ զայսոսիկ յոլով իրս․ հաւատարիմն Աբիւդենոս՝ եւ ասէ, այսպէս։ Նինոս Արբէեղայ

Քայ

Գայաղ Արբէեղայ։ Անձերոյ։ Տաբերսոյ՝ Բելայ։ Նոյնպէս և զմերն 'ի Հայկայ մինչև ց' Արայն գեղեցիկ՝ զոր սպանեալ կաթսոն Շամիրամ. Թուէ այսպէս։ Արայն գեղեցիկ. Արամեայ՝ Հարմեայ, Գեղամեայ՝ Ամասեայ՝ Արամօսեայ Արամենակեայ. որ եղև հակառակ Բելայ միանգամայն՝ և կենախուզ։ Նա զայս մեզ՝ Աբիւդենոս յիւրում առաջնում արձանականի 'ի մանր ազգաբանութե՟ ասէ. զոր աստ ուրեմն՝ յետոյ ոմանք բարձին։ Այսոցիկ վկայէ և Կեփաղիոն. քանզի ասէ 'ի միում՝ գլխոյն այսպէս, մանր զամենայն։ յիսկզբան մերոյ աշխատութե՟ս։ սկսաք գրել զազգաբանութիւն 'ի Դիւանացն Արքունի։ այլ առաք հրաման 'ի Թագաւորց՟. թողուլ զաննշանից, և զվատաց արանց 'ի հնոցն զյիշատակն. և գրել միայն՝ զքաջսն, և զիմաստունսն, և զաշխարհակալս Նախնիս։ և միայն պէտս զժամանակս մեր ծախել՝ և զայլսն։ Այլ՝ այս մեզ ամենևին օտար և արտաքոյ Ճշմարտութե՟ն. որք զՆինոս Բելայ ասեն որդի. կամ թէ՝ նոյն ինքն Բէլ։ զի ո՛չ աղ գաբանութ̅ին, և ո՛չ ամացն ժողովումն այսոցիկ վկայէ, բայց եթէ՝ ը̅ նշանաւոր, և անուանի լինելոյ՝ որք պատեհ համարեալ. այսպէս կարգիցէ զհեռին մօտաւոր: Եւ գտաք զայսոսիկ արդարև Յունաց դպրութե̅: Զի թէպէտ և Յոյնք ինքեանք՝ 'ի Քաղդէացւոցն փոխեցին յիւրեանց լեզուն. և թէպէտ՝ և Քաղդէացիք՝ ինքնակամ յօժարութե̅. և կամ, 'ի հրամանէ Թագաւորաց հարկեալ զայս իրագործել. ո̃պ Առիոս ոմն՝ և այլք բազումք: Սակայն՝ մեք Յունաց համարիմք՝ որպէս 'ի նոցանէ ուսեալք:

Պրակ Ե 5

Յաղագս թէ է ինչ՝ որ հաստատար: Եւ է, որ օտար 'ի Մովսիսէ պատմեն [illegible] Հնախօսք: Եւ – յաղագս Ողիմպիոդորոյ ծերածայր անգիր զրուցացն:

ԶՀաւաստին՝ որչափ կարացեալ 'ի բազմացն ընտրեալ բանից. կարգեցաք զծնունդս երից որդւոցն Նոյի: ց'Աբրահամ. և ց'Նինոս. և ց'Արամ: որում ո՛չ զոք ընդդիմանալ կարծեմ 'ի միտս ունողացն: Բայց թէ՝ զճշմարտութե̅ն

որք

ոք խորհելով քակել զոճ. յառասպելս զճշմարիտ բանս ախորժելով փութայցէ: և այսոքիկ իւրաքանչիւր միտք ոչ կամին ուրախասցին. այլ թէ՝ շնորհակալ՝ և մերոյս տքնութեանս՝ և ջանից լինիցիս՝ ո՜վ Ուսումնասէր դու՝ և զմեզ այսմ աշխատեցուցող. անցից սակաւ բանիւք յիշատակաց: Յաղագս որոյ՝ վերագոյնդ կարգեցաք՝ թէ որպէս առաջինքն ՚ի Մխալագրացն՝ յաղագս այսորիկ համեցան շարագրել. թէպէտ և ո՛չ ունիմ այժմ ասել՝ յամբարանոցս մատենից Թ՟գւրցն արդեօք գտեալ: Եւ թէ ըստ ախորժելոյ ոչ կամեցան իւրաքանչիւրքն փոփոխել զանուանսն՝ և զզրոյցս՝ և զժամանակս. և կամ այլ զինչ և իցէ պատճառ: Բայց՝ ոչ ՚ի սկզբանն՝ երբեմն ՚ի ճշմարտէն, և երբեմն ՚ի ստէն. ոչ յաղագս Նախաստեղծին՝ ո՛չ առաջին մարդ ասելով զնա այլ Թագաւոր: Սոյնպէս անուն խորթական նմա՝ և աննշանակ կոչելով՝ և ամս տալով նմա. 36000: Իսկ թուով Նահապետացն ՚ի ջրհեղեղին յիշատակաւ. զոյգ՝ և հաւասար Մովսիսի: Նոյնպ՟՝ և յետ ջրհեղեզին. երիս կարգելով արս անուանիս. յառաջ քան զաշտարակաշինութիւնն. զկնի նաւարկութե՟ն Քսիսութրեայ ՚ի Հայս ճշմարտեն։ Իսկ անուանցն փոփոխմամբ՝ և բազմօք այլովք ստեն։ Բայց ես՝ այժմ ուրախացայց՝ հաւ առնելով առաջի կայցիս իմոց բանից ՚ի սիրելոյն իմմէ. և քան զշատս արդարախօսողէ ՚ի Բերոսեանն Սիբիլլեայ։

Յառաջ քան զբուրգն ասէ՝ և ըզբազմաբարբառն լինելոյ ձայնի ազգի մարդկան՝ և զկնի նաւարկութեանն Քսիսութրեայ ՚ի Հայս։ Զրուանն. և Տիտանն. և Յապետոսթէ՝ լինէին իշխանք երկրի։ Որք ինձ թուին՝ Սեմ. Քամ. և Յաբեթ։ Եւ ՚ի բաժանել սոցա ասէ զա՟մ տիեզերս՝ ընդ իւրեանց իշխանութ՟բ, հպարտացեալ տիրէ ՚ի վերայ երկոցունցն։ Եւս Զրուանն՝ զոր աստ Զրադաշտ. Մոգ, արքայ Բակտրիացւոց. որ է Մեդաց՝ ըսկիզբն և հայր աստուծոյն ասաց լինել։ և բազում այլ ինչ՝ զնմանէ առասպելեաց. զոր անտեղի է մեզ այժմ երկրորդել։ Արդ ՚ի բռնանալ, ասէ՝ Զրուանայ՝ ընդդիմա ցան նմա, Տիտանն և Յապետոս թէ· 'ի մարտ պատերազմի ընդ նմա գրգռելով։ վ՟զի թագաւորեցուցանել զորդիս իւր 'ի վերայ ամենեցուն խորհէր, և այսպիսում խռան, յափշտակեաց Տիտան՝ ասէ, զմասն ինչ 'ի ժառանգութե՟ սահմանաց Օրուանոսյ։ աստի 'ի մէջ անցեալ քոյրն նց՟ Աստղիկ՝ համոզեալ դադարեցուցանէ զաղմուկն։ և յանձնառնուն թագաւորել Օրուանոսյ· բայց դաշինս ուխտից՝ և երդմանց 'ի միջի հաստատեն, սպանանել զա՟մ արու՝ որ ծնանիցի Օրուանոսյ· զի մի ազգաւ 'ի վ՟ր նց՟ թ՟գւրոցէ։ Ուստի՝ և արս հզօրս, 'ի Տիտանայն 'ի վ՟ր ծննդոց կանանց նորա կարգեին։ Եւ սպանեալ զերկուս ոմանս վ՟ երդման ուխտին հաստատուն կալոյ։ Խորհի այնուհետև քոյրն նոցա Աստղիկ՝ հանդերձ կանամբք Օրուանոսյ՝ հաւանեցուցանել զոմանս 'ի Տիտանայն· ապրեցուցանել զայլ մանկունս՝ և յարեմուտս կոյս յուղարկել· 'ի լեառն՝ որ անուանեալ կարդային՝ Դիւցընկէց։ Իսկ այժմ կոչի Ոլիմպոս։ Արդ՝ զայսոսիկ՝ թէպէտ առասպելս ոք՝ թէ պէս ճշմարտութի՟ հաշուել համարեցի. բայց ես՝ ոչ հաւանեալ եմ, բազում ինչ ճշմարիտ է։ Քանզի՝ և որ 'ի Կիպրացւոց Կոստանդեայ եպիսկոպոս Եպիփանոս 'ի հերձուածոցն յանդիմանութե՟ն, յորժամ ճշմարիտ՝ և արդարադատ՝ զԱ՟ծ ձեռնարկէ ցուցանել։ Նա վ՟ս ջնջելոյ որդւոցն Ի՟ղի, զեօթն ազգսն. ասէ՝ այսպէս։ Եթէ արդարադատապէս Ա՟ծ զազգսն զայնոսիկ ջնջեաց յերեսաց որդւոցն Ի՟ղի։ զի 'ի բաժնի որդւոցն Սեմայ՝ հասեալ էր երկիր կալուածոյս այսոցիկ՝ բռնութ՟բ Քամ 'ի վ՟ր եկեալ յափշտակեաց։ Իսկ Ա՟յ իրաւունս պահեալ զերդմանն ուխտին վրէժ հատուցանէ ազգին Քամայ. 'ի բաց դարձուցանելով զժառանգութիւնն Սեմայ։ Այլ զՏիտանն և զՌափայիմն յիշէն Ա՟ծային գիրք։ Բայց պարտ է մեզ զոմանց անգիր հին զրոյցս՝ որ պատմեալ եղէն վաղ ուրեմն 'ի մէջ Իմաստնոցն Յունաց. և հասին մինչև 'ի մեզ այս զրոյցք. 'ի Գորդի՝ և 'ի Բանան անուն կոչեցելոյ. ես՝ և երրորդ ոմն Դաւիթ. Թէ պէտ՝ և յոյժ սակաւուք երկրորդել։

յ"

յորոց մի ոմն 'ի նոցանէ վարժեալ փիլիսոփայութե՟՝ ասէր այսպէս։ Ուէ՛ ո՛վ ծերք, յորժամ էի 'ի մէջ Յունաց զիմաստութի՟ւն վարժելով, դէպ եղև 'ի միում աւուրց, զի վ՟ն աշխարհագրութե՟ց՝ և բաժանմանց ազգաց. 'ի մէջ արանց իմաստնոց՝ և հմտագունից բան ճառիւր. ոմանք այլազգաբար՝ և ոմանք այլաբանաբար զրոյցս մատենից տային։ Իսկ որ կատարելագոյնն էր 'ի նս՟ Ոլոմպիոդորոս անուն այսպէս ասաց։ Պատմեցից ձեզ՝ ասէ, զրոյցս անգիրս. յաւանդութենէ 'ի մեզ հասեալ. զորս՝ և բազումք 'ի գեղջկաց զրուցեն մինչև ց'այժմ։ Մատեան լեալ զՔսիսութրեայ՝ և զորդւոց նր՟, որ այժմ ոչ ուրեք երևի. յորժամ ասեն կարգ լեալ բանից՝ այսպիսի։ Յետ նաւելոյն Քսիսութրեայ 'ի Հայս՝ և դիմելոյ ցամաքի, գնայ՝ ասէ, մի յորդւոց նր՟ կոչեցե՟լ՝ Սիմ. ընդ արևմուտս հիւսիսոյ՝ դիտել զերկիրն. և դիպեալ դաշտի միում փոքու. առ երկայն անստիւ միով լերամբ, գետոց ընդ մէջ նր՟ անցանելով, 'ի կողմանս Ասորեստանի. դադարէ առ գետովն երկ

լուս

լուսնեայ աւուրս. և անուանէ յանուն իւր զլեառն՝ Սիմ, և դառնայ անդրէն յարևելս հարաւոյ՝ ուստի եկն։ Իսկ՝ 'ի կրտսերագունից որդւոյն նր՟՝ Տարբան անուն 30 ուստերօք՝ և 15 դստերօք, և նոցին արամբք՝ մեկնեալ 'ի հօրէն բնակէ անդրէն 'ի նոյն գետեզերն. յորոյ անուն՝ և զգաւառն անուանէ՝ Տարօն։ և զանուն տեղւոյն ուր բնակեցաւ, կոչէ՝ Ցրօնս. զի անդ՝ զառաջինն ըսկիզբն եղև բաժանելոյ որդւոյ նորա 'ի նմանէ։ Նորին դարձեալ՝ և առ եզերբն սահմանացն՝ Բակտրիացւոյն ասէին բնակել սակաւ աւուրս։ Մնացեալ՝ և մի ոմն անդ՝ յորդւոյն նր՟. քանզի կողմանքն արևելից՝ Զրուան, զՍիմ կոչեն։ և Զարուանդ՝ զգաւառն անուանեալ ասեն՝ մինչև ց'այժմ։ Բայց առաւել յաճախագոյն, Հինքն Արամազնեացն 'ի նուագս բամբռան, և յերգս ցցոց՝ և պարուց։ զայսոսիկ ասեն յիշատակօք. և այսոցիկ զրոյցք սուտք։ և կամ, թէ արդարև լեալք. մեզ չէ ինչ փոյթ։ Այլ՝ վ՟ն գիտելի քեզ պ՟մ, որ ինչ 'ի լրոյ. և որ ինչ 'ի գրոյ. անցանեմ ընդ բնաւն

'ի

՚ի գիրս յայս. զի իմասցիս զառ քեզ պարզամտութի իմոյս խորհրդոյս։

Գլուխ Զ 6

Յայտարարութի ազգաբանութե՝ որ է ըստ արտաքնոցն ասացեալ է Բէլ, ըստ Աստուածային բանից Նեբրովթ է։

ԶԲէլայ՝ առ որով նախնին մեր Հայկ՝ բազումք բազում ինչ՝ այլ ընդ այլոյ պատմեն. բայց ես ասեմ զԿռօնոսդ անուն. և զԲէլ. Նեբրովթ լեալ։ ոչ Եգիպտացիք թուեն հաւասար Մովսիսի։ Եփեստոս, արեգակն. Կռօնոս, որ է Ռամ, Ռուհ՝ Նեբրովթ. թողեալ զՄեստրայիմ։ Զի առաջին ասեն իւրեանց մարդ լեալ զԵփեստոս՝ և գտակ հրոյ. և ընդէր սա գտակ հրոյ. և կամ Պրոմիթէոս. գողացեալ զառ՚ի յա̅ծոյն հուր. և շնորհեալ մարդկան. որ է այլաբանութի. և ո՛չ բերէ ասել կարգ բանիս։ որում և հարստութե̅ցն Եգիպտացւոց կարգ՝ և ա̅մ ժողովումն ՚ի հովուացն հարստութեան մինչև ց՚Եփեստոս՝ վկայէ հաւասար Եբրայեցւոցն լեալ՝ որ է Յովսէփայ ժամանակացն։ մինչև ց՚Մեմ. Ռամ.

եւ ց'Յաբեթ։ Եւ այսոքիկ բաւական լիցին ասել այսչափ։ Զի եւ թէ զա̅մ եղեալս յաշտարակագործութենէն մինչեւ առ մեզ. 'ի հասողութի̅ քեզ 'ի մէջ ածել ջանասցեմք պատմութիւն։ Երբ ապա յըղձալին քո հասանիցեմք զրուցաց պատմութե̅ն։ մանաւանդ զի առաջի կայս մեր՝ երկարէ գործ. եւ ժամանակ մահկանացուաց՝ սուղ՝ եւ անյայտ։ Այլ ըսկսեալ ցուցից քեզ զմերն՝ թէ ուստի եւ որպէս։

Գլուխ Է 7

Թէ որո՞վ կամ ուստի՞ շարայարեալ եգիտ ըզ Զրուցաբանութիւնն։

Արշակ մեծ Արքայ Պարսից՝ եւ Պարթեւաց. որ եւ ազգաւ իսկ Պարթեւ. ապստամբեալ ասեն 'ի Մակեդոնացւոյն. եւ թագաւորեալ 'ի վ̅ր ա̅մ արեւելից եւ Ասորեստանեաց. եւ սպանեալ զԱնտիոքոս Թագաւոր 'ի Նինուէ։ հնազանդեցուցանել զա̅մ տիեզերս ընդ ձեռամբ իւրով։ Սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ 'ի վերայ աշխարհիս Հայոց. պատեհ իմն համարեալ այսպէս անշարժ իւրոյ

րոյ թագաւորութե՟ն լինիլ։ Եւ քաղաք թագաւորութե՟ տայ նմա ըզ Մծբին՝ և սահմանս հատանէ նմա զմասն ինչ յարևմտեայ Ասորւոց՝ և զՊաղեստին, և զԱսիայ. և զա՟մ Միջերկրեայս՝ և զԻտալիայ։ ՚ի ծովէն Պոնտոսի՝ մինչև ՚ի տեղին ուր Կաւկաս յարևմտեանն յանդիծով. և զԱտրպատականն. և այլ՝ որ չափ միտք քո. և քաջութ՟ի հատանեն։ զի սահմանք Քաջաց՝ ասէ, զէնն իւրեանց. որքան հատանէ՝ այն քան ունի։ Սորա՛ կարգեալ զիշխանութ՟ի իւր մեծապէս. և հաստատեալ զթագաւորութիւնն իւր։ Կամեղև գիտել մ՟ր, թէ ոյք՝ և որպիսի արք տիրեալ են ՚ի վերայ աշխարհիս Հայոց մինչև ց՚նա. ըզ Քաջաց արդեօք. եթէ զՊատաց անցեալ ունի՝ զտեղի։ Եւ գտեալ զոմն Ասորի, Մարիբաս Կատինայ, այր ուշիմ և վարժ. Քաղդեացի՝ և Յոյն գրով, զոր յղէ առ մեծ եղբայրն իւր Արշակ. արժանի ընծայիւք. բանալ նմա զԴիւանն Արքունի։ և գրէ առ նա ձև բանից օրինակ զայս։

Պրանէ

Գլուխ Ը՟ 8

Թուղթ Վաղարշակայ արքային Հայոց, առ մեծն Արշակ արքայ Պարթևաց։

Արշակ Թագաւոր՝ երկրի և ծովու. որոյ անձն և պատկեր՝ ոպ՟՝ և է իսկ մեր աստուծոց՝ իսկ բախտ՝ և պատահումն ՚ի վեր քան զամ՟ թագաւորաց. և մտաց լայնութի՟՝ որչափ երկնի ՚ի վերայ երկրի։ Վաղարշակ կրտսեր եղբայր քո՝ և նիզակակից. որ ՚ի քէն կարգեալ Արքայ Հայոց. ողջ լեր ամ՟ յաղթութե՟։ Զանզի պատուէր ընկալեալ ՚ի քէն՝ քաջութե՟, և իմաստութե՟ հոգ տանել։ ոչ երբէք անփոյթ արարեալ զքոյովն խրատու. այլ խնամ տարեալ հոգացայ ամի՟. որչափ միտք՝ և հասողութի՟ բաւեցին։ Եւ այժմ, ՚ի քումդ խնամակալութե՟ զետեղեալ թագաւորութիս։ խորհուրդ ՚ի միտ եդի գիտել՝ թէ ո՞յք ոմանք յառաջ քան զիս իցեն տիրեալ աշխարհիս Հայոց. և ուստի նախարարութի՟քս՝ որք աստ կան։ Զի ոչ կարգք ինչ լեալ աստ յայտնի. և ոչ մեհենից պաշտամունք, և ոչ գլխաւորաց աշխարհիս

առա

առաջինն յայտնի է, և ո՛չ վերջինն. և ո՛չ՝ այլ ինչ օրինաւոր. այլ խառն 'ի խուռն ա՟մ, և վայրենի: Վ՟ որոյ աղաչեմ զքո Տէրութ՟իդ՝ հրամայես՟ բանալ զԴիւանդ արքունի՝ ընդդէմ Առնդ երևելոյ առաջի քոյոյ՝ Հզօր Տէրութ՟եդ. զի գտեալ զղձալին եղբօր քո՝ և որդւոյ՝ բերցէ զստոյգն փութապէս: և զմեր հաշտութ՟ին՝ որ 'ի կամակատարութենէ լեալ. քաջ գիտեմ խնդութ՟ի քեզ լեալ. ողջ լեր երևելիդ՝ բնակութեամբ 'ի մէջ Դից:

Եւ ընկալեալ Արշակոյ մեծի՝ ըզգիրն 'ի ձեռաց Մարիբա Կատինայ. մեծաւ լրջմտութ՟ հրամայէ առաջի՝ առնել նմա զԴիւանն արքունի՝ որ 'ի Նինուէ: միանգամայն՝ և ուրախացեալ այսպիսի միտս ունել եղբօր իւրոյ. որոյ զկէս թագաւորութ՟ե իւրոյ հաւատացեալ էր: Եւ խուզեալ սա զա՟մ մատեանսն. գտանէ մատեան մի Հելլէն գրով. որոյ վերայ էր՝ ասէ, վերնագիրն այսպէս:

Սկիզբն Մատենին:

Այս մատեան՝ հրամանաւ Աղէքսանդրի, 'ի Քաղդէացւոց բարբառոյ փոխեալ 'ի Յոյնն. որ ունի զբուն հնոց՝ և զնախնեացն բանս. որոյ սկիզբն լեալ ասէ զԶրուանն, և զՏիտանն, և զՅապետոսթէ. յորում և զիւրաքանչիւրոք ՚ի ծննդոց երից նախարարականացս այսոցիկ արանցս. զարս անուանիս կարգաւ շարադասեալ. յիւրաքանչիւր տեղիս մինչև ց՚բազում ամս։ Յայսմ մատենէ Մարիբաս Կատինայ. զմերոյ ազգիս միայն. հանեալ զպատմութ̃ի հաւաստի՝ բերէ առ Արքայ Վաղարշակ ՚ի Մծբին՝ Յոյն, և Ասորի գրով։ Զոր առեալ Անձնագեղոյն՝ և Քաջ աղեղան արին Վաղարշակ, Կորովաբանոյն, և Հանձարեղի. առաջին իւրոյ գանձուն համարելով. դնէր յարքունիսն ՚ի պահեստի մեծաւ զգուշութ̃ե. և զմասն ինչ ՚ի յարձանի հրամայէ դրոշմել։ յորմէ մեր հաւաստի ՚ի վ̃ր հասեալ կարգի զրուցացս. երկրորդեմք այժմ քո՛յ հարցասիրութ̃եդ՝ ձգելով զմեր բնիկ նախարարութ̃ես՝ մինչև ց՚Քաղդէացւոց Սարդանապալոյ՝ և ևս մօտագոյն։ յորմէ սկիզբն բանիցս այսպիսի։ Ահեղք՝ և երևելիք, առաջինքն ՚ի դիցն. և աշխարհի մեծամեծ բա րեաց պատճառք։ որ սկիզբն աշխարհի և բազմամարդութե՟։ Եւ 'ի սոցանէ հատեալ գտան ազգ Հսկայից. անհեդեդք՝ յաղթանդամք մարմնով՝ և վիթխարիք. որք յղացեալ ամբարտաւանութե՟ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն. և 'ի նոյն լինէին 'ի գործ անկեալք. յոր հողմ՟ն ահագին իմ՟ն՝ և Ա՟ծային շնչեցեալ 'ի դիցն ցասմանէ, ցրվէ՝ զԱմբարտակն։ և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ. աղմուկ շփոթի 'ի մէջ արկանէին։ Յորոց մի էր և Յապետոսեանն Հայկ անուանի, և քաջ նախարարն կորովաձիգ՝ և հաստ աղեղնն։ Եւ այս կարգ զրուցաբանութե՟ դադարում՟ն առցէ. զի հանդէսս է մեր՝ ո՛չ զպատմութե՟ն ողջաբանութ՟ի գրել՝ այլ ջանալ ցուցանել զառաջինսն մեր. և զբուն հին 'Նախնիս։ Արդ՝ 'ի նոյն մատենէ սկսեալ ասացից՝ Յապետոսթէ. Մերոդ, Սիրաթ, Թակլաթ՝ որ է Յաբեթ. Գամեր, Թիրաս, Թորգոմ։ Յետ՝ որոյ նոյն Ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ՝ Հայկ. Արամենակ. և

զայլսն

զայլըն 'ի կարգի՝ զորոյ յառաջագոյն ասացաք։

Գլուխ Թ̅ 9

Յաղագս ապստամբութեանն Հայկայ։

Սա յս ասէ Հայկ՝ Գեղապատշաճ և Անձնեայ. Քաջագանգուր. Խայտակն, և հաստաբազուկ։ Սա 'ի մէջ հսկայիցն քաջ և երևելի լեալ՝ ընդ դիմակաց ամենեցուն. որք ամբառնային զձեռն 'ի միապետել 'ի վր̃ ա̃մ հսկայիցն և Դիւցազանց։ Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ը̃ դէմ բռնաւորութեանն Բէլայ։ 'Ի տարածանելն ազգի մարդկան՝ ը̃ լայնութի̃ ա̃մ երկրի 'ի մէջ բազմակոյտ հսկայիցն. անհուն խօլից՝ և ուժաւորաց։ Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր 'ի կող ընկերի իւրոյ ձգելով, ջանային տիրել 'ի վերայ միմեանց. ուր պատահմունք 'ի դէպ եղանէին Բէլայ, բռնանալ ունել զա̃մ երկիր. որում ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բէլայ՝ յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամենակ 'ի Բաբելօնի. չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ. որ է 'ի կողմանս հիւ հիւսիսոյ· հանդերձ որդւովք իւրովք՝ և դստերօք· և որդւոց որդւովք արամբք զօրաւորօք։ Թուով իբրև՝ 300, և այլովք ընդ ոծնօք՝ և եկօք յարեցելովք 'ի նա· և բոլոր աղխիւ։ Երթեալ բնակէ 'ի լեռնոտի միում 'ի դաշտավայրի· յորում սակաւք 'ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոյն դադարեալ բնակէին։ զորս հնազանդ իւր արարե̃լ Հայկ· շինէ անդ տուն բնակութե̃ կալուածոյ՝ և տայ 'ի ժառանգուի̃ Կադմեայ· որդւոյ Արամենակայ։ այս արդարացուցանէ՝ զանգիր հին ասացեալ զրոյցս։ Եւ ինքն խաղայ՝ ասէ, այլով աղխիւն ընդ արևմուտս հիւսիսոյ, գայ բնակէ 'ի բարձրաւանդակ դաշտի միում· և անուանէ զանուն լեռնադաշտակին՝ Հարք· այս ինքն աստէն բնակեալքս ազգ 'ի տանն Թորգոմայ։ Շինէ և գեւղ մի՝ և անուանէ իւր անուն՝ Հայկաշէն։ Յիշի՝ և աստանօր պատմութ̃իս հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ· առ երկայնանստիւ միով լերամբ՝ բնակեալ յառաջագոյն արք սակաւք· ինքնակամ հնազանդիլ Դիւցազնին։ արդարացուցանէ՝ և այս զասացեալ զրոյցս անգիրս։

Գլուխ Ժ 10

Յղ՟գս պատերազմին՝ և մահուանն Բէլայ։

ՍԱ յառաջ մատուցեալ զբանս իւր, ասէ՝ թէ ՚ի հաստատել Տիտանեանն Բէլայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան, առաքէ ՚ի կողմն հիւսիսոյ՝ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ․ արամբք հաւատարմօք՝ գալ նմա ՚ի հնազանդութիւն, և կեալ խաղաղութ՟բ․ բնակեցեր ասէ ՚ի մէջ ցրտութե՟ սառնամանեաց․ այլ ջեռուցեալ մեղկեայ ցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ․ և հնազանդեալ ինձ կեաց ՚ի հանդարտութե՟․ ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութե՟։ Եւ ՚ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բէլայ՝ խստութեամբ պատասխանեաց։ Դառնայ առաքեալն անդրէն ՚ի բաբելոն։ Ապա զօրաժողով լինի ՚ի վերայ նր՟ Տիտանեանն Բէլ՝ ամբոխիւ հետեւակաց զօրաց, գայ հասանէ ՚ի հիւսիսի յերկիրն Արարադայ՝ փախստական լինի Կադմոս առ Հայկ քաջընթաց իսկ առաջի իւր առա քէ։ գիտեա՛ ասէ, ո՛վ մեծդ Դիւցազանց՝ զի դիմեալ գայ ՚ի վերայ քո Բէլ՝ Յաւէրժիւք Քաջօք, և երկայնադիզօք հասակօք՝ Հսկայիւք մրցողօք։ Եւ իմացեալ իմ՝ զմերձ լինելն նորա՝ ՚ի տուն իմ փախեայ, և գամ ահաւասիկ տագնապաւ։ Արդ՝ աճապարեա՛ խորհիլ՝ որ ինչ գործելոց ես։ Իսկ Բէլն՝ յանդուգն, և անձուռնի զօրութ՟բ ամբոխին, ո՟պ յորձան ինչ սաստիկ ը՟ զառ ՚ի վայր հեղեալ՝ փութայր հասանել ՚ի սահմանս բնակութ՟ե Հայկին. ՚ի սիրտ՝ և ՚ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց։ Աստ Ուշիմ, և Խոհեմ Հսկայն Քաջագանգուրն՝ և Խայտաակն։ աճապարեալ հաւաքէ զորդիս իւր, և զԹոռունս՝ արս քաջս, և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս. և զայլ ևս՝ որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ. որոյ աղի են ջուրքն. մանունս ունելով ձկունս յինքեան։ Եւ կոչեալ զզօրս իւր՝ ասէ, ց՚նոսա. յելանելն մեր հնդէպ ամբոխին Բէլայ՝ դիպեալ ջանասցուք տեղւոյն՝ ուր անցեալ կայ ՚ի մէջ խուռն քաջացն Բէլ։ զի կամ մեռցուք՝ և աղխ մեր ՚ի ծա 'ի ծառայութիւն Բելայ կացցէ. կամ զաջողութիւն մտաց մերոց 'ի նա ցուցեալ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ըստացեալք։ Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս, հասանեն 'ի միջոց ինչ դաշտաձև լերանց բարձրագունից, և յաջմէ ջուրցն հոսանաց 'ի բարձր աւանդակութեան կուռ կալով 'ի տեղւոջ։ Ի վեր զերեսս ամբարձեալ երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հոսակի ամբոխոյն Բելայ. ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով։ Իսկ Բէլ հեզ՝ և հանդարտ ամբոխիւ մեծաւ 'ի ձախմէ ջուրցն 'ի վերայ ոստոյ միոյ իբրև 'ի դիտանոցի։ Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին. յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ոմամբք. և երկար միջոց ճանապարհին ընդ նա՝ և ընդ ամբոխն։ և ինքն գլխանոց ագուցեալ երկաթի՝ նշանաւորօք վերջօք՝ և տախտակս պղնձիս թիկանց՝ և լանջաց՝ և սրնապանակս բարձից՝ և բազկաց, գօտևորեալ զմէջսն. և յահեկէ զատինն երկայրի. և նիզակն արի 'ի ձեռինն իւրում աջոյ. և յահեկումն վահան. և ընտիրք յաջմէ և'ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկն զՏիտանեանն կուռ վառեալ. և արս ընտիրս ընդ նմա՝ աջինս՝ և ահեկինս: Կարգէ զԱրմենակ երկու եղբարբք ը̅ աջմէ. և զԿադմոս՝ և զայլս երկուս որդւոց իւրոց'ի ձախմէ: զի արք կորովիք էին յաղեղն՝ և'ի սուսեր. և ինքն առաջի. և զայլ հրոսակին զկնի իւր կարգեաց՝ երեք անկիւնի իմն կարգեաց ձևով. համդարտ յառաջ մատուցանելով: Եւ հասեալ երկոցունց կողմանց հսկայիցն 'ի միմեանս. ահագին դղրդիւն'ի վերայ երկրի առնէին շահատակելովն, և ահս պակուցանօղս տարազուք յարձակմանցն: զմիմեամբք հարկանէին. անդ ո՛չ սակաւք յերկոցունց կողմանց հսկայիցն յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք տապալ յերկիր կործանէին. և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ Արքայն Տիտանեան՝ զարհուրեցաւ. և'ի նոյն բլուր՝ ուստի էջն. վերջոտեալ ելանէ. քանզի խորհեր 'ի միջոցի ամրանալ ամբոխին՝ մինչև հասցէ բովանդակ զօրն. զի միանգամ ճակատ յօրինեսցէ: Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարքայն, և քարշէ պինտ զլայնալիճն՝ դիպեցուցանէ զերեք թևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան, կործանեալ յերկիր զարկուցեալ՝ և փչէ զոգին: Իսկ ամբոխին տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն. փախեան իւրաքանչիւր դէպ երեսս իւրեանց: Եւ վ՟ս այսորիկ՝ այսչափ բովանդակ լիցի ասել: Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ. և անուն կոչէ Հայք. վ՟ս յաղթութեան պատերազմին, այսորիկ աղագաւ. և գաւառն այժմ անուանի Հայոց ձոր: Իսկ բլուրն ուր ՚Բաջամարտիկօքն անկաւ Բէլ. անուանեաց Հայկ՝ գերեզմանս. որ այժմ ասին գերեզմանք: Բայց՝ զդիակն Բէլայ՝ պաճուճեալ իմն ասէ դեղօք: հրամայէ Հայկ տանել 'ի Հարք, և թաղել 'ի բարձրաւանդակ տեղւոջ 'ի տեսիլ կանանց՝ և որդւոց իւրոց։ Իսկ անուն աշխարհիս մեր կոչի 'յանուն նախնւոյն մերոյ՝ Հայկայ Հայք։

Գլուխ ԺԱ 11

Յաղագս՝ որ 'ի Հայկայ ազգս՝ և ծնունդս, և Եւ զինչ իւրաքանչիւրոց 'ի նոցանէ գործեաց։

Բազում ինչ զկնի՝ այսորիկ պատմի 'ի Մատենին. այլ մեք որ ինչ ընտրոյն մերոյ հաւաքմանս է՝ շարադրեսցուք։ Զկնի այսորիկ դառնալ՝ ասէ, Հայկին՝ 'ի նոյն տեղի բնակութե։ և Կադմեայ՝ թոռին իւրոյ՝ բազում ինչ յանկածէ պատերազմին պարգևեաց։ և յիւրոց ընդոծնայն արս անուանիս։ հրամայէ զնոյն տեղի բնակութե ունիլ նմա. զառաջնոյ իւրոյ տանն։ և ինքն երթեալ դադարէ յանուանեալ տեղին Հարք։ Սա կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամենակ 'ի Բաբելոնի՝ որպ՟ վերագոյն ասացաք։ յետ՝ որոյ կեցեալ՝ և այլ ևս ամս՝ ոչ սակաւս՝ մեռանի, յանձնառնելով ըզբովանդակ ազգն՝ Արամենակայ որդւոյ իւրոյ։ Իսկ նա թողեալ երկուց եղբարց իւրոց զԽոռ. և զՄանաւազ ամ աշխարհն իւրեանց, 'ի կոչեցեալն Հարք. և զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք: Իսկ որդի նորա Բազ՝ յարևմտից հիւսիսոյ, եզր ծովուն աղւոյ. զգաւառն՝ և զծովն անուանէ իւրով անուամբն: Եւ 'ի սոցանէ ասեն լեալ զնահապետութիւնս Մանաւազեան, և զԲզնունեայ, և որ Գնունին անուանեալ. որք աստ ուրեմն՝ յետ Սրբոյն Տրդատայ, բարձեալ ասեն 'ի միմեանց պատերազմաւ: Իսկ Խոռն 'ի կողմանս հիւսիսոյ բազմանայ՝ կարգէ զշէնս իւր, և 'ի նմանէ ձգեալ ասեն՝ մեծ նախարարութիւն ազգին Խորխոռունեայ. արք քաջք՝ և անուանիք: որպէս և որք առ մեօք են այժմ երևելիք: Իսկ Արմենակայ առեալ զամենայն բազմութիւնն՝ խաղայ յարևելս հիւսիսոյ. և երթեալ իջանէ 'ի խորին դաշտավայրի միում 'ի բարձրագագաթանց պարսպեալ լերանց. գետս կարկաջասահ 'ի յարևմտից ընդ մէջ անցանելով. և զդաշտն արևելից իմն գոգցես իբր որսայել 'ի ձիգ յարեգակն կոյս զերկայնութիւն պարզեալ. և ստորոտովք լերանցն բազում ականակիտ բղխեալ

աղ

աղբեւրք · որք գետոց հաւաքումն եղեալ հեզաբար առ սահմանօք նց, ծնիւք լերամբք, և եզերօք դաշտին պատանիք ոմանք՝ իբր երիտասարդուհիւք ձեմլէին։ Այլ հարաւայինն արեգակնաձեւ լեառն սպիտակափառն ունելով գագաթն՝ ուղղորդ 'ի յերկրէ բուսեալ երեք օրէիւ։ ոպ ասաց ոմն 'ի մերոցն՝ քաջագօտւոյ առն շրջապատեալ ճանապարհաւ, և առ փո՛քր՝ փո՛քր 'ի շեշտումն անկեալ։ Էր ոմն արդարև լեառն 'ի մէջ երիտասարդացեալ լերանց։ Յայսմ խորութեան դաշտի բընակեալ Արամենակայ · շինէ զմասն ինչ 'ի հիւսիսոյ կողմանէ դաշտին · և զոտ լերինն 'ի նոյն կողմանէ։ և զլեառն անուանէ յանդագոյն յիւր անուն Արագած · և զկալուածսն, ոտն Արագածու։ Բայց սքանչելի իմն՝ ասէ, Պատմագիրն, թէ 'ի յոլով տեղիս գտան բնակեալք 'ի մարդկանէ յերկրիս մերում։ ցան և ցիրք սակաւք յառաջ քան զգալուստ բընկին մերոյ նախնւոյն Հայկայ։

Այս Արամանեակ կեցեալ ամս ծնաւ զԱրմայիս։ և յետոյ կեցեալ ամս շատ՝ մեռաւ։ Իսկ որդին նորա

Արմայիս շինէ իւր տուն բնակութե՟ ՚ի վ՟ր ոստոյ միոյ՝ առ եզե՛րբ գետոյն, և անուանէ իւր անուն Արմաւի՛ր։ և զանուն գետոյն․ յանուն թոռին իւրոյ Երաստայ, Երա՛սխ։ Եւ զորդի իւր զՇարայ, զյոլովածին․ և զշատակեր․ ՝առաքէ ամենայնիւ իւրով աղխիւ ՚ի դա՛շտ մի մօտաւո՛ր՝ արգաւանդ՝ և բերրի, յորում գնան ջուրք ո՛չ սակաւք ՚ի թիկունս Հիւսիսոյ լերինն՝ որ անուանեցաւ Արագած։ յորոյ անուն ասեն՝ և զգաւառն անուանեալ Շիրակ։ Սա՟՝ որոյ սա՟ր թուի արդարանալ առասպելին՝ որ ասի ՚ի մէջ գեղջկաց, թէ քո Արայի որկո՛րն է՝ ասէ, մե՛ր Շիրակայ ամբա՛րքն չեն։ Ա՛յս Արմա̀յիս կեցեալ ամս․ ծնանի զորդի իւր զԱմասիա՛։ ՚ի վ՟ր որոյ կեցեալ՝ և ա՛յլս ամաց՝ մեռաւ։ Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յե՛տ ամաց ծնանի զԳեղամ։ և յե՛տ Գեղամայ ըզ Փառոխարն, և զՑոլա՛կ։ և յետ ծնանելոյն զսոսա անցանէ զգետովն մե՛րձ ՚ի լեառնն Հարաւոյ։ և շինէ անդ առ խորշիւք լեռնոտինն մեծապէս ծախիւք երկուս տունս․ զմինն, յարևելից կուսէ մօտ յականս

աղ

աղբերա՛ցն, որք առ ստորոտով լերի՛նն ելանեն։ Իսկ զմիւսն յարևմուտս կոյս նորին տանն բայազդոյն։ Իբր մե՛ծ հասարակ աւուր միոյ հետևակագնացի ա՛ռն Ճանապարհորդի։ և ետ զնա 'ի ժառանգութ̃ի երկուց որդւոց իւրոց, Արւո՛յն՝ Փառախոտի՛, և Կայտառի՛ն Ցոլակայ։ յորս բնակեալ յիւրեանց անուն զտեղի՛սն անուանեցի՛ն։ 'ի Փառախո՛յ՝ Փառախո՛տ։ և 'ի Ցոլակա՛յ՝ Ցոլակե՛րտ։ Բայց զլեառն, Ամասիա՛՝ անուանէ իւրով անուամբ՝ Մասիս։ և ինքն դարձեալ յԱրմաւիր, եկաց ա՛մս սակաւս՝ և մեռաւ։ Իսկ Գեղամ, յետ ամաց անցելոյ ծնաւ զՀարմա՛յ՝ 'յԱրմաւիր. և թողեալ զՀարմա՛յ 'յԱրմաւիր. հանդերձ որդւովք բնակել. և ինքն գնաց զմիւս կողմամբն արևելից հիւսիսոյ յե՛զր ծովակի միոյ, շինէ զեզր ծովակի՛ն՝ և թողու անդ բնակիչս։ և յի՛ւր անուն՝ և սա՛, զլեառնն՝ անուանէ՝ Գեղ, և զշէնսն՝ Գեղաքունի, որով կոչի՝ և ծովն։ Ա՛ստ ծնաւ զորդի իւր զՍիսակ, զա՛յր սեգ, և անձնեա՛յ, բարեգե՛ղ՝ կորովաբան, գեղեցկագե՛ղն, սմա՛ զմեծ մասն ընչից իւրոց տուեալ՝ և ծառայս անձինս բազումս։ սահմանս հաստատէ նմա ժառանգութեան, 'ի ծովէն ընդ արևելս՝ մինչև 'ի դաշտ մի. ուր գետն Երասխ հատանէ զքարանձաւս լերանց, անցանէ ընդ խոխոմս ձիգս՝ և նեղս, ահագին դղրդմամբ իջանէ 'ի դաշտ մի։ Աստ բնակէ Սիսակ, լնու շինութեամբ զսահմանս իւրոյ բնակութեանն։ և զաշխարհն կոչէ իւրով անուամբն՝ Սիւնիք։ այլ Պարսք յստակագոյնս և Սիսական կոչեն։ 'Ի սորա ծննդոց աստ ուրեմն առաջին 'ի Պարթևաց Վաղարշակ Արքայ Հայոց՝ գտեալ արս անուանիս, Տեարս աշխարհին կարգէ, որպէս Սիսակ անդ։ և զայս առնէ Վաղարշակ. 'ի պատմութեան ստուգեալ։ այլ այս՝ թէ որպէս յիւրում տեղւոջ պատմեսցուք։

Բայց ինքն Գեղամ դառնայ 'ի դաշտ անդր, և առ ոտամբ նորին լերին՝ 'ի ձորակի միում ամրոջ՝ շինէ ձեռակերտ մի, և կոչէ զանուն նորա՝ Գեղամ. որ յետոյ՝ 'ի Գառնկայ թոռնէ նորա. անուանեցաւ՝ Գառնի։ 'Ի սորա ծննդոց աստ ուրեմն առ Արտաշէսիւ, թուամբ Վաղարշակայ

կայ՝ ոմն վարաժ անուն պատանի՝ յաջո՛ղ յո՛րս եղջերուաց այծեմանց, և վարազուց. գեղեցկութե̃ նետող՛ց կորովի. զսա՛ 'ի վերայ որսոց արքունականաց կարգէ. և շէն պարգևէ նմա՛ առ եզր գետոյն, որ անուանել կոչի. Հրաստան. և 'ի սմանէ՝ ասեն, լինել զտոհմն Վարաժնունի. Այս Գեղամ, որպ̃ ասացաք՝ յետ ամաց ծնանի զՀարմայ. յետ որոյ կեցեալ՝ և այլ ա՛ս՝ և մեռանի. և հրամայէ որդւոյ իւրում Հարմայ բնակիլ յԱրմաւիր. Այս Հայկ՝ որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ, որդւոյ Յաբեթի, Նախնի Հայաստանեայցս, և ս՛յս ազգք ն՛ր, և ծնունդք, և աշխարհ բնակութե̃ ն՛ց. և յա՛յսմ հետէ՝ ասէ, սկսան բազմանալ և լնու՛լ զերկիրն. Իսկ Հարմայ կեցեալ ամ՛ ծնաւ զԱրամ. Արամայ բազում գործք քաջութե̃ պատմին մարտի՛ց նահատակութե̃, և ընդ արձակել զսահմանս Հայոց յամ̃ կողմանց. յորոյ անուն, և զաշխարհս մեր անուանեն ա̃մ ազգք. որպ̃ Յո՛յնք՝ Արմէն. Իսկ Ասորի՛կք՝ և պարսի՛կք. Արմէնի՛կք. բայց զընդարձակութի̃ պատ-

մա

մութե՟ նր՟, և զգործ քաջութե՟՝ թէ զիա՞րդ, կամ առ որո՞վ ժամանակի՝ թէ կամիցիս այսորիկ գրոց կարգեսցուք, և կամ թողցուք։ ապա թէ ո՛չ 'ի սմին։

Գրակ ԺԲ 12

Յաղագս ընդ Արեւելեայս պատերազմին՝ և յաղթութեանն՝ և մահուանն Նիւքարն Մադէսայ։

Եւ մինչ զի՝ հաճոյ թուեցաւ մեզ աշխատութիւն՝ որ 'ի վերայ քո հրամանիդ համարել հեշտութի՟. առ 'ի յայլոցն, որ 'ի կերակրոց՝ և յըմպելեաց լինին խրախճանութիւնք, հաւանեցաք անցանել սակաւուք. և ընդ կարգ բանից պատերազմացն՝ որ 'ի Հայկեանն Արամայ։ Սա՛ այր եղեալ հայրենասէր, և աշխատասէ՛ր, որպ՟ ցուցանէ նոյն Պատմագիր, լաւ համարէր զմեռանել, 'ի վր՟ հայրենեացն, քան տեսանել զորդիս օտարածնաց՝ կոխելով զսահմանս հայրենեացն, և հարազատից արեանն նր՟, տիրել արանց օտարաց։ Սա՛ այս Արամ, սակաւուք ամօք. յառաջ քան զտիրելն Նինոսի Ասորեստանեայց, և Նի

նուէ

նուէր, նեղեալ յազգացն, որ շուրջ զիւրև, ժողովէ զբազմութի̃ արանց քաջաց, և աղեղնաւորաց, և որք 'ի տէ՛գ նիզակի կամակարօ́ղք, նորատի՛ք, և հարո՛ւստք, յոյժ յաջողաձեռնութի̃, իսկ երեսօք 'ի սիրտ՝ և 'ի պատրաստութիւն պատերազմի, իբր թէ բի՛ւրս հինգ. պատահէ Մեդացւոցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւքար ա̃ն՝ ասացեալ Մադէս, ա՛յր հպա՛րտ, և պատերազմասէր, ո̃ք ցուցանէ՝ նոյն ինքն Պատմագիրն, յեղերս սահմանացն Հայոց. որոց մի անգամ, Ռուշանաբար հի՛ն՝ սմբակակոխ արարեալ՝ զսահմանս Հայոց ծառայեցոյց, ա՛մս երկուս. որում, յանկարծօրէն 'ի վերայ հասեալ Արամ, յառաջ քան՝ զծագի՛լ արեգական, սատակեաց զբազմութիւն ամբոխիցն, և զնոյն ինքն Նիւքարն՝ կոչեցեալ Մադէս, ձերբակալ արարեալ՝ ածէր յԱրմաւիր. և անդ ուրեմն, 'ի ծայրս աշտարակի պարսպին, ցի՛ց վարեալ ընդ ճակատն, յո՛րմն վարսե՛լ՝ հրամայէ՛, 'ի տեսիլ անցաւորացն, և ա̃մ եկելոցն անդր. և զաշխա՛րհն, մինչև 'ի Լեառն, ա-

նու

նուաճեալ Մարասալ, 'ի ծառայութեն կալաւ՝ հարկի, մինչեւ ց'թագաւորութին Նինոսի, 'ի վր Ասորեստանի, եւ Նինուէի։ Իսկ Նինոս թագաւորեալ 'ի Նինուէ՝ յիշատակ քինու, զՆախնւոյն իւրոյ, ունէր 'ի մտի, զԲելայ, 'ի զրուցաց ունեալ։ եւ զայս խորհէր, հատուցանել յամս ձիգս, 'նկատել՝ որում՝ զյաջողութի բառնալ՝ ջնջել զամ ճեա սահմանեալ՝ յարանց Քաջին Հայկայ։ այլ երկեւղ կասկածանաց լեալ իւրոյ թագաւորութեն, զայսպիսի համարեալ իրագործութիս, ծածկէ զչարութիւնն, եւ հրամայէ նմա, զնոյն իշխանութի անկասկածաբար ունել՝ եւ համարձակութի տայ նմա, վարսակալ ածել մարգարտեայ, եւ երկրորդ նորա կոչել։ Այլ՝ այս շատացի՝ առել այսչափ. քանզի՝ չթողացուցանէ զմեզ՝ որ առաջիկայս է իր, յեզերումն յամել՝ այսր պատմութեան։

Պրակ ԺԳ 13

Յաղագս՝ ընդ Ասորեստանեայս կռուոյն, եւ յաղթութեն, եւ Պայապայն Քաղեայն։ Նա-

Կեսարու, եւ Առաջին, եւ այլոց անուանեալ Հայոց:

ԿԱրգեսցուք զո՛յգն յիշատակարանից, եւ որ ինչ՝ զկնի այսորիկ, յարեւմուտս մի՛ գո՛րծք քաջութե̅ պատմին, 'ի նոյն մատենի, որ է Ասորեստանեայս կռուո՛յն, զպատճառս, եւ զզօրութի̅, իրաց միայն յայտնելով. եւ զերկարութի̅ գործոյն, համառօտ բանիւ յանդիման կացուցանել: Նոյն ա՛յս Արամ, յետ վճարելոյ ճակատուն, որ է Արեւելեայս, խաղայ նո՛յն զօրու, զկողմամբ Ասորեստանի, գտանէ զմին եւ անդ, ապականիչ երկրի՛ իւրոյ, չորիւք բիւրովք վառելովք հետեւակօք, եւ հըն գիւք հազարովք հեծելազօրու. Բարշամ անուն, յազգէ Սկայեցն: որոյ սաստկագոյնս նեղեալ՝ հարկա՛ց խստութ̅բ, անապատ պչրջակա՛յն իւր առնէր. Սմա՛ 'ի ճակատու պատերազմի, 'ի դիմի՛ հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդու՛աց, ընդ դա՛շտն Ասորեստանի արկանէ, զբազո՛ւմս 'ի նոցանէ սատակելով. Իսկ Բարշա՛մ, առաջի զինակրա՛ց նո՛ր պատահեալ՝ մեռանի: եւ զայս Բարշամ, վ̅ն իւրոց արիութեանց գործոց՝ աստուածացուցեալ՝ պաշտեցին Ասորիք՝ բազում ժամանակս 'ի ծառայութե̃ հարկաց: Այլ՝ որ ինչ յարեւմուտս ընդ Տիտանեայն մի̃ գո՛րծ քաջութե̃՝ ասել կայ մեզ առաջի: Ասա՝ յարեւմուտս շարժեալ 'ի վ̃ր առաջնոյն չորիւք բիւրովք զօրաւոր հետեւակօք, եւ երկու հազարօք հեծելովք՝ հասանէ 'ի կողմանս Կապադովկացւոց, 'ի տեղի մի՝ որ այժմ ասի՝ Կեսարեա՛: եւ քանզի՝ զարեւելեայսն, եւ զհարաւայինսն նուաճեալ՝ յանձնեալ էր 'ի ձեռն այնոցիկ երկուց Ցեղիցն, Սիսակեանցն զարեւելս, եւ որք 'ի Կադմեայ տանէն զԱսորեստանեայն, ո՛չ ինչ՝ այնուհետեւ կասկած շփոթից ուստեք ունէր: Մորոյ՝ յերկարել ժամանակս՝ լինել՝ յարեւմուտս՝ պատահէ՛ նմա Պայապիս Քաղեա՛յն Տիտանեան պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովուց մեծամեծաց, զՊոնտացւոյն, եւ զՈվկիանու: որում 'ի դիմի հարեալ՝ վանէ փախստական արկանելով 'ի Կղզի ինչ Ասիական ծովուն: եւ իւր թողեալ զոմն Մշակ անուն՝ յազգէ իւրմէ՝ եւ բիւր մի 'ի զօրացն

'ի

'ի մերում աշխարհին, և ինքն դառնայ 'ի Հայս։ բայց հրամանս տայ ընակչաց աշխարհին՝ ուսանիլ ըղխօսս, և զգիրս Հայկական։ Վ̃ն որոյ՝ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք՝ զԿլիմայն զայն, Պրօտօն Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք։ Եւ զդաստակերտն՝ զոր շինեաց յանուն իւր՝ Մշակ Կողմնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանեն հինք աշխարհին, Մաժաք, ոպ̃՝ ոչ կարելով ուղղախօսիլ։ մինչև յետոյ յամանց ընդարձակագոյն շինեալ անուանեցաւ Կեսարիա։ ըստ նմին օրինակի՝ 'ի տեղեացն այնոցիկ՝ մինչև ց'բուն իւր սահմանս, զբազում անբնակ երկիր՝ ելից բնակչօք, որք Երկրորդ՝ և Երրորդ· անուանեցան Հայք, այլ և՝ Չորրորդ։ Այս է առաջին, և ճշմարիտ պատճառն՝ վասն անուանելոյ զարևմըտեայն մեր կողմն, և Առաջին, և Երկրորդ, այլ և՝ Երրորդ, և Չորրորդ Հայք։ Իսկ որ՝ այլ ասի 'ի Յունական կողմանսն, մեզ ոչ է հաճոյ, այլ որոց՝ որչափ կամք իցեն։ Արդ սա՛ այսպէս անուանի և հզօր

է

եղեալ՝ յանուն սորա մինչև ց՚այսօր, ո՟պ ամենեցուն յայտնի է, որ շուրջ զմեօ՛ք ազգք՝ զաշխա՛րհս մեր անուանեն։ Բազում, և այլ գո՛րծք արութե՟ն 'ի սմանէ գտանի կատարե՟լ, այլ մեզ բաւական լիցի ասացեալդ։ Բայց թէ՝ ընդէ՞ր այսոքիկ 'ի բո՛ւն Մատեանս Թագաւորացն, կամ 'ի Մեհենից պատմութի՟ս՝ ո՛չ յիշատակեցան։ մի ո՞ք ընդ սո՛յս երկբայացեալ՝ տարակուսեսցի։ մի՝ զի յառաջ քան զՆինոսի ժամանակ Թագաւորութեանն է, յորում ո՛չ ոք այսպիսեա՛ց իրաց՝ փոյթ յանձին ունէր։ երկրորդ՝ զի ո՛չ հարկք, և ո՛չ պէ՛տք ինչ կարևորք էին նց՟ զազգաց օտարաց՝ և զաշխարհա՛ց բացեայ, և զհամբաւս հինս՝ և զրո՛յցս նախնականս՝ իւրեանց Թագաւորաց, կամ Մեհենից գրե՛լ Մատեանս։ մանաւանդ՝ զի և ո՛չ պարծանք ինչ նց՟, և կամ բարգաւաճանք՝ օտարաց ազգաց քաջութիւն, և գործք արութեան։ բայց թէպէտ՝ և ո՛չ 'ի բուն Մատեանսն, սակայն՝ ո՟պ Մարիբաս Կատինայ պատմէ՝ 'ի փոքո՛ւնց ոմանց, և յաննշանից արանց․ 'ի գուսականէն սո՛յս գտանի ժողովեալ՝ 'ի

Դիւանի Արքունականաց: Ասէ, և այլ իմն պատճառս նոյն այր՝ թէ որպէս ուսոյ՝ հպարտ՝ և անձնասէր գոլով Նինոս, և կամելով զինքն միայն աշխարհակալութեան՝ և քաջութե, և լաւութե ցուցանել ըսկիզբն: հրամայէ՝ զբազում Մատեանս, և զգրոյցս՝ Առաջնոցն՝ տեղեաց՝ տեղեաց՝ և ուրուք՝ ուրուք՝ գործ քաջութե՝ այրել· իսկ՝ որ առ իւրովք ժամանակօք՝ դադարեցուցանել՝ և որ ինչ՝ վն իւր միայնոյ գրել· արդ՝ զայս աւելորդ է մեզ երկրորդել: բայց Արամ՝ զկնի ամի կենաց իւրոց՝ ծնաւ զԱրայ, յետ որոյ՝ և այլս բազումս կեցեալ ամաց մեռաւ:

Պրակ ԺԴ 14

Յաղագս Արայի, և մահուանն նորա՝ պատերազմաւ ՚ի Շամիրամայ:

Արայ՝ սակաւ ամօք՝ յառաջ քան՝ զվախճանելն Նինոսի, խնամակալեաց իւրոց Հայրենեացն՝ նոյնում արժանաւորեալ շնորհաց ՚ի Նինոսէ՝ որում և Հայրն նորա՝ Արամ: Բայց վավաշն այն՝ և բորբորխոյնն՝ Սամիրամ, ՚ի բազում աամայ՝ լուեալ զգեղեցկութե՟ն նորա՝ ցանկայր տեսանե՛լ· այլ ո՛չ ինչ այսպիսի՝ յայտնապէս իշխէր գործել։ Ի՛սկ յե՛տ վախճանելո՛յն, կամ փախստական լինելոյն՝ ո՟մ հաւանեալ եմ, Նինոսի ՚ի Կրետէ՝ համարձակ պատմե՛լով Շամիրամայ զախտն՝ առաքէ հրեշտակս՝ առ Արա՛յն գեղեցիկ, ընծայի՛ւք՝ և պատարագօք՝ բազու՛մ աղաչանօք, և խոստմա՛մբք պարգևաց՝ գա՛լ առնա ՚ի Նինուէ. կամ, առնո՛ւլ կնութե՟՝ և թագաւորել ՚ի վերայ ա՟մի, որոց տիրէր և Նինոս· և կամ՝ կատարել զկամս ցանկութե՟ նորա՝ և դառնալ պատարագօ՛ք, և խաղաղութե՟ ՚ի տեղի իւր։ Եւ ՚ի բազում անգամ երթ և եկութե՟ հրեշտակագնացութե՟ լինելոյ, և յո՛չ հաւանել Արային՝ ՚ի սաստի՛կ ցասման լեալ Շամիրամայ՝ ՚ի վախճանել պատգամաւորութեանն, առնու զբազմութիւն զօրա՛ց իւրոց՝ և փութայ՝ երթալ՝ հասանել յերկի՛րն Հայոց՝ ՚ի վերայ Արայի· բայց ո՛րչափ դիմա՛ցն էր նշանակեալ՝ ո՛չ այնչափ՝ ի սպանանե՛լ զնա՝ և հալածե՛լ փութայր, քա՛ն թէ՝ նուաճե՛լ կամ, զբուամբ ածել՝ զի լցցէ զկամս ցանկութե՟ իւրոյ. զի՝ առ յոյժ ցանկականին մոլեգնութեանն 'ի բանսն, որ զնմանէ՝ ոչ 'ի տեսութ՟ի շամբշութե՟ վառեալ էր: Գնա՛յ՝ հասանէ 'ի դաշտն Արայի տագնապաւ, որ և՝ 'յանուն նր՟ անուանեալ՝ Այրարատ. և 'ի լինիլ ճակատուն, պատուէր տայ զօրապետաց իւրոց, թէ՝ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն: Իսկ՝ 'ի լինել մարտին՝ հարկանի զօրն Արայի՝ մեռանի և Արայն 'ի պատերազմին, 'ի մանկանցն Շամիրամայ: Դիակապուտս Տիկինն առաքէ՝ յետ յաղթութեանն՝ 'ի տեղի ճակատուն՝ խնդրել 'ի մէջ դիականցն անկելոց՝ զըղձալին իւր, և զտարփածուն: գտանեն զԱրայն՝ մեռեալ 'ի մէջ Առաջամարտկացն. հրամայէ՝ զնա դնել 'ի վերնատան Ապարանիցն: Իսկ՝ 'ի դրգռել միւսանգամ զօրացն Հայոց՝ 'ի մարտպատերազմի՝ ընդ Տիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինիլ մահուանն Արայի. ասէր՝ հրամայեցի Աստուածոցն իմոց լիզուլ զվէրն Արայի, և կենդանացի. միանգամայն՝ և ա՛կն ունէր դիւթութե՟ վհկութե՟ իւ-

րոյ, կենդանացուցանել զԱ՟րայ՝
ցնորեալ ՚ի տռփական ցանկութե
իսկ՝ իբրև նեխեցաւ դին՟ր, հրամայէ
ընկենուլ ՚ի վի՛հ մի մեծ՝ և ծածկել
զմի ո՟մն ՚ի հոմանեաց իւրոց՝ զարդա
րեա՛լ ունելով ՚ի ծածուկ՝ համբա
ւէ՛ զնա՝ այսպէս․ Լիզեալ զԱ՟րայ
աստուծո՛ցն՝ և կենդանացուցեալ՝
լցին զփափագս մեր, և զհեշտութի
Վ՟ս որոյ՝ առաւե՛լ յա՛յսմ հետէ, ՚ի
մէնջ պաշտելիք են՝ և փառաւորել
իբրև հեշտացուցիչք՝ և կամակա
տա՛րք։ Կանգնէ՝ և նո՛ր իմն պատ
կեր՝ յանուն դիւաց, և մեծապէ
զոհիւք պատուէ․ ցուցանելով ամե
նեցուն՝ իբր թէ՝ ա՛յս զօրութի՟ն ա
տուծոց՝ կենդանացուցին զԱ՟րայ
և այսպէս համբաւեալ զնմանէ ՚ի
վ՟ր երկրիս Հայոց, և հաւանեցու
ցեալ զամենեսեան՝ դադարեցուցա
նէ զխազմն։ Եւ՝ յաղագս Ա՟րայի
կարճառօտիւ այսչափ՝ շա՛տ լիցի՝ յի
շատակել։ սա կեցեալ ամս՝ ծնա
նի՝ Կ՟ոս։

Գրակ ԺԵ 15

Թէ, որպէս՝ յետ մահուանն Ա՟րայի, Ա
րամ

բան շինէ զտապանն՝ և զամենայն գեղոյն՝
և զտունն իւր։

Իսկ զկնի՝ այսպիսեաց իրաց՝ աջողութեց, դադարէ Շամիրամ՝ աւուրս ինչ սակաւս ՚ի դաշտին, որ անուանեալ կոչի յանուն Արայի՝ Այրարատ. ելանէ ՚ի լեռնակողմանս երկրի Հարաւակողմանն, քանզի՝ ժամանակ ամառնային էր՝ զբօսնուլ կամելով ՚ի հովիտս, և ՚ի դաշտս ծաղկաւէտս։ Եւ տեսեալ զգեղեցկութիւն երկրին՝ և զօդոյն մաքրութիւն՝ և զաղբերաց յստակագոյն բղխումն, և զկարկաջահոսութիւն գետոց բարեդնացից. պարտ է՝ ասէ, մեզ յայսպիսում բարեխառնութեան օդոյ՝ և մաքրութեան ջուրց՝ և երկրի, քաղաքս՝ և Արքունիս շինել՝ բնակութեան, ոչ զի՝ զչորրորդ մասն՝ ՚ի բոլորմանէ տարւոյն՝ որ է՛ ամառնային յեղանակ, ըստ ա̃մ բարեվայելչութեան՝ անցուցանիցեմք ՚ի Հայս. և զայլս ևս՝ երիս որոշմունս օդոյն զօլութե̃՝ տածիցեմք ՚ի Նինուէ։ և անցեալ ը̃ բազմուս ՚ի տեղեաց, գոյ՝ հասանէ՝ յարևելից կողմանէ՝ յեզր ծովակին՝ Աղւոյ. և տեսեալ առ եզերբ ծովուն՝ երկայնաձև՛ մի բլուր, որոյ նիստ երկայնութ՟են՝ ՚ի մուտս կոյս՝ և յրեգակնդ, սակւ ինչ առ ՚ի կողեալ ՚ի հիւսիսոյ․ իսկ՝ ՚ի միջօրեայ կողմանէ՝ դէպ ուղիղ առ երկին նայելով՝ քարանձաւ կանգուն անշեղ․ և ՚ի սմանէ զհարաւ՝ բացագոյն հովիտ իմն՝ դաշտաձև, և երկայնաձև՝ յարևելից կողմանէ լերինն իջանելով յեզր ծովուն՝ ը՟արձակ, և գեղեցիկ ձորաձև․ որոյ ընդ մէջն՝ հոսանք ջուրց բարեհամաց՝ ՚ի լեռնէն իջանելով՝ ՚ի ծործորոց, և ՚ի հովտաց քամեալք՝ և ՚ի հիմանց փեղկից լերանց միաւորեալք՝ ՚ի ծաւալումն գետոց՝ պերճանային․ և շէնք՝ ոչ սակաւք՝ հովտաձև ձորակին, յաջմէ՝ և յահեկէ ջուրցն յօրինեալք․ և յարևելից կողմանէ՝ հաճեցեալ բլրոյն, լեառն մի փոքրագոյն։ Աստ իմն՝ ակնակառոյց եղեալ՝ Այրասիրտն այն՝ և Աթոռն Շամիրամ, հրամանն տայ երից բիւրուց, և երկուց հազարաց՝ արանց անարուեստից՝ գործաւորաց յԱսորեստանեայց, և՝ վեցհարիւր ընտրելոց՝ յա՟մ արուեստաւոր գործաւորաց՝ քարի, և փայտի՝

պղն

պղնձոյ, և երկաթոյ. որք ամենևին կատարեալք իցեն՝ յարուեստագիտութ̃ե. ածել անխափան 'ի փափագեալ տեղին. և գործն՝ հաւասար հրամանին՝ առնոյր զկատարումն: Նա վաղվաղակի ածեալ լինէին խառնաղանճից գործաւորաց, և բազում արուեստից Հանճարեղաց Իմաստնոց: և հրամայէ՛ նախ՝ զամբարտակ գետոյն. ապառաժիւք, և մեծամեծ շինել վիմօք. կրով՝ և աւազով մածուցեալ՝ բազում լայնութ̃բ. որ կայ հաստատուն՝ մինչև ց՚այսօր ժամանակի: և 'ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն այժմ, ոչ լսեմք մարդիկ աշխարհին 'ի շէնս, և 'ի գաղթականս փախստեամբ ամրանան՝ իբր 'ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք: և եթէ՝ զփորձ առնուլ՝ դէպ ումեք լինիցի, և ոչ իբր՝ պարսատկաց քար մի արժանաւոր 'ի շինուածոյ ամբարտակին՝ խլել ոք զօրեսցէ, թէ և՝ մեծաւ աշխատութ̃բ՝ ոք ջանասցէ, և 'ի հեղուսուածս արուեստին, որ զքարամբքն հայեցեալ ուրուք, ոչ 'ի ճարպիկ ինչ հեղման՝ հայեցողացն երևեցուցանէ կիրծիւ:

և ա՛յսպէս՝ ընդ բազո՛ւմ ասպարէզս անցուցեալ զամբարտակն՝ հասուցանէ 'ի նկատեա՛լ տեղի քաղաքին։ և ա՛նդ հրամայէ՝ զամբո՛խն 'ի բազո՛ւմ դասս որոշել. և 'ի վ̃ր իւրաքանչիւրո՛ց դասուց՝ կարգել վարդապե՛տս զընտի՛րս 'ի ճարտարաց. և ա՛յսպէս, 'ի սաստի՛կ ճգնութե պահեա՛լ՝ յետ սակաւ ամաց՝ կատարէ զհրաշալի՛ն ամրագունի՛ւք պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիւք։ Առնէ և ընտի՛ր ընտիրս ապարանս 'ի մէջ քաղաքին, 'ի պէ՛սպէս քարանց՝ և 'ի գունոց զարդարեալս, կրկնայա՛րկս՝ և ըստ պատեհից իւրաքանչի՛ւր արեգակնա՛կս. և գեղեցկագունի՛ւք, և ընդարձակ փողոցօք զկողմանս քաղաքին որոշելով։ Առնէ՝ և զչքնա՛ղս ոմանս, և զզարմանալեա՛յ արժանաւորս, ը̃ պիտոյից միջոյաց քաղաքին՝ լուսալի՛ս. և զմասն ինչ գետոյն՝ ը̃ մէջ քաղաքին բաշխեալ՝ անցուցանէ 'ի սպաս ա̃մ պիտոյից, և յարբուցմո՛ւնս բուրաստանաց՝ և ծաղկոցաց, և զա՛յլն՝ զեզերբ ծովուն յաջմէ, և յահեկէ քաղաքին՝ զարդարէ դաստակերտօ՛ք, և սաղարթի՛ւք ծառոց

վար

վարսաւորաց զանազանի՛ւք, ելո՛վ ՚ի պտո՛ւղս՝ և ՚ի տերև՛ս, և բազում բազմաբե՛րս՝ և գինեբե՛րս, ՚ի նմա՛ տնկեաց հովի՛տս. և ամենևին հոյակապ՝ և հռչակաւոր զպարսպեա՛լն յօրինէ. և անթիւ մարդկան բազմութ՟ի բնակեցուցանէ։ Ի՛սկ՝ զծայր քաղաքին՝ և որ ինչ ՚ի նմա՛ հրաշագործութ՟իք՝ բազմաց ՚ի մարդկանէ, ո՛չ հասուցեալ՝ և ո՛չ՝ պատմե՛լ՝ է՛ կարողութ՟ի։ զորոյ պարսպեալ զգագա՛թն դժուարամուտ ոմանս, և դժոխելանելի՛ս։ ՚ի նմա՛ յօրինէ շինուա՛ծս Արքայանի՛ստս, և ծածո՛ւկս ի՟մն ահագի՛նս՝ որոյ որպիսութ՟ի դրութ՟ե յօրինուա՛ծոյ՝ ո՛չ ՚ի լսելի՛ս մեր հասեալ ճշմարտութ՟ե յումեքէ, և ո՛չ մեք ՚ի պատմութ՟իս հիւսեալ հաւանիմք. այլ ասեմք միայն՝ թէ ա՟մ թագաւորականաց գործոյ՝ ո՟պ լուաք, առաջին՝ և վեհագո՛յն համարեալ։ Ի՛սկ զընդդէ՛մ արեգական կո՛ղմն անձաւին, ուր և ո՛չ գիծ մի երկաթով՝ ա՛յժմ վերագրե՛լ ոք կարէ։ զայսպիսի կարծրութ՟ի նիւթոյ՝ պէ՛սպէս տաճա՛րս, և սենեակս օթից՝ և տո՛ւնս գանձուց, և վի՛հս երկարս՝ ո՛չ գիտեմ թէ՝ որպիսեաց

իրաց

իւրաց պատրաստութ̃ն հրաշակերտեա՛յ: Իսկ՝ զերե՛սս ամ̃ քարին՝ իբրև գրչաւ զմոմ հարթեալ՝ բազում գրեաց ՚ի նմա՛ գիրս· որոյ հայեցուածն միայն՝ զամենա՛յն ոք ՚ի զարմացո՛ւմն ածէ: Եւ ո՛չ միայն այս այլ և ՚ի բազում տեղիս արձանս հաստատեալ յաշխարհիս Հայոց, նովին գրով՝ յիշատակ ինչ իւր՝ հրամայէ՝ գրել: և ՚ի բազո՛ւմ տեղիս՝ սահմանս, նովին գրով՝ հաստատէր: Արդ՝ որ ինչ՝ յաղագս Շամիրամայ, և որ ինչ՝ գործո՛ց նորին ՚ի Հայս՝ ասացեալ է:

Պրակ ժզ̃ 16

Յաղագս Շամիրամայ՝ թէ ե՞ր աղագաւ՝ կոտորեաց զորդիսն իւր· և թէ՝ որպէս փախստական լինի ՚ի Զրադաշտէ՝ Մոգէ՝ ՚ի Հայս՝ և մեռանի ՚ի Նինուասայ որդւոյ իւրմէ:

ՍԱ՛՝ հանապազ յամառնայինսն, ՚ի խաղո՛ւն իւրում, ՚ի կողմանս հիւսիսոյ՝ ՚ի քաղաքն Ամարաստանի զոր շինեաց ՚ի Հայս: կողմնապե՛տ՝ և վերակացու Ասորեստանի՝ և Նինուէի· թողու Զրադա՛շտ՝ Մոգ, և Նահապե՛տ Մարաց· և զա՛յս այսպէս բազո՛ւմ ժամանակս՝ կարգեալ Շամիրամայ, ամենևին հաւատոյ նմա յարդարել՝ զիւր իշխանութիւն։ Նա՝ բազումանգամ՝ յանդիմանեալ յորդւո՛ց իւրոց՝ վ̃ն վավաշո՛տ պոռնկական՝ իւրո՛ց վարուց, կոտորէ՛ զամենեսեան, և ապրի կրտսերագո՛յնն միայն՝ որ է Նինուաս։ Բարեկամա՛ց՝ և հոմանեաց իւրոց՝ պարգևելով զա̃մ իշխանութիւնս՝ և զգանձս, ո՛չ ինչ՝ վ̃ն որդւո՛ց իւրոց՝ փոյթ յանձին ունէր։

Քանզի՝ և այր նր̃՝ Նինոս՝ ո՛չ ո̃պ ասի՝ մեռեալ՝ թաղեցաւ 'ի նմանէ 'ի Նինուէ յԱրքունիսն. այլ՝ իմացեալ զախտասէր բա՛րս նորա՝ և զչարասէր, թողեալ զթագաւորութի̃ն՝ փախստական անկանի 'ի Կրետէ։ Իսկ՝ 'ի հասակ, և 'ի միտս հասեալ՝ որդւո՛ց նորա՝ յիշեցուցանեն նմա զա՛յն ա̃մ, կարծելով՝ ցածուցանել զնա 'ի դիւական պակշոտութենէն, և աւանդել զիշխանութի̃ն, և զգանձս որդւո՛ց իւրոց. ընդ ո՛ր առաւե՛լ զայրացեալ՝ սատակէ՛ զամենեսեան, և մնայ միա՛յն՝ ո̃պ վերագո՛յն ասացաք՝ Նինուաս։ Իսկ 'ի լինել սխալանաց ինչ Զրադաշտի առ Տիկինն, և հակառակութե̃ 'ի

ներքս

նե՛րքս անկանելոյ, պատերազմ 'ի վ՟ր ն՟ր յարուցանէ Շամիրամ․ քանզի՝ բռնանալ 'ի վ՟ր ամ՟ի՝ խորհէր Մարն։ և 'ի սաստկանալ պատերազմին, փախստական լինի Շամիրամ՝ յերեսաց Զրադաշտին՝ 'ի Հայս․ ա՛ստ ժամանէ՟ վրէժ խնդրութե՟, զի պատե՛հ գտեալ Նինուասայ՝ ըսպանանել զՄայրն, և ի՛նքն թագաւորէ՛ 'ի վերայ Ասորեստանի, և Նինուէի։ Ահա՛ ասացաք՝ և յաղագս մահուանն Շամիրամայ, թէ ուստի՝ և որպէ՛ս։

Գլուխ ժէ 17

Յաղագս Բէ՝ հաստատէ նախ՝ լինել պատերազմ նորա 'ի Հնդիկս՝ և չինէ մահուանն նորա՝ 'ի Հայս։

ՈՒնի՛մ 'ի մտի՝ և զԿեփաղեօնին վասն ո՛չ տալ զմեզ՝ բազմաց ծաղրել․ զի՝ ասէ, 'ի բազմաց այլոց, նախ՝ յաղագս ծննդեանն Սամիրամայ, և ապա՛՝ և զպատերազմին Շամիրամայ ը՟ն Զրադաշտի, և զյաղթե՛լն՝ ասէ, շամիրամայ՝ և ապա ուրեմն՝ զպատերազմին Հնդկաց։ այլ՝ հաւաստի մե՛զ թուեցաւ՝ որ 'ի Մարիբաս Կատինայն է՝ քննութիւն

Բաղ

Քաղդեական Մատենից, քան զայսոսիկ. քանզի՝ ոճո՛վ իմն ասէ, և զպատճառս պատերազմին յայտնէ։ Իսկ՝ առ այսոքիւք, և առասպելք աշխարհին մերոյ՝ զբազմահմուտ Ասորին արդարացուցանեն. աստ ուրեմն՝ զմահն ասել Շամիրամայ, և զհետեւակ փախուստն՝, և զպասքումն՝ և զկիղձս ջրոյն, և զըրբումնն։ այլ և 'ի մօտ հասանիլ Սուսերաւորաց, և զյուռութն 'ի ծով՝ և բան 'ի նմանէ, ուլունք 'ի ծով՝ Շամիրամայ։ այլ՝ ախորժելս առասպելն՝ և Շամիրամ քար, առաջին քան զՆիոբէ։ արդ՝ այս շատ է։

Բայց մեք՝ որ զկնի այսորիկ։

Պրակ ԺԸ 18

Որ ինչ՝ վասն մահուանն Սամիրամայ։

Յարմարեալ զայսոսիկ՝ կարգեցից քեզ 'ի գիրս յայտնիկ, զազգիս մերոյ Աւագագոյն Արա՝ և զՆախնիս, և որ ինչ՝ վասն նոցա զրոյցք, և իրակութիւնք իւրաքանչիւր՝ ոչ ինչ կամաց մտածական, և ոչ ինչ անպատշաճ 'ի սմա յօրինելով բան, այլ՝ որ ինչ՝ 'ի գըրոց. իսկ՝ ըստ նմանեացն ապա՝ և որ ինչ՝ 'ի բանից արանց իմաստնոց. և յայսոսիկ քաջախոհայ, յորոց մեք արդարապէս ջանացաք հաւաքել զհնագրութիւնս. և ասեմք լինել արդարաբան 'ի պատմութե̃ս յայսմիկ՝ ըստ մերոյ յօժարութե̃, և ուղղամտութե̃: Իսկ՝ ըստ որոց հաւաքումն ԱՅ̃ լինել յայտնիս. և մարդկան գովելիս՝ կամ բամբասելիս: մեք՝ այնոցիկ օտար, և 'ի բա՛ց կացեալ. բայց՝ զուգութիւն բարբառոց՝ և հաւասարութի̃ թուո՛յ կարգի պատմեաց, զճշմարտասիրութի՛ւն աշխատասիրութեանս մերոյ՝ ակն արկէ. և այսոցիկ այսպէս կարգեցելոյ՝ կամ հաւաստի՛, և կամ, դո՛յզն ինչ կասեալ յարդարոյն:

Սկսայց՝ քեզ՝ և որ ինչ զկնի այսոցիկ՝ 'ի հիւսման պատմութենէ բանից: Արդ՝ յետ մահուանն Շամիրամայ 'ի Զամեսեայ՝ որդւո՛յ իւրոյ՝ որ է, Նինուաս. որ և յե՛տ սպանանելոյն զԱրայն, ա՛յսպէս հաւատեաւ տեսցուք զկարգ բանիս:

Թագաւորէ՛ Նինուաս՝ սպանեալ զմա՛յրն՝ հեշտասէր, և խաղաղական կեցեալ. և առ սովաւ Աբրահամու աւուրք բաւեալք:

Դա

Ժամանակագրութիւն ծննդաբանութեան ազգին մերոյ ըստ Հեբրայեցւոց, եւ ըստ Քաղդէացւոյն, մինչեւ ց'Սարդանապալոս, որ եւ կոչի՝ Թոնոս Կոնկողերոս։

11 Աբրահամ
12 Իսահակ
13 Յակոբ
14 Ղեւի
15 Կահաթ
16 Ամրամ
17 Մովսէս
18 Յեսու
19 Գոթոնիէլ
20 Աւովդ
21 Բարակ
22 Գեդէօն
23 Աբիմելէք
24 Թովղայ
25 Յայիր
26 Յեփթայ
27 Եսեբոն
28 Ելոն
29 Աբդոն
30 Սամփսոն
31 Հեղի
32 Սամուէլ՝ Սաւ
33 Դաւիթ

'Ի ժամանէ յառաջ ոչ ըստ ազգի՝ այլ ըստ յառաջադիմութեան արանց՝ զի եւ ամենեքեան յԱբրահամէ։ 'Ի պատահել որ չ՝ Իսմայելեանցն 'ի ժամանէ քահանայապետին յԱհարովնականն 'ի Թարսիս։ Եւ յայսմնէ դարձ համեմէն՝ որ յարջանանն Աֆրիկեցւոց ազգին հին գրեալ կան մինչեւ ց'այսօր ծննդեանն արդ[illegible] այացեալ։

34 Սալոմոն
35 Ռոբովամ
36 Աբիամ
37 Ասայ
38 Յոսափաթ
39 Յորամ

Ի Յեսուայ գողոյ փախուցեալ մեծ՝ Նախարարք Քանանացւոց՝ էջեալ բնակել աստ՝ յորոց մի, և Գնթունի տուն պատուականագոյն մեր ՚ի Հայս։

Եւ ստուգեալ հաւաստի՝ գտաք զսերունդս ազգէն Գնթունեաց։ Ի սմանէ առանց հակառակութե̄ լեալ զայս, և բարք արանց ազգե ցայտնեն Քանանացի գոլ։

11 Նինուաս	Արամ
12 Արիոս	Արայն գեղեցիկ
13 Առալիոս	Արայ Արայեան
14 Բաղէոս Քսերքսէս	Անուշաւան
15 Արմաթրիտէս	Պարէտ
16 Բելոքոս	Արբակ
17 Բաղէոս	Զաւան
18 Ալտադոս	Փառնաս
19 Մամիդոս	Սուր
20 Մաքալէոս	Հաւանակ
21 Սփառոս	Վաշտակ
22 Մամիլոս	Հայկակ
23 Սփառէտոս	Ամբակ
24 Ասկատադէս	Առնակ
25 Ամինդէս	Շաւարշ
26 Սատասկար	Նորայր

Իսկ մերոյն Արայէ որդի Արայ ՚ի Սամիրամայ կոչեցեալ՝ և շփոթ վերակացութեան աշխարհիս նմա հաւատացեալ։ Իսկ նորա Անուշաւան։ ըՀայկեան ազէն ընծիւղ Բնէ լոխոսէս և ամբողջ իմն արարեալ անխարդ հաւրբք և միաբանել ՚ի նմին։

27	Սուսառուխս	Գոռակ	
28	Լամպրուխս	Հրանտ	
29	Պանեաս	Ընձաք	
30	Սոսառմոս	Գղակ	
31	Միթրէոս	Հորոյ	
32	Տեւտամոս	Զարմայր	Սա՛ օգ
33	Թինեւս, ոս	Պերճ	նական
34	Դերկիւղոս	Արբուն	պրիամու
35	Եւպաղմոս	Բազուկ	էր, և
36	Պուրդեւծիս	Հոյ	ջանայ ա
37	Փառատէս	Յուսակ	ռեալ ըն
38	Ակրազանիս	Կայպակ	Եթով
39	Սարդանապալ	Սկայորդի	պայէ զօ

րուն մեռանի ՚ի քաջացն Հելլենացւոց։

Գլուխ ԺԹ 19

Սան Արայեան Արայի. և ընդ այր որդէ Անուշաւանն՝ որ Սօս անուանեցաւ։

Այլ անդէն՝ խակ ՚ի կենդանութեան Թէ խուռում Շամիրամ, զծը նեալն ՚ի Նոճարդայ, ՚ի սիրելի կը նոջէն Արայի, որ էր երկոտասանից մնացե՟լ ամաց՝ 'ի մահուանն Արայի․ վասն առաջին իւրոյ խանդաղատանաց՝ որ առ Արայն Գեղեցիկ՝ կոչէ զանուն նր՟, Արա՛յ․ և կարգէ զնա՛ 'ի վերակացութ՟ի աշխարհիս, մտերմութբ՟ հաւատացեալ 'ի նա՛։ զորմէ՝ և մեռանիլ ասեն՝ ընդ Շամիրամայ, 'ի պատերազմի։ բայց՝ յարէ զկարգ բանից՝ զկնի այսորիկ՝ այսպէս․ Արայեանն Արա՛յ մեռանի 'ի պատերազմի՝ ը՟ն Շամիրամայ, թողլով արու զաւակ՝ ամենահարուստ՝ և շատահանճար յի՟ր, և 'ի բան՝ զԱնուշաւանն սօսանուէր։ քանզի՝ ձօնեալ էր՝ ը՟ս պաշտամանց, 'ի Սօսին Արամանեկայ, որ յարմաւիր․ զորոյ զսաղարթուցն սօսաւիւն հանդարտ, և սաստիկ շնչելոյ օդոյն և եթ՝ ոստոց շարժումն, սովորեցան 'ի հմայս յաշխարհիս Հայկազանց․ և այս՝ ց'բազում ժամանակս։ Այս Անուշաւան՝ բաւական ժամանակս արհամարհու՟ի կրեալ 'ի Զամեսեայ Տուայտի, 'ի դրան Արքունի․ իսկ օգնեալ 'ի բարեկամաց՝ շահի զմասն ինչ աշխարհիս՝ Հարկահանութ՟բ խնամեալ․ զկնի ապա՝ և զբոլո՛րս։

այլ կարի շատ լինի, եթէ զմին որ ինչ արժանն իցէ՝ ասիցեմք 'ի ճառիս զնախակարգեցելոց Արանցդ՝ զգործս, և զբանս։

Պրակ Ի 20

Որ 'ի Սկայորդւոյն՝ Պարոյր առաջին 'ի Հայս թագաւորէ․ օգնական լինի Արբակայ Մարի․ բառնալով զթագաւորութիւն 'ի Սարդանապալայ։

Թողլով զո՛չ կարեւորագոյնս 'ի բանից, ասասցուք՝ որ ինչ հարկաւո՛րն։ վերջին մց, որք Ասորեստանեայց թագաւորութեն․ և որք 'ի Շամիրամայ, և կամ թէ՝ 'ի `Նինոսէ,` զմերս ասեմ, Պարոյր՝ առ Սարդանապալեաւ․ որ՝ ո՛չ փոքր ինչ՝ օգնականութիւն տուեալ գտանի 'ի Արբակայ Մարի, բառնալով զթագաւորութիւնն 'ի Սարդանապալայ։ Եւ այժմ, ահա՛ զուարձացայց՝ ո՛չ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով 'ի տեղիս յորում մերոյ իսկ Բնիկ նախնւոյն 'ի թագաւորութեն հասանին յաստիճան․ Սորոյ՝ արժա՛ն է աստանօր, մեծ գո՛րծ կատարել՝ և բազում ասել՝ առարկութիս բանից։ զորոյ մեզէն իսկ զհիմունս՝ այսպիսեաց բանից՝ ընթեռնուլ արժանաւորեցաք ՚ի չորս հազներորդութիս, զարդասաւորին ՚ի բանս, և զիմաստնոյն իսկ, և ՚ի մէջ Իմաստնոց իմաստնագունի։ Քանզի Վարբակէս, գաւառաւ՝ Մեդացի. ՚ի փոքունց կողմանց, ՚ի ծագաց գաւառին Ամրագունի. խորամանկագոյն ՚ի կենցաղավարութեան. ՚ի մարտս՝ երեսաւոր։ ծանուցեալ՝ զանմարդի բարս, և զհեշտասէր թուլամորթութի յաղթութե̃՝ Թոնոս Կոնկողեռայ խայտայուցանէ՝ բարուցն, և ձեռ̃ցն առատութե̄, ՚ի Քաջաց, և ՚ի Պատանեայ արանց՝ բարեկամս. որովք՝ և աշխարհակալութիւն Ասորեստանի՝ առ այնու ժամանակօք՝ վարիւր յայտնապէս մեծաւ հաստատութե̄։ յինքն՝ և զՔաջ մեր Նախարար, յանկուցանէ՝ զՊարոյր, Թագաւորութե̃ շուք, և ձև՝ նմա խոստանալով։ և բազում ամբոխս՝ արս արանց՝ և որք, ի տեղ Նիզակի՝ և յաղեղն, և ՚ի սուսեր աջողաձեռնագոյն՝ գումարէ։ և այսպէս՝ զԹագաւորութիւն ՚ի Սարդանապալայ յինքն առեալ՝ տիրէ Ասորեստանի՝

և Նինուէի. բայց՝ Վերակացուս զայլս թողլով, փոխէ զԹագաւորութիւնն 'ի Մարս: այլ զայս՝ եթէ առ այլս՝ այլազգաբա՛ր պատմի, մի ինչ՝ սքանչանար: զի՝ որպէս վերագո՛յնն ուրեմն՝ յառաջին Ճառսն՝ ամբաստանեցաք զԱռաջնոցն մերոց Նախնեացն՝ անիմաստասէր բարուց՝ և ախորժակաց, այս հանդիպի՝ և աստանօր. քանզի՝ որք 'ի Հօրէ Նաբուգոդոնոսորայ գրեցան՝ իւրեանց յիշողութեանց 'ի Վերակացուա՛ց. իսկ մերոյն՝ ո՛չ սոյսպի մի ինչ խորհեցելոյ, մնաց աննշանակելի 'ի Վերջինսն: Ապա՝ թէ ասիցեն՝ ուստի՝ մեզ՝ զՆախնեացն մերոց, գիտել զանուանս՝ այսպէս իսկ՝ ըզբազմաց և զգործս: Ասեմ, զՀնոյն Դիւանաց, Քաղդէացւոց, Ասորեաց, և Պարսից. վա մտելոց անուանց, և գործոց նոցա 'ի Քարտէս Արքունի, իբրև Վերակացուաց, և Գործակալաց Աշխարհիս, 'ի նոցանէ կարգեցելոց, և Մեծաց Կողմնակալաց Աշխարհիս, 'ի նոցանէ կացելոց:

Պրակ

Գրակ եր՟կ 21

Կարգ Թագաւորաց, եւ Իշխանաց մերոց, եւ համարնոցանց, Արտէ 'ի Հօրէ տանելով:

Արդ՝ այժմանյից 'ի Թիւս ա
րանց մերոց՝ մանաւանդ Թ
Թագաւորաց՝ մինչև ց'տէրութի
Պարթեւաց. քանզի՝ այսոքիկ Արք
'ի մերոց Թագաւորացն սիրելի
ո՟ղ Բնիկք, և իմոց Արեանն առուք
և հաւաստի յարազատք: և սիր
լի էր ինձ՝ յայնժամ գալ փրկչին, և
զիս գնել. և առ նոքօք՝ զիմ յա
խարհ զմուտն լինել, և նոցա Տէ
րութեամբն՝ զուարճանալ՝ և յա
գեացս ապրել՝ վտանգիցս. այ
վաղ ուրեմն էանց 'ի մէնջ՝ պատ
հումն այն, թէ արդեօք և վիճա
Բայց արդ՝ ես առ Օտարաց Թա
գաւորութեամբն կացեալ՝ ընդն
ցոյն, զմերս ազգի՝ ածից զկար
Թագաւորացն. զի մերոյ աշխա
հիս՝ Բնիկք Պսակաւորք Արք
նոքիկ. զորոց զանուանսն, 'ի նոցա
նէ դրոշմեսցուք: Եւ զի՝ արդար
զայնու ժամանակաւ՝ էր մերոյ Ա
գիս Թագաւորութիւն՝ վկայէ՝ և
Երեմիա Մարգարէ, 'ի բանս իւ

հր

հրաւիրելով՝ ընդդէմ Բաբիլոնի, ՚ի պատերազմ։ հրաման տուր՝ ասէ՝ Այրարատեան Թագաւորութեան, և Ասքանազեան Գնդին։ (Երեմ. 51, 27։) Եւ այս՝ հաւաստի մերոյ գոլոյ Թագաւորութեանն՝ առ այնմ ժամանակաւ. այլ՝ մեք զկարգն կանոնելով առ ընթեր, և զՄարաց Թագաւորսն։

Մարաց Առաջինն	Յաչ մեր Առաջին Մար բաչայ պատճեալ։
40 Արբակէս	Պարոյր որդի Սկայ
41 Մանդաւկէս	Հրաչեայ
42 Սոսարմոս	Փառնուաս
43 Արտուկաս	Պաճոյճ
44 Կարդիկէս	Կոռնակ
45 Դէովկէս	Փաւոս
46 Արտունէս	Միւս Հայկակ
47 Կիւաքսարէս	Երուանդ սակաւ
48 Աժդահակ	Տիգրան. ‿կեաց

Բանզի՝ և վերջին Երուանդս՝ և Տիգրան, ՚ի սոցանէ՝ ը̅ր յուսոյ՝ կոչեցեալ ասեմ, արդեօք ոչ կարի հեռագոյն գոլով ժամանակին։ յիշեցուք զանուանս այսոցիկ. Հրաչեայ սա կոչի՝ վ̅ն առաւել պայծառերես, և բոցակնագոյն իմն լինելոյ.

Առ սովաւ՝ ասեն կացեալ զ՛Նաբուգոդոնոսոր՝ Արքայ Բաբելացւոց, որ գերեաց զՀրէայս, և սորա՝ ասեն զմի 'ի գլխաւորաց Հեբրայեցւոյն գերելոց՝ խնդրեալ 'ի Նաբուգոդոնոսորայ, Շամբաթ անուն, ածել՝ բնակեցոյց մեծաւ պատուով. և 'ի սմանէ, ասէ Պատմագիրն՝ լինել զԱզգն Բագրատունի՝ և Հաւաստի է:

Յաղագս՝ Սամբատայ:

Թայց թէ՝ ո՛րպիսի ջան եղև՝ Թագաւորացն մերոց՝ զնոսա, 'ի պաշտօն Կռոցն՝ խոնարհեցուցանել. և կամ թէ՝ քանիք, կամ, ո՛յք 'ի նոցանէ՝ որք Ա՟ծպաշտութեամբ վճարեցին զկեանս, յետոյ պատմեսցուք ոճով: Քանզի՝ ասելն յոմանց՝ անհաւաստի մարդոց՝ ըստ յօժարութեան, և ո՛չ՝ ըստ ճշմարտութեան, 'ի Հայկայ՝ զԹագադիր ազգ Բագրատունեաց՝ լինել. վ՟ն որոյ՝ ասեմ, մի՛ այսպիսեաց բանիցս՝ հաւանիր՝ յիմարութե՟ց. զի՝ և ո՛չ մի՛ շաւիղ՝ կամ ցուցումն, գոյ յասացեալսդ՝ որ զարդարութ՟ի ակնարկէ: զի 'ի բայ բանից՝ և անո՛ճ իմն՝ յաղագս Հայկայ՝ և աննմանեացն՝ կակազէ:

Բա՛յց ծանիր՝ զի Սմբատ անուն՝

զոր յաճախ Բագրատունիքդ 'ի վերայ Պատանեկաց կոչեն. ճշմարտութ՟ե է, Շամբայ ընտանախնի իւրեանցն խօսիմ՝ որ է Հեբրայեցի։

Պրակ իբ՟ 22

Յաղագս՝ որդւոյն Սենեքերիմայ. և թէ՝ Արծրունիք, և Գնունիք, և Բդեշխն՝ անուանեալ Աղձնեաց, 'ի նոցանէ են սերեալք. Եւ 'ի նոյն ճառի, թէ՝ անգեղ տունն 'ի Պասքամայ։

Այլ յառաջ քան՝ զձեռն արկելն 'ի բանսն՝ որ յաղագս Մեծի Տիգրանայ, որ իններորդ 'ի Բնկից մերոց Պսակաւորաց էր, հուժկու անուանի և յաղթօղ՝ ընդ այլ Աշխարհակալս, ճառեսցուք որ ինչ կարևորագոյն է՝ ոճոյս մերոց բանից։ Եւ 'ի մոռացումն եկն արդեօք, թէ ո՛յն լինիցի՝ յաղագս Սենեքերիմայ։ Վասնզի ութսուն աւելի, կամ պակաս ամօք՝ յառաջ քան՝ զթագաւորութիւնն Նաբուգոդոնոսորայ, էր Սենեքերիմն կացեալ Արքայ Ասորեստանի, որ զԵ՟էմ պաշարեաց՝ առ Եզեկիայիւ Հրէից առաջնորդաւ. զոր սպանեալ որդւոց նորա՝ Ադրամելքայ՝ և Սանասարայ, եկին փա փախստական առ մեզ։ յորոց զմինն՝ յարևմտից հիւսիսոյ մերոյ աշխարհիս, մերձ ՚ի սահմանս նորին Ասորեստանի՝ բնակեցուցանէ Սկայ որդի քաջ մեր նախնին, ցծ է, զՍանասարն։ և ՚ի սմանէ՝ աճումն, և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն, ասացեալ լեառնն։ Իսկ՝ պերճագոյնք ՚ի նոցանէ՝ և գլխաւորագոյնք՝ յետոյ ուրեմն՝ մտերմութիւն վաստակոց, առ թագաւորսն մեր ցուցեալ՝ Բդեշխութիւն կողմանցն՝ արժանաւորեցան առնուլ։ Իսկ՝ Արգամզանն՝ յարևելից հարաւոյ՝ նորին կողմանն բնակեալ. ՚ի նմանէ՝ ասէ Պատմագիրն, լինել՝ զԱրծրունեա արդ՝ յիշելն մեր՝ զՍենեքերիմ, պ՟ա ճառաւսէ այս։ բայց՝ զանդեղ տունն, ասէ նոյն Պատմագիր, ՚ի Պասքամյ ումեմնէ, ՚ի Հայկայ Թոռնէ լինել։

Գրակ ԻԳ 23

Յաղագս Տիգրանայ՝ Թէ որպիսի՞ ամենայնիւ։

ԲԱյց՝ անցցուք այսուհետև՝ որ ինչ յաղագս Տիգրանայ. քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն՝ և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ՝ և ամենեցունց քաջաց։ որ և՝ Կիւրոսի աջակցեալ՝ զՄարացն 'ի բաց բառնալով զիշխանութի̃. և զՅոյնս՝ ո՛չ սակաւ ժամանակս՝ ը̅ իւրով հնազանդեալ՝ նուաճեալ. և զսահմանս մերո՛յ բնակութե̃՝ ընդարձակեալ 'ի հինն մեր հասուցանէր յեզերս՝ ծայրից բնակութեանց. և ամենեցունց՝ որք առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի. և զկնեացն՝ ըղձալի, ինքն՝ և ժամանակ իւր։ զի՝ ո՛վ ոք 'ի ճշմարիտ արանց՝ և որոց 'ի բա՛րս արութե̃, և խոհականութե̃՝ սիրելութի̃ կայցէ, սորա՛ յիշատակօքս՝ ո՛չ զուարճասցի, և յորդորեսցի այսպիսի լինել՝ Այր Արանց Գլուխ, արութի̃ ցուցեալ՝ զա՛զգս մեր բարձրացոյց. և զընդ լծո՛վ կացեալս՝ լծադի՛րս բազմից, և հարկապահանջս կացոյց։ մթերս ոսկւոյ՝ և արծաթոյ. և քարանց պատուականաց, և զգեստուց և պէսպէս գունից՝ և անկուածոց, արանց միանգամայն, և կանանց հասարակաց՝ բազմացոյց. որով՝ տգեղագո՛յնքն՝ իբրև զգեղաւո՛րս՝ երևէին գեղեցիկք. և գեղաւո՛րքն՝ ը̅ ժամանակին՝ առ հասարակ Դիւցազնացեալք. Հետևամարտքն, 'ի վե վերայ ուսո՛ց ձիոց բերեալք, և Պարսաւո՛րքն՝ առ համասարակ դիպ աղեղո՛ւնք՝ և չեշտաւո՛րք, 'ի սուսեր, և 'ի նիզա՛կ վառեալք։ մե՛րկքն՝ վահանօ՛ք, և զգեստօ՛ք երկաթեօ՛ք՝ պարածածկեցեալք։ որոց 'ի մի՛ վայր հաւաքելոց՝ բաւակա՛ն էր տեսի՛լն միայն՝ որ 'ի նոցա՛յն պահպանակաց, և զինո՛ւց փայլմունք, և շողի՛ւքն զթշնամի՛սն արտահալածել։ խաղաղութե՟՝ և շինութե՟ բերո՛ղ· իւղո՛վ՝ և մեղու զա՟մ հասակս պարարեալ։ Այս՝ և որ այլ այսպիսի՛ք բազում, երբե՛ր մերոյ աշխարհիս՝ Խարտեա՛շս այս, և աղեբե՛կ ծայրիւ՝ Երուանդեանս Տիգրան· երեսօ՛ք՝ գունեան· և մեղուա՛կն՝ անձնեայ· և թիկնաւէտն առոյգաբա՛րձ, և գեղեցկո՛տն · պարկե՛շտն, 'ի կերակո՛ւրս՝ և յըմպելիս · և առ խրախճանութի՟ս՝ օրինաւոր։ զորմէ ասէին 'ի ջնարսն մեր՝ որք բա՛նդռամբն երգէին։ լինիլ սմա՛՝ և 'ի ցանկութի՟ս մարմնոյ՝ չափաւոր· մեծիմա՛ստ՝ և պերճաբան · և յա՟մ, որ ինչ մարդկութե՟ս պիտանի։

Եւ զի՛նչ՝ ինձ 'ի գի՛րս յայսոսիկ իցէ բան սիրելի, քանթէ՝ որ յաղագսորա՛ էին գովե՛ստք, և պատմութի՟ք

յեր

յերկարել. արդարադատ՝ և հաւասարասէր կշեռս ունելով յամի·զամ ուրուք զկենցաղ միայն լծակշեռ. ոչ ընդ լաւագոյնսն՝ խնդայր, և ոչ զարուկմն արհամարհէր, այլ ամենեցուն հասարակաց հնարէր զխնամոցն իւրոց 'ի վ՟ր տարածել զգեստ։ Սա, նախ յառաջագոյն՝ որ 'ի Սարացնէր Աժդահակ եղեալ՝ տայ նըմա զքոյր իւր Տիգրանուհի՝ կնութ՟ն՝ ըղձիւք զնա խնդրելով Աժդահակայ։ քանզի՝ ասէր, կամ, 'ի ձեռն այսպիսւոյ մերձաւորութեան սէր հաստատուն առ Տիգրան հարստեալ։ կամ, դիւրաւ զնա այսպէս դաւաճանեալ՝ 'ի սպանումն։ զի էր նա խէթ կամաց իւրոց։ մարգարէութ՟ն իմն՝ յոչ կամաց լեալ նմա առաջի կայ դիպուածն։

Գլուխ իդ 24

Վասն երկեւղի կասկածանացն Աժդահակայ, 'ի դաշնաւորութ՟ե սիրոյն, Կիւրոսի և Տիգրանայ։

ԲԱյց՝ էր նիւթ այսպիսի խռոհականութ՟ե, դաշնաւորութ՟ե մտերմութ՟են՝ որ 'ի Կիւրոսէ առ Տիգրան։ յորմէ՝ բազում անգամ, և ախտ քնոյ 'ի բա́ց փախուցեալ լինէր 'ինմանէ՝ յիշատակօք այսու̂իկ· և խորհրդակցացն իւրոց՝ անդո́ւլ առնէր հարցումն՝ վասն այսպիսւոյ պատճառի։ զի՞նչ պիտի՝ հնարիւք լուծանել կարասցուք՝ զկապ սիրոյ Պարսկայնոյն, և Հայկազնւոյն բազմաքիւրաւորի։ Նա և յայսպիսում շփոթման խորհրդոց՝ հասանէ նմա առաջիկայիցն յայտնութի̃, 'ի ձեռն անըրջականա́ց իմն նախատեսութեանց, օրինակաւս այսու̂իկ՝ ասէ, որ պատմէն։

Գլուխ իե̃ 25

Թէ՝ որպիսի խնդրի լինելով Աժդահակայ՝ զառաջին դրդումն տեսանէ՝ սքանչելի երազն։

Էր՝ ասէ՝ յաւուրսն յայնոսիկ՝ ո́չ սակաւ ինչ վտանգ՝ որ 'ի Մարացն Աժդահակայ՝ 'ի միաբանութենէ Կիւրոսի, և Տիգրանայ։ Սորոյ՝ և 'ի սաստկութենէ ծփանա̀ց խորհրդոյն՝ լինէր նմա 'ի տեսլեան երազոց, և երևութանալ 'ի քուն գիշերոյ՝ զոր ո́չ երբեք՝ յարթնութե̃ ետես աչօք, և ո́չ 'ի լուր ականջաց՝ լուա́ւ· ուստի՝ և ընդո́ստ 'ի քնոյ լինելով· ո́չ մնաց՝ ըստ սովո

րու

րութե՟ կարգին, 'ի ժամ խորհրդականութե՟ն. այլ՝ այն ինչ գիշերոյն՝ ոչ սակաւ ժամս ունելով՝ ձայնէ՛ ըզխորհրդակիցսն, և տրտում երեսօք՝ յերկիր հայելով՝ 'ի խորոց սրտին, մինչէ յոգւոցհանութե՟. և զվասն էրն, 'ի խորհրդակցացն հարցանիլ՝ յերկարէ՛՝ ժամս ինչ՝ զպատասխանիսն. և ո՛ւր ուրեմն՝ հեծութե՟ ընկիզըն արարեալ՝ յայտնէ՛ զնա՟մ, որ 'ի ծածուկս սրտին խորհուրդք՝ զէ՛ր ահագին տեսլեանն։ Ի՛ր ինձ՝ ասէ՝ ո՞վ Սիրելիք՝ այսօր լինիլ յերկրէ անծանօթու՟մ, մերձ 'ի լեառն մի երկա՛ր յերկրէ բարձրութե՟, որոյ գագա՛թն՝ սաստկութե՟ սառնամանեաց պատեալ. և ասէին՝ գոգցես՝ յերկրին Հայկազնեայց զայս լինիլ։ և 'ի նայե՛լ ինձ յերկարագո՛յնս 'ի լեառնն, կին մի ծիրանազգեստ, երկնագո՛յն ունելով զխուրձ տեու, նստեալ երևեցաւ՝ 'ի ծայրի այնպիսւո՛յ բարձրութե՟. աչե՛ղ՝ բարձրահասա՛կ, և կարմրա՛յտ. երկա՛նց ըմբռնեալ ցաւովք։ և 'ի յերկարագո՛յնս նայե՛լ իմ, յայսպիսի երևումն, 'ի հիացման լինիլ. ծնաւ յանկարծակի՛ կինն՝ երի՛ս կատարեալս 'ի

Դիւց

Դիւցազանց հատակաւ, և ընութ̃ի: առաջինն՝ զերամսն 'ի վ՟ր առիւծու ածեալ՝ սլանայր յարևմուտս: և երկրորդն՝՝ 'ի վ՟ր ընձու 'ի հիւսիսոյ հայելով: Իսկ երրորդն՝ զվիշապ՝ անարի՝ սանձեալ 'ի մերոյս վերայ, շահատակեալ՝ յարձակէր տէրութե Եւ 'ի մէջ խառնից, այսպիսեաց երազոց՝ Թուէր ինձ՝ կալ 'ի վերայ տանեաց իմոց արքունեացս, և զնոյն ինքն 'ի վերին երեսս տեսանել յարկացս, գեղեցկօք՝ և բազմագունիւք յօրինեալ շատրուանօք: և զպակօղոն մեր զդիւսն՝ հրաշատեսիկ տեսլեամբ 'ի վ՟ր կացեալս, և զիս ձեօք հանդերձ, պատուել զն՟ս զոհիւք և խնկովք: և յանկարծակի 'ի վեր հայեցեալ զայն՝ որ 'ի վերայ վիշապին հեծեալ էր այր, արծուոյ իմն սլացման՝ թևովք թուէր յարձակեալ. որ մօտ հասեալ՝ խորհէր կործանել զդիսն: Իսկ՝ ես Աժդահակ խառնեալ ընդ մէջ անկեալ՝ յիս զայն պիտանի ընկալայ յարձակումն, մարտ ընդ սքանչելւոյն առնելով Դիւցազին: և նախ՝ 'ի տէգ նիզակաց՝ զմարմինս երկաքանչիւրոց յօշելով՝ վտակս արեան հոսեցուցաք. և զա րեգակնատես երեսս ապարանիցս՝ արեան հոսեալ ցուցաք ծով. այսպէս՝ եւ զկնի այլովք զինուք՝ ժամն ոչ սակաւ։ Բայց՝ զի՞նչ օգուտ ինձ, եւ խօսիցս երկարութի, զի՛ վախճան գործո՛յն՝ իմն լինիլ կործանումն. ուստի՝ եւ 'ի քրտան սաստկութեան յայստղխառնում եղեալ վտանգէ, փախեաւ յինէն քունն։ եւ ո՛չ՝ այսուհետեւ թուիմ եւս կենդանի. զի ո՛չ ա՛յլ ինչ այսպիսիս նշանակէ երեւութիցն շարժումն, եթէ ո՛չ՝ որ 'ի Հայկազնոյն Տիգրանայ մեզ հասանելո՛ց է՛ թռնութեան յարձակումն։ Բայց՝ ո՞վ արդեօք՝ յետ ա՛ծոյն օգնականութեան՝ բանիւ, եւ գործով մեզ օգուտ խորհելով՝ ոչ զինքն կարծիցէ թագաւորակից մեր լինիլ։ Եւ բազում ինչ՝ 'ի խորհրդականացն լուեալ օգտութե մտածութի, շնորհակալութբ զնոսա պատուէ։

Պրակ իզ 26

Յաղագս՝ որ 'ի խորհրդականացն բան, ընկնի ապա՝ եւ որ ինչ իւր մտածութի. եւ 'ի նոյն հնարէ՝ այն գործ։

ԲԱզում ինչ՝ հանճարով՝ եւ իմաստութբ 'ի ձէնջ լուեալ ասէ՝ ո՞վ սիրելիք, ասացից՝ և որ ինչ իմ, յետ Ա՟ծոյն օգնականութ՟ե յայսոցիկ՝ օգտակարագոյն բան՝ և իմաստութիւն։ Քանզի՝ ո՛չինչ առ թշնամեացն զգուշութիւն՝ վեհագոյն բերէ օգնականութ՟ի, և ծանօթութ՟ի նոցայցն առաջիարկելոց գործոցն, քանթէ՝ որ 'ի ձեռն սիրով դաւելոյն՝ զկորուստ խորհեացի. և զայս դարձեալ՝ ո՛չ 'ի ձեռն գանձուց, և ո՛չ 'ի ձեռն բանից պատրողաց՝ այժմ մեզ հնարաւորութ՟ի է՝ կատարել, եթէ ո՛չ՝ ոպ՟ կամք են ինձ՝ այժմ գործել՝ և այն է նիւթ կատարման խորհրդոյս, և հնարք որոգայթիցս։ Գեղեցիկն 'ի կանայս, և խոհեմն՝ քոյր նորա՝ Տիգրանուհի. զի այսպիսիքս իսկ արտաքուստ՝ և եկամուտ հարազատութ՟ք՝ համարձակ զդաւելն 'ի ձեռն երթևեկութ՟ե անյայտաբար՝ ընդարձակ մարթեցուցանիցեն վարժել. կամ, յանկարծօրէն իւրոց Մտերմաց՝ ընչիւք, և խոստմամբ պատուոց՝ տալ հրաման խողխողել սրով. և կամ, հնարիւք դեղոց. և կամ, զՄտերիմս նորա՝ և զԿուսակալս՝ ընչիւք 'ի նմանէ 'ի բաց մերկանալ. և այս պէս՝ իբրև տղայ անզօր, 'ի բուռն առցուք: Եւ ազդո՛ւ համարեալ բարեկամացն՝ զայսպիսի խորհուրդ, նիւթեն և զգործն. 'ի ձեռն միոյ ուրումն Խորհրդակցացն տուեալ բազմութի՟ գանձուց, 'ի ձեռն Թղթոյն՝ օրինակաւս այսուիկ յուղարկէ:

Գրակ իէ 27

Թուղթ Աժդահակայ, յետ որոյ՝ ի յօժարութեան Տիգրանայ. ի յուղարկելումն Տիգրանուհեայ 'ի Մարս:

ԳԻտէ սիրելի Եղբայրութի՟դ քո, ո՛չինչ օգտակարագոյն՝ 'ի կեանս աշխարհիս, 'ի Դիցն մեզ պարգևեալ՝ քան՝ զՍիրելեաց բազմութի՟. և այսոքիկ, իմաստնոց արդեօք՝ և հզօրագունից: զի այսպէս՝ և արտաքուստ՝ ո՛չ 'ի վր՟ համարձակին խռովութի՟ք, ի՛սկ եկեալք՝ փաղփաղակի՛ հերքին. ի՛սկ 'ի ներքս՝ ո՛չ ըղմուտն յումեքէ գտեալ՝ այսպիսւոյ չարութե՟ն, ածեալ լինին: արդ՝ զայսպիսի շահօգտութե՟՝ որ 'ի բարեկամութենէ լինի, տեսանելով՝ խորհեցայ և ես՝ հաստատուն, և խորագոյն զսէրն հաստատել 'ի միջի. զի՝ երկոքեանս յամ՟ կողմանց ամրացեալ

ցեալ՝ ո՛ղջ՝ և անշարժ զտէրութի՟ւ մեր կալցուք. և այն լինի 'ի տան քո՝ զՕրիորդդ Հայոց Մեծաց՝ զքոյր քո՝ Տիգրանուհի՝ ինձ կնութեան։ թէ արդեօք՝ և բարձ դմա համարեցիս, Թագուհի Թագուհեաց դման լինել։ ո՛ղջ լեր՝ Թագակից մեր՝ և սիրելի Եղբայր. Եւ առանց յերկարելոյ զբանս՝ ասացից. գայ առաքեալն, և կատարէ՝ յաղագս Օրիորդին Գեղեցկի։ զի յանձն առեալ՝ Տիգրանայ՝ տալ զքոյր իւր Տիգրանուհի՝ Աժդահակայ կնութեան. և չև ևս գիտելով՝ զառ'ի նմանէ՝ դաւաճանութի՟ն, յուղարկէ զՔոյր իւր՝ օրինօք Թագաւորաց։ Զսա առեալ Աժդահակայ՝ ո՛չ միայն վ՟ն նենգին, որ'ի սրտի իւրում, այլ և՝ վ՟ն գեղեցկութեանն, առաջին իւրոց կանանցն կարգէ. և զչարութի՟ն'ի ներքոյ ոստայն հանէ.

Պրակ ի̅ը̅ 28

Եթէ՝ որպէս յայտնեցաւ նենգութիւնն, և գրգռեցաւ մարտն։ յորում, և մահն Աժդահակայ։

Զկնի այսորիկ՝ ասէ, թէ՝ 'ի հաստատել Աժդահակայ

զՏիգ

զՏիգրանուհի 'ի տիկնութիւն, ո՛չ ինչ՝ առանց կամաց նր՟, 'ի Թագաւորութե՟ իւրում, գործէր· այլ՝ բերանով նր՟ կարգէր զամ՟· և հրամանի նր՟, ամենեցուն հրամայէ հնազանդիլ։ Եւ յօրինեալ զա՛յս այսպ՟, ոսկանի՝ նմա՛ մեղմով զպատրանս մատուցանել։ Ո՞չ գիտես, ասէ՝ զի եղբա՛յր քո Տիգրան խանդացաւ զՏիկնութի՟ քո 'ի վերայ Արեաց, 'ի Զարուհեայ կնոջէ իւրմէ գրգռեալ· և զի՞նչ լինիցի՛ այն, եթէ ո՛չ՝ մեռանիլ ինձ նա՛խ՝ և առաջին, և ապա՛՝ լինել զԶարուհի 'ի վերայ Արեաց, և զաստուածուհեաց ունել զտեղի։ Բայց ա՞րդ՝ ընտրելի՛ է քեզ՝ մի՛ յայսցանէ. կամ, լինել Եղբայրասէր, և կործանմամբ խայտառակել՝ յանդիման Արեաց՝ յա՛նձն առնուլ· և կամ, զանձին իմանալով զբարի, խորհո՛ւրդ օգտակար 'ի մէջ բերել՝ և յաղագս՝ առաջի կայիցն հոգալ։ Բայց՝ է՛ր 'ի մէջ այսպիսում խորամանկութե՟՝ Թաքուցեալ և զայն, զմեռանիլն Տիգրանուհեայ, թէ՝ ո՛չ ինչ՝ ըստ կամաց, խորհեցի Մարա Պարսացւոյն։ Այլ իմացեալ Խորագիտոյն, և Գեղեցկին՝

զայս

զայսպիսի դաւաճանութիւն, պատասխանի առնէ՝ սիրելի բանս՝ Աժդահակայ։ և արագագոյն՝ 'ի ձեռն Մտերմայ՝ պատմէ Եղբօրն զնենգութիւնն։ և ձեռնարկէ՝ այնուհետև՝ 'ի գործն, 'ի ձեռն պատգամաւորութեան՝ գաղտնի 'ի միաբանութիւն տեսութեան՝ 'ի տեղւոջ միում, սահմանաց երկոցունց թագաւորութեանց. իբր՝ բան ինչ՝ և գործ հարկաւոր հասեալ՝ որ 'ի ձեռն գրոյ, և հրեշտակութեան՝ կատարել ոչ է կարողութիւն, եթէ ոչ՝ և դէմք երկոցունց՝ հանդէպ երկաքանչիւրոցն՝ երևեսցին։ Այլ՝ գիտելով Տիգրանայ զառաքեցելոյ իւրին զկատարումն, ոչ ինչ՝ յորոց խորհէրն Աժդահակ՝ ծածկէ, այլ՝ 'ի ձեռն գրոյ յայտնէ, որ ինչ՝ 'ի ներքին խորութեան սրտին. և յայտնեալ այսպիսւոյ չարութեան, ոչինչ էր՝ այնուհետև՝ բան, և խորամանկութիւն, որ զայսպիսիս առագատէր զչարութիւն, այլ՝ յայտնի այնուհետև՝ գրգռէր խազմն։ Եւ ժողովէ այնուհետև՝ Արքայն Հայոց 'ի սահմանաց Կապադովկացւոց, և որչափ ընտիրք Վրաց՝ և Աղուանից, և զամենայն իսկընտիրս Հայոց Մեծաց: և խաղայ՝ ա՟մ զօրութ՟ք իւրովն 'ի կողմանս Մեդացւոց: վտանգ այնուհետև՝ հարկ առնէ Աժդահակայ՝ պատահել պատերազմաւ: Հայկազինն՝ ոչ փոքր ինչ՝ ամբոխիւ: և երկայնէ՛ր հակառակութ՟ին մինչև յամիսս հինգ. քանզի հիւանդանա՛յր գործն արա՛գ, և առողջ՝ յորժամ զմտաւածէր՝ վ՟ս Քե՛ռն իւրոյ Սիրելւոյ՝ Տիգրանն: զի՝ այսպիսի իմ՟ն զե՛լս իրացն հնարէր, իբր՝ զի ո՛չ միայն՝ ապրել ձա՛ր լիցի՝ Տիգրանուհեայ. պատահէ և ա՛յս, և ժամ մարտին մերձենայ: Բայց՝ գովեմ զքաջ Նահատակն իմ, և ըզ Քա՛ջնիզակաւորն, և զամենեւին բո՛լոր անդամօք համեմատ, և գեղեցկութ՟ի աւարտեալ հասակի. քանզի՝ առո՛յգ ամենեւին՝ ըստիրեա՛լ պատշաճեալ՝ և ուժով, ո՛չ զոք ունելով զոյգ: և զի՞ երկայնեմ զբանս. քանզի՝ 'ի լինիլ մարտին, նիզակաւ՝ օրինա՛կ իմ՟ն՝ որպէս ջուր հերձեա՛լ՝ զերկաթ 'ի հանդերձն, շամփրէ՛ զԱժդահակ՝ յընդարձա՛կ տէ՛գ նիզակին. և յամփոփել միւսանգամ ըզձեռնն, արտա՛քս զկէ՛ս մասին թոքոցն՝ հանդէ՛րձ զինուն 'ի դուրս բերէ րէ։ Բայց՝ մա՛րտն էր սքանչելի, զի Բա՛ջք գիտեա՛լ Բաջաց՝ ո՛չ փաղփաղակն ՚ի թիկո՛ւնս ՚ի միմեանց դա՛րձուցանէին։ Ս՟ս որոյ՝ յերկարեալ գօ՛րծ պատերազմին՝ մինչև ՚ի ժամն ձիգս։ Իսկ՝ վախճան գործոյն՝ առնէր մահն Աժդահակայ։ և այսպիսի դիպուածս՝ ՚ի բարեբախտութ՟ի յաւելե՟լ՝ փառս յաճախէ Տիգրանայ։

Պրակ ԻԹ 29

Յաղագս Թէ՝ էր աղագաւ՝ յաղարկեաց զքոյր իւր Տիգրանուհի ՚ի Տիգրանակերտ. և յորում, վասն Անուշայ՝ առաջնոյ կնոջն Աժդահակայ, և բնակութ՟ե գերւոյն։

Պատմի և այս՝ եթէ զկնի՝ այսպիսւոյ իրաց կատարելութ՟ե, յուղարկէ կատարելապէս զքոյր իւր Տիգրանուհի՝ մեծաւ ամբոխիւ՝ ՚ի Հայս, ՚յԱւանն՝ զոր շինեաց՝ յի՟ւր անուն Տիգրան, որ է՝ Տիգրանակերտ։ և զգաւառսն զամենեսեան՝ ՚ի ծառայութ՟ի նմա հրամայէ. և զՄատանն անուանեալ՝ կողմանցն այնոցիկ ազատութ՟ի. ՚ի զարմից նո՟, ասէ՝ լեալս իբր Թգ՟ւրական զարմն։ Իսկ՝ զԱնոյշ՝ զառաջին ատացեալ կինն Աժդահակայ, և զբազումս ՚ի սեր սերմանէ Աժդահակայ Աղջկունս՝ հանդերձ Պատանեկօք, և բազմութե՟ գերեացն՝ որչափ թէ՝ աւելի քան՝ զբիւր մի՝ բնակեցուցանէ յարեւելեայ ուսոյ՝ մեծի լերինն, մինչև 'ի սահմանս Գողթան, որ է՝ Տամբատ, Ոսկի, Կողայ, Դաժգոյնք. և որ այլք՝ առ եզերբ գետոյն դաստակերտք. յորոց մինն է՝ Ընջունիք, մինչև հանդէպ ամրոցին՝ Նախճաւանու. և զերիս Անանս՝ զՍրամ, զՕուզայ՝ և զՍոշակունիս: Իսկ 'ի միւս կողմանէ գետոյն, զբոլոր դաշտն, որոյ գլուխն՝ Աժդանականն է՝ մինչև ց'նոյն ինքն ամուրն՝ Նախճաւանու: Բայց՝ զնախասացեալ կինն՝ Անոյշ՝ բնակեցուցանէ որդւովք իւրովք՝ յանդորրութե՟ սպառուածի՝ փլածի՝ մեծի լերինն, զորմէ՝ լեալ ասեն՝ յահագին իմն շարժմանէ, զոր պատմեն, որք բազմաշրջութե՟՝ հրամանաւ Պտողոմեայ՝ ասպարիզօք զբնակութիւ՟ մարդկան՝ չափեցին. այլ և՝ մասն ինչ՝ զծով՝ և զանբնակս, յայրեցածէն՝ մինչև ց'Աիմեռնոս: Իսկ՝ պաշտականս տայ Անուշայ՝ 'ի նոյն Մարաց՝ որք՝ առ ստամբ լերինն, բնա

կե

կեցան։ Յայտնեն զա՛յս ճշմարտապէս՝ և Թուէլեացն երգք, զոր պահեցին իմն ախորժելով՝ ոպ̃ լսեմ, մարդիկք կողմանն՝ Գինևէտ գաւառին՝ Գողթան. յոր շարին՝ բանք երգոց՝ զԱրտաշիսէ, և զորդւոց նր̃ յիշելով այլաբանաբար, և զարմից Աժդահակայ՝ վիշապազունս՝ զնս̃ կոչելով. զի՝ Աժդահակդ՝ 'ի մե՛ր լեզուս՝ վիշա՛պ է։ Այլ և՝ ճաշ՝ ասեն գործեալ Արգաւանայ՝ 'ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանս լեալ իմն 'ի տաճարին վիշապաց։ Այլ և՝ Արտաւազդայ՝ ոչ գտեալ քաջ՝ յորդւո՛յն Արտաշիսի՝ Գեղեցիկ ապարանից՝ 'ի հիմնանալն Արտաշատու՝ նա էանց՝ ասէ՝ գնաց, և շինեաց 'ի մէջ Մարաց՝ զՄարակերտ, որ է 'ի դաշտին՝ որ անուանեալ կոչի՝ Շարուր։ Այլ և՝ տենչայ Սաթենիկ՝ տենչանս, զարտախուր հաւասար խաւարտ. և զտից հաւարծի, 'ի բարձիցն Արգաւանայ։ Դու որդ՝ ո՛չ արդեօք առաւել՝ աստանօր զարմասցիս 'ի վերայ մերո՛յ ճշմարտապատմութեանս, և թէ՝ որպէս պատմեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են՝ յաղատն 'ի վեր, 'ի Մասիս։

Պրակ Հ 3°

Թէ՝ ո՞յք անուանք՝ առին Զարմք. և ո՞յք, ՚ի անուանէ որոշեալք Ցեղք։

Աւասիկ պատմեալ զարդարև՝ զբուն, և զառաջին Տիգրանն, և որ ինչ ՚ի նմանէ՝ գործք։ սիրելի՛ ոչ ինձ պատմողիս՝ ՚ի մէջ իմոց բանից՝ որ ինչ յաղագս Երուանդեանս Տիգրանայ՝ բանք. եղիցի՝ և Քե՛զ Ընթերցողիդ՝ որպէս այրն՝ և գո՛րծքն. ա՛յսպէս՝ և զըստ նմանէ գործք, սոյնպէս՝ և զնմանէ բանք։ Վ՟որոյ՝ սիրեմ, կոչել այսպէս՝ ըստ քաջութեն. Հա՛յկ Արամ, Տիգրան՝ քանզի՝ են քաջացն՝ ազգքն քա՛ջք. իսկ՝ միջոցն ոչ դէպ ուրեք Թուի՛ցի կոչել։ բայց՝ ըստ գիւցազնութեանն կարծեաց՝ հաւաստի՛ է և ասել մեր, ո՛չ Արամազդ ոք, այլ՝ ՚ի կամեցողն լսին լինիլ՝ Արամազդ. չորից՝ և այլոց անուանեցելոց սմանց Արամազդ։ Զի այսպէս՝ բազումք անուանեալք, Տիգրանք՝ մի՛ է, և միայնա՛կ ՚ի Հայկազանցս՝ որ զԱժդահակ եսպան, և զտուն նո՟ր ՚ի գերութե՟ն՝ վարեաց զԱնոյշ՝ Մայրն վիշապաց. օժանդակ կամօք՝ և յօժարու րութ̃՝ Կիւրոս ունելով յինքն՝ զիշխանութ̃ին Մարաց՝ և Պարսից յափշտակեաց։ Սորա՛ որդի, Բա՛բ՝ Տիրան՝ Վահա՛գն, զորմէ ասեն Առասպելք աշխարհիս.

Երկնէր երկին՝ երկնէր երկիր՝ երկնէր և ծիրանի ծովն․ երկն ՚ի ծովուն ունէր՝ և զկարմրիկն եղեգնիկ, ընդ եղեգան՝ փող ծուխ ելանէր, ընդ եղեգան՝ փող բոց ելանէր, և ՚ի բոցոյն վազէր Խարտեաշ Պատանեկիկ, նա՝ հուր հեր ունէր, ապա թէ՝ բոց ունէր մօրուս, և աչկունքն՝ էին արեգակունք։

Եւ զայս երգեալ ոմանց՝ փամբռամբ, լուաք մերովք իսկ ականջօք. յետ որոյ՝ և ընդ վիշապաց ասէին՝ յերգին կռուել նմա՝ և յաղթել. և կարի ի̃ն նմանագոյնս՝ զՀերակլեայ նահատակութիւնս նմա երգելոյ։ Այլ՝ ասեն՝ զսա և ա̃ծացեալ՝ և Անդրի, ՚ի Վրաց աշխարհին կանգնեալ՝ չափ հասակի նր̃՝ պատուէին զոհիւք։ և սորա ասեն զարմ, Վահունիք. ՚ի սմ̃ կրսեր որդւոյն՝ Արաւանայ, Արաւենեանք. սորա՝ Առաւան. սորա՝ Ներսեհ. սորա՝ Զարեհ. ՚ի սորա զարմից՝ և որ Զարեհաւանն կարդան ազգ։ Իսկ առաջինն սորա՝ Արմոգ. սորա՝ Բագամ. սո րամ՝ Վահան. սորա Վահէ. սա՝ ընդվզեալ՝ մեռանի յԱղեքսանդրէ Մակեդոնացւոյ։ Յայսմ հետէ՝ մինչև ց՚Թագաւորութիւն Վաղարշակայ ՚ի Հայս՝ ոչ ինչ ճշմարտագոյնս ունիմ, պատմել քեզ. քանզի՝ շփոթիւն ամբոխից՝ լեալ՝ այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս. և վա՟ այսորիկ՝ դիւրամուտ ՚ի Հայս լեալ Արշակ մեծ, Թագաւորեցուցանէ զեղբայր իւր Վաղարշակ ՚ի վերայ աշխարհիս՝ Հայոց։

Գլուխ լա՟ 31

Թէ՝ Արշական պատերազմ՝ առ Տետաման՝ և մեր Օտրմայր ընդ Առողպայն զօրան մինչևլոյ ատենաւորութ, և՚ի նոյն մահ։

Երկուք այսոքիկ են՝ որ աշխատութիւն մեզ տագնապաւ ՚ի վերայ՝ ՚ի քումմէ հասուցանեն հարցասիրութ՟է համառօտասիրութ՟ի, արագաբանութիւն։ և այսոքիկ պէրճք՝ և պայծառք, Պղատոնականք իբր եղանին բանք՝ հեռի ՚ի ստութենէ, և լի՛ որ ինչ ընդդէմ ստութ՟ն. և զայսոսիկ յառաջին մարդոյն՝ մինչև ց՚քեզ՝ պատմել. և այսոցիկ ՚ի միասին պատահել՝ անհնարին

րին է. քանզի՝ որ զամ̃ ստեղծ՝ կարող գոլով ՚ի քթթել ական ակնարկութե̃, զամ̃ կացուցանել՝ ոչ այսպ̃ հաստատէ, այլ՝ աւուրս որոշէ՝ և կարգս ՚ի ստեղծուածս. քանզի՝ են ոմանք առաջնոյ, և ոմանք երկրորդի՝ և երրորդի, և այլոցն աւուրց՝ ստեղծուածի։ և այսու իմն այսպիսի մեզ ակնարկէ կարգս՝ վարդապետութի̃ Հոգւոյն։ Իսկ՝ զքո փափագ, արագաքոյն այսպիսւոյ իմն տեսանեմք սահմանի, զի՝ արդարև ընդ նաւն առ ժամայն՝ ամենայնքն քեզ եղիցին ասացեալ։ Այլ՝ առ ՚ի մէնջ այսօրինակ՝ կամ յերկար, և քեզ՝ ըստ կամաց. կամ փոյթ, և քեզ՝ ոչ հաճելիք. զի՝ այսպէս քեզ ՚ի հապճեպելոյ, ահա՝ ոչինչ յաղագս՝ Մակեդովնացւոյն, և ոչ՝ վասն Սղիականին՝ ՚ի կարգին նշանակեցաք. այլ՝ զօդեմք աւասիկ։ ոչ ունիմք աւել իմաստուն՝ կամ անհանճար աստանօր լինիլ մեզ՝ հիւսն պատկանաւոր Ա̃ ոչ զայնոյիկ այժմ ուրեմն՝ զկնի հոլովելով բանս զկարևորսն, և մերոյս արժանի շարագրութե̃. և ոյք առաջինք արդեօք՝ այսպիսեաց ճառից, եթէ ոչ՝ որք ՚ի Հռոմերսնէ պատ մին. այն որ վ՟ն Իղիականին պատմին պատերազմին, առ Տևտամաւ Ասորեստանեայց. և մե՛ր Զարմայր ՚ի ծառայութեան սակաւուք ընդ Եթովպացւ՟ զօրուն օգնական Պրիամաւ։ և անդ ՚ի քաջացն Հելլենացւո՛ց վիրաւորեալ՝ մեռանի. այլ՝ կամիմ ՚յԱքիւղեայ, և մի՛ յայլմէ ումեքէ ՚ի քաջա՛ցն։

Կատարեցաւ Գիրք Առաջին՝ ծննդաբանութեան Հայոց Մեծաց։

Ի Պարսից առասպելաց՝ Յաղագս Բիւրասպեայ Աժդահակայ։

Բայց՝ զի՞նչ արդեօք տռփանք քեզ՝ և Բիւրասպի Աժդահակայ՝ փցուն՝ և անճոռի՝ առասպելքն իցեն. և կամ, է՞ր սակս՝ զմեզ Պարսից անյարմարի՛ց՝ և անա՛ճ բանից, մանաւանդ թէ՝ առաւել վ՟ն ամբաստանութե՟՝ առնես աշխատ. և անբարի՝ առաջնոյ նորա՛ բարերարութեանն, և Դիւաց՝ նմա՛ սպասաւորութե՟. և ո՛չ վրիպեցուցանել կարելոյ զվրիպեալն՝ և զսո՛ւտն. և ուսոցն համբուրո՛ւմն, և անդո՛ւստ վիշապա՛ցն ծնունդ, և յա՛յնմ հետէ՝ չարութե՟ յաճախութ՟ի ծախել զմար դիկ՝ 'ի պէտս որովայնի. Իսկ ապա՝ և Հրոդանայ ումեմն զնա կապել՝ տարեօք պղնձեօք, և 'ի լեառնն տանել՝ որ կոչի, Դմբաւընդ. այլ և 'ի ճանապարհի ննջելն Հրոդանայ. և Բիւրասպեայ քարշել 'ի բլուրն. և 'ի զարթնչելն Հրոդանայ, և տանել զնա 'յայրս ինչ լերինն, և կապել՝ և զինքն Անդրի, ընդդէմ նորա հաստատել: յորմէ պակուցեալ և հնազանդեալ կայ շղթայիցն, և ոչ զօրէ ելանել՝ և ապականել զերկիր: զինչ քեզ՝ առ այսոքիկ կարօտութիւն առասպելք սուտք. կամ, զինչ պէտք անմիտ, և անհանճար բանից յարմարանս: մի արդեօք՝ Յունականն պերճ, և ողորկ առասպելքն իցեն՝ հանդերձ պատճառաւ, որք զճշմարտութիւն իրաց՝ այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ: այլ՝ ասես մեզ՝ պատճառս տալ այլաբանութեան նոցա, և զարդարել զանզարդսն: նոյն առ 'ի յինէն՝ քեզ բան. զինչ այսոքիկ կարօտութիւնք: որպիսի իղձք անբաղձալւոյ իրիք՝ բաղձալ և մեզ՝ յաւելուլ աշխատութիւն: այլ՝ տացուք զայսոսիկ Մանկականի քոյ Տիոց, և անհասութեան խակութեան՝

լեալ տարփանք։ վասն որոյ՝ եղիցի և աստանօր՝ լնուլ մեզ զփափագ՝ կամաց քոց։

Ստորագրութիւն՝ որ ինչ՝ ասէս ընդ Աստուածեայ հաստատէին։

Օ Պղատոնականն՝ համարձակագոյն այժմ բարբառիմ. Իսկ արդ՝ արդեօք իցէ սիրելույ այլ ոք ես. քանզի՝ և չէ իսկ ոք։ Քանզի և 'ի վերայ այլոյն անհնարին՝ հնարաւոր վ՟ քոյ արարեցելոց մեր, կատարեմք և զայս. զի՝ զորոցն ատեմք և զբանս՝ և զգործս, և այնոցիկ լուր մանաւանդ՝ գրէ թէ՝ և զլսելիս մեր տաղտկացուցանէր. այսօր՝ իմովք ձեռօք՝ շարագրեմ զայնոսիկ, մի՛տս անմտութե՟ նոցա՛ տալով. և զկարի՛ վաղուց նոցա ի՛րս՝ և նոցա՛ անհասանելիս, աւասի՛կ յայտնեմ. միա՛յն թէ՝ և քեզ այսոքիկ ուրախութիւն՝ և կամ, շահ օգտութեան։ Այլ՝ ծանի՛ր զատելութի՟ մեր՝ առ այսպիսի բանս. զի՝ ո՛չ յառաջինս մեր ասացել՝ 'ի գիրս, և ո՛չ՝ 'ի վերջինս բանս՝ արժանաւորեցաք շարել՝ այլ՝ զնա և որի՛չ. և սկսայց այսպէս։

Ասացեալն 'ի նոցանէ՝ Բիւրասպի

Աժդահակ, առ Նեբրովթաւ նախնի նոցա․ քանզի՝ և ՚ի բաժանել լեզու̂ացն՝ ը̃ ամենայն երկիր, ո՛չ՝ խառնիխուռն՝ և ո՛չ առաջնորդ ա՛յս լինէր, այլ Ա̃ծայնոյն իմն ակնարկութ̃ Գլխաւորք, և Ցեղապետք որոշեալք՝ զիւրաքանչիւր սահմանս ժառանգեցին՝ կարի զօրութ̃բ։ և զայս Բիւրասպեայ՝ հաւաստեաւ անուն՝ Ձանձրեմ ես, Կենտօրոս Պուիւդեայ ՚ի Քաղդէականի գտեալ մատենի։ սա ո՛չ՝ քաջութ̃բ քանթէ՝ հարստութ̃բ, և ճարտարութեամբ՝ զՑեղապետութ̃ի ազգին իւրոյ՝ ունէր հնազանդեալ՝ Նեբրովթայ․ և հասարակաց՝ զկենցաղս կամէր յուցանել ամենեցունց․ և ասէր՝ ոչինչ իւր առանձին ումեք ունիլ պարտ է, այլ՝ հասարակաց ամենեցուն․ և ա̃մ ինչ նր̃՝ յայտնի էր բան՝ և գործ․ և ՚ի ծածուկ՝ ինչ ո՛չ խօսէր, այլ զամենայն յանդիման արտաքս լեզուաւ՝ զծածուկս սրտին․ և զել՝ և ըզմուտ բարեկամացն՝ որպէս ՚ի տունջեան, նոյնպէս՝ և ՚ի գիշերի սահմանէր։ և ա՛յս է՝ առաջի նորա ասացեալ անբարի բարերարութիւն։ ԱՅԼ քանզի՝ Աստեղաբաշխութ̃բ

հզօր

հզօրեղեալ՝ յօժարեցաւ ուսանիլ՝ և զկատարեալ չարութի̃ն, և այսոքիկ անկարելիք նմա՛ քանզի՝ ոչ վերագոյն ասացաք, սովորութ̃ի ունէր՝ պատրանաց աղագաւ՝ առ բազում ոչինչ 'ի ծածուկ գործել։ և զայնպիսի վերջին, և կատարեալ չարութ̃ի յայտնի ուսանիլ՝ կարողութիւն ոչ էր. Հնարք այսպիսում ուսման՝ դառնութեան հնարս, ցաւս ինչ յորովայն ունիլ՝ բաղբաջէր չարաչարս, որ՝ ոչ այլով իւիք՝ քանթէ բանիւ իմն, և անուշամբ սոսկալեաւ՝ բժշկեցի, զոր վայրապար լսել ումեք՝ ոչ է կարութիւն։ և զայս սովորեալ՝ որ զչարութի̃ն նիւթէր։ ուսուցանէր նմա՝ 'ի տան, և 'ի հրապարակս՝ անկասկած՝ զգլուխն 'ի վեր դնելով ուսոյց Աիւրասպեայ, և խօսելով յականջսն՝ ուսուցանէր զանբար̃ արուեստն, զոր յուասպելին՝ մանուկ Սատանայի՝ ասեն՝ այսսաւորելով լինէր կամակատար. և այլա՝ վասն որոյ պարգև 'ի նմանէ խնդրել՝ համբուրել զուսս։

Իսկ վիշապացն բուսումն՝ կամ, կատարելապէս վիշապանայն Աիւրասպեայ՝ որ ասի, է այսպէս. քանզի՝

մար

մարդիկ անբա՛ւ՝ սկսաւ զոհե՛լ Դիւաց, մինչև տաղտկանալ 'ի նմանէ բազմութեանն, և միաբանեալ ամենեցուն՝ և հալածեալ՝ և փախչե՛լ նմա 'ի նմին ասացեալ լերինն· և 'ի սաստկագո՛յնս զնա վարելոյ՝ թօթափեցաւ 'ի նմանէ ամբո՛խն նորա· յայս վստահացեալ՝ վարողա՛ցն զնա, թաքեան՝ աւուրս ինչ՝ զտեղեօքն։ իսկ՝ ժողովեալ Բիւրասպեա՛յ զցրուեալսն՝ յանկարծօրէն հասանէ 'ի վերայ, վնաս սաստիկ առնելով· այլ՝ յաղթէր բազմութիւն՝ և փախստական լինի՝ ասացեալն Բիւրասպի, և հասեալ՝ սպանանեն զնա՝ մերձ 'ի լեառնն, և ընկենուն 'ի վիհ մեծ ծծմբոյ։

Աւարտեցաւ Գիրք Առաջներորդ։

Հետասա՛ծ Քեծէ Ո՛անըս Սր բոյ·
Ղորըս յօդեալ՝ Փչմամբ Հո գւոյ։
Սախածան ծառեց՝ Րաջայ նախննոյ·
Թեղէ եալ, ըստ Եաւէ լոյ։
Օ՛է որոշման որէն Գը բոյ·
Մաստմբք Երկեալ՝ սորոյն կա լոյ։
Լուծ սպասուոր՝ դադարէ լոյ·
Նախնիքն Հատոր՝ սակս Հայկազ նոյ։
Երկրորդ Հատած փառակ նա նոյ·
Յանձեր խօսէ զՄըրշակս նոյ·
Քր Տրդատայ Երանէ լոյ·
Հովուապետին՝ Մեծին Սր բոյ·



Արիութիւն. Արդարութիւն Խոհեմութիւն.

Ավ՛ Նուրիջանեան

Լե՛ր միշտ խոհեմ
Արդարաբան.
Առցես պըսակ
Արիութեան:

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Պրակ ա̃ 1

Մովսէսի Խորենացւոյ՝ բան՝ միջոյ պատմութե՛ մերոց ՙՆախնեաց։

ԳՐԵՄ ՔԵԶ ԱՅԺՄ ՈՐ ԻՆՉ՝ ԱՌԱՆՁԻՆ մերոյ աշխարհիս՝ գործք, երկրորդ առնելով գի՛րս։

Սկսեալ'ի Թագաւորութե՛ն Աղեքսանդրի, մինչև ց'Թագաւորութի՝ Սրբոյ, և Քաջի՛ Առնն՝ Մեծին Տրդատայ. կարգաւ, որ ինչ՝ ա՛ստեղեալ գործ քաջութե՛, և արութե՛, իմաստից, և կարգաց՝ միոյ միոյ ուրուք 'ի նոցանէ. որք յԱրքայէն Պարթեց՝ յԱրշակայ, և'ի Վաղար շակայ՝ եղբօրէն նր՟, զոր մերոյ ազգիս թագաւորեցոյց. և որ ինչ՝ որք յետ նր՟ եղեն թագաւորք՝ աշխարհիս մերոյ, 'ի նորին սերմանէ, որդի 'ի հօրէ առնլով զտէրութիւնն, անուանեցան՝ Արշակունիք՝ յԱրշակայ։ Աւելո՛րդքն յա՛նգ՝ և 'ի մեծութիւն աճեցեալ, և միակք՝ ըստ կարգի հետևանաց 'ի թագաւորութիւնն։ Բայց՝ գրեմ կա՛րճ 'ի կարճոյ՝ որ ինչ՝ անկն է. և զաւելո՛րդսն թողում։ քանզի՝ բաւական է՝ յաղագս այլո՛ց ազգաց՝ որ ինչ՝ 'ի բազմաց ասացեալ եղև։ Յետ տիրելոյ ամ՟ տիեզերաց՝ Աղեքսանդրի Մակեդովնացւոյ՝ որդւոյ Փիլիպպեա՛յ Ոլիմպիադայ, որ էր՝ քսան և չորսերորդ յԱքիլլեա՛յ, բազմաց տալով զտէրութիւնն կտակաւ, զի՝ ամենեքին իշխանութիւն Մակեդովնացւո՛ցն անուանեսցի, ինքն մեռանի։ Զկնի որոյ՝ թագաւորեաց Բաբիլոնի Սելևկի՛ոս, զյոլովից կորզելով զիշխանութիւն։ ուստի՝ և զՊարթևս հնազանդեցոյց՝ մեծաւ պատերազմաւ, և կոչեցաւ՝ Նիկանովրայ, նորին աղագաւ։ Սորա՛՝ թագաւորեալ ամս երեսուն, և մի,

թո

թողու զիշխանութիւնն որդւոյ իւրում, Անտիոքայ՝ անուանեցելոյն. սա տիրէ՝ ամս՝ 19. զսա՝ յաջորդէ Անտիոքոս՝ ասացեալն Թէոս, ամս 10. և 'ի մետասաներորդին՝ ապստամբին Պարթևք 'ի ծառայութ՟է Մակեդոնացւոյ։ ուստի՝ և Թագաւորեաց Արշակ Քաջ՝ որ էր 'ի զաւակէն Աբրահամու, 'ի Քետուրական ծննդոց։ առ 'ի հաստատել բանին Տեառն՝ առ Աբրահամ, թէ՝ Թագաւորք Ազգաց 'ի քէն ելցեն։ Ծննդոց. 17. 6։

Պրակ Է 2

Թագաւորելն Արշակայ, և որդւոյն. պատերազմ ընդ Մակեդոնացիս, և ուխտ ընդ Հռոմայեցիս։

Որպէս ասացաք, յետ վաթսուն ամի մահուանն Աղեքսանդրի՝ Թագաւորէ 'ի վ՟ր Պարթևաց՝ Արշակ Քաջ՝ 'ի քաղաքին, որ կոչի՝ Բահլ՝ յառաւօտին յերկրին Քուշանաց, և տայ պատերազմունս սաստիկս յոյժ, թափելով յինքն՝ զա՟մ Արևելեայս. հալածէ 'ի Բաբիլօնէ՝ զՄակեդոնացւոց իշխանութ՟ին. լսէ՝ և զզօրանալն Հռոմայեցւոց՝ 'ի վերայ ա̃մ Արեւմտից, և ծովու. և եթէ՝ 'ի Հիսպանիացւոց թափեցին զբո́վսն, ուստի՝ ոսկի, և արծաթ հատանի. և զՊաղաստացիս հարեալ՝ ընդ հարկաւ արարին, և ց'Թագաւորն Ասիացւոց՝ Հրեշտակս առաքեալ՝ խնդրէր զդաշնաւորութիւն, զի մի՝ օգնեսցեն Մակեդովնացւոց, ոչ տալով հարկս, այլ պատարագս ամի ամի միայն՝ 100. քանքար։ Այսպէս տիրեալ ամս 31։ և յետ նր̃՝ Արտաշէս որդի նորա՝ 26։ զսա պայազատէ նորին որդին Արշակ, որ կոչեցաւ՝ Մեծ, պատերազմի ը̃ 'Դեմետրեայ՝ որդւոյ Դեմետրի Անտիգոնեայ. քանզի՝ 'ի վր̃ նորա́ եկն 'ի Բաբելոն Մակեդովնական զօրու, և պատերազմեալ 'ի պարտութիւն մատնեցաւ. զոր կալեալ Արշակայ՝ տարաւ 'ի պարթևս՝ հանդերձ երկաթեղէն կապանօք։ ուստի՝ և Սերիպինդէսն կոչեցաւ։ և իմացեալ եղբօր նորին Սիդիացւոյ Անտիոքայ՝ զգնալն Արշակայ, դի́մ՝ ունի զԱսորիս։ Իսկ՝ Արշակայ երկոտասան բիւրու՝ անդրէն դարձեալ. և Անտիոքոս՝ 'ի սաստիկ ձմերայնոյն՝ հերքեալ՝ պատահէ նմա

պա

պատերազմաւ՝ յանձուկ տեղիս, և կորնչի հանդերձ զօրօքն։ և Արշակ տիրէ՝ երրորդ մասին Աշխարհիս. ոպ՟՝ յերիկա՛յցն Պատմութեանցն Հերովդոտեայ՝ է՛ ուսանիլ՝ ի չորրորդէն, որ յաղագս՝ բաժանելոյ զբոլոր երկիրս՝ յերիս մասունս. և կոչել զմին Եւրոպէ, և զմին Լիբեէ, և զմին Ասիա։ որում և տիրեաց Արշակ։

Գլուխ Գ 3

Թագաւորեցուցանելն զՎաղարշակ Աշխարհիս Հայոց։

Ի ժամանակին յայնմիկ՝ Թագաւորեցուցանէ զեղբայր իւր ըզՎաղարշակ՝ Աշխարհիս Հայոց. ըզհիւսիսի, և զարևմտեան տալով նմա սահմանս։ Սա (ոպ՟՝ յառաջնումն մերում Մատենի՝ գրեցաք) Այր քաջ, և խոհեմ. ընդարձակ տիրեաց 'ի վ՟ր սահմանաց իւրոց։ և կարգս կենցաղականս, որ չափ մարթ էր, շնորհեաց Աշխարհիս, և Նախարարութ՟իս. և նոցին նախարարութ՟եցն՝ նահապետութիւնս հաստատեաց զԱրս պիտանիս՝ որք 'ի Զաւակէ Սերոյն Հայկայ, և որ այլ-

քանե

քանզի՝ և յետ սանձահարելոյն ըզՄակեդովնացիսն, և դադարելոյն պատերազմացն, սկիզբն առնէ բարեգործութեանցն՝ Պարթևն Վաղ. նախ՝ և առաջին, փոխարէն բարեաց հատուցանելով Առն Զօրաւորի, և Իմաստնոյ, որ 'ի Հրէից Շամբայ՝ Բագարատ. տալով նմա իշխանութիւն՝ ազգաւ Թագադիր լինել Արշակունեաց. և որ 'ի նմանէ ծընեալ ազգ, լինել կոչմամբ յանուն նորա, Բագրատունի. որ է այժմ, մեծ նախարարութիւն 'ի մէջ աշխարհիս. քանզի՝ այս Բագարատ՝ նախաձեռն զինքն մատոյց ընծայ՝ ըստ կամաց Վաղարշակայ, յառաջ քան՝ զպատերազմունս Արշակայ ընդ Մակեդովնացւոց զօրութեանն. և այս՝ 'ի դըրան Արքունի. Իսկ՝ 'ի ծայրս Հայերէն խօսից՝ կողմնակալ իշխան բիւրուց, և հազարաց յարևմտից կողմանէ. Բայց՝ դարձցուք անդրէն՝ 'ի վեր, պատմելով յաղագս՝ պատերազմին Վաղարշակայ՝ ընդ Պոնտացիս, և որ՝ 'ի Փռիւգիա, և վասն՝ յաղթութեան նորա.

Եթէ

Գլուխ Է 4

Եթէ՝ որպէս միաբանեալ Վաղարշակայ ըզ Քաջս Հայոց 'ի կարգս զօրու. խաղայ 'ի վերայ Մակեդոնացւոց մտերմաց։

Յետ պատերազմին՝ Արշակայ ընդ Մակեդոնացիս, և ունելով զԲաբելոն, և զարևելեայս Ասորեստանի և զարևմտեայս։ Միաբանէ Վաղարշակ զօր բազում, յԱտրպատականէ, և 'ի Հայոց, որ 'ի միջոց աշխարհիս՝ Արս Անուանիս, և Քաջս, և որ՝ առ սահմանօքն Ատրպատականի, զկոչեցեալն Բագարատ, և որք ը՟ նովաւ՝ Քաջք, և զծովեզերեայսն՝ Մանկունք, որք 'ի Գեղամայ՝ և որք 'ի Քանանացւոց, Շարայի ծնունդք՝ և Գուշարայ, և՝ առ ընթեր՝ Սիսակեանսն, և զԿադմէականսն՝ և զսոցայն մեր ձաւորսն, ո՟պ թէ՝ զկէս միայն աշխարհիս, հասանէ 'ի միջո՛ց աշխարհիս վերագոյն՝ քան զակունսն՝ Մօրին մեծի յա՛փն Երասխայ, մօտ յարմաւիր՝ որ ասի բլուր, աւուրս շատս առնելով անդ՝ ո՟պ պա՛րտէ ասել. զի՝ ո՛չ գիտէին զկարգս ինչ։ և աստ միաբանեալ զկողմանս աշխարհիս՝ հա հասանէ առ սահմանօք խաղտեաց։ քանզի՝ Լազիկեայ, Պոնտոս, Մաժաք Փռիւգեայ, և այլք՝ ոչ գիտելով զհամբաւ պատերազմին Արշակայ առ Մակեդոնացւոց պետութիւնն, զմիաբանութ՟ի դաշանցն հաստատուն առ Մակեդոնացիսն պահէին։ Վ՟ որոյ՝ ամ՟ն Մորփիլիկեայ՝ միաբանեալ զաստացեալն զայնոսիկ կողմանս, և գրգռէ՛ ՚ի պատերազմ ը՟ Վաղարշակայ․ բայց՝ պատահեն միմեանց առ բարձրաւանդակի միոջ բլրով քարադագաթնիւ, այժմ ասի Կողոնիա․ և մօտեալք առ միմեանս՝ ձիգ ասպարիզովք միջոցացն՝ ամրանան կողմանքն երկոքին՝ բովանդակ աւուրս։

Գրակ Ե 5

Պատերազմ Մորփիլիկեայ, և մեռանելն նորա։

ՕԿնի՝ անցանելոյ բազում աւուրց ամրանալոյ՝ կողմանցն երկոցունց․ գրգռի պատերազմ ՚ի մերմէ կողմանէս դիմեալ։ Վ՟ որոյ՝ յարդարէ կամաւ՝ կամ ակամայ, և Մորփիլիկեայ զիւր կողմանն ճակատ հաստանէ՝ յանդուգն յարձակմամբ․ քանզի՝ այր սրտեայ՝ էր, անդա դամօք երկար, և ըստ իրեա՛րս պատշաճ, զո՛յգ մարմնով՝ և ուժ սաստիկ ունելով. ամրացեալ պղնձով՝ և երկաթով՝ և այլո՛վք ընտիր վառելովք, ո՛չ պակաս ինչ թուով՝ տապաստ յերկիր արկանէ՝ ա՛րս ընտիրս՝ քաջս՝ 'ի մանկանցն Մաղարշակայ. և ջանա՛յր հասանել՝ 'յԱրքայն Հայոց՝ 'ի մէջ խմբի միոյ մեծի՝ և զինու ամրացելոյ. և մօտ անցեալ՝ յաջողեցաւ ձգել զսուինն. քանզի՝ էր կորովի, և երկայնաձիգ հեռի յաշտէնս յարձակել՝ որպէս 'ի թուիչս սրաթև՝ հաւուց. այլ՝ ո՛չ ինչ կարէր յամեցին՝ ը̄ մէջ անցեալ՝ Արք քաջք՝ և Անուանիք 'ի Զարմիցն Հայկայ, և Ասորեստանեա՛յն Սենեքերիմայ. և հարեա՛լ աշտէիւք՝ զքաջն սատակեցին. և զզօրսն՝ առաջի արկեալ՝ 'ի փախուստ դարձուցանէին։ բազում վտա՛նգս արեան հեղեալ՝ զերկիրն ոռոգանէին՝ իբրև հեղեղօք անձրևաց, և յայնմ հետէ՝ դադարեալ խաղաղէր երկիրն՝ նուաճեալ ընդ ձեռամբ Մաղարշակայ. և Մակեդովնացւոցն դադարէր դուռն.

Գլուխ զ 6

Եթէ՝ որպէս կարգեաց Վաղարշակ զարեւմուտս մերոյ աշխարհիս եւ՝ զհիւսիսին։

Եւ այսպէս կատարեալ՝ կարգէ զսահմանս Մաժաքայ, եւ Պոնտացւոց, եւ զԵգերացիս, դառնայ զհիւսիսեաւ՝ առ ստորոտով Պահարեայ 'ի մէջ Տայոց, 'ի գիճին՝ եւ 'ի մառախլուտ տեղիս մայրեաց, եւ 'ի լուաւէտս, գեղեցիկ իմն՝ անդ կարգելով զերկիրն՝ հաւասարելով ըզլեռնայինն՝ եւ զջերմայոտն 'ի բարեխառն, եւ 'ի զուգագեղեցիկ վայելչութ՟ի՝ իւրոյ թագաւորութեանն. ամառնային ժամանակին՝ հովանոցս պատրաստելով՝ յորժամ զհիւսիսեաւ երթիցէ. գոմս զերկուս տափարակմն անտառախիտս՝ հանդերձ լերամբքն կազմելով՝ եւ որսոյ տեղիս. եւ զջերմութիւնն Կողայ 'ի Մարմանդս այգեաց, եւ բուրաստանաց։ այլ՝ խորհեմ աստ, վ՟ս սիրելի առնն՝ յայտնի գրել զամ՟, եւ մանրապատում. զի՝ անցից նշանակելով միայն զտեղին հաւաստի, եւ զոմ՟ն 'ի բաց թողեալ վասն զկապ սիրոյ զհրաշալւոյն՝ անխզելի պահելոյ։

Եւ ա՛սատ՝ կոչեցեալ զվայրենի՝ եկամուտ ազգն Հիւսիսոյ, և որ զստորոտով մեծի լերինն Կաւկասու՝ և որ 'ի հովիտսն, կամ 'ի ձորս երկայնաձիգս խորացեալք՝ զհարաւով 'ի լեռնէն 'ի վայր՝ մինչև 'ի դաշտաբերանն մեծ իջանէին։ պատուէր առնելով՝ զաւազակութի՟, և զմարդադաւութի՟ յինքեանց 'ի բա՛ց քեցուլ. և հրամանաց, և հարկաց Արքունի հպատակ լինել. ո՛չ՝ զի միւսանգամ տեսեալ զն՟ս՝ Առաջնորդս, և Իշխանս՝ հանդերձ գեղեցիկ կարգօք՝ հաստատեսցէ. և արձակէ զն՟ս՝ հանդերձ արամբք իմաստնովք, և վերակացուօք յիւրմէ։ և ինքն՝ արձակեալ զԱրևմտեայ բազմութիւնն՝ իջանէ 'ի տեղիս խոտաւէտս՝ մերձ 'ի սահմանն Շարայի, զոր՝ Հինքն անփայտ, և Վերին Բասեան՝ կոչէին։ իսկ յետոյ՝ վ՟ հատուածին վղնդուր Բուլղարաց, Վնդոյ բնակելով 'ի տեղիսն, յանուն նորա՝ անուանեցաւ՝ Վանանդ։ և անուանք շինից յանուն եղբարց՝ և զարմից նորա՝ անուանեալ կոչին՝ մինչև ց'այժմ։ Իսկ 'ի ցրտանալ Հիւսիսոյ, և 'ի դառն հողմ փչելոյ, խաղայ՝ իջանէ

՚ի դաշտն մեծ, և անդ՝ զափամբ Մօրին մեծի՝ բնակի ՚ի տեղւոջ՝ ուր գետն մեծ՝ ՚ի ծովակէն Հիւսիսոյ՝ սկիզբն առեալ՝ իջանէ, և խառնի ՚ի Մօրն մեծ: և անդ՝ կարգեալ զզօրս աշխարհիս, և թողեալ Վերակացուս յինքենէ. և իւր առեալ ըդ Գլխաւորսն զա՟մ չուէ ՚ի Մծբին:

Գլուխ Է 7

Յօրինուած թագաւորութեանն, եթէ՝ ուստի նախարարութիւնս կարգեաց: և որպէս՝ և ուր տեղ, կենցաղավարել հրամայեաց:

Այս դրուագ մեծ՝ և հաւաստի պատմութե՟ լի, և արժանից ողորկադունաց՝ և յոլովից. Քանզի՝ բազու՛մ ինչ աստ կարգաց՝ և յօրինուածոց, Տանց՝ Ազգաց՝ Քաղաքաց՝ Շինից՝ Դաստակերտաց, և համայն՝ ասել՝ օրէն Թագաւորութե՟, և որ ինչ՝ շուրջ զԹագաւորութե՟ն. Զօրաց՝ Զօրապետաց՝ Կողմանց՝ Կողմնակալաց՝ և որ նման այսոցիկ: Արդ՝ նախ, և առաջին օրինադրէ Թագաւորն զինքն, և ըդ Տուն իւր, և սկիզբն առնելով ՚ի գլխոյ իւրմէ, և ՚ի Թագէ: Զկոչեցեալն՝ որ ՚ի Հրէից Բագարատ,

ձեռն

շնորհակալութի՟ նմա՝ վ՟ յառաջագոյն անձնատո՛ւ ձեռն տո՛ւութե՟ն առ Թագաւորն՝ և միամտութե՟, և քաջութե՟ն. և զյառաջ ասացեալ՝ Տանուտէրական պատիւն՝ ազգին պարգևելով. և իշխել նմա՝ Թա՛գ 'ի գլուխ դնել Թագաւորին, և կոչել Թագադիր՝ այլև՝ Ասպետ. և առանց ոսկւո՛յ, և ականց՝ զկրսեր մարգարիտն՝ երեքտակեան՝ վարսակա՛լ ածել. յորժամ, յարքունիս 'ի Տան Թգ՟ւորին՝ շրջիցի։ Եւ՝ զգեցուցանօղս իւր զձեռս, 'ի զաւակէ Բանինացւոց, և անուն կոչէ ազգին՝ Գնթունիս՝ ոչ գիտեմ, էր աղագաւ։ Եւ Թիկնապա՛հս իւր՝ զինուհանդերձ, 'ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ՝ արս ընտիրս՝ և քա՛ջս, նիզակաւո՛րս՝ և սուսերաւորս, և գլուխ նահապետութե՟ նոցա՝ զՄաղխազ ոմն, այր բարի՝ և սրտեայ. բայց զանուն ազգին զնախնականն պահէ. Իսկ՝ զԴատ՝ որ 'ի զաւակէ Գառնիկայ՝ որ 'ի Գեղամայ, 'ի վերայ որսո՛ց Արքունականաց կարգէ. որոյ որդի եղեալ՝ Արած՝ յանուն նր՟, անուանի Ազգն։ բայց՝ այս զկնի յաւո՛ւրս Արտաշիսի։ Եւ զԳա-

բաղ

բա՛ղ ոմն անուն, 'ի վերայ կուտից։ և զԱբե՛լ՝ սպասարա՛ր, և գահաւոր. և չէնս պարգևէ՛ նմ՟, յորոյ անուա՛ն կոչին սապէ՛ս՝ և նախարարութ՟իքն՝ Գաբեղեանք, և Աբելեանք։ Նաև զԱրծրունի՛սդ՝ գիտեմ ո՛չ Արծրունիս, այլ՝ Արծու̂իունիս. որք՝ առաջի՛ նր՟ կրէին։ Թողու՛մ զառասպելո՛յն բաջաղմունսն՝ որ 'ի Հադամակերտին պատմի, մանկաննիրհելոյ՝ անձրե՛ւ՝ և արե՛ւ հակառակեալ. և հովանի՛ թռչնոյն պատանւոյ թաւկացելոյ։ Գիտեմ և զԳնունի՛սդ՝ գինի՛ունիս, զարժանի Թագաւորին պատրաստել ըմպելիս. որ ըսքանչելի՛ իմն դիպեալ եղև՝ ըստ գործո՛յն՝ և անուանն։ Քանզի՝ պատրաստէ՛ր զըմպելիս Արքայի, յընտի՛ր՝ և 'ի համե՛ղ գինեաց, ունէր՝ և կոչումն անուա̂նն՝ գին. Է՟ որ՝ կարի՛ մեծապէ՛ս ուրախացեալ՝ ամենամեծապէ՛ս Վաղարշակ կարգէ 'ի թի՛ւ նախարարութեանց ազգաց։ Նաև են այս երկո՛ւ տունքս՝ 'ի զաւակէ Սենեքերիմայ, Արծրունի՛ք՝ և Գնունիք։ Ասեմ, և զՍպանդունի՛սդ 'ի վերա՛յ Սենալրանաց. և զՀաւունի՛սդ՝ Բազէակա՛լս՝ յաղագս 'ի մայ րիս բնակելոյ։ և եթէ՝ առ ցոփս ինչ՝ ոչ ունիցիս, և զձիւնականսդ ամարանոցաց պահակս՝ և ձիւնիկներս։ և յառաջադիմութ՟ե ազատացեալս՝ որպէս ընտանիք Թագաւորաց։ Եւ Գնունդս՝ և Պահապանս՝ դրան Արքունի՝ կարգէ պչորաս, զմի մի՝ իւրաքանչիւր բիւրովք վառելովք, ՚ի նոյն հին ՚ի զարմից Թագաւորացն, որք ՚ի մերոյ նախնւոյն Հայկայ՝ որ բուն ոստանն անուանեալ․ որք՝ ը՟ ժամանակս ժամանակս՝ ժառանգութ՟ի ՚ի Հարցն ընկալեալ դեօղս՝ և դաստակերտս։ Իսկ՝ աստ ուրեմն՝ Պարսից Թագաւորութ՟են այլս ոմանս յարուցեալ գունդս, և ոստան անուանեալ․ ոչ գիտեմ թէ՝ վ՟ սպառելոյ ազգին առաջնոյ, և թէ՝ վ՟ ընդդիմութ՟ե իրիք արդեօք, նշկահեալ՝ և ՚ի բաց ընկեցեալ զազգն, զայլս ՚ի տեղի նց՟ յարուցին գունդս՝ անուանմբ Արքունի։ Այլ՝ առաջին ՚ի զարմից Թագաւորացն առաջնոց հաստատի․ ոպ՟՝ և այժմ ՚ի Վրաց աշխարհին՝ որ Սեփհծունն, կոչի։ Նաև՝ Ներքինիս ՚ի նոյն ազգէ խորզել՝ հրամայեաց․ և Նահապետ նոցա՝ զՀայրիշխան, մասն ինչ յԱտր

պա

պատականէ՝ մինչև ց՚Ճուաշ՝ և ց՚Նախճաւան. և նահապետութեն ազգին Սամեծարոյ: բայց թէ՝ ո՞րպէս՝ կամ, ո՞ւր՝ սորա իրք անյիշատակելի. ես ոչ գիտեմ: Բայց՝ յետ կարգելոյ զՏուն Թագաւորին, Երկրորդ Թագաւորութեանն լինէր 'ի զաւակէ Աժդահակայ Մարայ եղելոյ Թագաւորի՝ որ այժմ, Մուրացեանդ կոչին: քանզի՝ ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուրացեան Տէր, այլ՝ Մուրացւոցն Տէր: և թողու 'ի վերայ նորա զամենայն շէնս՝ որք 'ի գերութենէն Մարաց: Նաև յարևելեայ կողմանէ՝ զեզերբ Հայկական խօսիցս՝ Կողմնակալս բիւրաւորս. զերկուս 'ի Ցեղից տանց Նահապետութեանց, զՄիտակեանսդ, և որ՝ 'ի Կադմեայ տանէն. զորոց զանուանս 'ի միում, 'ի յառաջագունից ասացեալ ճառից՝ կարգեցաք: Յետոյ՝ մեծ, և անուանի՝ և բազմաբիւր զարևելեայ հիւսիսոյ կողմանն՝ կարգէ Կողմնակալութիւն. զայր անուանի, և յամենայն գործ մտաւորութեան՝ և հանճարոյ՝ և գործոյ պատերազմի, և խորհրդականութեան՝ Առաջին, զԱռան, մեծաւ գետովն՝

որ հատանէ զդաշտն մեծ՝ որ անուանի Կուր։ Բայց՝ զայս գիտեմ, զի՝ զՑեղս զայսոսիկ՝ մեծամեծս՝ և անուանիս՝ մոռացումն եղև մեզ՝ յառաջնումն Մատենին՝ յիշատակել։ զԳունդն՝ որ 'ի Սիսական, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից՝ և զլեռնակողմն նորին դաշտի, որ 'ի գետոյն Երասխայ մինչև ց'Ամուրն որ կոչի Հնարակերտ․ և աշխարհն՝ յանուն քաղցրութե̃ բարուցն՝ որ անուանեցաւ Աղուանք․ զի՝ աղու ձայնէին զնա՝ վ̃ն քաղցրութեան բարուցն․ և 'ի սր̃ ծննդոց՝ այս Առան, անուանիս՝ և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր 'ի Պարթևէն Վաղարշակայ։ 'Ի սր̃ զաւակաց ասեն՝ սերեալ զազգն Ուտէացւոց՝ և Գարդմանացւոց, և Ծոդացւոց, և Գարգարացւոց իշխանութի̃նս։ Իսկ՝ Գուշարայ՝ որ յորդւոցն Շարայի՝ ժառանգեաց՝ հաւասար բնակութե̃ իւրոյ՝ զլեառն մթին, որ է Կանգարք, և զկէս մասին՝ Ջաւաղայ, զԿողբ՝ զԾոբ՝ ըզՁոր, մինչև 'յԱմուրն Հնարակերտ։ բայց՝ զտէրութի̃ն Աշոցայ՝ և սեպհականութի̃ն Տաշրաց՝ կար գէ Վաղարշակ՝ 'ի զաւակաց Գուշարայ Հայկազնոյ: Իսկ՝ ընդդէմ լերինն Կաւկասայ՝ կողմնակալ հիւսիսոյ՝ զմե՛ծ՝ եւ զհզօր ազգն՝ եւ Նահապետութ̃ե անուն՝ Կարդայբդեա՛շխ Գուգարացւոց, որ է՛ր լեալ 'ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի Նախարարի, զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան 'ի վ̃ր գերութեանն 'ի Վերիացւո՛ց ազգայն, զոր էա՛ծ Նաբուգոդոնոսոր, ո̃պ Աբիւդենոս պատմէ՝ այսպէս ասելով:

Մեծազօրն Նաբուգոդոնոսոր՝ ուժգնագոյն էր՝ քան զՀերակլէս 'ի Լիբէացւոց: 'Ի Վերիացւոց աշխարհն զօրաժողով՝ լեալ՝ հասանէր, եւ վանեալ՝ վտանկեալ՝ ընդ ձեռամբ նուաճէր. եւ զմասն մի՛ 'ի նոցանէ՝ յաջակողմ Պոնտոս ծովու տարեալ՝ բնակեցուցանէր. եւ է՛ վերին այն՝ յե՛զր երկրի յարեւմուտս: Իսկ՝ 'ի հովտին մեծի Բասենոյ, կարգէ Նահապետութիւն, զոր Գունին անուանեալ՝ որ 'ի զաւակացն Հայկայ: Իսկ՝ զայր խոժոռադե՛ղ՝ եւ բա՛րձր՝ կոպտատարա՛զ անձն, եւ տափակաքիթ, խորա՛կն, եւ դժնահայեա՛ց, 'ի զաւակէ Պասքամայ, 'ի Հայկա կայ Թոռանէ, Տուրք անուն կոչեցել. որ՝ վ՟ն առաւել ժահադիմութե՟ն՝ կոչէին՝ Անգեղեայ. վիթխարի հասակաւ՝ և ուժով, հաստատէ Կուսակալ արևմտից. և յերեսացն անպիտանութենէ՝ կոչէ զանուն ազգին՝ Անգեղտուն: Նայց՝ եթէ կամիս, և ստեմ վ՟ն ն՟ր, անյաջ՝ և փցուն, ո՟պ՝ և Պարսիկք՝ վ՟ն Ռոստոմայ Սաճկի՝ ճ̅ և ի̅ փղս ուժել ասեն. կարի աննմանագոյնս թուէն՝ և նմա երգբանից՝ վ՟ն ուժեղութե՟ն, և սրտեայ լինելոյ. որք՝ ո՛չ Սամփսոնի, և ո՛չ Հերակլեայ՝ և ո՛չ Սաճկին, նմանեն այն զրոյցք. Քանզի՝ երգէին նմա՝ բուռն հրկանել զորձաքար վիմաց ձեռօք, ուր ո՛չ գեզութի, և ճեղքուլ՝ ըստ կամաց մեծ՝ և փոքր. և քերել եղնգամբքն՝ և կազմել ո՟պ տախտակ. և գրել՝ նոյնպէս՝ եղնգամբք Արծուիս, և այլս այսպիսիս: և յեզեր ծովուն մեծի՝ Պոնտոսի, դիպեալ նաւաց թշնամեացն՝ դիմէ 'ի վերայ. և 'ի խաղալ նոցա 'ի խորն՝ իբր ասպարէզս՝ ութ ուտասն, և սա ո՛չ ժամանեալ՝ առնու՝ ասեն՝ վէմս բոլորաձևս՝ և ձգէ ըզկնի. և 'ի սաստիկ պատառմանէ ջուրցն, ընկղմին նաւք՝ ո՛չ սակաւք. և ամբարձումն՝ ալեացն՝ որ ՚ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն՝ բազում մղոնս. ո՞ կարի է առասպելս, այլ և՝ առասպելաց առասպել։ Բայց քեզ զի՞ է. քանզի էր արդարև՝ սաստիկ հզօր՝ և այսպիսեաց արժանաւոր։ Բայց՝ զկնի դորա՝ հաստատէ զմեծ Նախարարութ՟ին Ծոփաց՝ ՚ի Չորրորդն կոչեցեալ Հայս։ Այլ՝ զՆախարարութ՟ին Ապահունեաց, և զՄանաւազնեանն, և զԲզնունեանն, ՚ի նոյն զաւակաց Հայկայ՝ ՚ի բնակչացն զետեղ զալերձագոյնսն, Տեա՛րս կարգէ՝ յանուն շինից՝ և գաւառաց կոչելով։ Այլ՝ մոռացաք զդժնեայ՝ զՍա՛քն անուանեալ այր, զոր՝ ո՛չ կարեմ հաւաստեաւ ասել՝ ՚ի Հայկայ՝ թէ յառաջագունից, քան զնա՝ եղելոց յաշխարհիս, զոր հին զրոյցքն պատմեն՝ լինիլ. բայց՝ էր այր քաջ։ կարգէ զսա՝ սակաւ արամբք՝ պահել զլեառնն, և որսալ զքօշանսն՝ որք անուանեցան Սլկունիք։ Այսպէս՝ և ՚ի նոյն իրս՝ զՄիանդակն անդուռնալի, և ՚ի սմանէ՝ Մանդակունիք։ Բայց՝ յորդւոցն Սահա գնի՝ գտեալ ա՛րս՝ որք ինքնակամ խնդրեցին զՄեհենից պաշտամունսն՝ պատուէ մեծապէս, 'ի ձեռն տալով նոցա զՔրմութիւն: և կարգէ ընդ առաջին Նախարարութիւնս, և անուն կոչէ՝ Վահունիս: Նա՛ պէս՝ և զԱռաւենեանն՝ և զԱրեհաւանեանն, գտեալ 'ի Զարմից Առաջնոց Թագաւորացն, կարգէ 'ի նոյն անուանման: Եւ զՇարէշան՝ 'ի տանէ Սարասարայ՝ հաստատէ Բդեշխ մեծ, և Կուսակալ յարևմտից Հարաւոյ՝ յեզերս սահմանացն Ասորեստանի, առ ափն՝ Տիգրիս գետոյ: գաւառս պարգևելով զԱրձն, և որ շուրջ զնովաւ՝ և զլեառնն Տօրոս և որ՝ Սիմ, և զԿլէսուրն ամենայն: Իսկ՝ զՄոկացին՝ 'ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իւրև Սրիկայս բազումս՝ Նախարարութիւն հաստատէ: Նոյնպէս՝ և զԿորդուացիս՝ և զԱնձևացիս, և զԱկեացիս 'ի նոյն գաւառաց: Իսկ՝ զՌուշտունիս, և զԳողթնեցիս՝ գտի պատմեալ՝ 'ի Սիսականէն արդարև հատած. ո՛չ գիտեմ, թէ յանուն Արանցն զԳաւառսն անուանեալ՝ և թէ՝ յԱնուն Գաւառացն՝ զՆախարարութիւնն

կո

կոչեցեալ։ Իսկ՝ յետ այսր ամ̃ի՝ Մեհեան շինեալ Յարմաւիր, Անդրիս հաստատէ արեգական՝ և լուսնի, և իւրոց Նախնեացն։ Եւ աղերսեալ՝ որ ՚ի Հրէիցն Շամբայ Բագարատ, որ և՝ Թագադիր՝ և Ասպետ, հանդերձ հարկեցուցմնօղ բանիւք՝ Թողուլ զօրէնս Հրէութեանն, և պաշտել զԿուռս. զոր ոչ առեալ յանձն, Թողու՝ ըստ կամաց՝ զնա Արքայն Վաղարշակ։ Հրամանս տուեալ զքաղաքն Շամիրամայ նորոգել՝ և յայլ բազում տեղիս՝ շինել քաղաքս բազմաբնակս, և շէնս գեղաւորս, և մարդախիտս։ և օրէնս իմ̃ն հաստատէ ՚ի Թագաւորութ̃են իւրոյ. և ժամս որոշէ, ել՝ և մտից, և խորհրդոց՝ և խրախճանութ̃եց՝ և զբօսանաց։ Եւ կարգս զինուորութ̃եց. և նոցունց, Առաջինս՝ և Երկրորդս՝ և Երրորդս, և որ ՚ի կարգին է։ Եւ զՅիշեցուցանօղս երկուս ՚ի ձեռ̃ն գրոյ. այլ ոմ̃ն զբարի յիշողութ̃ին առնելով՝ և այլ ոմ̃ն զվրէժ խնդրութեանց։ Եւ բարի Յիշեցուցանօղին՝ հրաման տայ, ՚ի բարկութ̃են Արքայի՝ և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել զիրաւն, և

զմար

զմարդասիրելն։ Իրաւարարս՝ 'ի Տանն Արքունի. Իրաւարարս՝ և 'ի Քաղաքս, և յԱւանս։ Հրաման տայ՝ և Քաղաքացեաց մարդկան՝ կարգ, և պատիւ ունել առաւել՝ քան զԳեղջկաց. և Գեղջկայ՝ պատուել զՔաղաքացիս՝ իբրև զԻշխանս. և Քաղաքացեաց՝ մի առաւել՝ առ Գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ՝ վ̅ն բարեկարգութեան, և աննախանձոտ կենաց՝ որ է խաղաղութիւն, և շինութիւն կենաց՝ պատճառ, և որ ինչ նման այսոցիկ։ Եւ քանզի՝ բազում ունէր ուստերս, պատշաճ վարկաւ, ոչ ամենեցուն՝ կալ 'ի Մծբին. վ̅ն որոյ՝ առաքէ զնոսա 'ի Գաւառն Հաշտենից, և 'ի Ձորն՝ որ է նորին սահմանակալ՝ որ է արտաքոյ՝ Տարօնոյ, 'ի նս̅ թողլով զշէնս ամ̅ հանդերձ յաւելուածով մտիցն առանձինն, և ռոճկաց կարգելոց յԱրքունուստ։ Եւ միայն զառաջին որդւոց իւրոց, որ կոչէր՝ Արշակ, պահէ առ իւր՝ 'ի համար Թագաւորութեան. և նորուն ուստր՝ զոր անուանեաց՝ Արտաշէս, զոր յոյժ սիրեաց. Քանզի՝ էր արդարև՝ տղայն կայտառ՝ և հզօր մար

մնով

մնալ, ոչ զի՝ կարծիս տալ 'ի Հայեցողաց՝ որ 'ի նմա՛յն ածելո՛յն էին արութիւնք: Եւ եղև այս՝ յա՛յնմ հետէ, և ա՛ռ յապա՛յ 'ի մէջ Արշակունեաց՝ միոյ որդւոյ բնակիլ ընդ Արքայի, փոխանորդ լինել Թագաւորութե՟ն. այլոց ուստերաց՝ և դստերաց գնալ 'ի կողմանս՝ Հաշտենից, յազգին ժառանգութի՟: Բայց Վաղարշակ՝ յետ այսպիսեաց արուե՟ց՝ և քաջութե՟ց՝ և բարեկարգութե՟ց՝ մեռանի 'ի Մծբին, թագաւորեալ ամս՝ քսան՝ և երկու:

Գրակ Ը 8

Յաղագս՝ մերոյ Արշակայ Առաջնոյ՝ և նորին գործոց:

Արշակ որդի Վաղարշակայ՝ Թագաւորէ 'ի վե՟ր Հայոց՝ ամս ժգ. նախանձաւոր, և հետևող Հայրենեացն լեալ առաքինութեցն. բազում կարգս՝ ուղղութե՟ գործեաց՝ պատերազմելով ընդ Պոնտացիս. և նշան եթող՝ յեզր մեծի ծովուն՝ զնիզա՛կն իւր ասեն՝ զբոլորատէգ, զոր արեամբ զեռնոց ասեն՝ մխեալ. ձգեա՛լ 'ի հետևակա՛ց՝ նստո՛յց խորագոյնս յերկանաքա՛ր արձանի, զոր կանգնեաց 'ի ծով եզերն։ Զայս արձան՝ պատուեցին բազում ժամանակս՝ Պոնտացիք, ոպ՟ զառ 'ի յԱստուածոյն գործս։ Իսկ՝ 'ի գուալն Արտաշիսի միւսանգամ՝ ընդ Պոնտացիս, ասեն՝ ընկեցեալ զարձանն 'ի ծով։ 'Ի սորա աւուրս՝ աղմուկ մեծ 'ի գօտիս մեծի լերինն Կաւկասու՝ յաշխարհին Բուլղարաց. և բազումք 'ի նոցանէ հատուածեալք՝ եկին յաշխարհս մեր, և բնակեցան ներքոյ Կողայ՝ յարգաւանդահող՝ և հացաւէտ տեղիս՝ մինչև 'ի ժամանակս բազումս։ 'Ի սմանէ նեղեալ՝ որդիք Բագարատայ, վ՟ն՝ կուռս պաշտելոյ. երկուք ոմանք՝ սրով կատարեցան 'ի վ՟ն Հ՟արցն օրինացն արիաբար, զորս ոչ պատկառիմ ասել՝ հետևօղ լինիլ Անանիանց՝ և Եղիազարեանց։ բայց՝ այլքն՝ յանձնառունուն՝ այնչափ միայն՝ 'ի շաբաթս հեծանել յորս, և 'ի պատերազմունս, և զմանկունս թողուլ անթլփատս՝ յորժամ լինիցին, քանզի անկինք էին. և հրամայեցաւ յԱրշակայ՝ մի տալ նց՟ կանայս՝ յամ՟ Նախարարութե՟ց, եթէ ոչ ուխտ պայմանի դիցեն՝ թողուլ զթլփատութի՟ն. զոր յանձն առնուն՝ զերկուս զայս միայն, այլ ո՛չ՝ և զերկրպագութի̄ Կռոց: Աստանօր՝ սպառին բանք Ծերունւոյն՝ Մարիբաս Կատինայ:

Պրակ Թ 9

Որէ՝ ուստի՞ եգիտ պատմութիւնս՝ զինէ Մատենեցն՝ Մարիբաս Կատինայ:

Սկիզբն արասցուք՝ պատմել քեզ ՚ի Հինգերորդ գրոցն՝ Ափրիկանոսի Ժամանակագրի. որում վկայէ՝ Յովսեփոս՝ և Հիպողիտոս, և այլք բազումք ՚ի Յունաց. քանզի՝ նա՛ բովանդակ փոխադրեաց՝ որ ինչ ՚ի քարտէզս Դիւանին Եդեսսեայ, որ է՝ Ուռհայ, որ յաղագս մերո՛յն պատմէր Թագաւորաց, որ Մատեանք ՚ի Մծբնայ էին փոխեալ անդր՝ և ՚ի Սինոպայ Պոնտոսէ՝ ՚ի Մեհենական պատմութեանցն: Մի՛ ոք անհաւատասցի, քանզի՝ և մեզէ՛ն իսկ՝ եղաք Ականատեսք այնմ Դիւանի. և վկայ քեզ՝ ՚ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկլեսեաստէ գիրք Եւսեբի Կեսարացւոյ, զոր ետ թ̄րգմանել՝ Երանելի Վարդապետն մեր՝ Մաշտոց՝ ՚ի Հայ լեզու: խնդիր արասցես՝ ՚ի Գեղաքունի, ՚ի գաւառին Սիւնեաց, և գտցես յառաջին Հագներգութե̃ն՝ յերեքտասաներորդ թուին, զի՛ վկայէ՝ յԱդեսեայ՝ Դիւան լինել՝ ա̃մ գործոյ՝ Առաջնոց Թագաւորացն մերոց՝ մինչև ց՚Աբգար, և զկնի Աբգարու՝ մինչև ց՚Երուանդ՝ որ և այժմ, կարծեմ՝ գտանի պահեալ՝ ՚ի նոյն քաղաքի։

Պրակ Ժ 10

Յաղագս՝ մերոյ Արտաշիսի Առաջնոյ, և յաջորդելոյ զնախագահութիւնն։

Արտաշէս թագաւորէ՛ Հայոց՝ փոխանակ Արշակայ՝ Հօր իւրոյ, ՚ի քսան՝ և ՚ի չորրորդ ամի՝ Արշակայ՝ Պարսից Արքայի։ և յառաջագէ՛մ եղեալ՝ ո՛չ զերկրորդականն ունի գահ, այլ՝ զաւագութե̃ն թեկն ածէ։ որում հաւանեալ Արշական յանձնառնու՝ տա՛լ նմա՛ Նախագահութի̃ն. քանզի՝ էր այր հպա՛րտ՝ և պատերազմասէ՛ր. որ և Արքունիս իւր՝ ՚ի Պարսից աշխարհին շինեաց, և դրա՛մ առանձին՝ զի՛ւր պատկերն հարկանէր։ և զԱրշական ընդ իւրո՛վ ձեռամբ կացուցանէր Թագաւոր Պարսից, ո՛չ՝ զՏիգրան՝ որդի իւր՝ Հայոց. բայց տայ զՏիգրան՝ որդի իւր՝ ց'պատանի տղն՝ Վարաժ անուն՝ որդի Գաստայ՝ որ 'ի զաւակէ Գառնկայ Գեղամեանց (քանզի էր պատանին՝ նշանաւոր 'ի նետաձգութիւն կորովութեան) ուսուցանել զՏիգրան. զնա իշխան Արքունականացն արարեալ որսոց, և շէնս պարգեւէ զՀրազդան գետով՝ յանուն նոյն կոչի ազգն՝ Վարաժնունի. բայց զդուստր իւր զԱրտաշամայ, տայ կին Միհրդատայ ումեմն՝ Վրաց Բդեշխի մեծի, որ էր 'ի զաւակէ Միհրդատայ՝ Դարեհի՝ Նախարարի, զոր կացուցեալ էր Աղեքսանդրէ՝ 'ի վր գերութեն Վրացւոց աշխարհին՝ որ յառաջագոյն պատմեցաք. և հաւատոյ նմին՝ զկողմնակալութիւն Հիւսիսային լերանցն՝ և Պոնտոս ծովու:

Գլուխ ժա 11

Խաղալն Արտաշէսի յարեւմուտս, և ձերբակալումն զԿրիսոս. և աւերեալ ընդունէ Հայոց պատկերս Աստուծոյ:

Յայնժամ՝ հրամանտայ Արտաշէս՝ զօր յարուցանել յարեւելից, և 'ի հիւսիսոյ՝ բազում յոյժ, մինչ՝ ոչ գիտել զհամար նմա. այլ՝ յանցս, և յիջաւանս՝ քար՝ ըստ մար դաթուբ՝ կարկառ՝ նշան բազմութեանն՝ թողուլ. և խաղայ այնու՝ յարեմուտս, ձերբակալ առնէ ըզ-Կրիւսոս Լիւդացւոց. և գտեալ յԱսիայ՝ պղնձաձոյլ՝ ոսկեզօծ պատկերս՝ զԱրտեմեայ Դիոց՝ և զՀերակլեայ, և զԱպոլոնի, տայ բերել յաշխարհս մեր, զի կանգնեսցեն յԱրմաւիր. զոր առեալ քրմապետացն՝ որք էին յազգէն Վահունեաց զԱպոլոնի, և զԱրտեմեայ Դիցն՝ կանգնեցին յԱրմաւիր. Իսկ՝ զՀերակլեայ՝ զԱնդրապատկերն, զոր արարեալ էր ՚ի Սկիւլեայ, և ՚ի Դիպոնոսէ կրետացւոյ, զՎահագն իւրեանց Նախնի վարկանելով՝ կանգնեցին ՚ի Տարօն՝ յիւրեանց սեպհական գեօղն՝ յԱշտիշատ, զկնի մահուանն Արտաշիսի։ Բայց՝ Արտաշիսի՝ նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զՈվկիանոս բազմութեամբ նաւուց, ծառայեցուցանել կամեցեալ զբոլոր Արեւմուտս. քանզի՝ մեծ յոյզք խռովութեանց եղեալ՝ ՚ի Հռովմ. ոչ ոք՝ նմա ընդդիմանայր հզօրապէս. այլ՝ ոչ գիտեմ ասել՝ յորպիսն ազդմանէ՝ ահագին իմն աղմուկ լեալ շփոթից. և բազմութեան զօրացն՝ զմիմեանս կոտորել։ Իսկ՝ Արտաշէս փախուցեալ՝ մեռանի, ո՛չ ասեն՝ յիւրո՛ց զօրացն. թագաւորեալ ամս, 25։ Բայց՝ Յելլադայ առեալ պատկերս, զԴիոնի զԱրտեմիդեայ՝ զԱթենայ՝ զՀեփեստո՛ս, զԱփրոդիտեայ, տա՛յ բերել ՚ի Հայս. որք՝ ո՛չ ժամանեալ միջամուխ լինել յաշխարհս՝ լսեն զբօթ մահուա՛նն Արտաշիսի, և փախուցեալ ընկենուն զպատկերսն յԱրմոցն յԱնի. և Քո՛ւրմք նց՟՝ զհետ լինելով, դադարեն առնոսա։

Պրակ ԺԲ 12

Վկայութիւնք Տիեզերակալութեանն Արտաշիսի, և հաղթելոյն զԿրեսոս յայլոց Պատմագրաց։

ԶԱյս ասացեալ՝ Պատմագրացն Յունաց, ո՛չ միոյ՝ կամ երկուց, այլ բազմա՛ց. ընդ որ տարակուսեա՛լ մեր՝ բազո՛ւմ խո՛յզ խնդրոյ արարաք. քանզի՝ լուա՛ք ՚ի պատմութեանց ոմանց, Կիւրոսի սպանեա՛լ զԿիւրսո՛ս, և բարձեալ զթագաւորութ՟ին Լիւդացւոց։ և դարձեալ՝

պատ

պատմի առարկութիւքն Կրիդիմեա՛յ և Նեքտանեբեա՛յ։ և է՛ Նեքտանեբո՛սս այս՝ Վերջին Թագւր Եգիպտացւոց, 'ի Մանեթոսէ՛ պատմեչ՝ զոր ոմանք՝ Հա՛յր Աղեքսանդրի՛ ասացին։ և գտանեմք՝ զժամանակս Կիւրոսի՝ երկերիւր ամաւ՝ յառաջ քան՝ զՆեքտանեբա՛յ. իսկ՝ զՆեքտանեբա՛յն՝ երկերիւր ամաւ՝ յառաջ եղեալ քան՝ զԱռաջնո՛յն Արտաշիսի՝ Թագաւորի Հայոց։ Բայց՝ քան զի բազո՛ւմք են, որք ասեն՝ զԿիւրսո՛ս մերոյ Արտաշիսի կալեալ. և ոճով լինի՝ պատմեն, ես հաւանեա՛լ եմ. քանզի՝ ասէ Պօղիկրատէ՛ս՝ այսպէ՛ս. վեհ ինձ Արտաշէ՛ս Պարթև, քան՝ զՄակեդոնացին Աղեքսանդր. զի կալով յիւրում աշխարհին, իշխեաց Թեբա՛յ՝ և Բաբելոնի. և չև՝ ընդ ալի՛ս գետ անցեալ՝ զԼիւդականն սատակեաց զզօրս, և կալաւ զԿիւրսոս. և յառաջ քան՝ զԱսի՛ա հասանելն՝ յԱտտիկէ դղեկին քարոզեցաւ։ Աւա՛ղ բալխտին, միայն թէ՝ 'ի Տեր, և Թեանն, և ո՛չ 'ի փախստեանն՝ էր վախճանեալ։ Ասէ՛ հանգոյն դմին՝ և Ադարոս, փո՛քր՝ Աղեքսանդրի, և Պարեհի՝ պատերազմին՝ առ Արտա

շի

չխախն բաղդատեալ. քանզի՝ նոցայն, ոչ ՚ի փոքուն միջո՛ւր երևէր լո՛յս տըւնջեանն. այլ՝ սա՛ ծածկեաց նետաձգութեա՛մբն, և ստուե՛րացոյց զարեգակն. ձեռագործ գիշեր զմիջօրէին արարեալ: ոչ փախստեա՛յ համբաւաբեր ՚ի Լիւբէացւոցն թողեալ. այլ՝ և զԹագաւորն Լիւբէացւոց զԿրիւսոս՝ ՚ի տապակի՝ հրամայեաց կացուցանել: մի՛ սորա՝ և ոչ ուղխք զգետո՛յն ստուարացուցին արեամբ ՚ի ձմեռնային նեղութ̃ի իջուցանելով. վասնզի՝ և զթո՛ւոց եցոյց տկա՛ր լինիլ բազմութ̃ի զօրացն, մինչ զի՝ չափոյ պէ՛տք եղեն առաւե՛լ՝ քան զհամարոյ: նա՛՝ ընդայս ոչ հպարտացաւ, այլ՝ արտասուեա՛ց ասելով. աւա՛ղ փառացս անցաւորի: Պրէ՛ և՛ս Կամադրոս այսպէս, խաբկեա՛նք լինէին հպարտացելո՛յն Լիւբէացւոց. Կրիւսեա՛յ, Թեւտիա՝ հարցմո՛ւկն պատասխանելով: Կրիւսո՛ս անցեալ ը̃ Ալիս գետ, քակեսցէ զիշխանութիւնս. զոր նա՛ զօտարաց կարծեալ՝ զինքն քակտէ: քանզի՝ կալեալ զնա՛ Պարթևին Ա՛րտաշիսի՝ հրամայեաց ՚յերկաթեղէն տապակ հանել: Իսկ՝ Կրիւսոսի յե-

չեալ

շեալ զբանսն Սողոնի Աթենացւոյ ասէ յիւր լեզուն ։ ո՛վ Սողոն Սողոն, գեղեցիկս բարբառեցար՝ ոչ երանել զբարեբախտութիւն մարդոյ՝ մինչև ՚ի վախճանն ։ Իսկ՝ լուեալ որք մերձն կային՝ պատմեցին Արտաշիսի, եթէ զնոր ինչ Ա՟ծ կարդայ Կրիւսոս ։ և գթացեալ Արտաշիսի հրամայեաց ածել ։ և հարցեալ՝ և ուսեալ՝ թէ զինչ է՝ որ աղաղակէցն, հրամայեաց՝ ներել զտանջանսն . գրէ և Փիդոնիոս, ամենեցուն Թագաւորաց՝ հուժկու եղեալ Պարթևն Արտաշէս, ոչ միայն զԼիւդէացիսն վանեալ՝ և զԿրիւսոս կապեաց, այլ՝ ՚ի Հելլէսպոնտոսն, և ՚ի Թրակէ՝ զտարերցն փոխեաց զբնութիւն . ծովագնաց ընդ երկիր՝ բերեալ լինէր, և ընդ ծով՝ հետևակելով . Թետաղացւոյն սպառնալով՝ համբաւն հիացուցանէր զՀելլէնականսն . կործանեաց զԼակեդեմոնացիս . փախոյց զՓոկէացիս . Ղովկրացիք եղեն անձնատուրք . Աիւտացիք միանեն ՚ի կալուածոյ նր՟ ։ ընդ ամենեսին նմա Հելլադայ մատուցանէր զահն . յետ փոքու ժամանակի աշխարհն անցին զամենեքումբք ։ ոչ

այն

այնքան՝ թշուառացաւ Կիւրոս ՚ի Մասքութս պատերազմելով. ոչ այսպիսի կերպ կորեա՛ն՝ Դարեհ 'յՍկիւթացւոցն փախուստն. ոչ Կամբիւսէս 'յԵթովպացիս՝ փո՛քր՝ և Քսերքսին ՚Հելլա՛դայ զօրու երթալն, թողլով նոցա զգանձս՝ և զխորանս, միայն կենդանի փախուցեա՛լ մազապուր. այլ՝ Սա՛մեծամեծ յաղթականօք պանծացեալ, յիւրո՛ց զօրացն խողխողել։ Արդ՝ ես՝ հաւատարմութե՟ արժանի համարիմ, զայսոսիկ պատմութի՟ և զայն Կիւրոսոս՝ որ առ Կիւրոսիւ, կամ, Աղեքսանդրեան պատմեն, կամ սուտք լեալք՝ և կամ, միով անուամբ՝ բազմաց վարեալ թագաւորաց. որպէս յոլովից է՛ սովորութիւն։

Գլուխ ԺԳ 13

Յաղագս՝ Թագաւորութեանն Տիգրանայ Միջնոյ՝ և ընդդէմ ելոյ զօրացն Յունաց. և զՄեհեանն շինելոյ. և արշաւանս առնելոյ 'ի Պաղեստին։

Յետ՝ Արտաշիսի Առաջնոյ թագաւորէ Տիգրան՝ որդի նորա 'ի քառասուն՝ և յինն երորդ ամի՝ Արշակայ՝ թագաւորին Պար սից. և ժողովեալ զզօրս Հայոց՝ ը՟ դէմ երթայ զօրացն Յունաց. որք յետ մահուան Հօր նր՟ Արտաշիսի և ցրուելոյ զօրացն՝ հետամուտ լեալ գային յաշխարհս մեր. որոյ ը՟ դէմ պատահեալ Տիգրանայ՝ արգելեալ ՚ի վե՛րջ պահանջէ՛. և ՚ի քեռ ա՛յր իւր Միհրդատ հաւատացեա՛լ զՄաժաք, և զհոգս միջերկրեա՛յցն. և զօր բազում թողեալ առ նմա՛, դառնայ յաշխարհս մեր: Առաջին գործ՝ զՄեհեանս շինել կամեցեալ:

Իսկ Քրմայն՝ որ ՚ի Յունաց զմըտաւ ածեալ՝ զի մի՛ ՚ի խորագոյն Հայս վարիցին, պատճառեցան զըղձութիւնս, իբր թէ՝ Դիքն անդէն կամիցին զբնակութի՟. որում հաւանեալ Տիգրան՝ կանգնեաց զՈլիմպիական պատկերն Դիոսի՝ յԱմուրն յԱնի. և զԱթենայն՝ ՚ի Թիլս, և զԱրտեմիդեա՛յ զմիւս պատկերն՝ յԵրիզայ. և զԵփեստուն՝ ՚ի Բագաւառինջ. բայց՝ զԱփրոդիտեա՛յ պատկերն՝ իբրև Հերակլեա՛յ՝ տարփաւորի առ նորին պատկերին Հերակլեայ՝ հրամայեա՛ց կանգնել յԱշտից տեղիսն: Եւ ցասուցեալ ը՟ Սահունեան՝ եթէ ընդէ՞ր յիւրեանց սեպ հաւկանեին իշխեցին կանգնել զպատկերն Հերակլի՝ զառաքեալսն 'ի նորո՛ւն հօրէ, ընկենուլ զնա 'ի քրմութենէն՝ հանդերձ զգեօ՛ղսն յարքունիսն ունելով՝ յորում պատկերքն կանգնեցան։ Նա և այսպէս՝ Մեհեանս շինեալ, և առաջին Մեհենիցն՝ Բագինս կանգնեալ, զո՛հս ամ՟ Նախարարացն՝ հրամայէ՝ մատուցանել երկրպագութ՟ի. զոր չառեալ յանձն՝ արանց ազգին Բագրատունեաց, յորոց զմիոյ ումեմն՝ զլեզուն հատեալ՝ որում անո՛ւն էր՝ Ասուդ։ Այս պատկերացն անարգանաց, ոչ՝ այլ ինչ խոշտանգէ. քան զի՝ յանձնառուին ուտել 'ի զոհիցն արքայի, և զմի՛ս խոզի. թէպէտ՝ և ոչ ինքեանք զոհեցին երկրպագութ՟ի. վասն որոյ՝ առնու 'ի նոցանէ զիշխանութ՟ի զօրուն. բայց՝ միա՛յն զԹագակա՛պ Ասպետութիւնն ոչ հանէ։ Ինքն իջանէ 'ի Միջագե՛տս, և գտեալ անդ՝ զԲարշամինա՛յ զպատկերն. զոր պատկեր, 'ի փղոսկրէ, և 'ի բիւրեղէ՝ կազմեա՛լ էր արծաթով. հրամայէ՛ տանել կանգնել յաւանին՝ Թորդան։ Եւ նոյն հետայն դիմէ յաշխա՛րհն Պաղեստինացւոց.

վրէժս պահանջելով 'ի Պտղոմեայ իգէ Կղէոպատրայ՝ յաղագս՝ Դիոնիսի՝ որդւոյ նր՟՝ առ Հայր իւր յանցանաց, առեալ գերի բազում 'ի Հրէից, նստի շուրջ զՊտղոմայիդ քաղաքաւ։ Իսկ՝ Դշխոյն Հրէից Աղեքսանդրոս, որ և՝ Մեսաղինայ, որ և՝ կին լեալ Աղեքսանդրի՝ որդւոյ Յովհաննու՝ որդւոյ Շմաւոնի, եղբօր Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զԹագաւորութ՟ին Հրէից, ինչս տալով բազում, զնա անտի դարձոյց։ քանզի՝ էր լուեալ՝ և համբաւ, եթէ՝ Մայկոն ոմն անուն՝ Յելուզակ՝ խռովէր զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ. որ մինչև ց'այժմ, յանուն Յելուզակին կոչին՝ Մայկոնիք։

Պրակ ԺԴ 14

Դիմումն 'ի մէջ Պոմպէի Հռովմայեցւոց Զօրավարի՝ և առնուլ զՄաժաք. և մահ Միհրդատայ։

Յայնմ ժամանակի՝ Պոմպէոս Հռովմայեցւոց Զօրավար զօրօք բազմօք եկեալ հասեալ 'ի Միջերկրեայս. զՍկորոս զՍպարապետն իւր յԱսորիս առաքէ տալ պատե րազմ ընդ Տիգրանայ։ քանզի՝ էր դարձեալ յիւր աշխարհն՝ վ՟ն խուճապանաց յելուզակին։ Անցեալ Սկօրոսի 'ի Դամասկոս՝ և տեսեալ զքաղաքն առեալ 'ի Մեսրաղայ՝ և 'ի Պուղայ․ զն՟ս հալածեալ՝ ինքն 'ի Հրէաստան փութայր՝ հասանել 'ի վ՟ր Արիստաբուլի, յօգնականութ՟ի եղբօր ն՟ր Երիցու Հիւրկանու․ Քահանայապետի՝ որդւոյ Աղեքսանդրի։ Իսկ՝ Պոմպէի պատերազմեալ ընդ Միհրդատայ, տեսանէ զպատիկ ընդ դիմակացութ՟ի՝ և զահագին մարտս, և վտանգի յոյժ․ սակայն՝ բազմութ՟են յաղթեալ՝ փախստական լինի Միհրդատ 'ի կողմանս Պոնտոսի։ յորմէ իբրև զերծանելով եղեալ Պոմպէոս՝ որում ակն ո՛չ ունէր՝ և առեալ զՄաժաք, և կալեալ զորդի ն՟ր զՄիհրդատ, նստուցանէ 'ի քաղաքին զօր, և ինքն ո՛չ հետամուտ լինի նմա, և ընդ Ասորիս 'ի Հրէաստան փութայր հասանել․ և 'ի ձեռն հօ՛րն Պիղատոսի Պոնտացւոյ՝ զՄիհրդատ սպանանէ՝ Թունաւո՛ր դեղօք։ վկայէ ա՛յսմ բանից՝ և Յովսեփոս՝ 'ի ճառին, որ՝ վ՟ն Ապրսամին սպանմէ, ա՛յսպէ՛ս ա

սե

սելով. Պոմպէի մօտ Յերիքով հասանեն աւետիք մահուանն Միհրդատայ։

Գլուխ ԺԵ 15

Յաղագս՝ յարձակելոյ Տիգրանայ 'ի վերայ զօրաց Հռովմայեցւոց. և խոյս տալ Գաբիանոսի, և արձակել պատանեակն Միհրդատայ։

ԻՍԿ՝ Թագաւորն Հայոց Տիգրան, զգերութ՟ին Հրէից նըստուցեալ յԱրմաւիր՝ և 'յԱւանին Վարդգեսի՝ որ 'ի վ՟ր Քասաղ գետոյ։ և զյելուզակսն բնաջինջ արարեալ 'ի լեռնէն, և զսուգ Միհրդատայ կատարեալ. խաղայ գնայ յԱսորիս, 'ի վ՟ր զօրացն Հռովմայեցւոց՝ առ 'ի վրէ՛ժս պահանջել։ Ընդ դէ՛մ ն՟ր գայ՝ Գաբիանոս Սպարապետ զօրացն Հռովմայեցւոց, զոր թողեալ էր Պոմպէի 'ի գնա՛լն իւրում 'ի Հռոմ. և Գաբիանոս ո՛չ իշխեաց՝ 'ի դիմի հարկանել Տիգրանայ, դառնայ յԵփրատայ, զՊտողոմէոս ունելով պատճառս. և գաղտնի հաշտութիւն խօսեցեալ ընդ Տիգրանայ, տայ զքեռ որդին ն՟ր՝ զպատանին Միհրդատ. զորդին Միհրդատա՛յ, զոր կալեալ էր Պոմպէի 'ի Մաժաք.

ժաք, ասելով՝ թէ՝ գաղտ գնաց.

Գլուխ ԺԶ 16

Պատերազմն Կրասոսի, և սատակումն նորին ՚ի Տիգրանայ։

Զկասկած առեալ հռովմայեցւոց՝ զԳաբինիոս փոխեն՝ և զԿրասոս փոխանակ առաքեն։ որ եկեալ՝ և առեալ զա՟մ գանձս՝ գտեալս ՚ի Տաճարին Աստուծոյ, խաղայ ՚ի վերայ Տիգրանայ. և անցեալ ընդ Եփրատ, սատակի ա՟մ զօրօքն հանդերձ՝ ՚ի պատերազմին՝ ՚ի Տիգրանայ. զորոյ գանձսն ժողովեալ Տիգրանայ՝ դառնայ ՚ի Հայս։

Գլուխ ԺԷ 17

Ելք՝ որդւոյ Կրասոսի՝ ընդ դիմակաց ելել Տիգրանայ. և Միհրդատայ ապստամբել՝ և շինել զԿեսարեա.

Յարեալ հռովմայեցւոց՝ առաքեն զԿրասոս անթիւ զօրօք։ Սա եկեալ՝ և ընդդէմ կացեալ՝ չտայ թոյլ զօրացն Հայոց՝ անցանել ընդ Եփրատ՝ և ասպատակել յԱսորիս։ Զայսու ժամանակաւ՝ թերահաւատութիւն լեալ Տիգրանայ ՚ի պատճառանին Միհրդատ, մինչ

զինչ

զիւր կարծելով քեռ որդի՛ չտայ նմա մասն ինչ իշխանութեան, այլ՝ և ոչ զիւր աշխարհն Մարաց. և Միհրդատայ արհամարհութիւն կրեալ ՚ի Քեռւոյն իւրմէ Տիգրանայ՝ ապստամբութ̃ անկանի առ Կեսար, իշխանութիւն գտեալ զՊերգեայ քաղաքի, զօրավիգն օգնականութեան լինի՛ Անտիպատրոսի հօր հերովդի, Կեսարու հրամանաւ. Սա՛ շինէ զՄաժաք, ընդ արձակագոյն, և պայծառ շինուածովք՝ և անուանէ Կեսարեա՛ ՚ի պատիւ Կեսարու. և յայնմհետէ՝ բարձեալ լինի իշխանութիւնն Հայոց ՚ի քաղաքէն յայնմանէ։

Գլուխ ԺԸ 18

Յաղագս՝ միաբանութեանն Տիգրանայ՝ և Արշէզի՝ և տարածել ասպատակ ի Պաղեստինէ և գերութ̃ն Հիւրկանոսի քահանայապետի. և այլ իրողութ̃ն հրէից։

ՅԱռ այսր ա̃մի՝ ՚ի հիւանդութե̃ նեղեալ Տիգրանայ, աղերսէ՝ ՚ի սէր զԱրշէզ Արքայ Պարսից, յաղագս հպարտութեան հօրն՝ հանելով ՚ի նոցանէ զնախագահութ̃ն. Իսկ նա իւրովք կամօք զերկրորդականն կանոն ունելով՝ ըստ իւրաւանց, դարձուցանէ 'ի նա զնախագահութ՟ին· և 'ի հաշտութիւն ածեալ զԱրշէզ՝ առնու 'ի նմանէ զօր յօգնականութ՟ի իւրեանց։ Յայնմ ժամանակի՝ առեալ Տիգրանայ զԲազափրան՝ Նահապետ Ռշտունեաց նախարարութ՟են՝ Սպարապետ կացուցանէ զօրացն Հայոց, և Պարսից, և առաքէ 'ի վերայ զօրացն Հռովմայեցւոց· հրամա՛ն տուեալ՝ զընակիչս աշխարհին Ասորւոց, և Պաղեստինացւոց՝ 'ի հաշտութ՟ի հաւանու՟ե խօսիլ։ Նմա ընդ առաջ լինի՝ Պակորոս ոմն անուն, որոյ հայրն լեալ Թագաւոր Ասորւոց, և ինքն ինամի Անտիգոնի Արիստաբուղեանց, սա է՝ պտողոմենեանց։ Եկեալ առ Բազափրան՝ նահապետ Ռշտունեաց, և Սպարապետ Հայոց, և պարսից, խոստանայ հինգ հարիւր կին գեղեցիկ՝ և հազար քանքար ոսկւոյ, զի օգնեսցէ նց՟ ընկենլով 'ի Թագաւորութենէ հրէից՝ զՀիւրկանոս, և Թագաւորեցուցանել զԱնտիգոնոս։ Իբրև՝ ետես Հիւրկանոս՝ Հրէից Քահանայապետ, և Թագաւոր, և Փասայելոս՝ եղբայր Հերովդի, եթէ՝ զզօրս Հռովմայեցւոց փախստական արարեալ՝ զոմանս 'ի ծով՝ զոմանս 'ի քաղաքս, խաղաղութե̅ ընդ երկիրն անցանէ Բազափրան, խօսէին զխաղաղութի̅ առ Բազափրան. և նր՝ զՊնէլ ոմն, որ էր Տակառապետ Արքային Հայոց՝ յազգէն Գնունեաց, առաքէ յԵ̃էմ, հանդերձ հեծելազօրաւ, իբր թէ՝ 'ի պատճառս խաղաղութե̅. բայց 'ի գաղտնիս օգնել Անտիգոնեայ. և Հիւրկանոս՝ զՏակառապետն ա̅մ զօրօքն ո՛չ ընդունէր յԵ̃էմ, այլ միա́յն՝ 500 հեծելով. և Տակառապետն դաւով խրատ տուեալ Հիւրկանոսի, զի՝ առ Բազափրան երթիցէ՝ վասն աւերածոյ աշխարհի, և ինքն խոստանայր լինել բարեխօս. և Հիւրկանոս երդումն խնդրեալ 'ի Բազափրանայ. և Բազափրան երդուեա́լ նմա՝ յարեգակն, և 'ի լուսին, և յա̅մ պաշտամունս իւրեանց, երկնայինս՝ և երկրայինս, և յարև Արշէկն, և Տիգրանայ։ ընդ որ վստահացեա́լ Հիւրկանոս, թողու զհերովդէս 'ի մ̃ջ Երուսաղէմի, և զՓասայէլոս՝ զեղբայր հերովդի, առեալ ը̅ իւր գա́յ առ Բազափրան 'ի ծովեզերն, 'ի գեօղն՝ որ կոչի՝ Եքտիպոն։ և Բարզափրան խորամանկութբ պատուէր զնա, և ինքն յանկարծակի անտի գնացեալ՝ մնացելոց զօրացն հրաման տայր, 'ի բուռն առնուլ զնոսա, և'ի ձե՛ռն Անտիգոնի մատնել։ և Անտիգոնոս 'ի վերայ Հիւրկանու անկեալ՝ զականջս նր ատամամբքն 'ի բա՛ց կտրէր, զի թէ՝ և ա՛յլ ժամանակ փոխեսցի, անհնար լիցի նմա զՔահանայապետութիւնն ունել. քզի՝ օրէնքն զողջ անդա՛մսն՝ հրամայեն կացուցանել Քահանայս։ և Փասայիլ եղբա՛յր՝ Հերովդի իւրովի զարկեալ զիւր գլո՛ւխն զքարի, առաքեցաւ բժիշկ 'յԱնտիգոնեայ՝ իբր թէ՝ բժշկել զնա՝ էլից զվէ՛րն նր՝ թունաւո՛ր դեղովք և վախճանեցոյց։ Եւ Բարզափրանայ հրաման տուեալ Գնելոյ՝ Տակառապետի Արքայի Հայոց՝ 'յԵղմ զՀերովդէս որսալ. իսկ Գնէ՛լ՝ զՀերովդէս՝ արտա՛քս քան զպարիսպն՝ ելանել պատրէր, զոր չառեա՛լ յանձն Հերովդի, և ո՛չ ևս՝ կալ 'ի քաղաքին իշխեաց, երկուցեալ 'ի պատառմանէ Անտիգոնեանցն, 'ի գիշերի ծածո՛ւկ ընտանեօքն հանդերձ՝ առ.

Եդո

Եդոմայեցին փախչէր, 'ի Մասադան յամուրն. Թողեալ զընտանիսն, ինքն 'ի Հռոմ փութայր հասանել: Բայց՝ զօրքն հայոց ձեռնտուութ՟բ Անտիգոնեանցն՝ յԵ՟էմ մտանէին, ոչ ինչ ուրեք վնասեալ. բայց՝ միայն զՀիւրկանու զինչսն առնուին՝ աւելի՛ քան զ՝ 300 քանքար: և ընդ գաւառսն ասպատակել զՀիւրկանեանսն աւերէին. և զՄարիկացւոց քաղաքն գերի՛ առեալ՝ Թագաւոր կացուցանէին զԱնտիգոնոս. կապել զՀիւրկանոս՝ ածեն Տիգրանայ՝ հանդերձ գերութ՟բն. և Տիգրան հրաման տայ Բազափրանայ՝ նստուցանել զգերին Հրէից՝ որ 'ի Սամարացւոց, 'ի քաղաքին Շամիրամայ: և Տիգրանայ ոչ աւելի բաւեալ՝ քան զերկեամ մի՝ յետ այսորիկ՝ վախճանի: Թագաւորեալ ամս՝ 33:

Պրակ ԺԸ 18

Անպատերազմ Հայոց, ընդ զօրս Հռովմայեցւոց. և պարտութիւն Սեղոնի և Անտոնեայ:

◆ Երովդէս անցեալ 'ի Հռոմ, առաջի Անտոնիոսի՝ և Կեսարու՝ և Սինկղիտոսին, զինքեան միամտութիւն՝ առ Հռովմայեցիսն

պա

պատմէ՝ և Թագաւոր հրէաստանի յԱնտոնիոսէ եղեալ, առնու իւր զօրավիգն օգնականութե՟՝ զՎենդեգէս Հռոմայեցւոց Սպարապետ՝ զօրօք պատերազմել ընդ զօրս Հայոց՝ մերձ յԵփրատ. և զՊակարոս սպանեալ՝ դառնայ յԵրուսաղէմ՝ 'ի վ՟ր Անտիգոնի: Իսկ՝ հայոց միւսանգամ օգնութիւն զօրու 'ի Պարսից գտեալ՝ դիմել 'ի վ՟ր Սիղոնի, և փախստական զնա 'ի Վենդեգէս արկանեն, հեղմունս արեանց առնելով անբաւս:

Պրակ ի՟ 20

Յրբէ՝ չէ արդ Անտոնիոս խորհէր դիմեալ 'ի վերայ զօրացն Հայոց առնու զՇամբատ:

ՍԶարեա՛լ Անտոնիոս՝ իւրովք հասանէ ա՟մ զօրօք հռոմայեցւոց. և հասեալ 'ի Շամբատ, լսէ զմա՛հն Տիգրանայ, և առեալ զքաղաքն, և թողեալ զՍոսիա՛՝ զօրավիգն հերովդի՝ մարտ դնելով ընդ Երուսաղէմի՝ 'ի վերայ Անտիգոնի, ինքն 'ի ձմերո՛ցս գնայ յԵգիպտոս, փութա՛յր հասանել՝ ըստ շամբշութե՟ առն կնամոլոյ՝ ցանկութե՟ վառեալ 'ի Կղէոպատրայ՝ դըշխոյն խո՛յն Եգիպտացւոց։ Ա՛յս Կղէօպատրա՛ դո՛ւստր է՛ Պտողոմէոս Դիոնիսի, Թո՛ռն Պտողէմայի՛դ Կղէօպատրայ՝ և սիրելի յո՛յժ Հերովդի. վն̃ որոյ՝ առաւե՛լ ևս՝ յանձնէ՛ Անտոնիոս Սոսիայ. որ և մարտուցեա՛լ ի՛սկ քաջապէս՝ առնու զԵրուսաղէմ. և սպանեալ զԱնտիգոնոս՝ թագաւորեցուցանէ զհերովդէս ա̃մ Երուսաղէմի, և Գալիլեայ։

Պրակ Իա 21

Յաղագս Թագաւորելոյն Արտաւազդայ և պատերազմել ընդ հռովմայեցիս։

Հայոց թագաւորէ Արտաւազդ՝ որդի Տիգրանայ։ սա՛ ժառանգեցուցանէ զեղբարս իւր, և զքո՛յրս ՚ի գաւառին Աղւոյովտի, և Առբերանւոյ, թողլո՛վ ՚ի նոսա՝ զմասն Արքունի՝ որ ՚ի շէնսն այնց գաւառաց, հանդերձ առանձին մըտից՝ և ռոճկաց։ ըստ օրինակի ազգականայն՝ որ ՚ի կողմանս Հաշտենից։ ոմ̃՝ զի լինիլ ն̃ց Պատու՛ականագոյն, և առաւել Թագաւորա՛զն՝ քան զայլսն Արշակունիս. միայն օրինադրէ՝ ո՛չ կեալ յԱյրար̃տ ՚ի բնակութ̃իս Արքայի։ Բայց՝ այլ ոչ գործ արութեան, եւ քաջութեան եցոյց. այլ ուտելեաց՝ եւ ըմպելեաց պարապեալ. մօրից՝ եւ եղեգնապուրակաց թափառեալ՝ շրջէր՝ եւ առապարաց, զիշավայրիս, եւ զխոզս արածելով. զիմաստութենէ, եւ զքաջութենէ՝ եւ զբարի յիշատակաց՝ անփոյթ արարեալ. ծառայ՝ եւ ստրուկ որովայնի լինելով, արդարեւ զաղբս մեծացուցանէր։ Սա բասրելով յիւրոց զօրացն՝ վասն առաւել պղերգութեան՝ եւ սաստիկ որկրամոլութեան, մանաւանդ զի եւ Միջագետս Ասորւոց՝ Անտոնիոսի հանեալ էր ՚ի նմանէ. Ընդ որ՝ զայրացեալ Արտաւազդ՝ հրաման տայր՝ զօր յարուցանել ընդ բիւրաւորս Ատրպատական նահանգին, եւ զբնակիչս լերինն Կաւկասու հանդերձ Աղուանօք, եւ Վրօք. խաղայ՝ իջանէ ՚ի Միջագետս, եւ հալածական առնէ զզօրս Հռոմայեցւոց։

Գրակ ԻԲ 22

Զերբեալ առնել զԱրտաւազդ Անտոնեայ։

Մռնչեալ առիւծաբար գազանութեամբ Անտոնիոս, առաւել եւս՝ թունեալ ՚ի Կղէոպատրայ։

քան

քանզի՝ քէն պահեալ էր՝ վ̃ն ընկանաց իւրոց հանոյն, որ ՚ի Տիգրանայ. և ո՛չ միայն՝ Հայո՛ց, այլ՝ բազմաց այլոց Թագաւորաց լինէր մահաբեր, զի՝ նոցայոցն տիրեացէ իշխանութեց. սակս որոյ՝ բազում Թագաւորս ըսպանեալ Անտոնիոս, Կղէոպատրայ հաւատայ՝ զն̃ց իշխանութիս, բաց ՚ի Տիւրոսէ, և ՚ի Սիդոնէ՝ և որ միանգամ՝ ընդ Ազատ գետովն էին։ Եւ առեալ զբազմութի̃ զօրայն՝ դիմէ ՚ի վ̃ր Արտաւազդայ, և անցեալ ընդ Միջագետս՝ կոտորէ անհնարին զզօրս Հայոց, և ձերբակալ առնէ զԱրքայն ն̃ց. և դարձեալ յԵգիպտոս՝ պարգևէ Կղէոպատրայ զԱրտաւազդ՝ որդի Տիգրանայ՝ հանդերձ բազում ընչիւք յանկածէ պատերազմին։

Գլուխ իգ̃ 23

Յաղագս Թագաւորելոյն Արշամայ՝ և առաջինն մասնաւոր հարկել Հայոց Հռովմայեցւոց։ Եւ ազատումն Հիւրկանու քահանայապետի. և վասն նորին՝ վտանգ ազգին Բագրատունեաց։

Ի Քսաներորդի ամի, ՚ի կատարումն աւուրց Թագաւորութեն

ար

Արշիզի, ժողովեալ զօրք Հայոց՝ հրամանաւ նորին՝ թագաւորեցուցին 'ի վր̃ ինքեանց՝ զԱրջամ, որ և՝ Արշամ, որդի Արտաշիսի՝ Եղբօր Տիգրանայ՝ Հայր Աբգարու։ զսա ոմանք կոչեցին յասորւոց՝ Մանովազայ· ըստ յոլովից սովորութե̃՝ կրկին ունելով անուանս· ոչ Հերովդէս ագրիպաս, և ոչ Տիտոս անտոնինոս, և կամ՝ Տիտոս Յուստոս։ Բայց՝ քանզի 'ի նմին ամի՝ վախճանեցաւ Արշէզ՝ թողլով զթագաւորութի̃ն Պարսից՝ որդւոյ իւրում Արշօրի՝ մանկան փոքրկան՝ յոյժ տղայոյ· ոչ ոք էր՝ որ օգնէր Արշամայ՝ ընդ դէմ կալ Հռովմայեցւոց· խօսի ընդ նմ̃ 'ի հաշտութի̃ խաղաղութեան, տալով զհարկս 'ի Միջագետ Ասորւոց, և 'ի կողմանց Կեսարու՝ 'ի ձեռս Հերովդի։ այս եղև ըսկիզբն՝ հայոց մասնաւորիլ ը̃ հարկաւ Հռովմայեցւոց։ Զայսու ժամանակաւ՝ եղև մ̃ծ ցասումն 'ի վերայ Ենանոսի Ասպետի իւրումն թագակապի· քանզի՝ նա արձակեաց զՀիւրկանոս, հրէից Քահանայապետ, զոր գերեալ էր Բազափրան Ռշտունոյ՝ յաւուրս Տիգրանայ։

Իսկ՝ Անանոս պատասխանի առ արքայի ասելով. եթէ՝ փրկանս խոստացաւ՝ 100 քանքար, ակն ունելով առնու՛լ 'ի նմանէ, յանձն էառ տա՛լ՝ վ՟ն որոյ՝ ժամադրութիւն 'ի վերայ ն՟ր սահմանէ Արշամ։ և նորա առաքեալ զմի յեղբա՛րց իւրոց 'ի Հրէաստան, որում անուն էր՝ Մենեքիայ, առ Հիւրկանոս՛ զի տացէ ինչս՝ յաղագս իւրոյ փրկութե՟ն. և երթա՛յ առաքեալն յԱնանոսէ, պատահէ սպանեա՛լ զՀիւրկանոս Հերովդէ՛ զի մի՝ ինչ դաւ նորա թագաւորութեանն լինիցի. արդ՝ իբրև եհաս ժամադրութիւնն, և չտա՛յ զանձս փրկանացն Հիւրկանու Անանոս, բարկացաւ 'ի վերայ ն՟ր Արշամ, և ընկեցեալ 'ի պատուոյն՝ հրամայէ դնել 'ի բանտի։ Յա՛յնմ ժամանակի՝ քսութիւն մատուցանէ զնմանէ՛ արքայի Ուրայ՝ Նահապետ ազգին Գնունեաց՝ ասելով։ Գիտեա՛ Արքայ՝ զի ապստամբե՛լ 'ի քէն կամեցաւ Անանոս, խորհուրդ ընդ իս բերելով՝ զի՝ երդմա՛մբ խնդրեսցուք 'ի Հերովդէ՝ Թագաւորէ Հրէաստանի, իբր ընդունե՛լ զմեզ՝ և տա՛լ ժառանգութիւն 'ի բնիկ երկրի մերում։ քանզի՝ նորակտուտ ծանեակեցաք յաշխարհիս յայսմիկ․ և իմ ո՛չ յանձն առնելով՝ ասե՛մ ցնա՛, ընդէ՛ր պատրիմք զրուցօք վաղնջուց, և պառաւեալ առասպելօք՝ Պաղեստինացիս զմեզ վարկանելով։ և նր̃ անյուսացեալ յինէն, նմին իրի իսկ՝ առաքեաց զ՚Քահանայապետն Հիւրկանոս, և առաւել ևս՝ ՚ի հերովդէ՛ անյուսացաւ, սակայն՝ ո՛չ մեկնի ՚ի դրժողութեան բարուցն, եթէ ո՛չ՝ Արքայդ ածապարեսցես նմա։

Այսմ քսութե̃ց հաւանեալ Արշամայ, և հաւատացեալ՝ հրամայեաց՝ տանջանս պէսպէս՝ ՚ի վերայ Ենանոսի կուտել։ Եւ վախճան գործոյն կամ, թողլով իսպառ զօրէնս հրէութեանն, և երկի՛ր պագանել արեգական, և պաշտել զկուռս արքայի․ ընդ որ վստահացեալ արքայի՝ տացէ նմա զնոյն իշխանութիւն, կամ, կախիլ զփայտէ, և բնաջինջ լինիլ ազգի՛ դր̃։ և սպանեա՛լ զմի յազգականա՛ցն առաջի նր̃՝ որո՛ւմ անո՛ւն էր՝ Սարիա՛․ և առ ընթեր զորդի՛սն մատուցեալ ՚ի տեղի սպանմանն, որոյ անո՛ւանքն՝ Սափատիա՛, և Ազաբիա՛․ յերկիւղէ մահո՛ւան որդւոցն՝

և ՚ի թախանձելոյ կանանցն, կատարէ զկամս Արքայի՝ հանդերձ ամենազգատոհմաւ, և յառաջին պատիւն իւր հաստատի. սակայն՝ ոչ ամենևին վստահանայ ՚ի նմա արքայ, հաւատալով նմա զաշխարհն. զի՝ ՚ի Միջագետաց միայն հեռացուցէ զնա։

Պրակ իդ 24

Գժտութիւն Հերովդի ընդ Արշամայ և արշամայ հնազանդութիւն։

Յետ այսր՝ եղև խռովութիւն ՚ի մէջ Հերովդի՝ արքայի Հրէաստանի՝ ընդ մերոյ արքային Արշամայ. քանզի՝ Հերովդէս՝ յետ բազո՛ւմ՝ գործոց արութեանց, ձեռնամուխ լինի ՚ի բարեգործութիւս. շինուածս բազո՛ւմս առնելով բազո՛ւմքաղաքաց, սկսեալ ՚ի Հռովմէ՝ մինչև ց՚Դամասկոս. խնդրեաց յԱրշամայ բազմութիւն արանց՝ անարուեստից Գործաւորաց, որովք զԱսորւո՛ց զԱնտիոքայ՝ զանանց՝ և զանկո՛խ հրապարակսն ՚ի խոհե՛րց. և ՚ի տղմոց լցցէ. զոր՝ ո՛չ առեալ յանձն Արշամայ, զօրս ժողովէ՝ ընդ դիմանալ Հերովդի. և ՚ի ձեռն հրեշտակաց՝ յղէ առ Կայսր ՚ի Հռոմ, զի մի՛ զնա ընդ իշխանութբ̃ Հերովդի՛ արասցէ. ի՛սկ՝ Կա՛յսրն՝ ո՛չ միա՛յն զԱրշամ չազատէ՛ յիշխանութենէ Հերովդի, այլ և՝ զամենայն Միջերկրեա՛յս նմա հաւատայ։

Յա՛յնմ ժամանակի՝ Հերովդէս՝ զանէ՛ր Աղեքսանդրի՝ որդւոյ իւրոյ՝ որ էր 'ի հօրէ՛ Տիմոնէ՝ և 'ի մօրէ 'ի թագաւորութենէ Մարաց, 'ի զաւակաց Աշդահակայ վիշապասպեանց, ը̃ իւրով ձեռամբ թագաւոր Միջերկրեա՛յցն կացուցանէր. առեա՛լ իւր 'ի սպասաւորութիւն զունդ՝ զԳաղատացւո՛ց, և զՊոնտացւոց։ Տեսեա՛լ զայն Արշամայ՝ երկրպագէ Հերովդի՝ իբրև Տ̃ն, ամ̃բ իսկ տալով նմա, զոր խնդրէ՛ր՝ Գործաւորս. որովք լցեալ զհրապարակսն Անտիոքացւոց՝ քսան վտաւանաւ երկայնութբ̃ յատակեաց՝ սալիտակ կճեա՛յ սալայատակօք. զի՝ ուխաւորք յատակա՛ցն դիւրադո՛յն կարգեսցեն առ ո՛չ ինչ փնաս առնել։ Նայց՝ Արշամայ վարեա՛լ զթագաւորութիւնն ամս քսան՝ վախճանեցաւ։

Գրակ ԻԵ 25

Թագաւորութիւն Աբգարու, և ծառանել բոլորովիմբ Հայոց՝ ընդ հարկաւ Հռովմայեցւոց. և պատերազմ ընդ Հերովդի զօրացն. և սպանանել զեղբօր որդի նորա՝ զՅովսէփ:

Թագաւորէ Աբգար՝ որդի Արշամայ՝ 'ի քսան երրորդ ամի Արշօրայ, Թագաւորի Պարսից: սա Աբգարոս կոչիւր՝ Աւագայր, վ՟ն առաւել հեզութեանն՝ և իմաստութեանն. որում յետոյ՝ և տի՛քն. զայս՝ ո՛չ կարելով ուղղակի՛ խօսիլ Հոռոմք՝ և Յունաց, կոչեցին՝ Աբգարոս: Ի ս՟ր երկրո՛րդ ամի Թագաւորութեանն՝ հարկի՛ն Հռօմայեցւոց բոլորովի՛մբ՝ ա՟մ կողմանց Հայոց: Քանզի՝ հրամայեալ յՕգոստոս Կայսերէ, ո՟ղ ասի 'ի Ղուկա՛յ Աւետարանի՛ն՝ աշխարհագի՛ր առնել՝ ընդ ա՟մ տիեզերս. վ՟ն որոյ՝ 'ի Հա՛յս առաքեալ Գործակալք Հռովմայեցւոց, բերելով զպատկերն Օգոստոսի՛ Կայսեր՝ կանգնեցին յա՟մ Մեհեանս:

Յայսմ ժամանակաւ՝ լինի ծնեալ ՓՐԿԻՉՆ, մեր Յ՟ս Ք՟ս Որդի Ա՟յ՝ 'ի Հրէաստանի: Յամին աւուրք ուրբք՝ լինի խռովութիւն 'ի մէջ Աբգարու, և Հերովդի. զի՛ հերովդի հրամայեալ՝ զի՛ւր պատկերն՝ հո՛ւպ 'ի կայսերական պատկերն կանգնել՝ 'ի Մեհեանս Հայոց. զոր՝ չառեա՛լ յանձն Աբգարու, պատճառս 'ի վերայ նորա յուզէ՛ հերովդէս, առաքէ զզօրս Թրակացւոց, և Գերմանացւոց՝ ասպատակաւ հինից՝ յերկի՛րն Պարսից, հրաման տուեալ՝ ընդ աշխա՛րհն Աբգարու անցանել։ Իսկ՝ Աբգար ո՛չ հաւանեալ՝ ընդդիմանայ՝ ասելով. եթէ՝ ընդ անապա՛տ է հրաման կայսեր՝ անցանել զօրա՛ցդ 'ի Պարսս. ընդ ո՛ր՝ յոյժ դառնացեա՛լ Հերովդէս, անձամբ ինչ ո՛չ կարէր վճարել՝ պէ՛ս պէս ցաւոց զնա՛ ըմբռնեալ՝ վասնզի 'ի Քրիստոս համարձակեցաւ, որդանց 'ի նմա եռացեալ՝ որպէս պատմէ Յովսեփոս. առաքէ՛ զեղբօր որդի իւր՝ զՅովսէփ՝ որում տուեալ զդուստր իւր՝ որ յառաջ էր կին Փերուրի՝ եղբօր իւրոյ. և նորա առեալ զբազմութիւն զօրացն՝ գայ հասանէ յաշխարհն Միջագետաց. պատահէ Աբգարու 'ի զօրանիստ գաւառին Բուգնան, և մարտուցեալ մեռանի 'ի զօրացն Աբ-

գա

գարու, և զօրքն փախստական լինին։ Նոյն հետ այն՝ վախճանի և Հերոդէս. և Հրէից ազգապետ զԱրքեղայոս՝ նորին որդի Օգոստոս կացուցանէ։

Պրակ ի̅զ̅ 26

Շինուած Եդեսեայ քաղաքի. Եւ [illegible] [illegible] [illegible] ազգի մերոյ Լուսաւորչին։

Յետ ո՛չ բազում աւուրց՝ վախճանի Օգոստոս, և փոխանակ նորա թագաւորէ Հռոմայեցւոց՝ Տիբեր. և Գերմանիկոս՝ Կեսար եղեալ՝ ձաղեաց զաւաքեամբն ՚ի Հռոմ, զիշխանսն Արշօրի, և Աբգարու՝ յաղագս պատերազմին ն̃ց, յորում սպանին զեղբօր որդին Հերովդի. ընդ որ՝ խստացեալ Աբգարու խորհի ապստամբութիւն, և պատրաստուի պատերազմի. յայնժամ, շինէ քաղաք՝ զտեղի պահպանութե̃ գնդին Հայոց՝ ուր յառաջագո՛յն զգուշանային Եփրատու ՚ի կրասոսէ, որ կոչի՝ Եդեսեա. և փոխէ ՚ի նա զարքունիսն իւր՝ որ ՚ի Մծբին. և զկուռս իւր՝ զՆաբոգ, և զԲէլ, և զԲաթնիկամ, և զԹարաթայ, և զՄատեանս Մեհենից Մարծա-

րա

րանին, և միանգամայն զՊխւանս թագաւորացն։ Յետ ա՛յսր մեռանել Արշաւիր՝ թագաւորէ 'ի վ՟ր Պարսից Արտաշէս՝ որդի՛ նր՟։ Արդ՝ թէ պէտ և ո՛չ է կարգ պատմութեանս 'ի ժամանակի. և ո՛չ՝ ըստ կարգի՛ է զոր ասե՛լս ձեռնարկեցաք. այլ՝ քան զի սերո՛ւնդք Արշօրի թագաւորի՝ են որ Հայո՛ց ազինս հաւատոյ եղեն առիթ, և Արտաշիսի՝ որդւոյ նորա հարազատութիւն։ Սկիզբն արասցուք՝ յաղագս պատուականութե՟ն մարդկանն՝ նախակարգեալ 'ի գի՛րս առ ընթե՛ր Արտաշիսի, զի՝ իմասցի՛ն՝ որք ընթեռնուն՝ եթէ՝ համազգիք՝ Բաջի՛ն են. իսկ՝ զկնի այսմ նշանակեսցուք զժամանակս՝ գալստեան հարց նց՟ 'ի Հայս, որք են Կարենեանք, յորմէ՝ Սրբն Գրիգոր, և յորմէ՝ Կամսարականք. յոր ժամ՝ 'ի շարժ կարգի՛ն հասանիցեմք թագաւորի՛ն, որ զնոսա՛յն ընկալաւ։ Բայց՝ Աբգարու ո՛չ աջողեցաւ խորհո՛ւրդն ապստամբութե. զի՝ խռովութ՟ի անկեալ՝ 'ի մէջ ազգականա՛ցն իւրոց թագաւորութեանն Պարսից, զօրս ժողովեալ՝ անդ չուէր՝ համօզե՛լ զնս՟, և դադարեցուցանել։

Գլուխ ԻԷ 27

Յաղագս երթալոյն Աբգարու յարեւելս՝ եւ նպաստաւորեցուցանելոյ Պարսից զԱրտաշէս։ Եւ թէ՝ զի արդ կարգեաց զնախարարս իւր, յորոց մեր Լուսաւորիչն՝ եւ ազգակիցք իւր։

Երթեալ Աբգարու յարեւելս՝ գտանէ թագաւորեալ Պարսից զԱրտաշէս՝ որդի Արշաւրի, եւ ընդդիմացեալ նմա զեղբա՛րս իւր․ քանզի՝ նա՛ խորհէր՝ ազգաւ 'ի վերա՛յ ն՟ց թագաւորել, եւ նք՟՝ ո՛չ առնուին յանձն․ վ՟ն որոյ՝ պաշարեա՛լ զն՟ա Արտաշիսի, եւ երկի՛ւղ մահու եդեալ 'ի վ՟ր ն՟ց, բազմո՛ւմ պատառմունք, եւ անմիաբանութիւնք զօրացն, եւ այլոց ազգականաց լինէին․ քանզի՝ Արշաւրի թագաւորի՝ էին որդիք՝ գ՟ եւ դո՛ւստր մի։ առաջին, նոյն ինքն արքայ Արտաշէս․ երկրորդ՝ Կարէն երրորդ՝ Սուրէն։ եւ քոյր նոցին՝ որ անուանեա՛լ կոչիւր՝ Կոշմ, կին զօրավարին ամ՟ արեաց 'ի հօրէն կարգեալ։ Իսկ՝ Աբգարու համոզեալ զնոսա խաղաղանալ․ 'ի մէջ ամենեցուն հաստատէր՝ զայն ինչ սահմանելով։ թագաւորել Արտաշիսի՝ հանդերձ իւրո՛վք ծննդովք, ո՟պ խորհեցաւ։ և զեղբա՛յրս անուանել՝ Պալհաւս՝ յանուն քաղաքին իւրեանց՝ և աշխարհին մեծի՝ և քաջաբերուոյ· ոք՟՝ զի լինիլ նց՟ Պատուականագոյն, և Առաջին՝ քան զամ՟ Նախարարութիւնս Պարսից, ոք՟՝ արդարև Զա՛րմն թագաւորաց։ Նաև դաշինս՝ և երդմունս ՚ի մէջ հաստատեալ, զի՛ թէ՝ դէ՛պ լիցի ըսպառիլ Զարմից Արտաշիսի՛ պատանեաց, նոքա՛ մատիցեն ՚ի թագաւորութիւն։ Նաև արտաքոյ Ցեղին նր՟՝ թագաւորեցելո՛յ ցե՛ղս որոշեա՛լ զնս՟՝ երի՛ս կոչմամբ այսպիսեաւ՝ Կարենի՛ Պալհա՛ւ· Սուրենի՛ Պալհա՛ւ· և զքո՛յրն՝ Ասպահապետի՛ Պալհա՛ւ· յանո՛ւն Տանուտէրութ՟են՝ և զնորա անուն որոշեալ։ և ասեն՝ զՍուրբն Գրիգոր՝ ՚ի Սուրենեան Պալհաւէ· և զԿամսարականն, ՚ի Կարենեան Պալհաւէն։ Այլ զա՛յսր գոլոյն զորպիսութ՟ի, ՚ի կարգին պատմեսցուք· միա՛յն պատմելով ա՛յժմ, առընթե՛ր Արտաշիսի· զի՝ ծանիցես զազգս զայս մեծ, թէ՝ հաւաստի արի՛ւն Վաղարշակա՛յ են՝ յր՟՝ Զարմ Արշակայ մեծի՝ եղբօր Վաղարշակայ։ Նաև այսոցիկ՝ ա՛յսպէս կարգեցելոց՝

և զգիր ուխտին՝ ընդ իւր առեալ Աբգարու, դառնայ՝ ոչ առողջ մարմնով, այլ չարաչար ցաւովք՝ ախտացեալ:

Պրակ ԻԸ 28

Դարձ Աբգարու յարևելս, և տայ օգնականութիւն Արետասայ 'ի մարտ՝ ընդդէմ Հերովդի Չորրորդապետի:

Իբրև դարձաւ Աբգար յարևելից՝ լուաւ նմա զՀռոմայեցւոց՝ թէ՝ 'ի կասկածանս անկեալ են՝ վասն նորա, իբրև թէ՝ զկնի զօրու գնաց յարևելս. վասն որոյ՝ գրեաց առ գործակալս Հռոմայեցւոց զպատճառս երթալոյն նորա 'ի Պարսս. միանգամայն և զգիր ուխտին, որ ընդ Արտաշիսի, և ընդ եղբարս նորա, տայ տանել՝ և նոքա ոչ հաւատային նմա. վասն զի՝ և թշնամիք չարախօսք էին զնմանէ, Պիղատոս, և Հերովդէս Չորրորդապետ. և Լիւսինա Փիլիպպոս: Իսկ Աբգարու եկեալ 'ի քաղաքն իւր յԵդեսեայ, միաբանեաց ընդ Արետայ՝ արքային Պատրիացւոց, սատարս նմա տալով 'ի ձեռն Խորենայ ումեմն Արծրունւոյ՝ մարտնչել ընդ Հերովդի. քանզի՝ նախ զդուստր Արետայ արքայի՝ կին առեալ Հերովդի, եւ ապա անարգե͞լ ’ի բաց եթող. զի՝ զՀերովդիադայ մեկնեալ յառնէն իւրմէ կենդանւոյ ’ի բաց եհան. յաղագս որոյ՝ ըստէպ յանդիմանեալ ’ի Յովհաննէ Մկրտչէ, այնր աղագաւ՝ էսպան զՅովհաննէս Մկրտիչ։ Եւ եղեւ պատերազմ ընդ նմա, եւ ընդ Արետա արքայ՝ վ͞ն անարգանաց դստերն. յորում սաստկապէս հարեալ՝ սատակեցան զօրքն Հերովդի՝ յօգնականութենէ Քաջացն Հայոց. ո͞պ՝ յԱ͞ծային իմն գոդցես տեսչութենէ՝ վրէժս հատուցանել ը͞ մահուանն Յովհաննու Մկրտչի։

Պրակ ի͞թ 29

Առաքումն Իշխանացն Աբգարու առ Մառինոս՝ յորում տեսին զՓրկիչն մեր Քրիստոս. եւ սկիզբն հաւատոյն Աբգարու։

ԸՆդ այն ժամանակս եկաց ’ի գործ հաղարապետութեան Կայսեր, ’ի վերայ փիւնիկեցւոց, եւ Պաղեստինացւոց, Ասորւոց, եւ Միջագետաց, Մառինոս՝ որդի Ստորոգեայ։ Առ որ առաքեաց Աբգարոս երկուս ’ի գլխաւորաց իւրոց.

զՄա

զՄարիհաբ՝ Բդեաշխն Աղձնեաց, և զՇամշագրամ՝ Նահապետ Ապահունեաց Տոհմին, և զԱնան հաւատարիմ իւր, 'ի քաղաքն Բեթքուբին, զգացուցանել նմա զպատճառս երթալոյն իւրոյ յարևելս, ցուցանելով նմա զգիր ուխտին՝ որ ընդ Արտաշէս՝ և ը՟ եղբարս իւր, և առնել զնա թիկունս օգնականութե՟. որոց եկեալ գտին զնա յԵրևթերոյպօլիս։ Եւ նր՟ ընկալեալ զնոսա խաղաղութբ՟՝ և մեծարանօք. առնէ պատասխանի Աբգարու. մի կասկածել 'ի Կայսերէ՝ սակս այնր. միայն զհարկէն՝ լիով փութասցի։ Եւ նք՟ դարձեալ անտի՝ ելին յԵրուսաղէմ, տեսանել զՓրկիչն մեր՝ Քս՟, վս՟ լրոյ համբաւոց սքանչելագործութեանցն. որում և ականատես եղեալ՝ պատմեցին Աբգարու. ընդ որ՝ զարմացեալ Աբգարու, հաւատաց ճշմարտապէս՝ իբր արդարև Որդի՟ Այ՟. և ասէ, այն զօրութիւք Այ՟ են, և ոչ մարդոյ. զի՝ չիք ոք 'ի մարդկանէ՝ որ կարէ յարուցանել զմեռեալս՝ բայց միայն Ած՟։ և քանզի ապականեալ էր մարմին նր՟ 'ի չար ցաւոց՝ որ պատահեցին նմա

'ի

'ի Պարսից աշխարհին՝ յառաջ եւս՝ քան զեօ՛թն ամ, որ 'ի մարդկանէ ո՛չ եղեւ նմա հնարս բժշկութեան։ Ետ տանել առ նմա թուղթ աղաչանաց, գա՛լ՝ եւ բժշկե՛լ զնա 'ի ցաւոցն, օրինակ զայս։

Թուղթ Աբգարու առ Փրկիչն Ք̃ս։

Աբգար Արշամայ, իշխան աշխարհի, առ ՅԻՍՈՒՍ ՓՐԿԻՉ ԲԱՐԵՐԱՐ՝ որ երեւեցար յԵրուսաղէմացւոց աշխարհիդ, Ողջոյն։ Լուե՛ալ է իմ, վ̃ն քո՝ եւ վ̃ն բժշկութեանցդ՝ որ լինի՛ն 'ի ձեռս քո՝ առանց դեղոց՝ եւ արմատոց. զի՝ ո̃պ ասի, տա՛ս դու կուրաց տեսանել՝ եւ կաղաց գնա՛լ՝ եւ զբորոտս սրբե՛ս, եւ զա՛յսս պիղծս՝ եւ զդե՛ւս հանե՛ս. եւ որ միանգամ չարչարեա՛լ են յերկա՛ր հիւանդութ̃բք, բժշկե՛ս, դու՝ եւ զմեռեա՛լս յարուցանես։ Եւ իբրեւ լուա՛յ վ̃ն քո զա՛յս ա̃մ, եդի 'ի միտի իմում, մի՛ յերկուց, կամ թէ՝ դո՛ւ իցես Ա̃ծ իջեալ յերկնից՝ եւ գործես զայդ. կամ թէ՝ դո՛ւ իցես Որդի Ա̃յ, եւ զա՛յդ առնես։ Արդ՝ վասն այնորիկ գրեցի՛ եւս առ քեզ, աղաչել զքեզ՝ զի աշխատ լինիցիս՝ եւ եկեսցես առ իս՝ եւ բժշկեսցես զհիւանդութ̃իս, զոր ունիմ ես։ Նա՛ և՝ լուա՛յ զի և Հրեայք տրտունջեն զքէն, և կամին չարչարել զքեզ։ բայց՝ քաղաք մի փոքրիկ, և գեղեցի՛կ է իմ, և բաւական է՛ մեզ երկոցունցս։ Որոց տարեալ զԹուղԹն՝ պատահեցին նմա յԵրուսաղէմ։ զայս վկայէ՝ և Աւետարանաւորն Յ՝անն, եԹէ՝ էին ոմանք, և՛ ի հեԹանոսաց յելելոց առ նա։ վ՟ն որոյ՝ ո՛չ համարձակէին՝ որք լուա՛նն՝ ասել ց՚Յ՟ս. այլ՝ ասեն ցը՚ Փիլիպպո՛ս, և ց՚Անդրէաս. Անդրէաս՝ և Փիլիպպոս ասեն ց՚Յ՟ս. իսկ՝ ինքն Փրկիչն մեր՝ յայնմ ժամանակի՝ յորում կոչեացն զնա՛՝ ո՛չ էառ յանձն, բայց՝ ԹղԹոյ արժանի արար զնա՛, որ ունի օրինակ զայս։

Պատասխանի ԹղԹոյն Աբգարու՝ զոր գրեաց Թովմաս Առաքեալ՝ հրամանաւ Փրկչին։

Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս, իբր՝ ո՛չ իցէ նորա տեսեալ զիս. զի՝ գրեա՛լ է վասն իմ այսպէ՛ս. զի՝ որք տեսանենն զիս՝ ո՛չ հաւատայցեն յիս, և որք ո՛չն տեսանիցեն զիս՝ նոքա հաւատասցեն՝ և կեցցեն։ Իսկ՝ վասն այնր՝ զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ, արժա՛ն է ինձ՝

ասա

աստ կատարել զամ ինչ՝ վս որոյ առաքեցայ յԵրուսաղէմ. իբրև կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. և յոր ժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց՝ զի զքո ցաւսդ բժշկեսցէ, և կեանս քեզ՝ և որոց ընդ քեզ են՝ շնորհեսցէ։

Զայս՝ Թուղթ եբեր Անան՝ Սուրհանդակ Աբգարու, ընդ որում և զկենդանագրութի փրկչական պատկերին՝ որ կայ յԵդեսացւոց քաղաքին։

Գլուխ Լ 30

Քարոզութի Եդեսեայ՝ Առաքելոյն Թադէոսի, և պատճէն Ոսկեայն հնգից։

ԲԱյց՝ յետ համբառնալոյն փրկչին մերոյ, Թովմաս առաքեալ՝ մի յԵրկոտասանիցն, առաքեաց զԹադէոս՝ որ էր՝ մի յԵօթանասնից անտի, 'ի քաղաքն յԵդեսեայ՝ բժշկել զԱբգար, և աւետարանել բանին Տն։ Որոյ եկեալ եմուտ 'ի տուն Իշխանի Հրէից՝ զոր ասեն՝ լինել յազգէն Բագրատունեաց. որոյ խոստեալ յԱբշամայ, ոչ ուրացաւ զՀրէութիւնն՝ ընդ այլ

ազ

ազգականս իւր, այլ՝ նոյնն օրինօք եկաց՝ մինչև հաւատալ 'ի Քս՟. և ել համբաւ նր՟՝ ընդ ա՟մ քաղաքն: Լուեալ Աբգարու ասէ, նա է, վ՟ս որոյ գրեաց Յս՟. և իսկոյն կոչեաց զնա: և եղև 'ի մտանելն Թադէի, տեսիլ սքանչելի երևեցաւ՝ յերեսն Թադէի: յարուցեալ անկաւ առ ոտս նր՟ 'ի գահոյից 'ի վր՟ երեսաց իւրոց՝ և երկիրեպագ նմա. և զարմացան ա՟մ իշխանքն՝ որք շուրջ կային՝ զի ոչ գիտացին զտեսիլն:

Եւ ասէ ց'նա Աբգար, եթէ՝ դու իցես արդարև՝ Աշակերտ Օրհնելոյն Յի՟, և՝ կարող իցես բժշկել զցաւս իմ: Պատասխանի ետ նմա Թադէ. եթէ հաւատասցես 'ի Յիսուս Քս՟՝ Որդի Այ՟՝ տացին քեզ խնդրուածք սրտի քոյ: Ասէ ց'նա Աբգար, ես հաւատացի 'ի Նա՝ և 'ի Հայր նր՟. վասն որոյ՝ կամեցայ առնուլ զզօրս՝ և գալ կոտորել զՀրեայսն՝ որք խաչեցին զնա, եթէ՝ ոչ էր իմ արգելեալ՝ վասն Թագաւորութե՟ն Հռոմայեցւոց: Եւ յայսմ բանից սկիզբն արարեալ Թադէի, աւետարանեաց նմա՝ և քաղաքին նր՟. և եդեալ ձեռն 'ի վր՟՝ բժշկեց զնա, և զԱբդիու Պատագրոս՝ Իշխան քաղաքին՝ Պատուական յա՟մ տանն արքայի. նա և՝ զա՟մ, որք էին 'ի քաղաքին՝ հիւանդք, և ախտաժետք, բժշկեաց. և հաւատացին ամենեքեան. և մկրտեցաւ ինքն Աբգար՝ և ա՟մ քաղաքն. և զդուրս տաճարաց կռոցն փակեցին: և որք 'ի վ՟ր բագնին՝ և սեանն կային պատկերքն, ծածկեալ պատեցին եղեգամբ: բայց՝ ոչ զոք ածէր բռնութ՟բ 'ի հաւատս: այլ՝ օր ըստ օրէ յաւելեալ 'ի հաւատոն բազմանային:

Իսկ՝ առաքելոյն Թադէի զԽոհարար ոմն՝ Մետաքսագործ՝ մկրտել՝ և յանուն կոչեցեալ՝ Ադդէ՝ ձեռնադրեալ 'ի վ՟ր Եդեսիայ՝ փոխանակ իւր՝ թողու՝ առ արքայի. և ինքն առեալ հրովարտակ՝ յԱբգարէ՝ զի՝ ա՟մքն լուիցեն աւետարանին Ք՟ի գայ առ Սանատրուկ՝ Քեռորդի նորին՝ որ կարգեալ էր 'ի վ՟ր աշխարհին՝ և զօրաց: Բայց՝ Աբգար յօժարեցաւ գրել թուղթ՝ առ Տիբեր, որ ունի օրինակ զայս:

Թուղթ Աբգարու՝ առ Տիբեր:

Աբգար Արքայ Հայոց, Տեառն իմում Տիբերի Կայսեր Հռովմնայեցուոց՝ խնդա՛մբ։ Գիտելո՛վ իմ եթէ՝ ո՛չինչ ծածկի 'ի քումմէ թագաւորութենէդ. այլ՝ իբրև զմտերիմ քո՝ աւելի՛ ևս իմացուցանել 'ի ձեռն գրոյ. զի՝ Հրեայք, որք բնակեալք են 'ի Գաւա՛ռս Պաղեստինացւոց, ժողովեալ՝ խաչեցին զՔրիստոս՝ առանց իրիք յանցանաց 'ի վերայ մեծամեծ երախտեացն, զոր արար առ նոսա, նշանս՝ և սքանչելիս. մինչև՝ զմեռեալս միանգամայն յարուցանել։ Եւ գիտեմ, զի զօրութիւքս այս՝ ո՛չ են սոսկ մարդոյ, այլ Այ. զի՝ և 'ի ժամանակին՝ յորում խաչեցին զնա, արեգա՛կն խաւարեցաւ, և երկի՛ր շարժեալ՝ տատանեցաւ. և ինքն՝ յետ երից աւուրց յարեաւ 'ի մեռելոց, և երևեցաւ բազմաց. և այժմ, անուն նր յամ տեղիս 'ի ձեռն աշակերտա՛ց նորին՝ սքանչելիս մեծամեծս կատարէ. որ՝ և առ իս եցո՛յց յայտնապէ՛ս։ և արդ՝ այսուհետև Տէրութիդ քո գիտէ հրամայել 'ի վերայ ժողովրդեանն Հրէից, որք զա՛յն գործեցին. և գրել ընդ ամենայն տիեզերս, զի երկիրպագեսցեն Քրիստոսի իբրև Ճշմարտի Աստուծոյ. Ողջ լե՛ր։

Պատասխանանի թղթոյն Աբգարու ՚ի Տիբերէ։

Տիբեր կայսր Հռոմայեցւոց, Աբգարու թագաւորի խնդալ։

Թուղթ մտերմութե̃ քոյ ընթերցան առաջի իմ, վասն որոյ՝ շնորհակալութի̃ ՚ի մէնջ քեզ հասցէ։ Թէպէտ՝ և ՚ի բազմաց յառաջագոյն լուեալ է մեր զայդ։ եցոյց ստուգապէս և Պիղատոս՝ վասն նշանացն, և եթէ՝ յետ յարութե̃ն ՚ի մեռելոց՝ հաւատարիմ եղև՝ թէ Ա̃ծ է։ վասն որոյ՝ և ես կամեցայ առնել զայդ՝ զոր դուդ խորհեցար. այլ՝ քանզի սովորութիւն է Հռոմայեցւոց, Ա̃ծ միայն ՚ի հրամանէ թագաւորին ոչ նստուցանել՝ մինչև ոչ փորձեալ՝ քննեսցի նա ՚ի Սինկլիտոսէն. վասն որոյ՝ և իմ յայտնեալ զբանս զայս Սինկլիտոսին, արհամարհեաց Սինկլիտոսն՝ զի ոչ քննեցաւ նա յառաջագոյն ՚ի նմանէ. այլ՝ մեք տուաք հրամա̃ն ա̃մ ումեք, որում և հաճոյ թուեսցի Յիսուս՝ ընկալցի զնա ը̃դ Ա̃ծս. և մահ այնոցիկ սպառնացեալ՝ որք չարախօս կայցեն զՔրիստոնէից։ Եւ վասն ժողովրդեանն Հրէից՝ որք յանդգնեցան խաչել զնա, զոր մէ լսեմ եթէ՝ ոչ արժանի խաչի էր նա, այլ պատուի, և երկրպագութ՟ե. յորժամ, առից պարապումն ՚ի պատերազմն Սպանիացւոց՝ ապստամբողաց յինէն, քննեալ հատուցից նոցա զարժանն։

Դարձեալ գրէ թուղթ Աբգար առ Տիբեր։

Աբգար արքայ Հայոց, Տեառն իմում Տիբերի Կայսեր Հռոմայեցւոց՝ խնդալ։ Զթուղթ գրեալ ըստ արժանի քոյոյ տէրութ՟եդ՝ տեսի. և ընդ հրաման իմաստութ՟եդ քո՝ ուրախացայ. և եթէ՝ ոչ ինձ ցասնուցուս՝ գործ Սինկլիտոսիդ է յոյժ այպանելի. քանզի՝ առ դոսա, ՚ի քննութենէ մարդկան՝ տուեալ լինի Ա՟ծութ՟ի։ և արդ՝ այսուհետև եթէ՝ ոչ լինիցի Ա՟ծ հաճոյ մարդկան, Աստուած լինել նա ոչ կարէ, և իբրև՝ յայսմանէ մարդոյն՝ արժան է քաւել զԱ՟ծն։ Բայց՝ քեզ Տ՟ն իմում հաճոյ թուեսցի՝ առաքել ՚յԵրէմ, փոխանակ Պիղատոսի, զի լուծցի նա յիշխանութենէն՝ զոր կարգեցեր զնա. վասն զի՝ արար ըստ կամս Հրէից, և խաչեցին զՔ՟ն տարապարտուց՝ առանց քոյոյ հրամանի. ողջ լինել քեզ ըղձանամ.

Այս գրեալ Աբգարու՝ զհաւասար թղթոյն, եդ ’ի Դիւանին իւրում, ո՟պ և զայլսն: գրեաց՝ և առ Ներսեհ, Սանուկ արքայ Ասորեստանի ’ի Բաբելոն:

Թուղթ Աբգարու առ Ներսեհ:

Աբգար արքայ Հայոց, որդւոյ իմոյ Ներսեհի՝ խնդալ: Զգիր ողջունի քոյ տեսի, և զՊերոզ լուծի ’ի կապանաց, և զյանցանս ն՟ր թողի. և եթէ՝ կամ իցէ քեզ՝ կարգեսցես զնա ’ի Մերակացութեան Նինուէի, ո՟պ և կամիս: Այլ վասն այնր զի՝ գրեցերն առ իս, եթէ՝ տուր ածել զայրդ Բժիշկ, որ զնշանսդ առնէ, և քարոզէ այլ Աստուած՝ որ ’ի վեր է, քան՝ զհուր, և զջուր. զի տեսից՝ և լուայց դմա: Նա ո՛չ էր բժիշկ ը՟ս արուեստից մարդկան, այլ՝ աշակերտ Որդւոյն Ա՟յ, Արարչին հրոյ՝ և ջրոյ, և վիճակ հասեալ՝ ’ի կողմանս Հայոց առաքեցաւ: Բայց՝ յընկերաց նորա գլխաւորաց՝ Սիմոն անուն, անդր՝ ’ի կողմանս Պարսից առաքեցեալ է, խնդիր արարեալ՝ լուիցես զնմա. յորժամ, և Հայրն քո Արտաշէս. և նա բժշկեսցէ զա՟մ հիւանդութիւնս, և ճանապարհ կենաց ցուց ցէ։ Եւ յաւելլեալ գրել առ Արտաշէս արքայ Պարսից՝ օրինակ զայս։

Թուղթ Աբգարու առ Արտաշէս։

Աբգար արքայ Հայոց, Արտաշիսի՝ եղբօր իմոյ՝ արքայից արքայի՝ խնդալ։ Գիտեմ, զի արդ՝ լուեալ է վասն Յի̃ Քի̃, Որդւոյն Ա̃յ՝ զոր խաչեցին Հրեայք. որ յարեաւն 'ի մեռելոց, և առաքեաց զաշակերտսն իւր՝ ընդ ա̃մ տիեզերս ուսուցանել ընդ հանուր։ Եւ մի յաշակերտաց նր̃ գլխաւորացն՝ Սիմո̃ն անուն՝ է 'ի կողմանս քո Տէրութե̃դ։ արդ՝ խնդիր արարեալ գտցես զնա, և նա բժշկեսցէ զա̃մ ախտս հիւանդութեանց՝ որ 'ի ձեզ, և ճանապարհ կենաց ցուսցէ. և հաւատասցես բանի նր̃ դու՝ և Եղբարք քո. և ա̃մ, որք հնազանդին քեզ կամաւ. զի՝ ախորժելի է ինձ, զձեզ ը̃ս մարմնոյ ազգականս իմ, լինել ինձ մտերիմ հարազատս՝ և ըստ հոգւոյ։ Եւ մինչդեռ՝ պատասխանի այսց թղթոց ոչ էր ընկալեալ՝ վախճանի Աբգարոս, թագաւորեալ ամս 38։

Յա

Գրակ Լ̃ա 3:

Յաղագս Մահուանէ Առաքելոյն մերոյ:

Յետ մահուանն Աբգարու՝ բաժանի թագաւորութ̃ին Հայոց յերկուս: քանզի՝ Անան, որդի նորա՝ թա՛գ կապեաց թագաւորել Եդեսեա՛յ. և Սանատրուկ՝ քեռ որդի ն̃ր՝ ՚ի Հա՛յս: Պատանի՝ որ ինչ առ ս̃ք ժամանակաւ՝ յառաջագոյն գրեա՛լ ՚յԱյլոց: զգալուստ Առաքելոյն Թադէի ՚ի Հայս. և հաւատալ Սանատրկոյ. և թողուլ զհաւատսն՝ յերկիւղէ՛ Նախարարացն Հայոց. և կատարո՛ւմն առաքելո՛յն, և որք ը̃նմա՛ ՚ի Գաւառին Շաւարշան. որ այժմ կոչի՝ Արտազ: և ն̀պատառումն քարին, և յիրեա՛րս գալ՝ և ընդունել զմարմին առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն՝ և թաղե՛լ ՚ի դաշտին: և մարտիրոսանալ Դստե՛րն արքայի՝ Սանդխտոյ՝ հո՛ւպ ՚ի ճանապարհն: և ա՛ստ ուրեմն՝ յայտնել նշխարաց երկոցունց՝ և փոխե՛լն յառապարն:

Ա՛յս ա̃մ, որպէս ասացաք, ՚յԱյլո՛ց պատմեալ՝ յառաջագոյն քան՝ զմեզ՝ ո՛չ ինչ կարևորագո՛յն համարեցաք, երկրորդել ոճով։ Դո՛յնպէս՝ և որ ինչ՝ վ՟ն կատարմանն Ադդէի՝ աշակերտի Առաքելոյն՝ յԵդեսիա՛յ յոր դւո՛յն Աբգարու գտանի, ՚յԱյլո՛ց պատմեալ՝ յառաջագոյն քան՝ զմեզ։ որ՝ իբրև թագաւորեաց՝ յետ Հօրն մահուա՛ն, ո՛չ եղև Ժառանգորդ՝ Հայրենի՛ առաքինութեան. այլ՝ եբաց զտաճա՛ր կռոցն՝ և կալաւ զպաշտօն հեթանոսութեան. և յղեաց առ Ադդէ, զի՝ արասցէ նմա խո՛յր բեհեզեայ, անկուածո՛յ ոսկւոյ՝ ո՟պ յառաջագո՛յն առնէիր հօր իմոյ։ Եւ պատասխանի ընկալաւ, եթէ՝ ո՛չ արասցեն ձե՛ռք իմ խոյր գագաթան անարժանի, որ՝ ո՛չ երկրպագէ Ք՟ի, կենդանւո՛յ Ա՟յ։ և իսկոյն՝ հրամայեաց զինակրացն՝ կտրել զո՛տսն ն՟ր սրով, որոյ երթեալ՝ և տեսեալ զնա՛, զի՝ նստէր յաթոռ վարդապետութեան՝ էած սուսերաւ՝ և՚ի բա՛ց կըտրեաց զսրունս ն՟ր։ և նո՛յնժամայն՝ աւանդեաց զհոգին։ Այս ծայրաքաղ արարեալ՝ համառօտ յիշատակեցաք՝ որպէս զառ՚ի յԱյլո՛ց պատմեալ նախկին։ Բայց՝ վիճակեցաւ Հայոց՝ և Բարդուղոմէոս Առաքեալ. որ և կատարեցաւ առ մեզ յարևբենոս քաղաքի։ Իսկ զՍիմոնէ՝ որ Պարսիցն վիճակեցաւ. ոչ զհաւաստին կարեմ պատմել՝ թէ՝ զինչ գործեաց, և կամ՝ ո՞ւր կատարեցաւ. քանզի՝ պատմի ՚յՈմանց՝ Սիմոնի ումեմն առաքելոյ՝ կատարիլ ՚ի Վերիոսփորա. եթէ՝ նա իցէ ճշմարտին. և եթէ՝ է՞ր աղագաւ՝ գալուստ նորա անդր, ոչ գիտեմ. այլ՝ միայն նշանակեցի, զի՝ գիտասցես՝ եթէ՝ ոչինչ մնաց, ՚ի մէջ բանից պատմելու քեզ զամս, որ ինչ անկէ։

Գլուխ ԼԲ 32

Վասն Սանատրկոյ թագաւորութեանն և սպանման ծննդոցն Աբգարու. և Վասն Հեղինեայ Տիկնոջ։

Սանատրուկ թագաւորեալ՝ զօրս ժողովէ ՚ի ձեռն Քաջացն Բագրատունեաց՝ և Արծրունեաց՝ դայեկաց իւրոց, իջանել տալ պատերազմ ընդ որդիսն Աբգարու, զի՝ բոլորովին տիրեսցէ Հայոց թագաւորութեանն։ Եւ մինչդեռ՝ նա յայսմ էր, Աստուածային իմն ակնարկութեամբ՝ խնդրեցաւ վրէժ մահուանն Ադդէի յորդւոյն Աբգարու։ Քանզի՝ սիւն կճեայ կանգնել տայր յԵդեսեայ 'ի վերնատունս ապարանից իւրոց. և ինքն 'ի ներքո՛յ կալով՝ հրամայէր զորպէ՛սն առնել. որ զերծեա՛լ յունողացն, անկաւ 'ի վ՟ր նորա՝ և խորտակեաց զո՛տոն, և սատակեցի։ Եւ իսկոյն՝ պատգամ բնակչաց քաղաքին եկն առ Սանատրուկ՝ խընդրել պայման ուխտի, զի՝ մի՛ վրդովեսցէ զն՟ս 'ի հաւատո՛յ Քրիստոնէից, և ն՟ք տայցեն նմա՛ զքաղաքն 'ի ձեռս, և զգանձս Թագաւորին, զոր արարեալ՝ յետո՛յ սատեաց. նա՛ և՝ զա՟մ զաւակ տանն Աբգարու մաշեաց սրով՝ բա՛ց յաղջկանց, զորս էհան 'ի քաղաքէն, բնակել 'ի կողմանս Հաշտենից։ Սա՛պէս՝ և զգլուխ կանանցն Աբգարու՝ որում անուն էր Հեղինէ, առաքեաց բնակել 'ի Խառան՝ յիւրոյին քաղաքն, թողլով նմա՛ զՏիկնութ՟ին ն՟ամ Միջագետաց, փոխանակ բարեա՛ցն, զորս գտեալ էր՝ ը՟ ձեռն ն՟ր՝ յԱբգարէ։ Ա՛յս Հեղինէ զարդարեալ հաւատովք, ո՟պ և զա՛յր իւր, ո՛չ հանդուրժեաց բնակել 'ի մէջ Կռապաշտիցն, այլ՝ չոգաւ 'յԵրուսաղէմ, յաւուրս Կլաւդեա՛յ 'ի սովին զոր մարգարէացաւ Ագաբոս, և տու՛եալ զգանձս իւր զա՟մ

յԵ

յԵգիպտոս՝ գնեալ ցորեան բազում յոյժ, և բաշխեաց ՚յա՟մ կարօտելոց։ որում վկայէ՝ և Յովսէփոս։ որոյ շիրիմ նշանաւոր կայ առաջի դրանն Եղ՟մի՝ մինչև ց՚ այսօր։

Գլուխ ԼԳ 33

Յաղագս նորոգման Մծբին քաղաքի. և անուանակոչութեանն Սանատրկոյ, և մահուան նորին։

ԱՅԼ՝ որ ինչ գործք եղեն Սանատրկոյ, ո՛չ ինչ արժանի յիշատակի համարեցաք, բա՛ց ՚ի շինուածոյ Մծբին քաղաքի. զի՝ ՚ի շարժմանէ խախտեալ՝ քակեաց՝ և վերստին շինեաց պայծառագոյն. և պարսպե՟ց պարսպով՝ կրկին պատուարով. և զինքն Անդրի ՚ի մէջ հաստատեաց, մին դրամ ՚ի ձեռինն ունելով՝ որ նշանակէ այսպիսի ինչ. թէ՝ ՚ի շինել քաղաքիս՝ ամենա՛յն դանձքս ծախեցան, և այս միա՛յն մնաց։

Բայց թէ ընդէ՞ր Սանատրուկ կոչեցաւ, ասելի է. քանզի՝ յաւուրս ձմերայնւոյ՝ Ճանապարհորդեալ քոյր Աբգարու՝ Ոգէ, ՚ի Հա՛յս՝ պատահէ բքո՛յ ՚ի լերինն Կորդուաց, ցրուեաց զամենեսեան մրրիկ, մինչ ո՛չ

գի

գիտելով՝ ընդ ո՛ր վարեցաւ այր զընկեր։ Իսկ Դայեկն նր̃՝ Սանոտա՛յ, քեռ Բիւրատեայ Բագրատունւոյ՝ կնոջ Խորենայ Արծրունւոյ՝ առեալ զմանուկն, քանզի՝ տղայ էր, եդ 'ի մէջ ստեանց իւրոց՝ մնալով 'ի ներքոյ ձեանն, զերիս տիւս՝ և զերիս գիշերս։ զորմէ առասպելաբանեն թէ՝ կենդանի իմն նորահրաշ սպիտակ՝ յԱծ̃ոյն առաքեալ՝ պահէր զմանուկն։ Բայց՝ որչափ մեք եղաք վերահասու՝ այսպիսի է։ շուն սպիտակ՝ ընդ խնդրակսն լեալ պատահեաց մանկանն, և դայեկին։ Արդ՝ կոչեցաւ Սանատրուկ, 'ի Դայեկէն զանուանակոչութիւն առեալ՝ որպ̃ թէ՝ Տուրք Սանոտայ։ Սա՝ թագաւորեալ յերկոտասաներորդ ամի Արտաշիսի արքայի Պարսից. կեցեալ ամս՝ 30 մեռաւ 'յորս, նետի ուրուք դիպեալ փորոտեացն. իբրև թէ՝ վրէժս հատուցեալ՝ ը̃ չարչարանս Սրբոյ Դստերն իւրոյ Սանդխտոյ։ Ղերուբնայ որդի Ափշադարայ Դպիր՝ գրեաց զամենայն գործս՝ որ ինչ յաւուրս Աբգարու՝ և Սանատրկոյ, և եդ 'ի Դիւանին յԵդեսեայ։

Գլուխ ԼԴ 34

Թագաւորել Երուանդայ, և կոտորել զորդիսն Սանատրկոյ, և զերծանել Արտաշիսի ձախողութեամբ։

Յետ մահուանն Սանատրկոյ Արքայի, շփոթի իմն թագաւորութի՟ն։ քանզի՝ Երուանդ ոմն՝ որդի կնո՛ջ Արշակունւոյ՝ թագաւորէ յութերորդ ամի՝ Դարեհի Պարսից արքայի Միջնոյ։ և ունի զրոյց՝ յաղագս ո՟ր՝ այսպէս։ Կին ոմն՝ յազգէ Արշակունեաց, անձա՛մբ հարստի՛ և խոշորագեղ՝ վարա՛ր, զոր ո՛չ ոք դիմագրաւեաց առնուլ։ Ծնանէր երկուս մանկունս՝ յանկարգ խառնակութենէ, ո՟պ՝ Փասիփայ զՄինոդորոս։ Եւ ՚ի զարգանալ մանկանցն՝ կոչէն անուանս, Երուանդ, և Երուազ։ և ՚ի չափ հասեալ Երուանդայ, լինի սրտեայ, և անդամօք յաղթ։ սա՝ և ՚ի բազում իրս վերակացու առաջնորդութե՟ առաքեալ ՚ի Սանատրկոյ, գտանի երևելի. մինչև՝ Առաջին Նախարարացն լինիլ ամենայն Հայոց զօրացն. և խոնարհութե՟, և առատաձեռնութե՟ զա՟մ ոք յանկու ցեալ՝ յինքն յարեցոյց։ Եւ 'ի մեռանիլ Սանատրկոյ՝ միաբանեալ Թագաւորեցուցին զնա, առանց արանց ազգին Բագրատունեաց լինիլ Թագադիր։ Բայց՝ 'ի Թագաւորելն իւրում Երուանդ, կասկած ունելով յորդւոցն Սանատրկոյ, կոտորէ զամենեսեան· Թուի՝ վրէժս հատուցաւ սպանման որդւոցն Աբգարու։ Բայց՝ միոմն տղայ՝ Արտաշէս անուն, զոր առեալ Ստնտուի նր՟՝ փախեաւ 'ի կողմանս Հերայ, 'ի վանս հովույ՝ վասն մաղխազանի· լուր առնելով Դայեկի նր՟ Սմբատայ՝ որդւոյ Բիւրատայ Բագրատունւոյ, 'ի Սպեր Գաւառի, 'ի չէնն՝ Սմբատաւանի։ Արդ՝ իբրև, լուէ Սմբատ՝ որդի Բիւրատայ զբօթն Սանատրկոյ, և ըզգոյժ կոտորման որդւոց նորա· առեալ զերկուս դստերս իւր զՍմբատանոյշ՝ և զՍմբատուհի՝ նստուցանէ 'ի Բայբերդի· ուր քաջս Թողլով 'ի վր՟՝ ամրոցին· և ինքն՝ հանդերձ կնաւ իւրով՝ և սակաւ արամբք, գայ անցանէ՝ 'ի խնդիր Մանկանն Արտաշիսի։ Որում իրազգած եղեալ արքային Երուանդայ Հետայոյզս առաքէ· վ՟ն որոյ՝ բովան դա՛կ ժամանակս՝ ը̄ երեսս լերանց, և դաշտայ, այլակերպեալ շրջելով հետի՝ հանդերձ Մանկա՛մբըն, սնուցանէ 'ի հովուաց վանս, և յանդէորդս՝ մինչև՝ պարա՛պգտեալ՝ ժամանեաց առ Դարե՛հ՝ արքայ Պարսից։ և քանզի՝ այր քա՛ջ էր Սմբատ, և ծանօթ յառաջագոյն՝ սպասու՛ք մեծապէս ընդ Զօրագլուխսն Պարսից։ սապէ՛ս՝ և Մանուկն ը̄ որդի՛ս թագաւորին, տեղի բնակութեան առեալ զՐա՛մա, և զՍ՛ը՝ ամն կոչեցեալ Դաւառ։

Պրակ ԼԵ̄ 35

Որ էնչ ջան Երուանդայ՝ վասն 'ի բուռն տանելոյ զմանուկն Արտաշէս. և 'ի բաց Եռող-լոյ զՄէջագէտս։

Բայց Երուանդայ զմտաւ ածեալ՝ թէ, ո՞րպիսի չար նորա թագաւորութեան՝ մնանի 'ի Մարսխէթ 'ի սորտի լինելով՝ ո՛չ հեշտալի լինէր նմա քունն. հանապազ յարթնութեան յայն հոգալով. նա և 'ի քուն՝ անուրջս ահագին նմին իրի տեսանէր. վ՟ որոյ՝ 'ի ձեռն հրեշտակաց, և պատարագաց՝ խնդրէր հաշտեցուցանել զարքայն Պարսից, տալ 'ի ձեռս զԱրտաշէս. ասելով, թէ՝ արժա՛ն իմ, և հարազատութիւն, ընդէ՛ր սնուցանես զՄա՛րըդ՝ զԱրտաշէս՝ հակառակ իմոյ թագաւորութեա՛ն, լսելով բանի՛ց Սմբատայ ելուզակի, որ ասէ, թէ՝ որդի՛ է Արտաշէս Սանատրկոյ. և զորդի Հովուա՛ց և Անդէորդայ՝ ջանայ առնել Արշակունի, և արժա՛ն քո, և հարազատութիւն. համբաւելով զնմանէ, թէ՝ չէ՛ իսկ՝ որդի Սանատրկոյ, այլ՝ ը̅ խմբս գտեալ Սմբատայ զՄարումն՝ տղայ բաջաղի։ Նոյնպէ՛ս՝ և առ Սմբատ յղէր բազումանգամ, թէ՝ ընդէ՞ր այդքան սնոտի աշխատութի՟ կրես՝ խաբեալ ՚ի Սանատրուկէդ, սնուցանես զորդի Մարիդ՝ հակառակ ինձ։ Եւ լուէ՝ ո՛չ սիրելի բանս պատասխանեաց. յայնժամ՝ առաքէ Երուանդ, և սաստակէ զքա՛ջն ՚ի Բայբերդի. գերելով զդստերսն Սմբատայ պահէ յամրոցին ՚Անի, ո՛չինչ վատթարապէս։ Բայց՝ թէ կո՛ւնս առնելով Երուանդայ զՀռոմայեցիս, ո՛չինչ վտանգի ՚ի Թագաւորութեանն Վեսպասիանոսի, և Տիտոսի, թողլո՛վ ՚ի նոսա զՄիջագետս. և յայնմհետէ՝ բարձաւ իշ

խա

խանութ̃ի Հայոց 'ի Միջագետաց. և հարկս ևս աւելագո՛յնս տայր 'ի Հայոց Երուանդ։ Իսկ՝ Հռոմայեցւոց Գործակալաց՝ մեծապէս հանդերձեալ զքաղաքն Եդեսեայ, 'ի նմի՛ն հաստատել զտո՛ւնս գանձուց՝ հարկացն ժողովելոց 'ի Հայոց՝ Միջագետաց՝ և յԱսորեստանեայց։ և ժողովեն 'ի նմ̃ զամ̃ Դիւանս. և կարգեն դպրոցս՝ ՟Բ երկու. մին՝ զբունն իւրեանց զԱսորին, և միւսն ևս՝ զՅո՛յնն։ և զԴիւանն հարկաց՝ և զՄեհենականն, որ կայր 'ի Սինո՛պ Պոնտացւոց՝ անդր փոխեն։

Պրակ ԼԶ 36

Յաղագս՝ Ծնուածոյ Երուանդայ թագաւորէ։

Ի սորա աւուրս՝ փոխի՛ն Արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ. քանզի՝ էր հեռացեալ գետն Երասխ, և 'ի յերկարել ձմերոյնւոյն՝ 'ի դառնահողմ փչմանէ Հիւսիսոյ՝ պաղեցեալ՝ ձուլեալ վտակն՝ ո՛չ ուստեք արբուցումն թագաւորականին գտանիւր տեղւոյ։ Ընդ որ՝ նեղեալ Երուանդայ, նա՛ և ամրագունի ևս տեղւոյ եղեալ խնդիր, փո փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս՝ ՚ի քարակտուր մի բլուր, զորով պատուեալ Երասխայ՝ ը̃դեմ Ախուրեան հոսի գետ. պարսպէ զբլո՛ւրն, և ՚ի ներքսագո՛յն քան՝ զբլուրն պարիսպն, ընդ բազո՛ւմ տեղիս՝ կտրեալ զքարինսն մինչև՝ ՚ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև ՚ի դիմել ջուրց գետոյն՝ ՚ի փորուա՛ծսն յըմպելեա՛ց պատրաստութիւն. զմիջնաբե՛րդն ամրացուցանէր՝ բա՛րձր պարսպօք. և դրո՛ւնս պղնձիս կանգնէր ՚ի միջոցն պարսպին. և ելանելիս երկաթիս ներքուստ ՚ի վեր, մինչև ՚ի դրո՛ւնսն. և ՚ի նմա՛ որոգա՛յթս իմն ծածուկս՝ ընդ մէջ աստիճանացն, ո̃վ զի ըմբռնեսցի, եթէ՝ ոք գո՛ղտ ելանելով՝ դաւե՛լ կամիցի զարքայն: և էր ասեն՝ երկդիմի. ո̃վ, զի՝ մինն լիցի Սպասաւորաց Արքունի, և ա̃մ ե՛լ՝ և մտից, ճանապա՛րհ տուընջենային: իսկ՝ մի՛ւսն գիշերային՝ և մարդադաւաց:

Գլուխ լէ̃ 37

Երբէ՝ ո̃վ շինեաց զԲագարան քաղաք Կռոց:

ԲԱյց՝ երուանդայ շինել զքաղաքն իւր, և փոխեալ անդր զա̃մ զա̃մ ինչ յԱրմաւիրայ ուրոյն 'ի Կռոյն. զորս՝ ո՛չ օգուտ իւր համարեալ՝ յի՛ւրն փոխել 'ի քաղաքն. զի մի՛, 'ի գա՛լ՝ և 'ի զոհել անդր աշխարհի ո՛չ զգուշութ̃բ պահեսցի քաղաքն. այլ՝ հեռագոյն 'ի նմանէ, իբր՝ քառասուն ասպարիզաւ, զհիւսիսեաւ՝ նման իւրոյ քաղաքին՝ շինեաց քաղաք փոքր՝ 'ի վ̃ր գետոյն Ախուրենայ, և անուանեաց՝ Բագարան, այսինքն թէ՝ 'ի նմա՛ զԲագնայն յօրինեալ է զկազմութիւն: և փոխեաց անդր՝ զամենայն զկուռսն՝ որ յԱրմաւիր. և Մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ՝ Քրմապետ կացուցանէր:

Գլուխ ԼԸ̃ 38

Վասն տնկելոյ զանտառն՝ որ կոչի՝ Ծննդոց:

Տնկէ և Մայրի մեծ՝ ց'հիւսիսոյ կողմանէ գետոյն, և որմովք ամրացուցանէ. արգելլով 'ի ներքս այծեմունս երագունս, և զեղանց՝ և զեղջերուաց ազգ՝ և ցիռս՝ և վարազս, որք 'ի բազմութ̃ի աճեցեալ՝ լցին զանտառն. որովք ուրախանայր Թագաւորն յաւուրս որսոց. և անուանէ զանտառն Ծննդոց:

Սան

Գլուխ ԼԹ 39

Վասն Զեռակերտին՝ որ կոչի Երուանդակերտ։

ՔԱղցր է ինձ ասել՝ և յաղագս գեղեցիկ Զեռակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ. գեղեցիկ՝ և չքնաղ յօրինուածովք։ քանզի՝ զմիջոց հովտին ընդ մարդկութեան՝ և պայծառ շինուածովք, լուսաւոր, որպէս՝ ական բիբ։ Իսկ՝ շուրջ զմարդկութեամբն՝ Ծաղկոցաց, և Հոտարանոց կազմութիւն, որպէս՝ որ շուրջ զբբան, զայլ բոլորակութիւն ական։ Իսկ՝ զբազմութիւն այգեստանւոյն, իբր՝ զարտեւանաց խիտ, և գեղեցիկ ծիրոյ Հիւսիսային կողմանն՝ դիր նկարաձև, արդարև՝ Գեղաւոր Լուսնից յօնից դարևանդաց համեստ. իսկ՝ ՚ի Հարաւոյ դաշտաց, ծնօտից գեղեցկութիւն պարզութեամբ. իսկ՝ գետն բերանաբացեալ դարաւանդօք ափանցն, զերկ թերթեանն նշանակէ շրթունս։ և այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես՝ ՚ի բարձրաւանդակ Թագաւորանիստն զհայեցուածսն ունէր. և արդարև՝

բեր

բերրի՛, և Թագաւորական Դաստակերտ։ Զա՛յս ա՟մ գործեցեա՛լս Երուանդայ, պ՟րգևէ՛ Մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, ո՟պ՝ զՄտերմա՛ց՝ և Արեանց կցորդաց՝ Ազգին Արշակունեաց՝ զոր յիւրումտեղւոջն՝ պատմեսցուք։ Բայց՝ ասեն, զԵրուանդայ՝ ըստ Հըմայից՝ դըժնեա՛յ գոլ՝ ական հայեցուածով. վ՟ո որոյ՝ ընդ այգանալ աչաըջո՛ցն՝ սովորութիւն ունիլ ասեն՝ Սպասաւորացն արքունի, վէ՛մս որձաքարեայս ունիլ ը՟դդէմ Երուանդեայ, և՚ի հայեցու̂ածէ ասեն՝ դըժնէութեանն, պայթի՛լ որձաքար վիմացն. բայց՝ այս՝ կամ՝ եղիցի սուտ՝ և առասպել. և կամ, ո՛յժ դիւականս առ իւր ունիլ զօրութիւնս, զի՛ այսպէս, հայեցու̂ածո՛յ անու̂ամբ՝ վնասեսցէ զորս կամի։

Գլուխ Խ՟ 40

Թէ՝ որպէս, Սմբատայ օգնականս իւր արարեալ զԵախաւբարս Պարսից. խնդրէ նա թագաւորեցուցանել զԱրտաշէս։

ԲԱյց՝ ՚ի զարգանալ մանկանն Արտաշիսի, և՚ի բազո՛ւմ քաջութիւնս արութ՟ե ցուցանել Պաց եկին Սմբատայ, հաճեալ ընդ նմա Նախարարք Արեաց, մաղթեցին զԹագաւորն՝ տա՛լ նմա պարգեւս, զինչ և՝ խնդրեսցէ. և յանձն առեալ Թագաւորին՝ ասէ՛ ց՚Նախարարսն, տեսէ՛ք թէ՝ զի՞նչ կամիցի Այրն Քաջ։ և նոքա ասեն, անմա՛հ բարերարութիդ քո. այլ ո՛չ ինչ կամի Սմբատ, քան թէ՝ զարիւն քո, և զհարազատութիւն զԱրտաշէս՝ որդի Սանատրկոյ՝ զմերժեալն 'ի թագաւորութենէ իւրմէ՝ հաստատել յիւրում թագաւորութեն։ Եւ յանձն առեալ Արքային Արքայից. տա՛յ 'ի ձե՛ռս Սմբատայ մա՛սն ինչ՝ 'ի զօրացն Ասորեստանի, և զզօրս Ատրպատականի, զի տարեալ զԱրտաշէս՝ հաստատեսցեն 'ի Գա՛հն Հայրենի։

Գլուխ խա 41

Յաղագս՝ լսելոյ Երուանդայ զգալն Արտաշիսի. և գումարել զզօրս ի պատրաստութեան պատերազմի։

ՀԱսանէ լո՛ւր առ Երուանդ 'յՈւտէացւոց գաւառին, եթէ՝ գումարեաց Արքայն Պարսից զօ՛րս բազում 'ի ձեռս Սմբատայ. զի 'ի վերայ քո խաղացեալ՝ ածցէ

զՍա

զՄանուկն Արտաշէս 'ի թագաւորութին իւր: զայս լուեալ Երուանդայ՝ եթող անդէն զբազումն 'ի Նախարարացն Կողմնապահս, և ինքն գնաց 'ի քաղաքն իւր փութանակի, կուտել առ ինքն զզօրս Հայոց, զՎրաց՝ և զկողմանցն Կեսարու: այլ և՝ զՄիջագետաց, աղերսօք, և տրովք. և էին աւուրք գարնայնոյ. վ͞ն որոյ՝ երագ ժողովեցան զօրքն ամ͞: նա և՝ Արգամ Տանուտէր Մուրացեան, որ 'ի Սննդոյն Աժդահակայ՝ ամբոխ հետևակաւ. ք͞զի՝ դարձուցեալ էր Երուանդայ՝ ինա́ ըզԳահն երկրորդական, զոր հանեալ էր 'ինոցնէ Տիգրանայ, և տուեալ իւրում քեռայրն՝ Միհրդատայ. ո՛չ ումեք տուեալ լինէր, մինչև՝ Երուանդայ դ͞րձուցանել զնա́ առ Արգամ: և ո՛չ միայն նմա, այլ և՝ ա͞մ Նախարարացն տայր պատիւս, և զօրացն ամենեցուն պարգևս:

Գլուխ Խ͞Բ 42

ՍՄԲԷ՝ որպէս ընդ ծերութն Արտաշիսի յեւր աշխարհն՝ յաջողեցաւ գործն:

ԻՍԿ Սմբատ՝ հանդերձ Մանկամբն Արտաշիսիւ՝ անձապա րէր հասանել 'ի սահմանս Ուտէացւոց․ ընդ առաջ նր՟ ելին զօրք կողմանցն այնր․ նա և՝ Նախարարքն, զորս եթող Երուանդ։ Զայն իբրև լուան այլ Նախարարք Հայոց, լուծանէին, լքանէին, և զատչէին յերուանդայ՝ խորհէին․ նա և՝ զայն ևս տեսանէին, թէ՝ զօրք Հռոմայեցւոց ոչ հասին նմա 'ի թիկունս։ Իսկ՝ Երուանդ առաւել յորդագոյն տայր զպարգևսն, և բաշխէր միո՛յ միոյ 'ի նոցանէ զգանձսն․ և որչափ շատ տայր՝ շատ ևս ատելի լինէր․ քանզի՝ գիտէին ամենեքեան, եթէ՝ ոչ առ առատութե՟, այլ՝ առ երկիւղի վտանէ։ և՝ ոչ այնչափ սիրելի զայնոսիկ առնէր՝ որոց շատն տայր, քան թէ՝ թշնամի։ և քան՝ զնոսա՝ զայնս՝ որոց ոչն տայր, էր տեսանել լաւագոյնս։

Պրակ խգ 43

Երուանդայ պատերազմն ընդ Արտաշիսի՝ և փախուստ՝ և առումն քաղաքին նորին և մահ։

ԲԱյց՝ Սմբատ, հանդերձ մանկամբքն Արտաշիսիւ՝ ելանէ առ ափն ծովուն Գեղամայ, զթիկամբքն Արագածն կոչեցեալ լե րին՝ աճապարէին հասանել 'ի բանակն Երուանդայ· առ ո՛չինչ համարեալ զբազմութ̄ի զօրաց նր̄· միա՛յն ակն ածէին 'ի Մուրացենէն Արգամայ· զի՝ այր Քա՛ջ էր, և բազմաց Տէ՛ր Տիգաւորաց: Եւ Ճամբա՛րն Երուանդայ էր բացագոյն 'ի քաղաքէ նորին, աւելի, քան՝ զերե՛ք հարիւր ասպարիզաւ՝ 'ի հիւսիսոյ 'ի վր̄ գետոյն Ախուրեան· զայն իբրև՝ լուեր Երուանդ, հանէր ընդ առաջ զբազմութ̄ի զօրացն, և ճակատէր ո՛չ հեռի յիւրմէ բանակէն: Իսկ՝ Արտաշիսի արձակեա՛լ պատգամ առ Արգա՛մ, Նահապետ Մուրացեան, հանդերձ բազո՛ւմ երդմամբք՝ թողուլ 'ի վր̄ նր̄, զոր ինչ գտեալ էր յԵրուանդայ, և կրկին ա՛յլ յաւելուլ· միա՛յն, զի՝ զԵրուանդ թողուլ՝ 'ի բա՛ց գնասցէ: և իբրև յանդիման ճակատուն Երուանդայ եղին նշանա՛կք Արտաշիսի, Արգամայ առեալ զբազմութ̄ի հետևակա՛ցն՝ 'ի կողմ̄ն եղանէր: և Սմբատ հրամայէր՝ զփո՛ղսն պղնձիս դոչեցուցանել· և յառաջ առեալ զճակատն իւր, իբրև՝ զարծո՛ւի յերա՛մ կաքաւո՛ւց խոյանայր: Իսկ՝ Նախարարքն Հայոց,

որ յա՛ջ՝ և որ յահեակ թեւանէին,՛ի
նա՛ խառնեալ միանային։ և զօրք
Վրաց, հանդերձ Արքայիւն իւրեա
Փառսմանաւ՝ թէպէտ՝ և յանդուգն
յառաջեալ բախէին երագապէս,
այլ՝ դառնային՛ի միւս կողմն փախու-
ցեալ։ և ա՛նդ՝ էր տեսանել կոտո-
րած անհնարին Երուանդայ, և ըզ-
զօրաց Միջագետաց։ Եւ՛ի խառնա
կել այսպիսի Ճակատուց, պատահեն
Արտաշիսի ա՛րք քաջք Տօրացիք, ո-
րոց զոգիս իւրեանց եդեալ Երուան
դայ, պայմանեալ՝ սպանանել զԱր
տաշէս։ որոց դիպեալ՛ի հետի, ընդ-
մէջ անցանէ Գիսակ՝ որդի Սմբ
ալւին Արտաշիսի, և սատակեալ
զնոսա․ ուր՝ և զկէս դիմացն՛ի վայր
բերեալ սուսերաւ, և յաղթութիւն
գործեցեալ՝ մեռանի՛ի մէջ այսպի
սեաց․ և մնացեալ զօրքն՛ի փախուստ
դառնային։ Իսկ՝ Երուանդ՝ իւրով
ձիու բովանդակ ասպարէզս ան
ցեալ՝ ելանէ ՛ի խորանս կանգնելոյ՝
՛ի բանակէն իւրմէ ՛ի քաղաքն իւր,
հեծեալ՛ի նո՛ր ձի, հանդո՛յց՛ի հան
գուցէ փախչել։ Եւ Քաջին Սմբա
տայ զհետ մտեալ՝ սաստկագո՛յն զնա
վարեալ ՛ի գիշերի՝ մինչև՝ ց՛դուռն

քա

քաղաքին. և Մարաց զօրացն անցեալ 'ի կողմն Երուանդական գնդին, նստեաւ 'ի վերայ դիականցն բանակելին: Իսկ՝ Արտաշիսի հասանել 'ի յերուանդա՛յ շրջապատեալ առագաստն, 'ի կաշեայ՝ և 'ի կտաւեա՛յ պարսպին էջ, և 'ի խորանի նր̃ բնակեցաւ զա՛յն գիշեր. և այգուն եղելո՛յ՝ Տիրաբա՛ր արարեալ՝ զսպանեալսն թաղել՝ հրամայեաց. և անուանեաց զհովիտն՝ որ 'ի մջ̃ դիականցն բանակեցան, Մարա՛ց Մարգ. և զտեղի Ճ՛ամբարուն, Երուանդայ Սան. և կոչի մինչև՝ ց'այսօր ժամանակի. ֆ̃ է՝ թէ՝ յա՛յսմ տեղւոջ՝ վանեաց զերուանդ, և ինքն չուեաց 'ի քաղաքն երուանդայ. յառաջ, քան զՄիջօրեայ հասեալ 'ի դաստ̃կե՛րտն երուանդայ, և միաբան գոչմամբ՝ հրամայեաց աղաղակե՛լ զօրացն, Մար Ամա՛տ. որ թարգմանի՝ Մարո էկն. յիշելով զթշնամանս՝ զոր յղեր Երուանդ առ Թագաւորն Պարսից՝ և առ Սմբատ, Մա՛ր զնա՛ կոչելով: Յա՛յս 'ի սո՛յն ձայն՝ անուանեցաւ դաստակե՛րտն՝ Մարմէտ. իբր՝ 'ի կամաց Արտաշիսի, բառնուլ զանուն երուանդայ 'ի տեղւոջէն. ա՛յս պատ

ճա՛ռ

Ձոռ է՝ անուանակոչութե՟ն դաստակերտին։ Բայց՝ Սմբատայ՝ գիշերայն զհետ Երուանդայ եկեալ՝ սակաւ վաշտկանաւ՝ զդուռն քաղաքին պահէ. մինչև՝ 'ի գալն Արտաշիսի՝ և զօրացն ամենեցուն. և 'ի մարտնչիլ Քաջացն ամիցն. անձնատուրք եղեն մարդիկք ամրոցին, բանան ըզդուռն քաղաքին։ Բայց՝ մի ոմն 'ի զինուորացն՝ մտեալ՝ էհար վաղէ րբ զգլուխն Երուանդայ՝ և ցրեաց զուղեղն յատակս տանն. և այսպիսի ջախջախմամբ՝ վախճանեցաւ, կալեալ զթագաւորութի՟ն՝ ամս քսան։ Բայց՝ Արտաշիսի յիշեալ՝ թէ, խառնուած Արշակունեաց է Երուանդ, հրամայէ՝ զդի նորա թաղել Մահարձանօք։

Գլուխ խդ 44

Թագաւորել Արտաշիսի՝ և առնել բարէ նորոգ Նախարարութեան։

Յետ՝ մահուանն Երուանդայ՝ մտեալ Սմբատայ զարքունականն՝ յուզել զգանձսն, և գտեալ զթագն Սանատրկոյ Արքայի՝ դնէ 'ի գլուխն Արտաշիսի, և թագաւորեցուցանէ 'ի վերայ ա՟մ երկրի-

հայ

Հայոց, ՚ի քսան, և ինն երորդի ամի Դարեհի՝ Պարսից Արքայի։ Իսկ՝ Արտաշիսի առեալ զթագաւորութիւնն՝ տա՛յ պարգևս զօրացն պարսից՝ և Մարաց, և արձակեաց յաշխարհս իւրեանց. տա՛յ՝ և առն Բաջի, և Պատուականի՝ Արգամա՛յ՝ ըզխոստացեալ Գահն երկրորդական, և Պսակ՝ Յակնթակապ. և Գինդ՝ յերկուսին ականջսն, և կարմի՛ր զգեստ՝ միո՛յ ոտինն. Դրգա՛լ ուտել ոսկի, և պատառաքա՛ղ. և ոսկեղինօ՛ք ըմպե՛լ նուագօք։ Եւ ո՛չ ինչ՝ ը̅ հատ յա՛յսց՝ պատուոյ տայ Դայեկին իւրոյ Սմբատայ. բա՛յց միայն՝ յերկուց գնդա՛ցն՝ և ՚ի կարմիր կօշկէ. և աւելի քան՝ զՀայրականն իւր՝ Թագակապ ասպետութեանն, և զԻշխանութ͞ի արևմտեա՛յ զօրուն. Հաւատայ ՚ի նա՛ զա͞մ զօրս Հայոց, և զբոլո՛ր աշխարհիս Գործակալս, և զՀամօրէն Տունն Արքայի։ Եւ զՆերսէս՝ որդի Որդւոյ Սանատրուկ իւրոյ՝ Դիսակոյ, ազգ զնա սերելով՝ անուն կոչէ զնահապետութեանն՝ զՀօրն Դիմակսեան. քանզի՝ ո͞պ ասացաք, զկէս դիմացն ՚ի վայր բերին Սուսերաւ՝ ՚ի մ͞ր Արտաշիսի. պատմի ա՟ռ 'ի նոյն աւուրս սերեալ ազգ։ Եւ զորդիս Տուրոսյ պատմիս հինգ՝ հանդերձ տասամբ, յանուն հօրն իւրեանց Տրունիս. ոչ վ՟ն արութե՟ ինչ գործոց, այլ միայն վ՟ն քսութե՟ հօր նո՟ց, զոր առնէր' ի տանէն Արքայի առ Սմբատ. քանզի Ընտանի էր երուանդայ, սակս նորին՝, և սպանաւ 'ի նմանէ։

Գլուխ խե՟ 45

Սպանումն Երուանդայ՝ և շինել Դարոյ Բագարանի. և հարկել Արտաշէսի ի Հռովմայեցւոց։

Զկնի այսորիկ՝ հրաման տայ Սմբատայ՝ երթալ յամուրն Բագարան, որ հուպ 'ի քաղաքն երուանդայ՝ 'ի վերայ Ախուրեան գետոյ, զի սպանցէ զերուազ՝ զեղբայր երուանդայ. զոր կալեալ Սմբատայ՝ երկան զուլանէ՝ հրամայէ կապել՝ և ընկենուլ 'ի պտոյտս մի գետոյն. և 'ի տեղի նո՟ր, 'ի վ՟ր Բագնայն՝ կացուցանէ զընտանի Արտաշիսի՝ աշակերտ Մոգի ումեմն երազահանի. որ յայս սակս՝ և Մոգապաշտի՝ անուն կարդային։ Եւ ապա՝ աւարել զգանձս երուազայ՝ և ծառայս անձինս ծինս հինգ հարիւր. նա և՝ զընտիր ընտիր գանձուց Մեհենայն բերէ Արտաշիսի. և Արտաշէս պարգևէ Սմբատայ զծառայս երուազայ. բայց՝ զգանձն հրամայէ՝ տանել Դարեհի՝ Արքայի Պարսից՝ հանդերձ յաւելմամբ յիւրոց գանձուցն՝ 'ի շնորհակալութեան պատիւ՝ իբրև Հօր՝ և Օգնականի: Յայնժամ, Սմբատայ զծառայսն երուազայ, զոր գերեաց 'ի Բագարանէ տարեալ՝ բնակեցուցանէ 'ի թիկանց Մասեաց, 'ի նոյն անուանակոչելով՝ զձեռակերտն: Ինքն անցանէ 'ի Պարս Ընծայատար Դարեհի, ոչինչ փոյթ առնելով զՀռոմայեցւոց Տէրութենէն: Իսկ՝ 'ի գնալն Սմբատայ 'ի Պարս, հասանեն Հարկահանք Կայսեր, և Սպոյ ծանր՝ 'ի սահմանս Հայոց. զորս մաղթեաց Արտաշիսի, և կրկին տուեալ զհարկսն՝ հաշտեցուցանէ: Եւ զայս՝ մեզ ստուգապէս պատմէ Ողիմպ Քուրմ Հանւոյ, գրող Մեհենական պատմութեց. և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի. որում և Պարսից Մատեանքն վկայեն, և Հայոց երգն Վիպասանաց:

Գլուխ խզ 46

Յաղագս Շինուածոյ Արտաշատ քաղաքի:

Արտաշիսի Վերջնոյ՝ գործք բազումք, յայտնի են քեզ ՚ի Վիպասանացն, որք պատմին՝ ՚ի Գողթան. շինել զքաղաքն, և խնամութ̄ի ընդ Ալանս, և Ծնունդք Զարմիցն, և իբր՝ տռփանք Սաթինկան ընդ Վիշապազունսն, առասպելաբա՛ր, այսինքն՝ ը̄ Զարմն Աժդահակայ. որք ունէին զա̃մ զաւ ստորոտովն Մասեաց: մա՛րտ ընդ նոսա, և քայքայ՛ումն յիշխանութենէն, և ըսպանումն նց̄, և հրկիզութ̄ի շինուածոյն՝ և նախանձ որդւոյն Արտաշիսի. և դրդռութ̄ի ընդ միմեանս՝ ՚ի ձեռն կանանցն. այս ա̃մ, ո̃պ ասացք՝ յայտնի են քեզ՝ յերգս Վիպասանացն. բայց՝ յիշատակեսցուք և մեք կարճառօտիւք, և զայլաբանութ̃ն ճշմարտեսցուք: Երթեալ Արտաշիսի՛ ՚ի տեղին՝ ուր խառնին Երասխ և Մեծամօր. և հաճեցեալ Արտաշիսի ընդ բլուրն, շինէ քաղաք՝ յիւր անուն, անուանեալ՝ Արտաշատ. ձեռնտու լինի՝ և Երասխ՝ նմա փայտիւք Մայրեաց. վ̃ որոյ՝ անաշխատ՝

և երագ շինեալ, կանգնէ 'ի նմա Մեհեան. և փոխէ 'ի նա 'ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ, և զամենայն զԿուռս Հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն՝ արտաքոյ քաղաքին կանգնէ՝ հուպ 'ի ճանապարհն. և յարուցանէ 'ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէից՝ որք փոխեալ էին անդր յԱրմաւիրայ. և նստուցանէ զնոսա յԱրտաշատ. նաև զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ՝ զոր տարեալ էր յԱրմաւիրայ, և՝ զոր անդէն արարեալ նոր, փոխէ յԱրտաշատ. և առաւել ևս՝ յինքենէ, իբրև՝ զՔաղաք Արքայանիստ:

Գլուխ խէ 47

Յարձակումն Ալանաց 'ի մեզ՝ և պարտումն և խնամութիւն Արտաշիսի ընդ նոսա:

Յայսու ժամանակաւ՝ միաբանեալ Ալանք լեռնականօք ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին, մեծաւ ամբոխիւ, տարածեալ ընդ աշխարհս մեր: Ժողովէ և Արտաշէս զիւրոց զօրացն բազմութիւնս, և լինի պատերազմ 'ի մէջ երկոցունց

Ազգայն Քաջաց Աղեղնաւորաց. սակաւ ինչ՝ տեղի տայ Ազգ Ալանաց՝ և գնացեալ՝ անցանէ ը՟ն գե՛տն Մեծ Կուր, և բանակի առ եզե՛րբ գետոյն՝ ըստ հիւսիսոյ։ և հասեա՛լ Արտաշէս բանակի՛ ց՚ Հարաւոյ, և գետն ընդ մէջ նց՟։ Բայց քանզի զՈրդի՝ Ալանա՛ց Արքայի՝ ձերբակա՛լ արարեալ Զօրա՛ցն Հայոց, ածին առ Արտաշէս՟, զխաղաղութ՟ի խնդրէր Արքա՛յն Ալանաց՝ տա՛լ Արտաշիսի՝ զինչ և խնդրիցէ. և երդմունս՝ և դաշինս ասէր՝ հաստատել մշտնջենաւորս. ա՟պ՝ զի մի՛ ևս՝ Մանկունք Ալանաց՝ ասպատակաւ հինից՝ ելցեն յաշխա՛րհս Հայոց։ Եւ'ի չառնուլ յանձն Արտաշիսի՝ առ'ի տա՛լ զՊատանին, գայ Քո՛յր Պատանւոյն յա՛փն գետոյն, 'ի դարաւանդ մի մե՛ծ, 'ի ձե՛ռն Թարգմանաց՝ ձայնէ 'ի բանակն Արտաշիսի։ Քե՛զ ասեմ, Արիդ Քա՛ջ Արտաշէս, որ յաղթեցեր Քա՛ջ Ազգաց Ալանաց, ե՛կ հաւանեաց բանից Աչագեղոյ Դստե՛րս Ալանաց՝ տա՛լ զՊատանիդ, զի՝ վ՟ն միոյ քինու՝ ո՛չ է օրէն Դիւցազա՛նց՝ զայլո՛ց Դիւցազանց Զարմից բառնա՛լ զկենդանութ՟ի, կամ, ծառայեցուցանելով 'ի Ստըրկաց պահել 'ի կարգի, և թշնամութիւն յաւիտենական՝ 'ի մէջ երկոցունց ազգացս Քաջաց հաստատել։ Եւ լուեալ Արտաշիսի զայսպիսի իմաստութեան բանս, գնայ յեզր գետոյն, և տեսեալ զԿոյսն Գեղեցիկ, և լուեալ 'ի նմանէ բանս իմաստունս, ցանկացաւ Կուսին· և կոչեցեալ զԴայեակն իւր՝ զՍմբատ, յայտնէ՛ նմա զկամս սրտի իւրոյ, առնուլ զՕրիո՛րդն Ալանաց իւր կնութե· և դաշինս՝ և ո՛ւխտս հաստատել ընդ ազգի Քաջացն, և արձակել խաղաղութե՟· և հաճո՛յ թուեցաւ Սմբատայ։ յղէ՛ առ արքայն Ալանաց՝ տա՛լ զՏիկին՝ Օրիո՛րդն Ալանաց՝ զՍաթինիկ՝ Արտաշիսի կնութե։ Եւ ասէ արքայն Ալանաց· և ուստի տացէ Քաջ արին Արտաշէս բի՛ւրս 'ի բիւրուց՝ և հազա՛րս 'ի հազարաց ընդ Քաջազգւոյ Կուսիս Օրիորդիս Ալանաց։ Զայս տեղի առասպելաբանելով Վիպասանքն՝ յերգելն իւրեանց՝ ասեն։ հեծաւ արի՛ արքայն Արտաշէս 'ի Սեաւն Գեղեցիկ· և հանեալ զոսկի՛ օղ՝ շիկափոկ պարանն, և անցեալ ոպ՟՝ զար

ծուի

ծուէ սրաթեւ՝ ընդ գե՛տն, և ձգեալ զոսկէ օղ շիկափո՛կն երգե՛րն, ընկէց 'ի մէջ Օրիորդին Ալանաց, և շա՛տ ցաւեցոյց զմէջ Փափո՛ւկ Օրիորդին, արա՛գ հասուցանելով 'ի բանա՛կն Արտաշիսի. որ ճշմարտութ՟ե ունի՝ այսպէս։ քանզի՝ պատուեալ առ Ալանս՝ մորթ կարմիր, լայքայ շա՛տ, և ոսկէ բազում 'ի վարձանս տուել՝ առնուլ զՏիկին Օրիորդն Սաթի՛նիկ. ա՛յս է՝ ոսկէ օղ շիկափո՛կ պարանն։ Նո՛յնպէս՝ և զհարսանեացն առասպելեալ՝ երգեն այսմ՝ ասելով։ Տեղ ոսկէ՝ տեղայր 'ի փեսայութ՟են Արտաշիսի։ Քանզի սովորութ՟ի իւկէր Թագաւորացն մերոց՝ փեսայութ՟ե 'ի դուռն Տաճարին հասանիլ՝ դահեկանս ճապաղել, իբրև՝ զՀիւպատեանն Հռոմայեցւոց. սոյնպէս՝ և Թագուհեա՛ցն յառագաստին մարգարիտ։ ա՛յս է՝ ճշմարտութ՟ի բանից։ Սա՛, առաջին եղեալ Կանանցն Արտաշիսի, ծնանի նմա՛ զարտաւա՛զդ, և զա՛յլս բազումս, զորս ո՛չ կարևոր համարեցաք՝ անուամբ թուել։ բայց՝ զկընիսն, յորժամ 'ի գործ ինչ հասանիցիմք։

Սապա

Գլուխ խը 48

Սպանումն Արգամայ, եւ որդւոց նր̃։

Ի Ժամի հասեալ Արտաւազդայ՝ որդւոյ Արտաշիսի, եղեւ այր Քաջ՝ անձնահա́ճ, եւ հպարտ։ եւ նախանձ բերելով ընդ ծառայսն արգամայ, հրապուրեաց զհայր իւր՝ ցասնուլ արգամայ, որպէս թէ՝ թագաւորել 'ի վր̃ նմի խորհիցի։ այսպէս՝ ընկեցեալ զնա 'ի պատուոյն, ինքն առնու զերկրորդութիւնն։ Յետ այսորիկ՝ երթալով արտաշէս 'ի ճա́շ արգամայ, կասկած իմն անկեալ՝ ոպ̃ թէ՝ դաւել զարքայն խորհիցին. յարուցանեն որդիք արքային արշոտ, եւ անդէն լինի 'ի հացին՝ քարշեն զալիսն արգամայ. եւ խռովութ̃ մեծաւ՝ ելեալ յարտաշատ արքային։ Դարձեալ՝ արձակեաց զորդի́ իւր՝ զՄաժան մեծաւ զը̃նդաւ՝ եւ զբազումս յազգէն Մուրացեան սպանանել՝ հրամայեաց. եւ զապարանսն արգամայ՝ այրել. եւ զհարճս նր̃, որ կարի չքնաղ էր գեղով՝ եւ մնայեալ գնացիւք ոտից, զոր կոչէին՝ Մանդու՝ ածել 'ի հարճութիւն Արտաշիսի։ զորս՝ դարձեալ՝ նու նուաճեալ՝ յետ երկո՛ւց ամաց՝ տալ ՚ի բաց զի՛նչան՝ հրամայէ, բաց ՚ի հարճէն ։ Իսկ՝ արտաւազդայ ո՛չ շատա ցաւ առնուլ ՚ի նոցանէ զերկրորդական պատիւ, յաւելու ևս՝ հանել և զՆախճաւան, և ըստ Հիւսիսոյ Երասխայ զա՟մ գեօղս՝ յորում և ապարանս իւր՝ և բե՛րդս ՚ի նոցանէ շինէ ժառանգութեան ։ Այսմ ո՛չ կարացեալ համբերել որդւոյն արգամայ. ընդդիմանան նմա պատերազմաւ. բայց՝ յաղթէ արքայորդին. և սատակէ զա՟մ ծնունդս արգամայ՝ հանդերձ Հա՛րբն, և որք միանգամ, երևելիք էին յազգէ Մուրացեան. և գրաւէ յինքն զշէնս նց՟, և զա՟մ իշխանութ՟իս նց՟. և ո՛չ ոք ապրեաց ՚ի նոցանէն, բայց՝ աննշանք ոմանք, և կրսե՛րք փախուցեա՛լք առ Արտաշէս՝ ապրեցան ՚ի դրան արքունի ։ Այս Արգա՛մ է, որ յառասպելին Արգաւանն անուանեն. և ա՛յս պատճառ պատերազմին ընդ Արտաւազդայ ։

Պրակ խթ 49

Նշէ՝ որպիսի էր Սմբատ. և զինչ զԱլանս գործեաց, և ընկալէր զԱրտաւազդ:

Սիրելի է ինձ ասել՝ և վ՟ն Քաջին Սմբատայ. քանզի՝ արդարև՝ ը՟ստ առասպելին, ոչինչ կարի հեռի 'ի ճշմարտութ՟էն. որ ունէր հասակ անդամոց՝ համեմատ քաջութ՟են. և առաքինութ՟ե ոգւոյն՝ որսորդ, և գեղեցկութեան ալեօք՝ վայելչացեալ, սակաւ ինչ արեան նշոյլ ունելով յաչսն, որպ՝ Պրակոնտիկոն 'ի վերայ ոսկւոյ, և 'ի մէջ մարգարտոյ՝ ծագէր 'ի վերայ շոյտ անձինն՝ և մարմնոյ. զգոյշ յոյժ. և տուչութ՟ի յաջողուածոց ունէր 'ի մարտս առաւել՝ քան զամ՟ ոք. զի՝ յետ այնչափ արութեց, օգնական եղբօրն Սաթինկան՝ յաշխարհն Ալանաց, հանդերձ զօրու երթայր՝ հրամանաւ Արտաշիսի: Քանզի՝ մեռաւ հայր Սաթինկանն, և այլ ոմն բռնացեալ՝ թագաւորեաց աշխարհին Ալանաց, և հալածէր զեղբայրն Սաթինկան. զորս վանէ՝ հերքէ Սմբատ, և տիրացուցանէ 'ի վերայ ազգին զեղբայրն Սաթինկան. և զեր կէր հակառակորդացն աւերեալ զա՟մ միահամուռ՝ ածէ գերի սաստիկ յարտաշատ։ և հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զն՟ս 'ի Հարաւոյ յարևելից կուսէ Մասեաց՝ որ կոչի՝ Շաւարշական Գաւառ. 'ի վերայ պահելով զբնիկ անունն՝ արտազ։ և քանզի՝ և աշխարհն, ուստի գերեցանն՝ արտազ կոչի, մինչև ց'այսօր ժամանակի։

Պրակ Ծ 50

Յարձակումն Ալանաց. և գերութիւն ընդ Սմբատայ Զօրավարին Արտաշիսի։

Յետ մեռանելոյ Վերջնոյ Արշակայ՝ Թագաւորի Պարթևաց. Թագաւորեցուցանէ մերս Արտաշէս, զՀամանուն իւր՝ զԱրտաշէս՝ որդի նորին, 'ի վերայ Պարսից աշխարհին։ և ոչ կամեցան հնազանդիլ նմա բնակիչք լերինն, որ անուանեալ՝ կոչի, Պատիժահար Գաւառ, որ է՝ դիմաց լերանն, և ծովեզերք, և այսր ևս՝ քան զն՟ս. նա և՝ Կասպից երկիրն յայն սակս՝ ապստամբէին 'ի նմանէ, 'ի մերոյն Արքայէ. վ՟ս որոյ՝ առաքէ 'ի վերայ նոցա Արտաշէս ըզ Սմբատ ա՟մ զօրօք Հայոց. ինքն Արքայ՝ յուղա՛րկ երթալով զաւուրս եօթն. Իսկ՝ Սմբատայ երթեալ՝ հեր նազանգէ զամ՛ն։ Բայց՝ զերկի՛րն Պարսից աւերեալ առաւե՛լ քան՝ զԱրդոզեան՝ գերի՛ն ածէ 'ի Հայս. ընդ որս՝ և զՕարդման ոմն անուն՝ թագաւո՛րնոցին. վասն որոյ՝ արժանի վաստակոցն՝ սպարգևէ՛ նմա Արտաշէս զմա՛սն արքունի՝ որ 'ի շէնս Գողթն, և զուղտու ակո՛ւնսն. և առայսոքիւք՝ և զզօրն ամ՟ 'ի վ՟ր ն՟ր թողու։ Ընդ որ՝ նախանձեալ Արտաւազդ՝ կամեցաւ սպանանել զՍըմբատ. և յայտնեալ խորհրդոյն՝ բազում խռովութ՟ի լինէր՝ յաղագս այնր Հօրն։ Իսկ՝ Սմբատայ տեղի տուեալ՝ գնաց զկողմա՛մբք Ասորեստանի. իւրովք կամօք՝ թողլով զիշխանութ՟ի զօրացն Հայոց, ընդ որ խանտա՛յրն Արտաւազդ, հրամանաւ Արտաշիսի՝ բնակէ 'ի Տմորիս, որ այժմ կոչի՝ Կորդրիք. 'ի յԱւկի նստուցեալ զբազմութ՟ի գերւոյն. քանզի՝ էր 'ի ծերութ՟ե կին արարեալ յԱսորեստանեայց՝ հուպ 'ի յայն կողմանս, զոր յոյժ սիրեաց. և վ՟ս այնորիկ՝ և զնորին կողմամբք բնակեցաւ։

Իսկ՝ Արտաւազդ՝ յետ գնալոյն

Սմբա

Սմբատայ առնու 'ի հօրէն՝ որում ցանկային՝ զիշխանութիւն զօրացն ամենեցուն։ Եւ նախանձ բերելով ը̄ նմա եղբարցն, 'ի գրգռութենէ կանանց իւրեանց. վասն որոյ՝ կարգէ Արտաշէս զՎրոյր Հազարապետ, զայր իմաստուն, և բանաստեղծ. հաւատալով 'ի նմա զա̄մ գործ Տանն Արքունի։ և զՄաժան կարգէ Քրմապետ 'ի յԱնի Դիցն Արամազդայ, բաժանէ Արտաշէս և զիշխանութիւն զօրուն՝ ընդ չորս։ զԱրևելեան զօրն Թողու 'ի վր̄ Արտաւազդայ. և զԱրևմտեայն տայ Տիրանայ. զՀարաւայինն 'ի Սմբատ հաւատայ. և զՀիւսիսայինն 'ի Զարեհ։ Եւ Զարեհն էր՝ այր սէգ, եւ յորս երեւոյ՝ Նահատակ, իսկ առ 'ի պատերազմունս վատ՝ և տաղտուկ. զորոյ՝ զփորձ առեալ Բարձամայ ուրումն Արքային ապստամբեցուցանէ զերկիրն. և կալեալ զԶարեհ՝ 'ի բանտի դնէ 'ի Կաւկաս. ընդ որում՝ պատերազմեալ Արտաւազդայ, և Տիրանայ՝ հանդերձ Սմբատաւ, դարձուցանեն զեղբայրն 'ի Մեծէ Կարակմէ։

Գլուխ ԾԱ 51

Պատերազմ ընդ զօրս Դոմետիանոսի 'ի Բասեան:

Աղմուկ շփոթի իմն լեալ յԱրևմուտս: Եւ որ վստահացեալ Արտաշէս՝ նշկահեալ ընդ դիմանայր Հռոմայեցւոց Տէրութեանն՝ ոչ տալով հարկս. իսկ Դոմետիանոսն Կայսեր ցասուցեալ՝ զօրս 'ի վերայ Արտաշիսի առաքէ: որոյ հասեալ 'ի կողմանս Կեսարու, զՏերան, և զզօրսն Արևմտեայ՝ առաջի արկեալ՝ ածեն տագնապաւ մինչև՝ 'ի քա՛ջ ընդարձա՛կ հովի՛տն Բասենոյ: Որում ընդդէմ դիպեալ Արտաւազդ Արևելեա՛յ՝ և Հիւսիսային զօրօքն, և հնդերձ ա̃մ որդւովքն Արքայի պատերազմեալ՝ սաստկապէս վտանգին: Յորոց 'ի վե՛րջո պատերազմին հասեալ Սմբատ՝ Հարաւային զօրօքն՝ ընդ մէջ անցեալ՝ ապրեցուցանէր զորդիսն Արքայի. յաղթութիւն, և զրաւ պատերազմին արարեալ: զի՝ թէ և՝ ծերագո՛յն էր՝ Երիտասարդ արեա՛ց, և մղեա՛ց զճակատն, և հետամուտ եղեալ՝ հալածեաց զզօրս Հռոմայեցւոց մինչև 'ի

սահ

սահմանս Կեսարու։ Զայս կամելով երգել յառասպելս, Դոմետ զոմն ասեն, եկեալ՝ որ է՛ ինքն Կայսրն Դոմետիանոս։ ոչ ինքն եկեալ այսր, այլ՝ զհրաման նր՟, և զզօրս՝ այլաբանելով՝ յանուն նր՟ կոչեն։ Բայց՝ ը̄ թախտի՝ եղեալ Արտաշիսի, մեռանի 'ի նմին ժամանակի՝ Դոմետիանոս 'ի Հռոմ, և զկնի նր՟ Ներվաս՝ ոչ աւելի Թագաւորեալ, քան՝ զմի ամ։ ը̄ որ՝ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց՝ և Պարսից, ասպատակ ևս 'ի Յոյնս արարին։ Ընդ սոսա հայելով Եգիպտացւոց՝ և կողմանց Պաղեստինացւոց, արգելուին և նոքա զհարկին Հռոմայեցւոց։

Գլուխ ԾԲ 52

Յաղագս Տրայիանոսի՝ և նորին գործոց. և համբուանն Սաթանայ 'յեղծարոյն։

Զայսու ժամանակաւ՝ Թագաւորեալ լինի Հռոմայեցւոց Տրայիանոս. և խաղաղեցուցեալ զա̃մ արևմուտս, դիմեալ 'ի վերայ Եգիպտացւոց՝ և Պաղեստինացւոց, և նուաճեալ զնոսա ընդ իւրով ձեռամբ. խաղայ յարևելս 'ի վր՟ Պարսից։ աստ աճապարեալ Արտաշէս մե-

մեծապէս՝ ընծայիւք ընդ առաջ նր՟ իջանէ, զմեղանս յանձնառեալ՝ հանդերձ հարկօք՝ անցելոց ամացն՝ լինի առաջի նր՟. և թողութ՟ի ՚ի նմանէ գտեալ՝ դառնայ յաշխարհս Հայոց։ Եւ Տրայիանոսի անցեալ ՚ի Պարսս, և զա՟մ զկա՛մս իւր կատարեալ՝ դառնայ ընդ Ասորիս. ընդ առա՛ջ նորա իջեալ Մաժան, մատնութիւն զեղբա՛րցն առնէր։ գիտեմ ասէ՝ Արքայ, եթէ զԱրտաւազդ, և զՏիրան վտարանդի ո՛չ արասցես, և զզօրս Հայոց՝ Օարբէհի ո՛չ հաւատասցես, հա՛րկքն անաշխատ առ քեզ ո՛չ եկեսցեն։ զայս արար Մաժան, քէն պահեալ վ՟ն Սմբատայ, զի՝ և զնմա՛ նր՟ սնուցեա՛լ էր։ ընդ նմին՝ և զՏիրան խորհեցաւ հանել, զի՝ ինքն լիցի Քրմապետ միանգամայն՝ և Սպարապետ արևմտից։ Օրմէ՝ ո՛չինչ փոյթ արարեալ Տրայիանու, արձակէ ունայն։ Բայց Արտաւազդայ, և Տիրանայ իմացեալ զխորհուրդն նորա. դարան գործեալ՝ յորս սպանին զՄաժան. զոր տարեալ թաղեցին ՚ի Բագնաց Աւանի, իբրև՝ ըզ Քրմապետ։ Իսկ Արտաշէս յա՛յնմ հետէ՝ անսայթաք հարկեա՛ց Տրայ խանու. և յետ նորա՝ Հադրիանոսի կայսեր՝ զա̃մ աւուրս իւր։

Գլուխ խե̃ 45

Թէ՝ որպէս բազմամարդացոյց Արտաշէս զաշխարհն՝ և սահման հաստատեաց։

Յետ՝ ա̃մ ուղղութե̃ց Արտաշիսի՝ հրամայէ զսահմանս գեօղից, և ագարակաց՝ որոշել։ քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց։ եկամուտս բազում ածելով ազգս, և բնակեցուցանելով 'ի լերինս, և 'ի հովիտս, և 'ի դաշտս. և նշանս սահմանացն հաստատեաց՝ այսպէս։ հրաման տալով՝ քարինս կոփել՝ չորեք կուսիս, և սնակաձև փոսել զմէջն ծածկելով յերկրի։ և չորեք կուսի 'ի վերայ յարուցանել ամբարտակս սակաւ ինչ՝ բարձրագոյն յերկրէ։ Ընդ՝ որ՝ նախանձեալ Արտաշրի՝ որդւոյ Սասանայ. զնոյն նման՝ հրամայէ առնել՝ և 'ի Պարսից աշխարհին, և յիւր անունն անուանել՝ զի՝ մի՛ ևս՝ յիշեսցի անունն Արտաշիսի։ Բայց՝ ասի, 'ի ժամանակս Արտաշիսի՝ ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային՝ և ոչ դաշտային։

Յա

Գլուխ ԾԴ 54

Յաղագս Նախարարութ՟են Ամատունեաց։

Յաւուր սորա, ասեն՝ եկեալ զազգն Ամատունեաց 'ի կողմանց արեւելից Արեաց աշխարհին։ Բայց՝ են սոքա բնութ՟բ Հրէայ, 'ի Մանուեայ ումեմնէ, որոյ որդի՛ էր Մեծահասակ՝ և ուժեղ՝ Սամսոն անուն կոչեցեալ· որպ՟՝ սովորութ՟ի է Հրէից՝ ըստ յուսոյ զՆախնեացն կոչել զանուանս։ բայց՝ է ճշմարիտ, որպ՟՝ և այժմ իսկ է տեսանել 'ի զարմս Ամատունեաց· քանզի՝ Անձնեայք, և Արեձևք ըստ պատշաճի՝ վայելեն ամ՟ իրօք, և ուժեղք։ Տարեալք են նք՟ յԱրշակայ Առաջնոյ՝ 'ի Պարթեւաց Թագաւորեցելոյն։ և յառաջադիմութ՟բ անդէն 'ի յԱրեաց աշխարհին՝ 'ի պատիւ հասեալք, 'ի կողմանս Ահմատանի։ Բայց՝ եթէ զինչ պատճառանաց այսր գալուստ նոցա, ես ոչ գիտեմ։ այլ՝ պատուէին յԱրտաշիսէ գեղիւք, և դաստակերտօք· և անուանին Ամատունիք, որպէս թէ՝ եկք։ և կէսք 'ի Պարսից՝ Մանուէեան՝ զնոսա կոչելով, յանուն Նախնւոյն։

Գլուխ ԾԵ 55

Յաղագս Առաւեղենայ Տոհմին, Եւ՝ ուրոք մերձեալ ազգ։

Ի Սր̃ աւուրս՝ և Առաւեղեանքդ յազգէ Ալանաց՝ մերձաւորք Սաթինկան՝ զհետ նորին եկեալք, կարգեցան յազգ, և 'ի նախարարութեան աշխարհիս Հայոց, ո̃պ Հարազատք Թագուհւոյն Սենծի. և 'ի ժամանակս Խոսրովու Հօր Տրդատայ՝ խնամացեալ ը̃ ումե̃մն Բաջի Ասալայն եկեալ հատուածի։

Գլուխ ԾԶ 56

Որ ինչ արուեստից գեղեցկութեան՝ յաւուրս Արտաշիսի։

Քանզի՝ բազում ինչ յաւուրս Արտաշիսի գործեցաւ։ վ̃ն այնորիկ՝ բազում ճառս կոտորեցաք. զի մի՝ երկայնութիւն բանից՝ տաղտկութիւն ընթերցողացն լիցի. որոյ վերջին ճառս՝ այսպիսի ինչ յիշատակել՝ և զայլսն՝ որ ինչ 'ի ժամանակս Արտաշիսի։ զի, թէպէտ՝ և այլն ևս, զոր յիշատակեցաք յառաջագոյն ճառիւն. կարգք, և սովորութիւնք գեղեցիկք հաստատեցան 'ի Սա֊

ղաք

զարշակայ՝ և յայլոց Առաջնոց Թագաւորացն. այլ՝ 'ի մեծամեծ արուեստից, և գիտութե՟ց ունայնացեալք էին. ոպ՟՝ հինից, և ասպատակաց պարապեալ. և այսպիսի գիտուե՟ց՝ կամ անփոյթ արարեալ՝ և կամ, ո՛չ հասեալք. զշաբաթուց ասեմ, և զամսոց, և զտարեա՛ց բոլորմանց, քանզի՝ ո՛չ այսպիսի ճանաչի՛ւր առնոսա. այլո՛ց ազգաց վարելով: և ո՛չ 'ի ծովակս աշխարհիս նաւագնացութի՟ք, և ո՛չ 'ի վե՟ր գետոց ճանապարհորդութիւնք. զս՟, կամուրջք, և ո՛չ գործիք ձկանց որսոց. այլ՝ և ո՛չ յա՟մտեղիս երկրագործութի՟ք, բայց՝ դո՛յզն ուրեք. այլ՝ ըստօրինակի Հիւսիսականա՛ցն կողմանց՝ շաղղակերութե՟, և ա՛յլ այսպիսեօք կեցեալ: Նա և ա՛յս ամենայն յօրինի յաւուրս Արտաշիսի:

Գլուխ ԾԷ 57

Յաղագս մահուանն Արտաշիսի:

ԳԵղեցիկ իմն պատմէ Արիստոն Փելլացի, յաղագս մահուանն Արտաշիսի: Քանզի՝ 'ի ժամանակին, ոպ՟՝ ապստամբեցին Հրեա՛յք յԱդրիանոսէ՝ Հռոմայե-

ցւոց

ցւոյ Թագաւորէ· և ետո՛ւն պատերազմ՝ ընդ Ռոփոսի Հեպարքոսի, առաջնորդութը̃ ա՛ռն ուրո՛ւմն աւազակի, որում անուն էր՝ Բարքոբայ· ի̃մ՝ Աստեղորդի· որ էր գործովք չարագործ՝ և սպանող· բայց՝ անուա՛մբ իւրով մեծաբանեա՛լ պարծէր՝ ո̃պ թէ՝ յերկնից ծագեաց ն̃շ փրկիչ, իբր՝ նեղելո՛ց, և գերեաց։ և ա՛յնքան՝ սաստկացո՛յց զմարտն, մինչև՝ ՚ի նմ̃ հայելով՝ ՚ի բա՛ց կացին ՚ի հարկելոյ Հռոմայեցւոց Ասորիք, և Միջագետք, և Պա՛րսք ա̃մ· քանզի՝ էր և լուեալ՝ եթէ, եմուտ յԱդրիանոս յա՛խտ ուրկութե̃ն։ Բայց՝ մերն Արտաշէս ո՛չ երկմտեաց ՚ի նըմանէ։ Եւ եղև ը̃ նո՛յն ժամանակս՝ հասանել Ադրիանոսի ՚ի Պաղեստինէ՝ և սաստկել զպատերա՛զմն՝ պաշարմամբ ՚ի ք̃ղաքի մի փոքու՝ հուպ յԵ̃րէմ։ վ̃ որոյ՝ և ա̃մ ազգին Հրէից հրամայեաց՝ մերժել ՚ի Հայրենի՛ աշխարհէն· որք՝ և ո՛չ ՚ի բազում հեռաստանէ հայեսցին յԵ̃րէմ։ և ինքն շինէ՛ր զԵ̃րէմ, զաւերեա՛լն ՚ի Վեսպասիանոսէ, և՚ի Տիտոսէ՝ և յիւրմէ, և անուանեաց՝ Հեղիայ՝ յիւր անունն, ո̃պ՝ և կոչի՛ւրն իսկ՝

ադ

ադրիանոս, արեգակն: բնակեցոյց 'ի նոսա Հեթանոսս՝ և Քրիստոնեայս, որոց Եպիսկոպոս էր Մարկո՛ս ոմն: Ընդ ա՛յն ժամանակս՝ առաքեաց զօր՝ ծանր զկողմամբք Ասորեստանի, և մերոյն Արտաշիսի հրամայեաց՝ երթալ 'ի Պարսս, հանդերձ իւրով Օիւդոստատօք· զորոյ զհետ քարտուղարութեան լեալ ա՛յս այր՝ որ զա՛յս պատմութիւն մե՛զ ետ, հանդիպի Արտաշիսի 'ի Մա՛րս, 'ի Նոհովունդ անուանեալ տեղւոջ: եղև հիւանդանալ նմա 'ի Մարնդի, 'ի Բակուրակերտ Աւանի· և զԱբեղ՛էյ զո՛մն, Նահապետ Աբեղենից տոհմին, զԱրշամ, և զԳ ղոմարայր և սուտակասպաս, 'ի նորին խնդրոյ արձակէ յԵկեղեց՝ յԵրիզայ, 'ի Մեհեանն Արտեմիդեայ՝ խնդրել 'ի կռոցն բժշկութիւն, և զբազում կեանս: որոյ ո՛չ ժամանեալ՝ դառնալ, հասանէ վախճան Արտաշիսի· և գրէ՝ ո՛րչափ ամբոխութիւնք մեռան 'ի մահուանն Արտաշիսի: սիրելի կանայք, և հարճք, և մտերիմ ծառայք· և որպիսի շուք բազմադիմիս արարին, առ 'ի պատիւ Դիոյն՝ քաղաքական կարգօք, և ո՛չ՝ որպէս

զԲար

զԲարբարոսս. դագաղքն էին ոսկեղէնք. գահոյքն՝ և անկողինքն բեհեզեոյ. և սպասմուձանն՝ որ զմարմնոյն, ոսկեթել՝ թագ կապեալ 'ի գլուխն. և զէն ոսկւով առաջի դնէր. և գահոյիւքն շուրջ որդիքն, և բազմութ̃ի ազգականայն. և առայսոքիւք Պաշտօնէիցն զինուորութ̃եք, և Նահապետքն, և Նախարարութ̃եցն Պունդք. և միանգամայն զօրականացն վաշտք. ամենեքեան կազմեալ՝ զինու հանդերձ. իբր թէ՝ 'ի պատերազմ Ճակատիցին. և առաջի՝ պղնձիս հարկանելով փողս, և զկնի՝ Կուսանք Ձայնարկուք՝ սևազգեստք, և աշխարհօղ Կանայք զհետ բազմութ̃ե Բամկին, և այսպէս՝ տարեալ թաղեցին. և շուրջ զգերեզմանաւն՝ լինէին կամաւոր մահունք, ոպ̃՝ վերագոյն ասացաք: Նաև սորա այսպէս՝ սիրելի եղեալ աշխարհիս մերոյ, թագաւորեալ ամս՝ քառասուն, և մի.

Պրակ ԾԸ 58

Բերպաաղդայ Թագաւորութիւն, և հալածել զեղբարս իւր՝ և զորս, և մահ՝ այլաբանելով հանդերձ։

Յետ Արտաշիսի՝ թագաւորէ Արտաւազդ՝ որդի նորա։ և հալածէ յԱրարատոյ զամ՟ եղբարս իւր ՚ի գաւառս Աղիովտի, և Առբերանու, զի՝ մի բնակեսցեն յԱրարատ, և՚ի կալուածս արքայի, բայց՝ միայն զՏիրան առ իւր պահէ՝ փոխանորդ իւր, զի՝ որդի ոչ գոյր նորա։ Որ՝ յետ սակաւ ինչ աւուրց՝ թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի՝ որսալ կինճս, և իշավայրիս զակամբք Գինայ· և աղմկեալ ՚ի ցնորից իմն խելագարանաց՝ ընդ վայր յածելով երիվարաւն՝ անկանի ՚ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի։ Զսմանէ Երգիչքն Գողթան՝ առասպելաբանեն այսպէս· եթէ՝ ՚ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին՝ ըստ օրինին հեթանոսաց· դըժուարին Արտաւազդ՝ ասելով ցըհայրն, մինչ՝ դու գնացեր, և զերկիրս ամ՟ ընդ քեզ տարար, ես աւերակացս՝ ում թագաւորեմ· վն՟ որոյ անիծեալ զնա Արտաշիսի, ասաց՝ այսպէս· եթէ՝ յորս հեծցիս յազատն

՚ի

՚ի վե՛ր՝ ՚ի Մասիս․ զքեզ կալցեն քա՛ջք, տարցեն յԱզատն ՚ի վե՛ր ՚ի Մասիս․ անդ՝ կացցես, և զլոյս մի տեսցես․ Զրուցեն զսմանէ՝ և պառաւունք, եթէ՝ արգելեալ կայ յայրի՛ միում, կապեալ երկաթի շղթայիւք, հանապազ կրծելով զշղթայսն, ջանայ՛ ելանել՝ և առնել վախճան աշխարհի․ այլ՝ ՚ի ձայնէ կռանահարութե՛ ՚Դարբնաց՝ զօրանան ասեն՝ կապանքն․ վ՟ն որոյ՝ և առ մերով իսկ ժամանակաւ՝ բազումք ՚ի Դարբնաց զհե՛տ երթալով աւանդելոյն, յաւուր միաշաբաթւոջ՝ երիս կամ, չորս բախեն զսալն, զի զօրասցի ասեն՝ շղթայքն Արտաւազդայ։ բայց՝ է ճշմարտութի՟ այսպէս, որպէս՝ ասացաք մերադոյն։ այլ՝ ոմանք ասեն, և՛ ՚ի ծնանելն զսա, դիպեալ Պատահարա՛ց իմն, զոր համարեցան կախարդել զնա կանանց Զարմիցն Աժդահակայ․ վ՟ն որոյ՝ բազում զնա չարչարեաց Արտաւազդ․ և զա՛յս նո՛յն Երգիչքն յառասպելսն ասեն՝ այսպէս․ թէ՝ Վիշապազունք գողացան զՄանուկն Արտաւազդ, և դև՛ փոխանակ եդին․ բայց՝ ինձ արդարացեալ թուի լուրն այն, թէ՝

՚ի

'ի ծննդենէն և եթ՝ մոլութեամբ լեալ, մինչև՝ վախճանեցաւ։ և առնու զթագաւորութիւնն Տիրան՝ եղբայր նորա։

Գլուխ ԾԹ 59

Որ ինչ վասն Տիրանայ։

Թագաւորէ Հայոց՝ Տիրան որդի Արտաշիսի՝ յերրո՛րդ ամի՝ Պերոզի առաջնոյ՝ Պարսից արքայի։ Սորա ո՛չինչ պատմին գո՛րծք մեծամեծք, այլ՝ միայն թէ՝ մտերմութ՟բ ծառայեաց Հռոմայեցւոց. եկաց խաղաղութ՟բ որսո՛ց՝ և զբօսանա՛ց պարապեալ՝ ո՛չ աւելի. և ձիո՛ց երկուց լեալ թեթև առաւե՛լ՝ քան՝ զՊեգասո՛ս՝ երագութ՟բ անբաւ, զորս՝ ո՛չ երկրակո՛խս, այլ՝ օդագնա՛ցս համարէին. զոր խնդրեալ՝ հեծանել Դատաքէի ուրումն՝ Իշխանի Բզնունեաց, պարծէր ընչեղագո՛յն գոլ, քան՝ զարքայ։ Եկեալ առ նա կանխագոյն իւրո՛յ ազգին Արշակունեաց՝ որք էին 'ի կողմանս Հաշտենից. ասէին՝ ընդարձակեա՛ մեզ զժառանգութիւնն, զի նեղ է. քանզի՝ բազմացա՛ք յոյժ։ և նա հրամայէ՝ ոմանց 'ի նոցանէ երթալ 'ի տուն Աղւովտի, և Առբերանւոյ։ Իսկ՝ սոցա առաւել ևս՝ բողոք կալեալ առ արքայն, թէ՝ առաւելագոյն մեզ նեղէ. ոչինչ ունկնդիր լինի Տիրան։ վճիռ հաստատեալ, այլ ժառանգութիւն ոչ տալ նմա, այլ՝ զոր ունէին, հաւասար տրոհել յինքեանս. զոր բաժանեալ՝ ըստ մարդաթուի, գտաւ պակաս ժառանգութիւն Բնակողմն Հաշտենից. վասն որոյ՝ բազումք 'ի նոցանէ եկին 'ի գաւառս աղւովտի, և առբերնւոյ։ Յաւուրս մր ասեն՝ լեալ զպատանի ոմն, յազգէն անձաւացեաց՝ սեդ յամենայնէ, Երախնաւու՝ անուն կոչեցեալ՝ որ առնէ կին, զվերջին կանանցն արտաւազդայ, զոր 'ի Յունայն էր ածեալ։ և քանզի՝ փաւակ ոչ գոյր արտաւազդայ, արքայ Թողու յԵրախնաւու զնմա զտունն արտաւազդայ. զի՝ ասէին զնա այր ընտիր լինել, և համեստ յամի. այլև՝ 'ի ցանկութիւն մարմնոյ, իբրև՝ զօրինաւոր ոք. զոր սիրեալ արքայի, տայ նմա զԳահն Երկրորդական, զոր ունէրն արտաւազդ. և զհօգս արևելեայ զօրուն 'ի նա հաւատացեալ։ առ նմին թողեալ զԳրուամպ ոմն

Պարսից, զմտերիմ իւր՝ որ խնամացեալ էր ընդ Նախարարն Վասպուրականի. որում տուեալ զաւանն Տատեայ 'ի նմա հանդերձ Ագարակօքն. և զայգին մեծ՝ յոր մտանէր Առուն գետ՝ հանեալ 'ի ծովակէն Գայլատոյ. և ինքն գնայ զկողմամբք Եկեղեցայ յԱւանն՝ 'ի Զրմէս հաստատելով զարքունիսն, 'ի հանդարտութեան վարեաց զթագաւորութին՝ ամս քսան, և մի. և մեռաւ 'ի Ճանապարհի ձեան Հիւսիսոյ կալեալ:

Գրակ կ 60

Յաղագս Տրդատայ Բագրատունւոյ՝ և անօրինաց աղջկե նորա Յուսանենոյ:

Տրդատ ոմն՝ յազգէն Բագրատունեաց, որդի Սմբատուհեայ՝ Դստեր Բաջին Սմբատայ. այր եղև առաւելորտեայ, և ուժեղ՝ կարճ հասակաւ՝ և գձուձ տեսլեամբ. զոր փեսայացոյց իւր Արքայ Տիրան 'ի Դուստր իւր յԱռանեակ. որոյ ատեցեալ զայր իւր զՏրդատ, պչրանովք, և պռստելով կեայր, զօրհանապազ աւաղելով զինքն, իբր, թէ Զքնաղագեղ ընդ Վատակերպս, և Բաջատոհմիկ Է Վատթարազգւոյ բնակէ։ Ընդ որ՝ զայրացեալ Տրդատայ՝ յաւուր միում գանէ ըզնա սաստկապէս, և կտրէ զդեղձանհերսն, և զվարսիցն փետտեալ զխոպոպիսն, հրամայէ՝ քարշել՝ արտաքս ընկենուլ 'ի Սենեկէն. և ինքն գնաց ապստամբեալ 'ի կողմանս ամրութեանն Մարաց. և հասեալ 'ի Սիւնեաց աշխարհն. ժամանէ նմա համբաւ մահուանն Տիրանայ, զոր լուեալ՝ դադարէ անդէն։ Եւ եղև՝ յետ աւուր միում, կոչել զնա յընթրիս Բակրոյ Նահապետին Սիւնեաց, և յուրախանալն գինւով՝ տեսեալ Տրդատայ զկին մի, զի՝ յոյժ գեղեցիկ էր, գէր ձեռամբ, որում անուն էր՝ Նազինիկ։ տարփացաւ՝ և ասէ ց'Բակուր. տուր ինձ զվարձակս զայս. և նա ասէ, ոչ տամ, զի՝ Հարճ իմ է. իսկ՝ Տրդատայ բռնահարեալ 'ի կինն՝ յինքն քարշեալ 'ի Բազմականն, չամշեալ՝ վաւաշէր՝ ըստ օրինակի Երիտասարդի՝ անարգել տարփաւորի. ընդ որ՝ խանդացեալ Բակրոյ՝ յարեաւ՝ հանել զնա 'ի նմանէ. բայց՝ յոտն կացեալ Տրդատայ՝ ծաղկական սկտեղըն, իբրև՝ զինու վարեցաւ. նա և՝ զԲարձակիցն 'ի

Բազմականացն 'ի բաց պողեաց. Եւ անդ՝ էր տեսանել՝ զոմն Ոդիսեաս զԲնպենէոսկայ զսեղեխոնն սատակելով. և կամ, զԼապիթեայցն, և զՅուշկապարկացն կռիւս 'ի մէջ Պերիթեայ հարսանեացն. և այսպէս՝ իւր վանսն եկեալ, իսկոյն 'ի ձի ելեալ՝ հանդերձ հարճիւն 'ի Սպեր գնաց գաւառ. Զայս աւելորդ եղեւ պատմել մեզ զնահատակութիւն առնն ցանկասիրի. Բայց՝ գիտեմ, զի՝ 'ի թողուլ ազգին Բագրատունեաց զՕրէնս Հրէիցն, նախ՝ Խուժական ժառանգեցին յորջորջումն. Բիւրատ, և Սմբատ, և այլ՝ այսպիսիս կոչմունս, զրկեալ 'ի Նախնական անուանցն. որք՝ կոչէին, յառաջ քան՝ զուրանալն. Բագադիա, Տոբիա, Եղէազար, Սարիա, Սենեքիա, Ասուդ, Սափատիա, Ազարիա, Եննանոս. և ինձ թուի, թէ՝ որ այժմ կոչին՝ Բագրատունիք, Բագարատ, Բագադիա, Էդա, որպէս՝ Ասուդ՝ Աշոտ. դինպէս՝ և Ազարիա Ազարիա. որպէս՝ Շամբատ, Սմբատ.

Եթէ

Պրակ կա 61

Եթէ, չէ որդի Տիգրան Մեծին, և ոչինչ 'ի նմանէ գործ։

Փոխանորդէ զՏիրան՝ եղբայր իւր՝ Տիգրան Մեծին, թագաւորեալ Հայոց. 'ի քսաներորդի, և չորրորդի ամի Պերոզի՝ Պարսից Արքայի. և երկայնակեաց եղեալ ամս քառասուն՝ և երկուս, մեռանի։ Ոչինչ գործ՝ արժանի յիշատակի ցուցեալ, այլ 'ի յաղջկանէ միջէ Յունաց՝ 'ի կալանս ըմբռնեալ՝ 'ի ժամանակին՝ յորժամ, վախճանեցաւն Տիտոս Երկրորդ՝ Թգւոր Հռովմայեցւոց՝ որ անուանեցաւն Անտոնինոս Օգոստոս։ և Պերոզ՝ Արքայ Պարսից 'ի Հռովմայեցւոց իշխանութենէն արշաւեաց. ուստի՝ և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող. քանզի՝ յառաջ անուանիւր՝ Մաղեգեսոս, որպէս՝ 'ի Յունաց պատմի. բայց թէ՝ Պարսք զինչ կոչէին զնա՝ ոչ գիտեմք։ Արդ՝ յասպատակելն Պերոզի ընդ Ասորիս՝ 'ի կողմանս Պաղեստինացւոց. վասն նր՝ հրամանաւ նորին, և մերն Տիգրան 'ի Մէջերկրեայս ասպատակեալ՝ և 'ի կալանս ըմբռնեալ

նեալ յաղջկանէ՝ իշխեցելոյ կողմանցն այնոցիկ, մինչդեռ՝ Լուկիանոս Կեսար՝ յԱթէնս զՄեհեանն շինէր. որ և անցեալ՝ զօրօք բազմօք 'ի Մէջերկրեայն՝ յետ մեռանելոյն Պերոզի՝ նուաճեաց զայս, և արձակեաց զՏիգրան։ ետ զՄափի ըղկոյս՝ զմերձաւոր իւր՝ նմա կնութե̃, զոր՝ եկեալ 'ի Հայս՝ 'ի բաց թողու, և զլեալ 'ի նմանէ պատանիս չորս՝ ազգ սերէ յանուն մօր իւրեանց Մոփեայ՝ Մոփսեան. և զԱռաջին մանկանցն Պղուխ Նահապետ կացուցանէր, և կարգէ ը̅ այլ Նախարարութիւնս, զի՝ մի՛ անուանեսցին Արշակունիք. և այլ՝ որ ինչ կրսերագոյն ազգք, եթէ՝ ա՛ստ, և եթէ՝ զկողմամբք Կորճէից, հաստատէ ա՛յս Տիգրան, որք միանգամ անազգիք էին՝ 'ի վաշտս, և անձամբ երևելիք. և վասն̃ փրկութե̃՝ պատերազմեալ ընդ Յոյնս, որք 'ի Կորճէից, և որք 'ի մերձ կողմանէս. զյառաջագունից մտաւորաց ասեմ, զՃենայց՝ 'ի Ծարմից Հայկազնեայց, ոմանք՝ և յԻկաց. զոր՝ ոչ անուանս պատմեսցուք. է ինչ՝ որ, ոչ վն̃ յայտնի լինելոյ մեզ, և է ինչ, որ՝ վասն աշխատութե՟ 'ի վաստակելն՝ խո՛յս տալով: Երրորդ, զի՝ և անհաւատարութեան բազմաց կարծիս 'ի ներքս ածէ՝ ընդ բնաւն անցանել. և այսորիկ աղագաւ, ո՛չ ինչ՝ վ՟ն ա՛յոյ ազգաց, որք 'ի Վերջ նո՛յն Տիգրանայ կարգեցան՝ ճանուեսցուք, թէ և՝ բազո՛ւմ անգամ աղերսեսցես. այլ միայն՝ զորս հաւատին գիտեմք զկնի՛ն. զի՝ որչափ հնա՛ր էր՝ փախեա՛ք յաւելորդ, և 'ի այս ճուճեա՛լ բանից. և որ ինչ յանհաւատին հայցէ՛ր բանն, և մտածութի՟ն. միայն՝ զհետ երթալով՝ ըստ կարողութե՟, որ ինչ յայլո՛ւստ՝ և կամ 'ի մէնջ զարդարո՛յն, և զճշմարտի:

Զնոյն և աստանօր՝ պատրաստելով արգելում զընթա՛ցս բանիցս ո՛չ ըզպատշաճէն, և որ զանհաւատութեն 'ի նե՛րքս ածել ակն արկէ կարծիս. և զքեզ՝ ո՛վ՝ բազումանգամ, և ա՛յժմ՝ աղաչեմ, մի՛ յաւելո՛րդան հարկաւորել զմեզ՝ և սակաւ՝ և յոլո՛վ բանիւք զմե՛ծ, և զհաւատի՝ բովանդա՛կ աշխատութիւնս մեր, ընդվա՛յր՝ և աւելո՛րդ ցուցանելով գործ. զինմանադո՛յնս, որպէս՝ ինձ, և քե՛զ գործէ՛ վտանգս:

Յա

Գլուխ կբ 62

Յաղագս թագաւորութեանն Վաղարշակայ, և շինելոյ զԱւանն Բասենոյ. և պատել պարսպաւ զնոր քաղաք և պատերազմն ընդ Խազրաց և մահ նորին։

Յետ մահուանն Տիգրանայ՝ թագաւորէ Վաղարշ՝ որդի նորին, յերեսներորդ ամի՝ համանուանն իւրոյ՝ Վաղարշակայ Պարսից արքայի։ Սա շինէ զԱւան մեծ՝ զտեղի ծննդեանն իւրոյ, ՚ի վ՟ր ճանապարհին. ուր՝ ՚ի գնալ Մօր իւրոյ ՚ի ձմերոցս յԱյրարատ՝ յանկարծակի պատահեաւ երկանց ՚ի գընայսն, ծնաւ ՚ի վ՟ր ճանապարհին՝ ՚ի գաւառին Բասենոյ, ՚ի տեղւոջն՝ ուր խառնին Մուրց գետ՝ և Երասխ. զոր շինեաց յիւր անուն, և կոչեաց Վաղարշաւան։ Սա պատեաց պարսպաւ՝ և զհզօր Աւանն Վարդգիսի՝ որ ՚ի վ՟ր Քասաղ գետոյ, զորմէ յառասպելսն ասեն։ Հատուած գնացեալ Վարդգէսն մանուկ ՚ի Մուրհայց գաւառէն, եկեալ՝ նստաւ ըզՇրէշ բերդաւ՝ զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասախ գետով՝ կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի

Այ

Այս Երուանդ է՛ Սանատրուկեանցն՝ որ ՚ի Հայկազանց, զորոյ զքո՛յրն կին առեալ Վարդգիսի՝ շինեաց զԱւանս զայս. յորում և Տիգրան Միջին յԱրշակունեաց՝ նստո՛յց ըզհասարակ առաջնո՛յ գերութեանն Հրէից, որ եղև՝ Քաղաքագեղ վաճառօք։ ա՛յժմ՝ ա՛յս Վաղարշ պատեա՛ց պարսպաւ՝ հզօր պատուարաւ և անուանեաց՝ Վաղարշապատ, որ և՝ Նո՛ր Քաղաք։ Սա՛ թագաւորեալ ամս՝ քսան՝ մեռաւ։ Բայց՝ ասեմ, զսա՛ և կեալ՝ յե՛տ մահուանն, յաղագս՝ բարի՛ անուանն, քան՝ զթուլագո՛յնս ՚ի թագաւորացն. վ՟ն զի, ՚ի մ՟ր աւուրս՝ միաբանեալ ամբոխութ՟ի Հիւսիսականաց՝ զԽազրաց ասեմ, և զԲասլա՛ց՝ արտաքս, քան՝ զդուռնն Ճորա՛՝ ելանել. Առաջնորդ՝ և Թագաւոր ունելով իւրեանց զՎնասեպ ա՟նն Սուրհակ. որք անցեալ՝ վտարին ա՛յսր զԿուր գետով։ որոց պատահեալ Վաղա՛րշ ամբոխաւ մեծաւ, և արամբք մարտկօք՝ ձիգ զհետ առեալ՝ անցանէ ը՟ կապանն Ճորա. ուր միւսանգամ՝ միաբանեալ թշնամեացն՝ յօրինեցին ճակատ։ զորս թէպէտ՝ և վանեալ քաջա՛ցն Հայոց, փախստականս առնէին՝ սակայն Վաղա՛րշ մեռանի ’ի ձեռա՛ց Կորովեա՛ց աղեղնաւորաց. և առնու զԹագաւորութ՟ին Խոսրով՝ որդի նորին, յերկրո՛րդ ամի Արտաւանայ՝ Պարսից Արքայի։ և նո՛յն հետայն՝ միաբանեալ զզօրս Հայոց՝ անցանէ ընդ լեա՛ռնն մեծ՝ վրէ՛ժս պահանջելով զմահուա՛ն Հօրն. և վանեա՛լ սրո՛վ և գեղարդեամբ զհզօրսն զա՛յնոսիկ զա՛զգսն։ Մի՛ ’ի հարիւրոց յամենեցունց պատանդս առնու. և զիւրո՛յ տէրութ՟ենն նշանակ՝ արձան հաստատէ՝ Հելլենացի՛ գրով. ոպ՟ զի՝ յա՛յտ լիցի ընդ հնազանդութեամբ լինիլ Հռովմայեցւոց։

Գլուխ կ՟գ 63

Ասէ ուստի՞ շարայարէ պատմէ։

Ցուցէ՛ մեզ զայս Բարտէծան՝ որ յեդեսեայ։ քանզի՝ նա՛ յաւուրս Վերջնո՛յն Անտոնինոսի երևեցաւ Պատմագրող՝ որ յառաջ աշակե՛րտէր Աղանդին Վալենտինոսի, զոր յետոյ՝ անարգեա՛լ՝ յանդիմանեաց, ո՛չ գոլով ’ի ճշմարտութիւն, այլ՝ միայն ’ի նմանէն զա

տու

տուցեալ՝ այլ հերձուած յարդարեաց յինքենէ. սակայն՝ զպատմութիւս ոչ ստեաց, զի՝ էր այր կորովի բանիւք՝ որ՝ և առ Անտոնինոս համարձակեցաւ գրել թուղթ, և բազում ասացուածս արար ընդդէմ Աղանդին Մարկիանացւոց՝ և բաշխից, և կռոց, պաշտաման՝ զոր 'ի մերում աշխարհիս. վասն զի՝ եկն նա այսր, ոչ՝ զի աշակերտել զոք կարասցէ 'ի Խուժ Հեթանոսաց. և իբրև ոչ ընկալեալ եղև, եմուտ նա յԱմուրն յԱնի՝ և ընթերցաւ զՄեհենականն պատմութի. յորում, և ըզգործս Թագաւորացն՝ յաւելլով իւր՝ և որ ինչ առ իւրովն էին. և փոխեաց զամ 'ի Լեզու Ասորի. որ և անտի՝ յեղաւ 'ի Յոյն բան. յորում պատմէ 'ի Մեհենիցն պաշտամանց Մեծին Տիգրանայ՝ Արքայի Հայոց, պատուել զգերեզման Եղբօրն իւրոյ՝ Մաժանայ Քրմապետի 'ի Բագնայցն Աւանի՝ որ 'ի Բագրեանդ Գաւառի. Բագին 'ի վր գերեզմանին շինեալ՝ զի՝ 'ի զոհիցն՝ ամանցաւորք վայելեսցեն, և ընդունիցին Հիւրք երեկօթիւք: յորում, և զկնի՝ Վաղարշ Տօն Աշխարհախումբ կարգեաց 'յսկզբան ամին նորոյ՝ 'ի մուտս Նաւասարդի։ Յայսմ պատմութենէ առեալ մեր՝ երկրորդեցաք քեզ 'ի Թագաւորութենէն Արտաւազդայ մինչև ցը՝ անձն Խոսրովու։

Պրակ Ծզ 56

Նրբէ, որպէս՝ Ագաթանգեղոս պատմէ համառօտ։

Որպէս ասացաք՝ 'ի Վաղարշայ առնուլ զԹագաւորութիւն Խոսրով՝ Որդի նորին, Հայր Սրբոյն՝ Մեծին Տրդատայ։ յաղագս որ՝ և Համառօտհմիցն՝ կա՛րճ 'ի կարճո՛յ իմն անցանելով՝ Աջո՛ղ Քարտուղա՛րն Տրդատայ՝ Ագաթանգեղոս՝ պատմէ փո՛քր՝ 'ի շատէ զմա՛Հն Արտաւանայ՝ Պարսից Թագաւորին. և զբառնալ Թագաւորութե̃ն Պարթևաց յԱրտաշրէ՝ որդւոյ Սասանայ. և զնուաճե՛լն Պարսից՝ ընդ ձեռա՛մբ նր̃, և զքինախնդիր լինել Խոսրովայ՝ Հօր Տրդատայ. և ասպատակաւ հինից աւերել զն̃ Պարսից՝ և Ասորեստանեայց։ Յետ որոյ, ասէ Թէ՝ յղեա՛ց Խոսրով յիւր բնիկ աշխարհն՝ 'ի կողմանս Քուշանաց, զի՝ իւր Տոհմայինքն ՚ի թիկունս հասցեն։ այլ՝ նք, ասէ՝ չլինէին ունկնդիր, զի՝ հաւանեալք՝ և միամտեալք էին ընդ Տէրութիւնն Արտաշրի, քան՝ ընդ Տէրութիւն իւրեանց Ազգատոհմին, և Եղբայրութեն։ և եթէ՝ Խոսրով՝ առանց նց՝ վրէժ պահանջէ. և զնովիմբ ածել՝ ասէ, թէ՝ ամս տասն՝ ստէպ ստէպ զայս օրինակ՝ աւար առեալ՝ զերկիրն ամ յապականութի դարձուցանէր։ Ասէ ապա՝ և զգալն Անակայ՝ նենգութբ հրապուրեալ ՚ի խոստմունս Արտաշրի, որ ասացն, թէ՝ զբուն պատուական՝ զձեր սեպհական Պալհաւն զայն անդրէն դարձուցից ՚ի ձեզ. վո որոյ՝ յանձն առեալ Անակայ՝ սպանանել զԽոսրով։ Արդ՝ թէպէտ և Ագաթանգեղոս՝ այսմ համառօտ էանց ընդ այս. բայց՝ ես հաւանեալ եմ ձեզ, և յերկար առնել զՊատմութի ժամանակիս այսորիկ՝ ճառելով յիսկզբանէն, և ճշմարիտ ապացուցածովք՝ հոծ և խիտ։

Գլուխ կե 65

Զ Թագաւորաչն Աշխէն, Յորդէ Յեղք

Ցեղք Պարթևականք որոշեցան։

ՅԱդամայ քսաներորդ առաջներորդ Նահապետ մեզ զԱբրահամ, Աստուածայինքն ցուցանեն Պատմութիւնք՝ և 'ի նմանէն եղեալ զազգրդ Պարթևաց։ քանզի՝ ասէ, յետ մեռանելոյն Սառայի՝ առեալ Աբրահամու կին զՔետուրայ. յորմէ ծնան Նմրան, և եղբարք նորա. զորս 'ի կենդանութեան իւրում, Աբրահամ մեկնեաց յԻսահակայ՝ արձակելով յերկիրն Արևելից, յորոց սերեալ ազգ Պարթևաց. և 'ի նոցանէ Արշակ Քաջ՝ որ ապստամբեալ 'ի Մակեդոնացւոց, թագաւորեաց յերկրին Քուշանաց ամս՝ երեսուն, և մի. և յետ նորա՝ որդին նորա Արտաշէս ամս, 26. ապա Արշակ՝ նորին որդի՝ որ կոչեցաւ՝ Մեծ, որ զԱնտիոքոսն էսպան, և զՎաղարշակ զեղբայր իւր՝ Թագաւոր Հայոց կացոյց, երկրորդ իւր առնելով. և ինքն չուեաց 'ի Բահլ. հաստատեաց զթագաւորութիւնն իւր։ Վասն որոյ՝ Զարմքն նորա՝ Պահլաւիկք անուանեցան, որպէս՝ և եղբօր նորա Վաղարշակայ՝ 'ի Նախնւոյն անուն, Արշակունիք. և են Թագաւորք Պահլաւիկք այսոքիկ։ Յետ Արշակայ Մեծի, առնու զթագաւորութ̃ին Արշական՝ յերեք տասաներորդ ամի՝ Վաղարշակայ Ա. թգ̃ւորի Հայոց, ամս 30. ապա՝ Արշակ՝ ամս, 31. յետ որոյ՝ Արշէզ՝ ամս, 20. ապա՝ Արշաւիր՝ ամս, 46. Սորա լինին որդիք երեք՝ և դուստր մի, որպէս՝ յառաջագոյնն ասացի. որոց անուանքն, Անդրանկանն՝ Արտաշէս կոչիւր, և Երկրորդին՝ Կարէն, և Երրորդին՝ Սուրէն, և դուստրն՝ անուանեալ Կոշմ։ Արդ՝ յետ հօրն վախճանելոյ, կամ եղև Արտաշիսի՝ ազգաւ 'ի վեր եղբարցն թագաւորել. զոր յանձնառեալ եղբարցն՝ ոչ առաւել ողոքականօք բանիւք, և պատրողօք՝ քան թէ՝ սաստիւ նուաճեալ նորա։ Եւ Աբգիրու պայման ուխտի, և դաշինս 'ի միջի հաստատեն թագաւորել Արտաշիսի՝ հանդերձ իւրովք ծննդովք։ իսկ եթէ՝ հատցին զարմք նր̃, եղբարցն մատչիլ 'ի թագաւորութիւնն՝ ըս̃ կարգի Աւագութ̃են։ և Արտաշիսի զայս 'ի նոյանէ գտեալ՝ Պատուաւս պարգևէ, ազգ ընտ̃ սերելով յանուն իւրաքանչիւր. և 'ի վերոյ՝ քան զա̃մ նախարարութ̃իս կարգեալ.

գեալ՝ զԿաինականն 'ի վեր պահելով զանուանս ազգերն, զի՝ կոչեցին այսպէս։ Կարենեան Պահլաւ. Սուրենեան Պահլաւ. և քոյր նց՝ Ասպահապետեան Պահլաւ. քանզի՝ 'ի վերայ զօրացն էր այր նր։ և այսու կարգաւորութբ՝ ձգեցան բազում ամս մինչև՝ վերացաւ 'ի նոցանէ Տէրութիւն Աայց՝ մի աստանօր բամբասեսցես զմեզ՝ իբրև՝ զաւելագործակ, որպ թէ՝ զմի անգամ պատմեալսն, դարձեալ ասասցաք. այլ՝ գիտեա, զի՝ ախորժելով վս Ազգականաց Լուսաւորչին Մերոյ, քաջահմուտ կամեցեալ լինել՝ կրկնագրեցաք երկրորդելով։

Պրակ կզ 66

Ասէ, թէ որք՝ Յետ Արտաշրի՝ Պարսից Արքայք, մինչև ց՝ Վռամշապուհ

Արդ՝ անցցուք այսուհետև՝ 'ի թիւ Թագաւորաց Յետ Արտաշրի, մինչև ց՝ բառնիլ 'ի նոցանէ Տէրութեանն։ Յետ Արշրի, որ՝ ասացաք, թագաւորէ Արտաշէս՝ ամս, 33. Դարեհ՝ ամս՝ 30. Արշակ՝ ամս՝ տասն, և ինն. Արտաշէս՝ ամս՝ 20. Պերոզ՝ ամս՝ երեսուն, և երեք. Վաղարշ՝ ամս 50. Արտաւան՝ ամս 31։ Զսա սպանեալ Ստահրացւոյն Արտաշրի՝ որդւոյ Սասանայ, բառնալով զթագաւորութ՟ն Պարթևաց՝ հանելով 'ի նոցանէ զաշխարհն ժառանգութեան։

Բազում են ժամանակիս այսորիկ՝ Պատմօղք 'ի Պարսից՝ և յԱսորեստանեայց, Աղուանք՝ և Յունաց. քանզի՝ 'ի սկզբան թագաւորութ՟ն Պարթևաց, մինչև ց' դադարումն ընդ Հռոմայեցւոց՝ կալան գո՛րծ. երբեմն՝ հնազանդութ՟բ, և երբեմն՝ պատերազմաւ. զոր պատմէ Փալէֆատոս, և Պորֆիւր՝ և Փիլիմոն, և այլք բազումք. բայց մեք առասցուք 'ի Սատենէն, զոր եբեր Խոռոհբուտ զԲարսումայի։

Պրակ կ՟է 67

Թէ՝ զինչ տառապելք Պաւղոսեանց։

Այս Խոռոհբուտ՝ Դպիր եղեալ Շապհոյ՝ Թագաւորի Պարսից. և 'ի ձեռս Յունաց անկեալ՝ յորժամ, Յուլիանոս (որ և Բառուատօմն) զօրու հանդերձ՝ 'ի Տիզբոն չոգաւ. և 'ի մեռանելն նր՟, և Յոբիանու, 'ի Յոյնս՝ է Արքու նական Սպասաւորսն էին, և Մերոյ Հաւատոյս դաւանեալ՝ անուանեցաւ՝ Եղիազար․ և Յոյն Լեզու ուսեալ՝ պատմագրեաց զգործս Շապհոյ, և Յուլիանու․ ընդ նմին՝ և՝ Թարգմանեաց զԱռաջնոյն Պատմութիւն՝ Մատեան մի, որ գերեկէց իւր լեալ՝ Բարսումայի ուրումն անուամբ, զոր՝ Պարսք աստ Սոհուն կոչեն․ յորմէ մեր ուսեալ՝ երկրորդեմք այժմ 'ի գիրս յայս, Թողլով զառասպելաց նոցա բարբաջմունս․ քանզի՝ անտեղի է՝ մեզ այժմ երկրորդել զառասպելսն․ յաղագս երազոյն փափագոյն, և արտադատութեց հրոյն մանուածոյ՝ որ 'ի Սասանայ, և պատումն զհօտիւն, և լուսնակն՝ և ախտարմաղացն յառաջ ասացումն, որ են Վրօդէք․ և որ ինչ զկնի այսոցիկ՝ պոռնկական խորհուրդն Արտաշրի հանդերձ սպանութե՟քն․ և անմիտ հանճարաբանութիւն Մոգին դստեր, վ՟ն նոխազին՝ և որ ինչ այլն ա՟մ․ նա և այծի դիեցումն մանկանն ընդ հովանեաւ արծուոյն, և գուշակումն ագռաւուն, և գերապանծին պահպանութե՟ առիւծուն՝ հանդերձ

ար

արբանեկութե՟ գայլուն. և միամարտութե՟ն առաքինութի՟, և որ ինչ այլաբանութե՟ն բերէ կարգ։ Այլ մեք միայն զստոյգն, որ ինչ ճշմարտութե՟ն վայելէ՝ պատմեսցուք։

Գլուխ ԿԸ 68

Առաջին արշաւանք Խոսրովայ յԱսորեստան՝ յորում համարէր օգնել Արտաւանայ։

Քանզի՝ յետ սպանանելոյն զԱրտաւան՝ և թագաւորելոյն Արտաշրի՝ որդւոյ Սասանայ, երկու ցեղք Պահլաւին, որ Ասպահապետին՝ և Սուրենեանն Պահլաւն անուանին, նախանձ պահելով ընդ ցեղին իւրեանց հարազատութե՟ն՝ որ է Արտաշիսին, կամաւ յանձն առին՝ թագաւորել Արտաշրի՝ որդւոյ Սասանայ։ Այլ մտերմութի՟ պահելով առ եղբայրութե՟ն տան Կարենի Պահլաւին, ընդդիմացան պատերազմաւ Արտաշրի որդւոյ Սասանայ։ Բայց՝ յառաջագոյն իբրև՝ լուաւ զաղմուկ շփոթին Թագաւորն Հայոց Խոսրով՝ դիմեաց յօգնականութի՟ Արտաւանայ՝ եթէ, հնար լիցի՝ աճապարել ապրեցուցանել միայն զԱրտաւան. և

մի

միջամուխ եղեալ յԱսորեստան՝ լսէ զբօթ մահուանն Արտաւանայ, և զմիաբանութիւն ամ̃ Պարսից զօրաց և ՙՆախարարաց. նաև՝ զիւրոյ ազգացն Պարթևաց, և Պալհաւկաց՝ բա՛ց ՚ի Ցեղէն Կարենեան. Առ որ հրեշտա՛կս առաքեալ Խոսրովայ՝ դառնայ յաշխարհ իւր մեծաւ տրտմութբ̃, և զկծանօք։ և նո՛յն հետայն՝ փո՛յթ ընդ փո՛յթ ա՛զդ առնէ Փիլիպպոսի՝ Կայսեր հռոմայեցւոց օգնականութիւն ՚ի նմանէ խնդրելով։

Գլուխ կ̃թ 69

Խոսրովայ օգնականութիւն գտեալ ՚ի Փիլիպպոսէ՝ դէմ ՚ի վերայ Արտաշրի որդւոյ Սասանայ պատերազմի։

ԱՂմուկ շփոթի խռովութե՛ լեալ ՚ի թագաւորութեանն Փիլիպպոսի, ո՛չ կարաց ՚ի հռոմայեցւո՛ց գնդացն պարապեցուցանել առ ՚ի զօրավիգն լինել Խոսրովայ. այլ՝ օգնէ՛ նմա ՚ի ձեռն գրոյ, հրամայելով սատարել յամ̃ կողմանց. որոց ընկալեալ զայսպիսի հրաման՝ հասանեն նմա՛ յօգնականութի̃ յեգիպտոսէ, և յանապատէն մինչև ՚ի ծովեզերսն Պոնտոսի։ Որոյ գտեալ զան չափ բազմութիւն՝ խաղայ 'ի վ՟ր Արտաշրի, և ճակատս տուեալ՝ 'ի փախուստ դարձուցանէ, թափելով 'ի նմանէ զԱսորեստան, և զայլ Արքայանիստ աշխարհս։ Դարձեալ յղէ 'ի ձեռն Հրեշտակաց առ իւր Տոհմայինսն Պարթևս՝ և Պալհաւիկ ազգս՝ և առ համօրէն զօրս աշխարհին Քուշանաց, զի՝ առ նմա եկեալ՝ վրէժս յԱրտաշրէ պահանջեսցեն, զի մի՝ յինքեանց Տէրութենէն հեռասցին։ Իսկ՝ նց՟ ոչ առեալ յանձն յառաջ ասացեալ Յեղին, որ Ասպահապետ անուանին, և Սուրենեան· դառնայ Խոսրով յաշխարհս մեր, ոչ այնչափ ուրախացեալ ընդ յաղթութիւն, որքան՝ ընդ վերջակացութիւն Ազգականացն դժգմեալ։ Յայնժամ, հասանեն առ նմա ոմանք 'ի Հրեշտակաց իւրոց, որք 'ի Պատուականագոյն ազգքն երթեալ էին, 'ի խորագոյն աշխարհն՝ 'ի նոյն ինքն Բալհ· բերին նմա համբաւ, եթէ՝ Ազգական քո Վեհասաճան՝ հանդերձ ցեղիւն իւրեանց՝ Կարենեան Պալհաւին՝ ոչ հնազանդեաց Արտաշրի· այլ՝ 'ի կոչ քո դիմեալ՝ գայ առ քեզ։

Դար

Գլուխ Հ 70

Դարձեալ յարձակումն Խոսրովայ 'ի վերայ Արտաշրի, առանց Հռօմայեցւոց օգնականութեան ։

Թէպէտ՝ և յոյժ զուարճացաւ Խոսրով ընդ լուր գալստեան Ազգականացն, սակայն՝ ոչ յամեաց ուրախութիւնն, ընդ հուպ հասանելով բօթն, թէ՝ ինքնին Արտաշիր հետամուտ եղեալ՝ միաբանութեամբ զօրացն, կոտորեաց զամենայն Ցեղս Կարենեան Պալհաւին, ջնջելով զամ՟ արու յերիտասարդաց, մինչև՝ ց'ստնդիայս. բայց 'ի միոյ Տղայոյ, զոր առեալ Մտերիմ Տան նորա Բուրդ՝ փախեաւ յաշխարհն Քուշանաց, առ հզօրս ոմանս նր հասուցանելով ազգայինս. զոր բազում ջանիւք խնդրեալ զմանուկն 'ի ձեռն առնուլ՝ ոչ կարաց յազգականացն կուսակցելոց. մինչև՝ յոչ կամաց երդնուլ անկասկած լինել մանկանն. վ՟ որոյ՝ բիւր առասպելք յօդեցին Պարսք զնմանէ, անբանից սպասաւորել մանկան։ Սա՛ է Պերոզամատ՝ Նախնի Մեծի Ազգին Կամսարականաց, զոր յի

քում

րում տեղւոջն պատմեսցուք։ Այլ այժմ, մեք որ ինչ զկնի կոտորածի ազգին Կարենեան պալհաւին· զորոյ վրէժս ոչ Թուլագոյնս խնդրեաց Թագաւորն Հայոց Խոսրով· Թեպէտ՝ և վախճանեալ Փիլիպպոսի, և չփոխեալ Թագաւորութ͞ին Հռովմայեցւոց, մարդ 'ի մարդոյ առնլով զՏէրութ͞ին սակաւաժամանակեայ· Դեկչիոս՝ և Գաղղոս՝ և Վաղերիանոս Կայսերք, զորք ոչ օգնեցին նմա։ Սակայն՝ Արքայ Խոսրով՝ իւրովք զօրօք սիրելովք յարեցելովք յինքն, և Հիւսիսային ազգօք, Արտաշրի յաղթեաց՝ հալածական առնելով մինչև՝ 'յաշխարհն Հնդկաց։

Գլուխ հա͞ 71

Յաղագս Դաւաճանեան Անակայ՝ և լինելութ͞ե Սրբոյն Գրիգորի։

Արդ՝ փախուցեալ 'ի Խոսրովայ Արտաշրի՝ մերձ 'ի յաշխարհն Հնդկաց՝ և նեղեալ յոյժ· բազում խոստմունս Նախարարացն առնէր, եթէ՝ ով բուժեսցէ զնա յայնմանէ· եթէ՝ հնարիւք դեղոյ, եթէ՝ գաղտնի խողխողմամբ սրոյ, պէս պէս պարգևս խոստանայր՝ տալ։ մանաւանդ Պարթևազանցդ, ասէ՝ դիւրահնար գոգցես՝ 'ի ձե՛ռն կեղծաւո՛ր սիրոյ զզաւե՛լն՝ ազգականութե՟ անուամբ պատրել, 'ի դուստ վստահանայ։ խոստանա՛յր զբու՛ն տուն դարձուցանել 'ի նմ՟՝ որ պալհաւու՛ն կոչիւր՝ զարքայանիստ քաղաքն զԲահլ, և զա՟մ աշխարհն Քուշանաց. նա՛ և՝ թագաւորութե՟ ձե՛ւ՝ և չու՛ք խոստանայր. և զհասարակ արեաց ընդ իւրով ձեռամբ, երկրորդ իւր լինել։ Յոր հրապուրեա՛լ Անակ՝ որ 'ի Ցեղէն Սուրենեանն պալհաւէ, յանձն առնու ըսպանանե՛լ զԽոսրով։ և հաւատուածի պտ՟ճառաւ փախստական լինի յԱրտաշրէ, և զհետ մտանելով զօրա՛յն պարսից առ 'ի պատճառէ, ո՟պ թէ՝ փախստական վարելով զնա՛ ընդ Ասորեստան, հանեն զնա՛ առ եզերբ սահմանա՛ցն Ատրպատականի ընդ մէջ Կորդուայ։ զոր լուեալ մեծին Խոսրովայ յՈւտէացւո՛ց Գաւառին, իբր՝ զԿարենեանցն կարծեցեալ եկաւորութ՟ի. գու՛նդ առաքէ՝ յօգնականութ՟ի Անակայ, ածեն զնա՛՝ հրամանաւ Թագաւորին՝ 'ի

Գաւ

Գաւառն, որ անուանեալ կոչի՝ Արտազ, 'ի տեղի դաշտավայրս՝ ուր յայտնեցան՝ Նշխարք Սրբոյ, և Մեծի Մերոյ Առաքելոյն Թադէի: և աստ ասեմ զսքանչելի զրոյցս զարմանալի Ծերունւոյ, որ ասէր, եթէ՝ 'ի նախնեաց ունիմ սովորութ՟ի, որդի 'ի հօրէ առնլով զյիշատակ զրուցացս այսոցիկ. ո՟պ՝ Ողիմպիոդորայն, յաղագս՝ Տարօնոյ՝ և Սիմն կոչեցեալ լերինն: Արդ՝ 'ի բնակէն Անակայ 'ի դաշտին Արտազու՝ պատահէր նմա տեղի Օթարանին՝ մօտ առ Գիրս Սրբոյ Առաքելոյն, ո՟պ թէ 'ի ներքսագոյն Որսկապանին խորանին. և անդ ասեն՝ զյղութ՟ի Մօր Սրբոյ, և Մեծի Մերոյ Լուսաւորչին: վասն որոյ՝ զնորին Առաքելոյ Շնորհս ընկալեալ, որ առ Հանգստարանաւ նորին՝ զլինելութ՟ի էառ. զնորին ելից զՀոգևոր Մշակութ՟են պակասութիւն: Եւ յետ անցանելոյ երկուց տարեաց գալստեանն Անակայ 'ի Հայս, յերրորդումն սպանանէ զԽոսրով. և մեռանի ինքն, և իւրքն ամ՟, պահեալ 'ի Խնամոցն Ա՟յ զնա միայն. որ ակնարկութեամբն Ա՟յ, և շնորհօք

Առաքելոյն, աստեղծանել ասեմք՝ կամ, լուսաւորել յանդգանդի մօրն զԱռաքելութեան Շնորհս նմա ՚ի ձեռն տալով։ իսկ՝ զմնացեալսն ՚ի Զրուցացս, ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս։

Գլուխ ՀԲ 72

Յաղագս՝ Ֆերմելիանեայ Եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոյ, և Պատմութեանց նորին։

Ֆիրմելիանոս Եպիսկոպոս Կապադովկացւոց, էր այր սքանչելի յՈւսումնասիրութիւն. որ և ՚ի տղայութեան իւրում առ Որոգինէս երթեալ՝ վարժեցաւ. սա բազում խօսս արար. յորոց մին է՝ Պատմութի հալածանաց Եկեղեցւոյ, որ յառաջն յաւուրս Մաքսիմիանոսի՝ և Դէչիոսի յարեաւ, և որ հուսկ յետոյ ց՚ամն Դիոկլեցիանոսի, շարայարեալ ՚ի նա և զգործս Թագաւորաց, յորում ասէ՝ վեշտասաներորդ Եպիսկոպոս կացեալ Աղեքսանդրացւոց Պետրոս՝ վկայեալ յիններորդ ամի հալածանացն, գրէ զբազումն վկայեալ՝ և Խոսրովու ՚ի մերում աշխարհիս. համայն և յետ

նո

նորա Ստարք յՍտարրայ: բայց՝ գլի ոչ ճշմարտութ՟բ ուղղով պատմէ. և ոչ զանուանսն նշանակէ, կամ զտեղիս կատարմանցն՝ ոչինչ կարևորագոյնս համարեցաք երկրորդել: Նոյպէս՝ և զԱնտոնինէ, որդւոյ Սևերեայ ասէ՝ պատերազմեալ ը՟ Վաղարշակայ, Արքայի Պարսից 'ի Միջագետս, և մեռանիլ 'ի մէջ Եդեսեայ՝ և Խառանու. և մերոյն Խոսրովու ոչ յոք հակամիտեալ: Իսկ՝ որ ինչ զկնի մահուն Խոսրովու մինչև՝ 'ի թագաւորութիւնն Տրդատայ, 'ի ժամանակս անիշխանութեան պատմէ, ստոյգ համարելով՝ երկրորդեմք քեզ համառօտ բանիւք: Բայց՝ և որ ինչ 'ի թագաւորութեան՝ և յետ նորա, ոչ հեղգութ՟բ՝ և անզգուշաբար վրիպեալ. և ոչ կամաւոր սխալանօք 'ի սմա յարմարեալ բան՝ այլ որ ինչ 'ի յիշատակաց 'ի Գիր Մատենից Յունաց: Իսկ՝ ըստ նմանեացն ապա, և որ ինչ 'ի համբաւուց Արանց Իմաստնոց ստուգապէս տեղեկացեալ՝ արդարաբար քեզ գրուցեցաք:

Գլուխ ՀԳ̃ 73

Պատերազմն 'ի մէջ Արտաշրի, և յաղթել Կայսեր Տակիտոսի։

Ասէ նոյն այր՝ թէ յետ սուսերահարն լինելոյ Խոսրովու միաբանեալ՝ Նախարարք Հայոց, ածեն իւրեանց յօգնականութիւն զզօրս Յունաց, որ 'ի Փռիւգեայ՝ Պարսից ընդդիմանալ՝ և պահե՛լ զաշխարհս և խոկո՛յն ազդեցին Աւրելիանոսի կայսեր։ Բայց, քանզի՝ գունդք անցին ը̃ Դանուբ գետ, զբազում գաւառս գերի վարեցին, և զԿիւկլադայ Կղզիս աւար առին։ Վասն որոյ՝ ոչ մերոյ աշխարհիս ժամանէ թեւարկէ՛լ Աւրելիանոս՝ նա՛և՝ ո՛չ յերկարէ՛ր զկեանսն, առնլով զթագաւորութիւնն Կլավդիոս՝ և յե՛տ նր̃, Աւրելիոս՝ հո՛ւպ ընդ հուպ փոխանորդելով զմիմեանս. այլ և՝ ամսականօք, Տիտոս և Տակիտոս թագաւորեալ և Փլորիանոս եղբարք։ վ̃ս որոյ՝ համարձակաբա՛ր արշաւեա՛լ 'ի մէջ Արտաշրի, և զզօրս Յունաց փախստական արարեալ գերելով՝ զյոլով մասն աշխարհիս յաւէ՛ր դարձուցանէր։ յորում գաղթեալ ՙՆախարարք Հայոց՝ հանդերձ ազգաւն Արշակունեաց, ՚ի Յոյնս ապաւինին· յորոց մի էր և Արտաւազդ Մանդակունի, որոյ առեալ զՏրդատ որդի Խոսրովու՝ ՚ի դուռն Կայսեր հասուցանէր։ Սակս որոյ՝ հարկաւորեալ Տաչիտոս՝ ը̅ դէմ Արտաշրի գայ զկողմամբք Պոնտոսի· և զեղբայր իւր զՓլորիանոս՝ յոլով գնդաւ ՚ի Չիլիչիա արձակէ։ Իսկ՝ Արտաշիր հասեալ ՚ի Տակիտոս՝ ՚ի փախուստ դարձուցանէ, որ սպանաւ ՚ի Ճանիւս Պոնտացւոց, որ են Խաղտիք· նոյնպէս՝ և եղբայր ն̅ր Փլորիանոս՝ յետ ութսուն և ութ աւուր ՚ի Տարսոն։

Պրակ հդ̅ 74

Յաղագս խաղաղութե̅ Պարսից, և Յունաց· և շինելոյ Արտաշրի զՀայս, յամս անիշխանութեանն։

ՌԱյս՝ Յունաց թագաւորեաց Պրոբոս՝ և խաղաղութի̅ արարեալ ընդ Արտաշրի, բաժանէ զաշխարհս սահմանադրութբ̅ փոս գործելով՝ և Արտաշրի նուաճեալ զազգ Նախարարացն, զգաղթեալսն անդրէն դարձուցանէ՝ բայց ՚ի ՙՆախ

արա

արարէ ումեմնէ, որոյ անուն Օտայ կոչիւր՝ 'ի Տոհմէն Ամատունեաց, որ փեսայ էր ազգին Սլկունեաց, և Սնուցօղ Խոսրովիդխտոյ՝ Դստեր խոսրովու, որջացեալ յամուրն Անի՝ իբր 'ի Կաղաղի հանդարտութե՟ ղօղեաց։ Իսկ Արտաշիր գեղեցկապէս յարդարեալ զերկիրս Հայոց, 'ի կարգն առաջին հաստատէր։ Նա և՝ զԱրշակունեան՝ զմեկուսացեալսն 'ի Թագէն, և յԱյրարատ բնակելոյ, կարգէ 'ի նոյն տեղիս մտիւք՝ և ռոճկօք, ոչ՝ և էինն. և զՄեհենիցն պաշտամունս առաւել ևս յորդորէ. այլ և՝ զհուրն Որմզդական, որ 'ի վ՟ր Բագնին՝ որ'ի Բագաւանի, անշէջ հրամայէ՝ լուցանել։ Բայց՝ զԱնդրիսն, զորս արար Վաղարշակ իւրոց Նախնեացն՝ հանդերձ արեգակամբ, և լուսնիւ՝ յԱրմաւիր՝ և փոխեցաւ'ի Բագարան, և դարձեալ յԱրտաշատ, զայնոսիկ փշրէ Արտաշիր։ և զերկիրս գրով՝ ը՟ հարկաւ իւրով արկանէ, և ամենևիմբ զիւր անուն հաստատէ։ Նա և՝ զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ՝ զքարինս յերկրէ կացուցանելով՝ նորոգեաց, և յիւր անուն փոխեալ՝ Արտաշիրական անուանեաց։ Եւ կալաւ զաշխարհս մեր, ո՛չ՝ մի՛ յաշխարհացն իւրոց պարսիկ Գործակալօք, ամս քսան, և վեց. և յե՛տ նորա, նորին որդին՝ որ անուանեցաւն Շապուհ, որ լոի՝ Արքայի Մանուկ, ՝ց՚ թագաւորելն Տրդատայ ամ մի։

Պրակ ՀԵ 75

Կատարումն ազգին Մանդակունեաց յԱրտաշրէ։

Բայց Արտաշրի լուեալ, թէ ոմն ՚ի Նախարարացն Հայոց՝ առեալ զմի յորդւոցն Խոսրովու՝ փախուցեալ ապրեցոյց ՚ի դրունս Կայսեր հասուցանելով. քննեալ՝ թէ, ով ոք նա իցէ։ եգիտ հասու, թէ՝ նա է Արտաւազդ յազգէն Մանդակունեաց. հրամայեաց՝ զամ ազգն ջնջել սատակմամբ. քանզի՝ ՚ի գաղթելն Հայոց յԱրտաշրէ, գաղթին և նոքա ընդ Ցեղս այլոց Նախարարացն. և ՚ի նուաճելն Արտաշրի զայլսն, դառնան և նք, և սատակին սրով ամենեքեան։ Բայց զԿոյս մի գեղեցկադիմակ՝ ՚ի քերցն Արտաւազդայ՝ գողացեալ Տաճատայ ուրումն

րումն, որ յազգէն Աշոցան, 'ի շաւակէ Գուշարայ Հայկազնւոյ՝ փախուցեալ՝ 'ի Կեսարացւոց քաղաքն ապրեցուցանէ. ամուսնաւորեալ ը̅ ինքեան, մ̅ն չքնաղ կերպարանիւն։

Գրակ Հզ 76

Յաղագս Նահատակութեանն Տրդատայ՝ յամս անիշխանութեանն Հայոց։

Պատմէ զՆահատակութեցն Տրդատայ, նախ 'ի մանկութեն՝ յերիվար կամակոր աշտանակեալ և կորովի ձիս վարել. և զէնս շարժել յաջողակաբար. և այլ պատերազմականս ուսանիլ ախորժակս, ապա՝ ըստ Պէլլէսէպոնտացւոց Սեհենական հրամանին Հեփեստեայ, 'ի մրցանակս ագոնին առաւելեալ քան զԿիլիտոս Տրօրոս Հռոդացի. որ զվզէ և եթ՝ կալեալ յաղթէր։ դարձեալ՝ և քան զԿրօնոս Արգիացի, զի նա զկճղակ եզինն թափեաց. իսկ՝ սա զերկոցունց ցլուց վայրենեաց՝ միով ձեռամբ կալեալ զեղջիւրէն թափեաց՝ հանդերձ ընդ վզեան ջախջախմամբ։ Եւ 'ի ձիընթացս մեծի Կարկիմին կառավարել կամեցեալ, 'ի հմտութենէ հակառա կորդեն ոստուցե՛ն՝ յերկի՛ր անկաւ. և բո՛ւռն հարեալ՝ արգել զկա՛ռսն, ընդ ո՛ր ամենեքին զարմացան: Նա՛ և 'ի պատերազմել ընդ զօ՛րս Պրոբոսա՛յ՝ եղև սո՛վ սաստիկ, և ո՛չ գտելոյ շտեմարանաց. յարեան 'ի վերայ զօ՛րքն՝ և սպանին զնա. նո՛յնպէս՝ և 'ի վր՟ ամ՟ Իշխանացն դիմեցին: Իսկ՝ Տրդատ միայն ընդդէ՛մ կացեալ՝ չէթո՛ղ զոք մտանել յապարանսն Լիկիանոսի, առ որում՝ ինքն Տրդատն էր: Բայց՝ Կարո՛ս հանդերձ որդւո՛վքն Կարինեաւ՝ և 'Նումերիանոսիւ թագաւորեաց. և զօրաժողովեալ՝ ե՛տ ճակա՛տս ընդ Պարսից Արքայի՛ն, և յաղթեալ՝ դարձաւ 'ի Հռոմ: Սա որոյ՝ բազո՛ւմ ա՛զգս 'ի սատարութիւն կալեալ Արտաշրի՝ թիկունս արարեալ զանապատն Տաճկաստանի, դարձեալ՝ ե՛տ ճակա՛տս ընդ զօ՛րս Հռովմայեցւոց կրկին՝ աստի՝ և անտի՛ Եփրատու, յորմէ սպանաւ Կարո՛ս 'ի Ցիրինոն: 'Նո՛յնպէս՝ Կարինոս՝ որ 'ի Կոռնակո՛յ չոգաւ յանապատ, ընդ որում և Տրդա՛տ. և սատակեցաւ նա՝ և զօ՛րն, և մնացեա՛լքն 'ի փախուստ դարձան. յորում և Տրդա տայ վիրաւորեալ՝ երկվա՛րն ո՛չ անձապարեաց՝ փախչել ը͞ն փախստեա՛յսն. այլ՝ առեալ զզէնն իւր՝ և զկազմա՛ծ ձիոյն, ՚ի լե՛ռ ընդ լայնատարած խորայատա՛կն անցանէ՝ ընդ Եփրատ, ՚ի բո՛ւն զօրուն իւրեանց՝ ուր Լիկիանոսն էր։ Ընդ նո՛յն աւուրս, լի՛նի սպանանե՛լ զՄամեռիանոս ՚ի Թըրակէս՝ փոխանորդէ զԹագաւորութ͞ին Դիոկղետիանոսի։ Իսկ՝ որ ինչ ՚ի նր͞ ժամանակի՝ Տրդատայ գործք՝ ուսուցանէ՛ քեզ Ագաթանգեղոս։

4

Գլուխ ՀԷ 77

Յայտարարութ͞ին աշխատասէր՝ Անդրէան՝ և Մարտոյ Գրիգորի, և որդւոց նորա. ՚ի Թղթոյն Արտիթեայ Եպիսկոպոսի, որ ձևան հարցմանն Մարկոսի Միայնակեցի ՚ի Յագդիոձանի։

Այր ո՛մն ՚ի Պարսից՝ ո՛չ ՚ի փոքունց՝ և յանշանից, որում անուն էր՝ Բուրդար՝ գնացեա՛լ անտի՝ և եկեալ ՚ի կողմանս Գամրաց, պանդխտեցաւ ՚ի Կեսարեա՛յ. և առեալ կի՛ն ՚ի հաւատացելոց՝ որում անուն՝ Սոփի կոչիւր, զքոյր ուրումն մեծատան՝ որ Եւթաղիոս յորջորջիւր, դարձաւ անդէն գնալ յերկի՛րն կիրն Պարսից՝ հանդերձ կնաւ իւրով. զորոյ զհետ մտեալ Եւթալեայ՝ համոզեալ՝ արգելոյր։ որոց հանդիպեալ Ծննդեան Մերոյ Լուսաւորչին, ըստ պատահման՝ մըտանէ Ստնտու մանկանն. և 'ի հասանել աղխտին, առեալ Եւթալեայ զքո՛յր իւր, և զմա՛յր նորա՝ հանդերձ Մանկամբն, 'ի Կապպադովկացւոց աշխարհն դառնայր։

Այլ զայս ամ̃ գործէ Յառաջատեսութ̃ին Ա.Յ̃, ո՛չ՝ կա՛մք են ասել իմ̃ց բանի, յաղագս՝ որ 'ի մե՛զ փրկութե̃ն ճանապարհ։ ապա թէ ո՛չ՝ որո՞յ յուսոյ ակնունելով՝ ըզՄանուկն Պալհաւիկ 'ի Հռոմայեցւոց իշխանութիւնն սնուցանէին՝ Քրիստոսի ընծայէին հաւատոյ։

Բայց՝ յարբունս հասեալ Մանկանն հասակի, փեսայացուցանէ Հաւատացեալ ո՛մն այր, որում անո՛ւն էր՝ Դաւիթ՝ 'ի Դո՛ւստր իւր Մարիամ. որ յե՛տ երի՛ց ամաց՝ երկո՛ւց որդւոց լինելոյ, 'ի կամա՛ց երկոցունց՝ մեկնեալ 'ի միմեանց՝ զատչէին։ Մարիամ հանդերձ կրսերով մանկամբն՝ 'ի Վանս կանանց երթեալ՝ կրօնաւորէր. որ 'ի յարբունս հասեալ ման

կանն, զհետ միաւորի ուրումն, ո
րում անուն էր՝ Նիկոմաքոս. իսկ
Անդրանիկն առ Պայեկայց մնացեալ,
որ՝ ապա աշխարհաւարեալ՝ ամուս
նացաւ։ Բայց՝ հայրն սր՟՝ Գրիգոր,
անցեալ՝ գնաց առ Տրդատ, զհայրե
նեացն հատուցանել զպարտս. ոչ
պարտէ ասել ճշմարտութ՟ե, զԱռա
քելութեանն վիճակ մերոյ աշխար
հիս, և զՔահանայութեանն՝ հան
դերձ Մարտիրոսութ՟ն վարժե
լով։ Բայց՝ է արդարև հօր Սքան
չելոյ՝ որդիք զարմանալիք առաւ
ել քան՝ զառաւել. զի՝ ոչ նա խնդ
րեաց զորդիսն՝ յորժամ դարձաւ
ընդ Տրդատայ, և ոչ նք՟ չոգան առ
նա. և այն գրեթէ՝ յաղագս երկիւ
ղի հալածանացն. բայց՝ և ոչ 'ի քա
հանայանալն երևեալ՝ փառօք հօրն
պերճացան. վասն որոյ՝ և ոչ նա յա
մեաց 'ի Կեսարիա, այլ՝ փութապէս
դարձեալ՝ 'ի Սեբաստացւոց քաղա
քին անսայր՝ հաւաքել զնիւթ Վար
դապետութ՟ե։ այլ թէ՝ և բազում
աւուրս արարեալ 'ի Կեսարիա, ոչ
ինչ՝ յորոց զմտաւ ածէր՝ առնելոց
էին. Անապատին՝ և Մնացականին
միայն սպասելով. որք ոչ զպատիւն

յին

յինքեանս ձգելին, այլ՝ պատիւն ըզ հետ նոցա ընթացաւ, որպ՝ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս:

Պրակ ՀԸ 78

Եղէ՝ ուստի՞, և ո՞յր որդ՝ ազգ Մամիկոնէից:

Վախճանեալ Արտաշրի՝ որդւոյ Սասանայ, թողու զթագաւորութիւն Պարսից որդւոյ իւրում Շապհոյ: ՚Ի սր՟ աւուրս՝ ասեն եկեալ Նախնի ազգին Մամիկոնէից՝ ՚ի յԱրևելից Հիւսիսականէն, ՚ի Բաջատոհմէն՝ և ՚ի Գլխաւոր աշխարհէ, և ամ՟ աշխարհի Հիւսիսականաց ազգաց, Առաջին ասեմ զՃենաստանեայցն՝ որ ունին զրոյցս այսպիսիս: Յամս կատարման կենաց Արտաշրի, Արբոկ ոմն Ճենբակուր, որպ՝ ասի ՚ի նց՟ լեզուն, պատիւ Թագաւորութե՟. սորա երկու եղբօր որդիք, Բղդոխ, և Մամգոն՝ անուն կոչեցեալ՝ Մեծ Նախարարք: և չարախօսեալ Բղդոխայն զՄամգոնայն, հրամայեաց Արբոկ Թագաւորն Ճենաց՝ սպանանել զՄամգոնն. զոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ գայ ՚ի Կոչ Արքայի. այլ՝ փախուցեալ աղխիւ իւրով՝ անկանի առ

Ար

Արտաշիր՝ Թագաւոր Պարսից։ և Արբոկ Հրեշտակս առաքէ՝ խնդրել զնա, և ՚ի չլսել Արտաշրի պատերազմ ՚ի վ՟ր ն՟ր յօրինէ Թագաւորն Չենաց, և իսկոյն՝ մեռեալ Արտաշրի, Թագաւորէ Շապուհ։ Արդ՝ Թէպէտ և ո՛չ տայ Շապուհ զՄամգոնն ՚ի ձեռս Տեառն իւրոյ, այլ և ո՛չ յԱրեաց երկրին Թողու. բայց ա՟մ աղխիւն իւրով առաքէ զնա իբրև՝ զվտարանդի՝ առ Գործակալս իւր յաշխարհիս Հայոց։ և յղէ առ Թագաւորն Չենաց՝ ասելով՝ Թէ, մի՛ Թուեսցի քեզ դժուարին. զի ՚ի ձեռս քո ո՛չ կարացի տալ զՄամգոն. և վ՟ն զի՝ երդուեալ Հօրն իմոյ ՚ի Լոյսն Արեգական, հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզր երկրի, և ՚ի մուտս Արևու՝ որ հաւասարէ նմին մահու. և արդ՝ մի՛ լիցի պատերազմ ընդ իս, և ընդ քեզ։ Իսկ զի՝ քան զա՟մ Բնակեալս ՚ի վ՟ր երկրի, ասեն՝ խաղաղասէր գոլ զազգն Չենաստանեայց, յանձն առնու՝ առնել զհաշտութիւնն. ուստի յայտնի է, եթէ՝ են խաղաղասէր, արդարև կենասէր ազգ Չենաց։

Սքանչելի և աշխարհն առատու

Թե՟ ամ՟ պտղոյ, և գեղեցիկ բուսովք զարդարեալ՝ քրքմաւէտ, և սիրամարգաշա՛տ, և բազմամետա՛քս· անբաւութ՟ի յամօրայց՝ և հրաշից· և որ էշ այծեմո՛ւնսդ անուանեն ուր հասարակաց կերակուր ասեն՝ զառ մեզ պատուական, և սակաւո՛ւց ճաշակելիս, զփասիան, և զպո՛ր, և որ ա՛յլք այսպիսիք։ այլ՝ զականց՝ և զմարգարտոց՝ ո՛չ ասեն գիտել զհամա՛ր մեծամեծացն· իսկ՝ պատուականք առաւե՛լ զգեստուց, և սակաւուց ագանելիք՝ հասարակա՛ց նո՟յ է զգեստ· և այս յաղագս աշխարհին Չենաց։ Բայց՝ Մամգոնայ յո՛չ կամաց եկեալ յաշխա՛րհս մեր, հանդիպեցաւ գալստեան Տրդատայ, և ո՛չ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ՝ ամ՟ իւրով աղխիւ ընդառաջ գնաց Տրդատայ։ մեծաւ պատարագաւ ընկալաւ զնա Տրդատ։ Բայց՝ ընդ իւր 'ի պատերազմ ո՛չ էած յերկիրն Պարսից· այլ՝ ետ տեղի աղխի՛ նորա, և ռոճի՛կ 'ի կերակուր՝ փոխելով 'ի տեղի 'ի տեղւոջէ ց'բովանդակ ամս։

Գրակ ՀԹ 79

Նահատակութիւնք Տրդատայ ՚ի թագաւորութեան՝ Յառաջ քան՝ զթագաւորելն:

Քանզի՝ ոչ է Պատմութիւն Ճշմարիտ՝ առանց ժամանակագրութեան. վն որոյ՝ և մանրախուզիւ քննեալ, գտաք զթագաւորելն Տրդատայ՝ յերրորդ ամի Դիոկլեցիանոսի, և գալ նորա՝ հանդերձ մեծաւ զօրու. որոյ հասեալ ՚ի Կեսարիա՝ յոլովք ՚ի Նախարարացն ընդ առաջ լինէին: և եկեալ յաշխարհս գտանէ զՕտայ սնուցեալ զքոյր իւր զԽոսրովիդուխտ. և պահեալ զգանձսն ամրոցաւն հանդերձ, յոյժ երկայնմտութեամբ: Քանզի՝ էր արդարև համբերող՝ ժուժկալ, և առաւել իմաստուն. զի, թէպէտ՝ և ոչ ծանեաւ զճշմարտութիւն յաղագս Աստուծոյ՝ սակայն՝ զստութիւն կռոցն գիտաց: Նոյնպէս՝ էր և Սան նորին՝ Խոսրովիդուխտ, Կուսան, համեստ, որպ՝ զոք օրինաւոր, և ոչ ամենևին անզուսպ բերան ունիլ նման այլոց կանանց: Իսկ՝ Տրդատ ՚ի Հազարապետութիւն Հայոց զնա կացուցանէ, շնորհակալութեամբ սպասունէ զնա՛. և առաւելևս՝ զիւր Դայեկորդին զՄանդագունի Արտաւազդ, վասն լինելոյ նմա՛ պատճառք փրկութե՟, և Հայրենականա՛ցն հասելոյ փառաց. յաղագս որոյ՝ 'ի ձեռս տայ նմա՛ զՍպարապետութ՟ին՝ լինել 'ի վ՟ր ա՟մ զօրա՛ց Հայոց: Նորին աղագաւ՝ և զՏաճատ Նորին քեռայր՝ Իշխան 'ի վ՟ր գաւառին Աշոցան կարգէ: Սա՛ է, որ յապա՛յան զգայոյց Աներոյն իւրոյ Արտաւազդայ և նմա՛ Արքայի, նախ՝ զԳրիգոր Անակայ որդի լինել. և ապա՝ զկնի վասն որդւոյն Գրիգորի, ո՟ր հմուտ եղեալ 'ի Կեսարացւոց քաղաքին բնակելով: Իսկ՝ Քաջին Տրդատայ երագապէս, և բազո՛ւմ ճակատս տուեալ. նախ 'ի Հայս, և ապա 'ի Պա՛րս, իւրով անձամբ առնէր զյաղթութիւնն. որ 'ի միում նուագի, առաւե՛լ քան՝ զԻշխանանն զայն 'ի Հնումն՝ կանգնեաց զնիզակն 'ի վերայ յոքնական համաթիւ վիրաւորաց: Դարձեալ՝ յերկրորդումն Կորովեա՛ցն Պարսից զփորձ առեալ՝ զսաստկութե՟ Սկային, և կո՛ւռ վառուածոյն, բազո՛ւմ վիրօք զձին սատակեցին նետաձգութ՟բք՝

որոց

որոյ զարկուցեալ յերկիր, ընկեցին զԱրքայն. իսկ նորա յարուցեալ, և հետի՛ յարձակեալ՝ փոխանակ իւր բազո՛ւմս ընկենոյր 'ի թշնամեա՛ցն. և զմիոյ ուրուք զձին կալեալ՝ արիաբա՛ր աշտանակէր: Դարձեալ յերկրորդին միւսանգա՛մ կամաւոր լեալ հետի՝ սուսերաւ զփղոց զերամա՛կն պուղէր: և այսպիսի նահատակութեամբք յամեալ 'ի Պա՛րս՝ և յասորեստանի, անդր և՛ս քան զՏիզբոն յարձակի:

Գլուխ Ձ 80

Յաղագս՝ տանելոյն Տրդատայ կին զԱշխէն. և Կոստանդնի զՄաքսիմիանոս: և Թէ՝ որպէս հանդերձեցաւ հաւատոց:

Եկեալ Տրդատայ յաշխա՛րհս՝ առաքէ զՍմբա՛տ Ասպետ՝ զՀա՛յր Ադարատայ. ածել զԿո՛յսն Աշխէն, զԴուստր Աշխարադա՛յն՝ իւր կնութեան. որ ո՛չ ինչ աննման էր Կո՛յսն Արքայի՛ն հասակի: և հրամայէ՝ գրել զնա՛ Արշակունի, և զգեցուցանե՛լ ծիրանիս՝ և թա՛գ կապել, զի՝ հարսնասցի Արքայի: յորմէ եղև որդի Խոսրով, ո՛չ համեմատ հասակայ իւրոց ծնողաց:

Ընդ նոյն աւուրս՝ լինի հարսանիք Մաքսիմինայ Դստերըն Դիոկղեցեանոսի ՚ի Նիկոմիդիա, փեսայանալով նմա Կոստանդիանոսի Կեսարի՝ որդւոյ Կոստայ՝ Թագաւորին Հռոմայ, որ ո՛չ էր ՚ի դստերէն Մաքսիմիանոսի, այլ՝ յՀեղենեայ Պոռնկէ։ Այս Կոստանդիանոս՝ բարեկամացեալ ՚ի հարսանիսն ը̅ Տըրդատայ՝ Մեր Թագաւորին. և յետ՝ ո՛չ բազումաւուրց՝ մեռաւ Կոստաս. փոխանորդ նորին առաքէ Դիոկղեցիանոս զնորին որդի, և զիւր որդիացեալն Կոստանդիանոս։ Սա յառաջ քան՝ զթագաւորելն, մինչ դեռ Կեսար էր, պարտեալ ՚ի մարտս, և տրտմութե̅ մեծաւ նեղեալ՝ երևութացաւ նմա Խաչ Աստեղեայ յերկնից, պարունակեալ գրով. ասէ, ԱՅՍՈՒ ՅԱՂԹԵԱ զոր արարեալ Սիգնում, (ֆ̅, Նշան.) և յառաջաբերեալ պատերազմացն՝ յաղթեաց. բայց՝ յետոյ հրապուրեալ ՚ի կնոջէ իւրմէ՝ ՚ի Մաքսիմինայ, Դստերէն Դիոկղեցիանոսի, յարոյց հալածանս Եկեղեցւոյ, և զբազումս վկայեալ՝ ինքն ելեփանդական բորոտութբ̅ն, ըստ բոլոր

ըն

ընկալեալ մարմնոյն՝ ապականեցաւ վ՟ն յանդգնութեանն. զոր ոչ կարացին բուժել Արիովկեան կախարդքն, և Մարսիկեան բժիշկքն. յաղագս որոյ՝ յղեաց առ Տրդատ՝ առաքել նմա Գիւլթս ՚ի Պարսից, և Հնդկաց. սակայն՝ և այնք ոչ հասին նմա յօգուտ. զոր և Քրմունք ոմանք հրամայեցին, ՚ի դիւաց խրատուէ՝ բազմութ՟ի տղայոց զենուլ՝ յաւազանս, և ջերմ լուանալ արեամբ՝ և ողջանալ. որոյ լուեալ զլալիւն մանկանցն՝ հանդերձ մարցն կականմամբք, մարդասիրեաց նոցա լաւ՝ քան զիւրն վարկուցեալ փրկութ՟ի. յաղագս որոյ՝ զփոխարէնն ընդունի յԱ՟ծ յանըրջական տեսութեանց. յԱռաքելոյն առեալ հրաման՝ սրբել լուացմամբ Կենսատու Աւազանին, ՚ի ձեռն Սեղբեստրոսի Եպիսկոպոսի Հռովմայ՝ որ ՚ի նմանէ հալածանացն, թաքուցեալ էր ՚ի Սերապտիոն լերինն. յորմէ և աշակերտեալ հաւատայ: զբռնաւորսն ամենայն բառնալով յԱ՟ծ, յերեսաց նորա. որպէս՝ համառօտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս:

Գլուխ ձա 81

Սպանումն Աշկունեաց ՚ի Ճենացւոյն Մամգոնեայ։

Ընդ հանգչելն Շապհոյ՝ Արքայի Պարսից ՚ի պատերազմացն. և ՚ի գնա՛լն Տրդատայ ՚ի Հռոմ առ Սուրբն Կոստանդիանոս. պարապ առեալ խորհրդոց Շապհոյ՝ նիւթէ՛ր չարիս ՚ի վերայ աշխարհիս մերոյ. Թողեալ զՀիւսիսայինն ամ̃, ելանել ՚ի Հայս. Ժա՛մ եդեալ՝ և իւր գնա՛լ Արեօք ՚ի միւ՛ս կողմանէ։ ՚Ի նորին բանս հրապուրեալ Նահապետ Ազգին Աշկունեաց, զինքեան սպանանէ՛ր զՓեսայ՝ զծերացեալն Օտայ, որ ՚ի Տոհմէն Ամատունեաց՝ և Սնուցօ՛ղ Խոսրովիդխտոյ՝ Քե՛ռ Թագաւորին։ Եւ այնինչ ը̅ հո՛ւպ եկեալ Մեծին Տրդատայ յԱրևմտից. և լուեալ զա՛յս ամ̃, և գիտացեալ՝ եթէ, ո՛չ ՚ի ժամադրութիւնն եկն Շապուհ, խաղայ ՚ի վերայ Հիւսիսականացն։ Ի՛սկ՝ Նահապետ ազգին Աշկունեաց ամրանա՛յր յամրոցին՝ որ անուանեալ կոչի՝ Օղկան. ապաւէն առնելով իւրեանց զընդակիցս Սիմն կոչեցեալ լերին

րին։ և ընդդիմացեալ Թագաւորին՝ աղմկէր զերկիրն, որ առ լերամբն, չթողացուցանէր՝ այլում պարապել գործոյ։ Ասէ յ'ամենայն 'Նախարարութ̃իս Տանց Հայոց Արքայ. որ ոք ածցէ առ իս զ'Նահապետ Ազգին Սլկունեաց, տացնմն յաւիտենական Իշխանութ̃բ Գ.եօղս, և Գ.աստակերտս, և զա̃մ իշխանութիւն Ազգին Սլկունեաց։ Որ յանձն առնոյր Չ'ենաղն այն Մամգոն։ և 'ի խաղալ Թագաւորին զկողմամբք Աղուանից 'ի վերայ Հիւսիսականացն, գնաց Մամգոնն ա̃մ աղխիւ իւրով զկողմամբք Տարօնոյ, ո̃չ թէ՝ ապստամբել 'ի Թագաւորէն։ 'ի չուանկեալ՝ առաքէ գաղտագնաց հետևակս զգացուցանելով 'Նահապետի Ազգին Սլկունեաց, զգնալն Թագաւորին զկողմամբք Աղուանից. վտանգ մեծ է, ասէ՝ Թագաւորին Տրդատայ, վասն որոյ՝ գնաց զկողմամբք Աղուանից՝ պատերազմել ընդ ա̃մ Իեւստեայն. վասն որոյ՝ մեր է ժամանակ 'ի ձահ խորհիլ՝ և գործել որ ինչ կամքն են. զի՝ խորհեալ եմ՝ դաշնաւոր լինել քեզ՝ վ̃ն արհամարհանաց իմոց՝ որ

'ի

՚ի Թագաւորէն։ Ընդ որ՝ յոյժ ուրախացեալ ‘Նահապետ Ազգին Սլկունեաց՝ ընդունի զնա երդմամբ ուխտից, բայց՝ յամուրն՝ ոչ թողու, մինչև՝ տեսանել, թէ՝ ոպ՟ պահեսցէ զմտերմութի՟ երդմանց դաշնաւորութե՟ցն։ Իսկ՝ ասացեալն Մամգոն ա՟միւ ջանացեալ՝ ցուցանել ըզմտերմութի՟ առ ապստամբն. հաւատարմայաւ նմա, ոպ՝ արդարև միամիտ Գործակից, մինչև հրամայէ նմա՝ ՚ի Բերթն համարձակ մտանել, և ելանել։ Եւ յետ բազում վստահութեանց, ՚ի միում աւուրց՝ հաւանեցուցանէ զ‘Նահապետ Ազգին Սլկունեաց՝ ելանել արտաքս յԱմրոցէն, և որսալ երէս. և՚ի միջամուխ լինելոյ որսոյն՝ դիպեցուցանէ աղեղամբն ընդ մէջ թիկանցն, և կործանեալ՝ յերկիր զարկուցանէ զԱպստամբն. և ընթացեալ իւրով արամբք, ունի զբերթն. կապելով զամ՟արս, որ ՚ի ներքս. նա և զազգն Սլկունեաց, խորհեցաւ՝ բառնալ, և կոտորեաց զամենեսին, երկուք ոմանք փախուցեալք յաշխարհն Ծոփաց։ Իսկ՝ Մամգոն վաղվաղակի զգացուցանէ Թագաւորին, և ուրախացեալ Արքայի, գրէ հրովարտակ՝ իշխել նմա ծմի՝ որոց խոստացաւն. և կարգէ զնա Նախարար 'ի տեղի Ապստամբին. անուանեալ յանուն իւր՝ Մամգոնեան. բայց՝ մնացելոց Ալկունեաց ոչինչ հրամայէ վնասել:

Գլուխ ձբ 82

Նահատակութիւնք Տրդատայ 'ի պատերազմին յԱղուանս: Յորում միջակտուր արար զԲասլաց Թագաւորն:

ԻՍԿ Թագաւորն Տրդատ ծմ հայաստանօքս իջեալ 'ի դաշտն Գարգարացւոց, պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի. և 'ի խառնել երկոցունց կողմանցն, յերկուս ճեղքէ զամբոխ թշնամեացն, սկայաբար շահատակելով: ոչ կարեմ ասել զերագութիւն ձեռինն, որ՝ անբաւք 'ի նմանէ յերկիր անկեալ՝ թաւալգլոր խաղային. օրինակ իմն, իբրեւ 'ի գեղեցիկ Յանցորդէ լի ձկամբք՝ յերկիր թօթափեալ ցանցոյն, կայտառային յերեսս երկրին: զոր տեսեալ Թագաւորին Բասլաց, մօտ հասանէ յԱրքայն, և հանեալ յասպիկլինէն՝ զներդեա քէմխտապա՛տ պարանն, և կորովութե̃ ձգէ յետո՛ւստ կողմանն Շա՛հ․ դիպեցուցանէ 'ի յո՛ւս ձախակողմանն, և յանութ աջակողմանն, զի՝ է՛ր վերացուցեալ՝ զձե՛ռնն ածե՛լ ումեք սուսերաւ․ և ինքն վառեալ վե՛րտ պահպանակօք՝ ուր ո՛չ գծէին նետք․ և քանզի՝ ո՛չ կարաց ձեռամբ շարժե՛լ զԱրքայն, զլանջօք երիվարին առեալ՝ և ա՛յնչափ ինչ շութափեա՛ց մորկել զերիվարն։ Իսկ՝ ապա՝ ահեակ ձեռամբն 'իներդե՛րն աճապարեա՛լ սկային, և սաստկութե̃ ուժոյն զիւրեաւ ցանցեալ՝ 'ի Շահ դիպեցուցանէ զերկսայրին, և ընդ մէ՛ջ կտրէ զա՛յրն, և զո՛յգ ընդ պարանոյին՝ զգլուխ երիվարին։ Իսկ՝ զօրացն ա̃մի տեսեալ զԹագաւորն իւրեանց՝ և զՕօրաւորն՝ միջակտուր յոյնպիսի ահաւոր բազկէ լեալ 'ի փախուստ դառնային․ զորոց զհե՛տ մտեալ Տրդատ վանէ մինչև յաշխա՛րհն Հոնաց։ Եւ թէպէտ՝ ո՛չ փոքր հարուա՛ծ եհաս զօրա՛ցն իւրոց, և բազմա՛ց անկո՛ւմն մեծամեծաց, յորում և մեռաւ Սպարապե՛տն ա̃մ Հայոց՝ Արտաւազդ Մանդակունի․ սակայն՝ Տրդատայ ան տի՝ ը՟ Հայրենի՛ Օրինին, պատմագրս առեալ՝ դառնայ: Որովք պատճառօք՝ միաբանեալ զա՟մ Հիւսիս. հանեալ զօր բազում, գումարտակ արարեալ՝ խաղայ յաշխարհն Պարսից 'ի վե՟ր Շապհոյ՝ որդւոյ Արտաշրի. չո՛րս իւրեանց առնելով Զօրավա՛րս. զՄիհրան՝ Առաջնորդ Վրաց, վստահացեալ վասն՝ առ'ի Քրիստոսն հաւատոյ՝ և զԲագարա՛տ Ասպետ. և զՄանաճիհր՝ Նահապե՛տ Ռշտունեաց. և զՎահան Նահապե՟տ Ամատունեաց: Բայց յաղագս հաւատոյն Միհրանայ՝ և աշխարհին Վրաց՝ ասե՛լ կայ մեզ առաջի:

Պրակ ձգ՟ 83

Յաղագս՝ Նունէի Երանելւոյ, ԵՒԷ՝ որպէս եղև Պատճառ Փրկութե՟ն Վրաց:

Կին ոմն՝ անուն Նունէ՝ յԸնկերաց Սրբո՟ց Հռիփսիմեանց 'ի ցրուելոցն՝ փախստեամբ հասեալ յաշխարհն Վրաց՝ 'ի Մծխիթայ, 'ի նշ՟ Քաղաքն Նախագահ, յոյժ ճգնութե՟բ ստացեալ շնորհս բժշկութե՟ն. որով զբազո՛ւմ ախտաժէտս բժշկեալ՝ և գլխովին զկին Միհրանայ՝ Առաջնորդին Վրաց։ վ̃ որոյ՝ հարցել զնա Միհրանայ, եթէ՝ որո՞վ զօրութեամբ առնես զայս սքանչելիս․ ուսոյց զքարոզութիւն Աւետարանին Ք̃ի։ և ախորժելով լուեալ՝ պատմեաց իւրոյ Նախարարացն՝ հանդերձ գովեստիւ։ և իսկոյն՝ եհաս առ նա լուր սքանչելեացն, որք եղեն 'ի Հայս, 'ի Թագաւորն՝ և 'ի Նախարարսն․ ընդ որ հիացեալ՝ զրուցեաց Երանելւոյն Նունեայ․ յորմէ ստուգագոյն ևս տեղեկացաւ զա̃մ ոճով։ Նաւ եղև ը̃ աւուրսն ընդ այնոսիկ՝ ելանել Միհրանայ յորս՝ մոլորեցաւ 'ի դժուարս լերանց, խաւարեալ օդով, այլ՝ ոչ տեսանելեօք․ ըստ այնմ, եթէ՝ կոչէ զմէգ՝ բարբառով․ և դարձեալ՝ եթէ, զտիւ 'ի գիշերի մթացուցանէ։ այսպիսեաւ Միհրանայ ըմբռնեալ խաւարաւ, որ եղև նմա առիթ Մշտնջենաւոր Լուսոյն․ քանզի՝ զարհուրեալ յիշեաց զոր լուաւն վ̃ Տրդատայ․ Թէ՝ 'ի Ճանապարհ ելեալ յորս կամելով, հասին նմա հարուածք 'ի Տ̃է․ զոր համարեցաւ, եթէ՝ և նմա այսպիսի ինչ դիպելոց է։ և երկիւղիւ մեծաւ պաշարեալ, խնդրեաց աղօթիւք լուսաւորիլ օդոյն, և դառնալ խաղաղութեամբ՝ և պաշտել զԱստուած Նունէի խոստանայր. որում հանդիպեալ՝ կատարէ զասացեալսն։ Իսկ Երանելոյն Նունէի խնդրեալ արս հաւատարիմս՝ յղեաց առ Սուրբն Գրիգոր, եթէ՝ զինչ հրամայեսցէ գործել այնուհետև. քանզի՝ յօժարութեամբ ընկալան Վիրք զքարոզութիւն Աւետարանին. և հրաման ընդունի՝ կործանել զկուռս, որպէս՝ ինքն արար. և զպատուականն կանգնել զՆշան Խաչին, յ'որ տալոյ Տեառն նոցա հովիւ յառաջնորդութիւն։ Եւ իսկոյն՝ կործանեաց զամպրոպային պատկերն Արամազդայ՝ որ կայր մեկուսի 'ի քաղաքէն՝ գետոյն հզօրի ընդ մէջ անցելոյ, զոր սովորէին երկրպագել այգուն այգուն 'ի տանեաց իւրաքանչիւր, զի՝ հանդէպ նոցա երևէր. իսկ՝ եթէ ոք զոհել կամէր՝ անցեալ ընդ գետն՝ առաջի Մեհենիցն զոհէր։ Բայց՝ 'ի վերայ նորա յարեան Նախարարք քաղաքին, եթէ՝ ո՞ւմ արդեօք՝ փոխանակ Կռոցն՝ երկրպագեմք. ուսան, թէ՝ Նշանի Խաչին Քրիստոսի, զոր արարեալ՝ կանգնեցին 'ի վերայ վայելուչ բլրին յԱրևելից կուսէ՝ քաղաքէն մեկուսի, բաժանելով և նա՛ փոքրագոյն գետովն. և երկրպագեցին ը՟ առաւօտն ամ՟ բազմութ՟ին. նո՛յնժմ՟ 'ի տանեաց իւրաքանչիւր: բայց յորժամ ելին 'ի բլո՛ւրն՝ գտին փա՛յտ կոփեալ՝ ո՛չ ճա՛րտարի ինչ գործ, յոլո՛վք քան՝ զսակա՛ւս արհամարհեցին, իբր թէ՝ այսպիսեաւ լի՛ իցէ նց՟ ամ՟ անտառն, և թողեալ՝ 'ի բա՛ց գնացին: Իսկ՝ Բարերարին Այ՟ նայեցեալ 'ի գայթակղութ՟ինց՝ առաքեաց յերկնից Սիւն ամպեայ, և լցոյց զլեառն բուրմա՛մբ անուշութ՟ե. և ձայն բազմութ՟ե սաղմոսերգութ՟ե, լսելի եղև քաղցր յոյժ: և ծագեաց Լոյս տպաւորութ՟բ Խաչին՝ ըստ ձևոյ, և ը՟ չափոյ փայտեղինին. և կալով 'ի վ՟ր ն՟ր հանդերձ երկոտասան աստեղօք. յոր ամենեցուն հաւատացեալ՝ երկրպագին նմա. և յա՛յնմ հետէ՝ Զօրութ՟իք Բժշկութ՟ե կատարին 'ի նմանէ: Ի՛սկ՝ Երանելին ՙՆունէ ել՝ գնաց անտի, աշակերտել և զվի՛րս եւս դաւանա՛ւս Սրոց՝ յանապակ լեզուէն շրջելով անպաճուճաբա՛ր՝ և առանց աւելորդաց. օտարացեալ յաշխարհի, և որ 'ի սմա.

կամ թէ՝ ճշմարտագո́յն ասել, 'ի Խա́չելեալ կրթութեամբ մահու զկեանսն առնելով՝ բանիւ վկայել Բանին Այ՟. և յօժարութե՟ն իւրով, ո՞վ արեա́մբ պսակեալ. զոր համարձակիմ ասել՝ Առաքելուհի եղեալ՝ քարոզեալ՝ 'ի Կղարջից բռնեալ առ դրա́մբք Ալանա́ց, և Կասբից, մինչև՝ 'ի սահմանս Մազքթաց, որպէս՝ ուսուցանէ́ քեզ Ագաթանգեղոս. բայց՝ մեք դարձուք 'ի Պատմութ՟իս՝ վասն յարձակելոյն Տրդատայ 'ի Պարսս։

Գլուխ ՁԴ 84

Պարտութիւն Շապհոյ՝ և աշխարհայ հնազանդութ՟ի ընդ ձեռամբ Մեծին Կոստանդիանոսի, և Տրդատայ առնուլ զԼիկիանոսն, և գալ Ազգաչանացն։ Նա և ետ՝ յայնժամ եղև գիւտ Փրկական Խաչին։

ԲԱյց՝ Տրդատայ, թէպէտ՝ և զյաղթութ՟ի ստացեալ էր 'ի հարկանելո́յ զօրուն՝ և 'ի բազո́ւմանկելոց Նախարարա́ցն, զանգիտեաց ինքեամբ յատուկ մարտնչել ընդ Շապհոյ մինչև՝ եհան զբազմութ՟ի զօրուն Հռովմայեցւոց՝ որք ըստ Ասորեստան յարձակեցան՝ և 'ի փախուստ խո՛ւստ զՇապհոյ դարձուցին, յաւարի զա̃մ երկիրն առեալ։ Քանզի՝ և Տրդատ միահամուռ իւրովքն՝ և որք ընդ իւրովքն էին զօրքն, ընդ Հիւսիսային կողմանս իշխանութեն Պարսից դիմեաց, տարեկան չուարարութ̃բ։ Յայնժամ գա՛յ առ նա Ազգականն իւր՝ և հարազատ Կամսար, Առաջին որդի Պերոզամատայ· ա՛յս Պերոզամատ, է՛ ա՛յն տղայ՝ որ 'ի կոտորե՛լն Արտաշրի զՑեղ Կարենեան Պալհաւին՝ փախուցեալ Բուրզայ ապրեցուցանէր· որոյ հասեալ յերիտասարդութ̃ի, 'ի պատիւ Հօ՛րն և 'ի վ̃ր զօրու՛ն կարգի յԱրտաշրէ· առ 'ի պատուե՛լ ընդ խուժադուժ ազգսն՝ նենգութ̃բ արկանել զնա՛ 'ի ձեռս Բարբարոսաց· որոյ եղեալ ա՛յր քաջ՝ սքանչելապէս մղեաց զպատերազմունս· և 'ի պարտել ըզ Սողընդն, որ անուանէր Խաքան, նուաճեալ՝ տա՛յր զդուստր իւր նըմա կնութ̃ե· նա՛ և ա՛յլ կանայս առնոյր զմերձաւորս Արտաշրի· և բազո՛ւմորդիք եղեալ, զօրացեալ՝ բռնութեամբ ունէր զկողմանսն զայնոսիկ· Թէպէտ՝ և 'ի համար Արտաշրի, այլ՝ ո՛չ տեսանէ զնա։ և 'ի մեռա

նելն

նիլն Արտաշրի՝ ո՛չ հնազանդել Շապհոյ՝ որդւոյ նր՟. եւ 'ի մարտնչելն՝ 'ի բազո՛ւմ պատերազմունս՝ յաղթէ. եւ 'ի Մտերմաց Շապհոյ դեղակո՛ւր եղեալ մեռանի։ Առ նովին ժամանակաւ՝ ա՛յլ ոմ՟ն կացեալ Կողընդ Խաքան, որ թշնամութեա՛մբ ը՟ Կամսարայ՝ որդւո՛յ նորա՛՝ վարէր. իսկ՝ Կամսարայ դժուարին վարկուցեալ՝ 'ի մէջ երկո՛ւց հզօրաց բնակիլ թշնամութեամբ. մանաւանդ՝ զի եւ եղբարքն ո՛չ միաբանեցան ընդ նմա. խաղացեալ ա՟մ ընտանեօք իւրովք՝ եւ աղխիւ, գա՛յ առ Տրդատ մե՛ր Թագաւոր. եղբօ՛ր նորա առ Շապո՛ւհ երթալով։ Ա՛յս Կամսար՝ անհագին քաջութեամբ նահատակեալ առ Ձո՛րքն 'ի պատերազմունս, 'ի շահատակե՛լն իւրում, հարկանի յումե՟մնէ սակե՛րբ գլո՛ւխն. եւ վերացուցեալ մա՛սն ինչ յոսկերէ՛ սկաւառակին, բժշկեա՛լ 'ի դեղոց, պակա՛ս գտաւ բոլորութ՟ի գագաթանն, անուանեցաւ Կամսար՝ ա՛յնուրիկ ազգաւ։ Բայց՝ Տրդատայ ի՛ւր հաստատեալ զեօթնպարսպեանն Ակբատան Երկրորդ. եւ Վերակացուս յինքենէ՛ թողեալ՝ գառ դառնայ 'ի Հայս, ընդ իւր ածելով զԿամսար ամենայնիւքն։ քանզի՝ Շապուհ աղաչէր զՅաղթօղն Կոստանդիանոս՝ խնդրել զհաշտութ՟ի, և զխաղաղութ՟ի մշտնջենաւոր, զոր արար իսկ՝ Սուրբն Կոստանդիանոս։ Յետ այսորիկ՝ առաքեաց զՀելենէ՝ զՄայր իւր յԵղ՟մ; 'ի խնդիր Պատուական Խաչին· զոր և եգիտ իսկ զՓրկական Փայտն, հանդերձ հինգ Բևեռօք, 'ի ձեռն Յուդայի Հրէի, որ ապա եկաց Եպիսկոպոս յԵղ՟մ։

Գլուխ ԾԵ 85

Պարտումն Լիկիանոսի՝ և փոխումն Աթոռանիստոյն 'ի Հռովմայ· և շինել Կոստանդնուպօլսի։

Ի Բառնալ Ա՟յ զբռնաւորս ամ՟ յերեսաց Կոստանդիանոսի, մեծարեաց նա զԼիկիանէ մեծութ՟բ յոյժ· և ետ նմա 'ի կնութ՟ե՝ ըզքոյր իւր՝ ոչ համամայր· ծիրանեաւ՝ և պսակաւ Կեսարական զարդարեաց զնա· և յերկրորդականս հասուցեալ պատուս· Արքայ ամ՟ Արևելից կացոյց։ Բայց զոր Ա՟ծայինն Բան առ Հեբրայեցիսն, անհնարին համարեալ լինել չարութե՟ն փոփոխումն խուռն, նո՛յնպէս՝ և աստանօր պատահէ։ Ինձու՝ անկարելի է՝ զխայտուցն փոխել, և Եթովպացւոյ՝ ըզթխութ՟ին. նոյնպէս՝ և մարդոյ ամպարշտի զբարսն. քանզի՝ սա նախ առ Հաւաստան գտանի՝ դժրօղ. և երկրորդ, առ բարեգործն իւր ապստամբ։ յարոյց հալածանս Եկեղեցւոյ, և նենգութիւն գաղտնի ընդդէմ Կոստանդիանոսի. նա և՝ չարիս բազմազանս հասոյց ամենեցուն, որ ը՟ իւրով իշխանութեամբ էին։ Ցանկատէրս այս, և գարշելի Ալևոր՝ ներկածոյ ունելով զհերս. որ և զկին իւր ՚ի մե՛ծ նեղութ՟ի արգել, սակս՝ տարփութ՟ե Երանելո՛յն Գղափիւրեայ. վ՟ն որոյ՝ եսպան զՍուրբն Վասիլէոս՝ Ամասիոյ Եպիսկոպոս։ Նա իբրև՝ յայտնեցաւ դաւն, և գիտաց, եթէ՝ նմա լուռ ոչ լինի Կոստանդիանոս։ Ժողովեաց զօրս՝ ընդդիմանալ պատերազմաւ. և ցրտացեալ ՚ի սիրոյն Տրդատայ Մե՛ր Թագաւորին՝ որպէս արդարև ՚ի թշնամւոյ։ Քանզի՝ գիտէր, թէ՝ առաւել է Արդարոյն քան Ամպարիշտ։ Իսկ իբրև, եկն Յաղթօղն Կոստանդիանոս, մատնեաց Ա՟ծ ՚ի ձե՛ռս նր՟ զԼի-

կի

չխանէս, յորինայեալ ոպ՟՝ 'ի Օերունի, եւ 'ի Աեւայր, ետ տանել 'ի Պաղիուս՝ հանդերձ երկաթի կապանօք դնել 'ի մետաղս, զի՝ աղօթեսցէ առ Ա՟Ծ, որում մեղաւն, թերեւս՝ երկայնամիտ լիցի առ նա. եւ ինքն՝ հանդերձ որդւովքն՝ զմին Թագաւոր Հռոմայեցւոց ցուցեալ, զքսանեմեակն 'ի Նիկոմեդացւոց քաղաքին կատարեաց: զի 'ի չորրորդ ամէ հալածանացն՝ սկսեալ թագաւորել, մինչեւ՝ յերեքտասաներորդ ամն խաղաղութեան, զոր եւ՝ այսօր տօնէ յաշխարհ: Նա ոչ պարտ վարկուցեալ՝ դառնալ 'ի Հռոմ, այլ՝ 'ի Աղեզանդրիոյն անցեալ՝ հաստատէ զԱրքունիան, յանրջական իմն տեսութեանց հրամայեալ. գերապայծառս իմն առնելով շինուածս, հիմնադրատիկ յաւելեալ՝ մեծացուցանէ՝ քան զի՝ ոչ ուրեք Մեծի Թագաւորի կայր 'ի նմա ձեռնարկութիւնք այսպիսիք, բայց 'ի սակաւուց ինչ իրաց. ոպ՟՝ Տիեզերակալին Աղեկսանդրի Մակեդոնացւոյ, յորժամ՝ անտի ը՟դդէմ Դարեհի սպառազինեցաւ: եւ սակս այնորիկ՝ շինեաց 'ի յիշատակ իւր զՍտրատիգինն ասացեալ.

քանզի՝ 'ի նմա՛ զպատերազմականսն յորինեաց զկազմութիւն, զոր յետոյ՝ Սևերիոս Արքայ Հռօմայեցւոց նորոգեաց։ և ինքն շինեա՛ց զբաղանիսն 'ի տեղւոջ սեանն, որ ունէր ստորագիր խորհրդական անուն Արեգա՛կն, ըստ Թրակացւո՛ց բարբառի, զԵւքսիպոն, որոյ կոչմամբ յորջորջեյան՝ և բաղանիքն։ Սա՛ շինեաց և զՏեսարանն, և զՊաղանամա՛րտն Խաղալկաց, և զՁիրնթա՛ցսն, ո՛չ կատարմամբ. այլ՝ Կոստանդիանոսի ամենապատիկ յօրինեալ, անուանեաց՝ Նոր Հռո՛մ։ այլ աշխարհ կոչեաց զնա՛ Կոստանդինու Քաղաք։ Ասեն և զայս, թէ՝ դաղտնի եհան 'ի Հռովմէ զասացեա՛լն՝ Պալլադիո՛ն քերածոյ, և ե՛տ զնա՛ 'ի փորոնին ներքո՛յ սեանն՝ որ առ 'ի յիւրմէ կանգնեալ։ Այս մեզ անհաւատալի է, այլոց՝ որպէս կա՛մք իցեն։

Գլուխ ձզ 86

Յաղագս Արիոսի Չարափառի, և Ժողովոյն՝ որ եղև վասն նը՟ 'ի Նիկեայ. և սրան

չէ

չէլեայն, որք երևեցան 'ի Գրիգորէոս ։

Ընդ այն ժամանակս՝ երևեցաւ Արիոս Աղեկսանդրացի, որ ուսոյց չարաչար ամպարշտել, ոչ գոլ զՈրդի Հաւասար Հօր, և ոչ՝ 'ի Բնութենէ Հօր, և յԷութենէ. և ոչ Ծնեալ 'ի Հօրէ՝ յառաջ քան՝ զյաւիտեանս. այլ՝ օտար զոմն, և արարած, և կրսեր, և յետժամանակի գոյացեալ։ որ ըստ արժանեաց իւրոց՝ ամպարիշտս այս Արիոս, 'ի գարշելիմն ընկալաւ զպատուհասմն։ Վասն որոյ՝ եղ հրաման յԻնքնակալէն Կոստանդիանոսէ՝ ժողով լինիլ բազմութե Եպիսկոպոսաց 'ի Նիկիա Բիւթանացւոց։ և ժողովեցան՝ Բիտոմն, և Բեկենդի Երիցունք 'ի Հռօմ· Քաղաքէ, ձեռնարկութե Սրբոյն Սեղբեստրոսի· Աղեքսանդրոս՝ Աղեքսանդրի· Եւստաթիոս՝ Անտիոքայ· Մակարիոս Երսղմի· Աղեկսանդրոս Կոստանդնուպօլսի Եպիսկոպոսք։ Յայնժամ, գայ Հրովարտակ Ինքնակալէն առ Մեր Արքայն Տրդատ, զի՝ զՍուրբն Գրիգոր առեալ ընդ իւր 'ի ժողովն երթիցէ. զոր ոչ եառ յանձն՝ Տր դատ։ Քանզի՝ լուեալ էր զխնամանալն Շապհոյ ընդ Հնդկայց Թագաւորին, և ընդ Արևելեայն Խաքանայ։ և զԶօրավարէն Ներսեհի․ որ և նա թագաւորեաց ամս 9․ և Որ̃մզդի, որ ապա՝ և նա թագաւորեաց ամս 3, նահատակութեամբք։ և՛ի կասկածի եղեալ՝ զի մի, արդեօք պայմանին ստեսցէ՝ ըստ սովորութե̃ հեթանոսութեանն․ վ̃ն այսորիկ՝ ոչ եթող առանց իւր զաշխարհս։ բայց՝ և ոչ Սուրբն Գրիգոր հաւանեցաւ երթալ, զի՝ մի՛ զառաւե՛լ պատիւ՝ վ̃ն Խոստովանողական Անուանն՝ 'ի Ժողովոյն ընկալցի․ իբր՝ զի այնպէս փափաքանօք, և մեծաւ փութով կոչէին։ այլ՝ ն̃ք առաքեն փոխանորդ իւրեանց զԱրիստակէս, հանդերձ Ճշմարիտ Խոստովանութե̃ Երկոցունց գրով։ որոյ երթեալ՝ հասանէ Մեծին Ղևոնդի․ և հանդիպի յայնմ ժամու՝ զի՝ մկրտէր ըզԳրիգոր՝ զՀայր Գրգ̃րի Աստուածաբանի․ որ, իբրև՝ ել 'ի ջրոյն, լոյս շուրջ փայլատակեաց, զոր՝ ոչ ոք 'ի բազմաց ետես, բայց՝ միայն Ղևոնդիոս, և մերն Արիստակէս․ և Աթալոյ Եդեսեայ, և Յակովբ Մըծբնայ քնայ, և Յոհան՝ Պարսից Եպիսկոպոս, որք նոյն շաւղօք՝ ուղևորեցին 'ի Ժողովն։

Պրակ ՁԷ 87

Դարձ Արիստակիսայ 'ի Նիկիայ՝ և հաստատուն Աշխարհականացն, և որ ինչ 'ի Գառնի շինուածք։

Երթեալ Արիստակէս ընդ Մեծին Ղևոնդի՝ հասանէ 'ի քաղաքն Նիկիացւոց, ուր եղեն ժողովեալ Հարք 318, 'ի քակտումն Արիանոսաց՝ զորս նզովեալ՝ մերժեցին 'ի հաղորդութենէ Եկեղեցւոյ. սոյնպէս՝ և Ինքնակալն արտասահմանեաց 'ի Մետաղս։ Ապա՝ դարձեալ Արիստակէս արժանահաւատ բանիւ, և քսան սահմանեալ գլխով Կանոնաց Ժողովոյն, գայ հանդիպի Հօրն, և Արքայի 'ի Վաղարշապատ Քաղաքի. ընդ որ՝ յոյժ ուրախացեալ Սրբոյն Գրիգորի, սուղ ինչ յինքենէ 'ի Կանոնս Ժողովոյն յաւելու, վ͞ն առաւել զգուշութեան իւրոց Վիճակին։ Յայնժամ՝ Ազգային նոցա Կամսար մկրտի իւրովքն հանդերձ 'ի Մեծէն Գրիգորէ, Արքայի ընդունելով 'ի Ջրոյն։ զոայ ժա

ռան

ռանգութ̃ի նմա զմեծ Պատուակեր
տըն Արտաշիսի, որ այժմ ասի՝ Պա
հոնակերտ, և զԳաւառն Շիրակ,
ո՛չ ազգականին իւրում; և Մտերիմ
Հարազատի, այլ՝ նա ո՛չ աւելի բաւ
եալ՝ քան զեօթն աւուրս, յետ մկըր
տութեանն՝ վախճանի։ Բայց՝ Խա
գաւորին Տրդատայ մխիթարեալ
զգլուխ որդւոցն Կամսարայ զԱր
շաւիր, զինքն փոխանակ Ծնողին
սահմանելով. ազգ զնա սերեալ յա
նուն Հօրն, և կարգէ 'ի Թիւ Նախ
արարութեանց. յաւելու և այլ պար
գևս՝ զքաղաքն Երուանդայ, և զնո
րուն Գաւառն, մինչև ց'կատար ձո
րոյն մեծի։ միայն, զի՝ 'ի մտաց նր̃
հեռացուցէ զյիշատակ բնիկ աշ
խարհին՝ որ Պալհաւն կոչի. ո՛չ զի
անվրդո՛վ զհաւատն պահեսցէ։
Իսկ՝ Արշաւիր առաւել սիրեալ
զԳաւառն, յիւր անուն անուանէր
Արշարունիս. քանզի՝ յառաջ Երա
խաձոր կոչիւր։ ահա՝ ասացաք ըդ
պատճառս գալստեան երկուց Ցե
ղիցն Պարթևաց՝ և Պալհաւկաց։

Օ այսմ ժամանակաւ կատարէ Տըր
դատ զշինուածս ամրոցին Գառ
նւոյ։ զոր որձաքար՝ և կոփածոյ վի

մեք, երկաթագամ, և կատարամածուցեալ. յորում շինեալ և տուն հովանոյ մահարձանօք՝ սքանչելի դրօշուածովք՝ բարձր քանդակովք 'ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ. և գրեալ 'ի նմա զյիշատակ իւր Հելլենացի գրով։ Բայց՝ Սրբոյն Գրիգորի դարձեալ 'ի նոյն լերինս, ոչ ումեք յետ այնր՝ յաւել երևել մինչև 'ի վախճան։

Պրակ ՁԸ 88

Յաղագս՝ մահուան Գրիգորի, և Արիստակիսայ. և թէ՝ էր աղագաւ կոչի լեառն՝ Մանեայ Այրք։

ՅԵօթն՝ և տասներորդի ամի Թագաւորութե՟ն Տրդատայ, գտանք՝ նստեալ յԱթոռ Սրբոյ Առաքելոյն Թադէոսի՝ զՀայրն Մեր, և ըստ Աւետարանի՝ Ծնող։ յետ՝ լուսաւորելոյ զա՟մ Հայս Լուսով Ա՟ծգիտութեան, և ջնջելոյ զխաւար կռապաշտութե՟ն, և լնլոյ զա՟մ կողմանս Եպիսկոպոսօք, և Վարդապետօք, սիրեցեալ զլերինս՝ և զմիայնութի՟, և զհանդարտութի՟ մտացն՝ յինքեան կեալ, զի խօսեսցի ընդ Ա՟յ անզբաղապէս. Փոխաջորդ իւր թողլով զորդին իւր զԱրիստակէս, ինքն կալով 'ի Գաւառին Դարանաղեաց, 'ի լերինն՝ որ կոչի՝ Մանեայ Այրս: Այլ ասասցուք թէ՝ է՞ր աղագաւ կոչի՝ Մանեայ Այրք: Քանզի՝ կին ոմն, անուն՝ Մանի, յԸնկերաց Սրբոց Հռիփսիմեանց, որպէս՝ զՆունի Վրաց Վարդապետուհի. որ ո՛չ շութափեայ՝ հետեւելն̃ց 'ի գալն ամեղ, դիտելով զն̃մ տեղիս Այ բնակեցաւ 'ի լերինն յայնմիկ 'ի յայրս ինչ քարանց. վասն որոյ՝ կոչեցաւ անուն լերինն՝ Մանեայ Այրք. յոր Այրի բնակեցաւ յետոյ Ս̃ն Գրիգոր: Այլ թէպէտ՝ և բնակեցաւ անդ, սակայն՝ ընդ ժամանակս ժամանակս յայտնեալ՝ շրջէր ընդ աշխարհս՝ հաստատել 'ի Հաւատս զաշակերտեալս: Բայց՝ յորժամ եկն Նորին որդին Արիստակէս 'ի Ժողովոյն Նիկիայ, յայնմ հետէ՝ ո՛չ երեւեցաւ յայտնիլ ումեք Սուրբն Գրիգորիս. վ̃ն որոյ՝ յիսկզբան Քահանայանալոյն ն̃ր՝ յեօթն, և 'ի տասներորդ յամի Թագաւորութե̃ն Տրդատայ՝ մինչև ց'քառասուն, և վեցերորդ ա̃մն Նորին, յորմէ հետէ՝ ո՛չ եւ յաւելու՝ ումե՛ք երեւե՛լ Գրիգորիոս. համարեալ Թուին ամք 30: Եւ յե՛տ նո՛ր՝ Արիստակէս ամս, 7: ՚Ի քառասուն՝ եւ յեօթներորդ յամին Տրդատայ մինչեւ ց՚յիսուն, եւ երրորդ ամի նորին, յորում եղեւ կատարումն Սրբոյն Արիստակեսայ. զի՝ արդարեւ սուսեր էր հոգւոյ՝ ըստ ասացելումն: Սորոյ՝ եւ Արքեղայոս, որ կարգեալ էր ՚ի Վերակացութին Չորրորդն կոչեցեալ Հայոց, կշտամբեա՛լ ՚ի նմանէ, սպասեաց դիպող աւուր, եւ պատահեաց նմա ՚ի Ճանապարհի՝ ՚ի Ծոփաց Գաւառին: էսպան զԵրանելին սրով, եւ ինքն գնաց փախստական ՚ի Տաւրոս Կիւլիկեցւոց: Իսկ՝ զմարմին Սրբոյն բարձեալ Աշակերտաց նորին, բերին յԵկեղեաց, հանգուցանել ՚ի Թիլս յիւրում Աւանին: Եւ յաջորդեա՛ց զաթոռն Երէց եղբայր նորին Վրթանէս, ՚ի յիսուն, եւ ՚ի չորրորդ յամին Տրդատայ՝ եւ անդր: Բայց՝ Սրբոյն Գրիգորի ՚ի Մանէ Այրս կեցեալ աներեւութաբար ամս բազումս՝ փոխի մահուամբ ՚ի կարգս Հրեշտակաց. եւ հովուաց գտեալ զնա վախճանեալ, ՚ի նոյն

տե՛

տեղւոջ թաղեցին, ո՛չ գիտելով՝ թէ ո՛վ ոք նմա իցէ: Վայելէ՛ր իսկ նոցա, որք փրկչին Մերոյ եղեն խորհրդածուք, լինել և Աշակերտին յուղարկմանն Սպասաւորք: և ծածկեալ ամս բազումս՝ Աստուածային իմն գողցես Տեսչութեամբ, իբրև՝ զՄովսէսն զայն ՚ի հնումն. զի՝ մի՛ ՚ի Պաշտօն դեւահաւատ մարդկան ՚ի Բարբարոսա՛ցս առցի ազգաց: Իսկ՝ յորժամ սերտեա՛լ՝ հիմնեցան Հաւատք կողմանցս այսոցիկ՝ զկնի՝ յե՛տ բազո՛ւմ ամաց՝ յայտնեցաւ Ճգնաւորի ումեմն, Գառնիկ անուն կոչեցելոյ. և բերեալ՝ եդաւ ՚ի գեօղն Թորդան Նշխարք Սրբոյն Գրիգորի:

Սա՛, որպէս՝ յայտնի է ամենեցունց՝ Աշխարհա՛ւ Պարթև՛, Գաւառաւ Պալհաւ, յազգէ Թագաւորեցելոյ զատուցեա՛լ Արշակունի, ՚ի Ցեղէ Սուրենեան, ՚ի հօրէ Անակ կոչեցեալ: յԱրևելից կողմանց Հայոց աշխարհիս Արևե՛լ Ճշմարիտ ծագեալ, և իմանալի՛ արեգակն, և հոգևո՛ր Ճառագայթ ՚ի խորին չարութենէ Կռապաշտութեան. երանութեան և շինութեան հոգևորի՛ առիթ. Աստուածային արդարև՛ արմաւենի տնկեալ

՚ի

'ի Տան Տ͞ն, և'ի Գաւիթս Ա͞Յ ծաղկեալ: և այսպիսեօք և ա՛յս քանեօք ժողովրդո՛վք բազմացեա՛լ՝ ժողովեաց զմեզ զամենեսեան 'ի փա՛ռս՝ և'ի Գովեստ Աստուծոյ:

Պրակ ՁԹ 89

Յաղագս՝ վախճանի Մեծի Թագաւորին Տրդատայ. ընդ որում, և ողբերգական մեղադրանեան Աշխ͞հս Հայոց:

ԶՍրբոյ, և զմեծէ՛, և զԵրկրորդ Նահատակէ, և զմերոյ Լուսաւորութե͞ց, Հոգևոր Սերակայուհէ՛ Ճառելով՝ զ'ի Ք͞սէ՛ Հանուր եղելո՛ցս Ճշմարիտ Թագաւորէ, հրաշափառագունիւ պա՛րտ էր անցանե՛լ բանիւ, ո՛չ՝ զԳործակցէ, և զհաւասա՛ր Ճգնողէ մերոյ Նախաշաւղի՝ և Լուսաւորութեանց Նահապետի, որպէս՝ Թուէ՛ցաւ հաճոյ Հոգւոյն Սրբոյ՝ Նախիցացուցանել զի՛մ՝ Լուսաւորիչն, Ս կայուե͞ն միայն վի՛ճակաւ, 'ի վե՛ր բե՛րեմ; թէ և՝ Առաքելութե͞ն: Նա՛կ՝ որ ինչ ըղկնի այսօրիկ, զուգաբան՝ և հաւասարագործ, այլ՝ զառաւելութիւն ասեմ զԹագաւորին. քանզի՝ խարհի՛ն յաղագս Ա͞Յ, և Ճգնազգե ցիկ լինիլ՝ զմեզ երկոցունց։ Իսկ՝ նուաճել հաւանողական, կամ բռնաւորական բանիւք՝ առաւե՛լ Թագաւորին Շնորհ. քանզի՝ ըստ հաւատոյն ո՛չինչ կասեցուցանէր զգործն. այսորիկ աղագաւ՝ կոչեմ զնա Նախաշաւիղ Ճանապարհ, և Լուսաւորութե մեր Հայր Երկրորդ։ Բայց զի Պատմութեց, և ո՛չ գովեստից է ժամանակս. մանաւանդ՝ զի և հագներգութիւս ը՟ իւրաքանչիւր Պատմագրաց արտասանութեց՝ և ո՛չ յատուկ ՚ի մէնջ շարագրեցաւ. անցցուք ՚ի կարգ բանից, որ ինչ յառաջս ներ։ Մա՛՝ յետ հաւատոյն, որ ՚ի Ք՟ս, ամ առաքինութե բարեփայլեալ՝ ևս քան զևս՝ յաճախէր, որ ինչ յաղագս Ք՟ի գործ, և բանսաստելով՝ և հաւանեցուցանելով զՄեծ Նախարարսն, միանգամայն և զամ բազմութիւս Մամկին լինիլ արդարև Ք՟ի. ո՟պ՝ զի վկայեսցեն ըստ հաւատոյն անիյն և գործքն. այլ՝ զխստասրտութիւն կամիմ ասել, թէ և՝ զամբարհաւաճութի մերոյ Ազգիս, յիսկզբանն՝ և այժմ, ո՟պ՝ անհամբոյր բարուց՝ և ճշմարտութեան անհարազատ, կամ թէ՝

բնու

քնութիւն ունելով զբարձրայօնութ̃ի, և կամակարութիւն: ընդդիմանան կամաց Թ․գ̃ւորին՝ յաղագս Կրօնից Ք․ն̃ականաց, զհե՛տ երթալով կամաց կանանց՝ և հարճից:

Որում ո՛չ կամեցեալ ներե՛լ Թ․ագաւորին՝ ընկեցեալ զերկրաւոր Պսակն, զհե՛տ ընթանայր Երկնաւորին. արագ հասանելով 'ի տեղին՝ ո՛ւր Ճգնաւոր Օլինո՛ւորն Ք․̃ի ծակամո՛ւտ Լեռնակեցի՛կ եղեալ:

Աստանօր ամաչե՛մ ասել զճշմարտութ̃ին, մանաւանդ թէ՝ զանօրէնութ̃ի, և զամպարշտութ̃ի Ազգ̃ին մերոյ. զմեծի տղայո՛յ՝ և արտասուա՛ց արժանի՝ զայսմ զգործս: քանզի՝ զհե՛տ առաքեալ՝ կոչէին զնա՝ Սուրբ լինիլ ըստ կամաց նր̃, և ունիլ զԹ․ագաւորութ̃ի՛ն: Իսկ՝ 'ի չըհաւանիլ Սրբոյ, տանն նմա արբուցմ̃ն ոպ̃՝ անդ ուրե՛մն 'ի հնո՛ւմն, զՍոկրատայ զմոլախինդսն. և կամ թէ՝ զմե՛ր իսկ ասել՝ կատաղեա՛լ Եբրայեցիք, ըմպելի լեղեա՛ւ խառնեալ Ազ̃ Մերոյ: Նա զա՛յս արարեալ՝ շիջուցին յինքեանց, զբազմափայլ Ճառագայթ Ա̃ծապաշտութեան նորա. վ̃ս այսորիկ՝ ես 'ի վ̃ր իմ՛յս

ող

ողբալով ասեմ, ոպ՟՝ Պօղոս՝ յաղագս իւրոյն, և թշնամեաց Խաչին Ք՟ի. բայց՝ ասեմ, ո՛չ զիմ բանս, այլ՝ զՀոգւոյն Սրբոյ. Ազգ Թիւր, և Դառնացող՝ ասէ, ազգ՝ որ ո՛չ ուղղեաց զսիրտ իւր, և ո՛չ հաւատարմացա՛ւ Աստուծոյ ոգի նորա՛:

Արք Արամեանք՝ մինչև յե՞րբէք ծանրասիրտք: Ընդէ՞ր սիրէք զանօրէնութիւն՝ և զանա՟ծութի՟, որք ո՛չ ծանեայք, զի սքանչելացոյց Տ՟ր զՍուրբն իւր. և ո՛չ՝ Տ՟ր լուիցէ ձեզ՝ յաղաղակել ձերում առ նա. զի բարկացեալք՝ մեղայք՝ և յանկողինս ձեր ո՛չ զղջացարուք. քանզի՝ զենումն անօրէնութեան զենէք, և զյուսայեա՛լն ՚ի Տ՟ր արհամարհեցէք: Վ՟այսորիկ՝ եկեսցէ՛ ձեզ որոգայթ, զո՛ր ո՛չ ծանեայք՝ և ո՛րսն՝ զոր որսայցէք, ըմբռնեսցէ՛ զձեզ՝ և նորին որոգայթիւ անկջիք. այլ անձն ն՟ր ցնծասցէ Տէրամբ՝ ուրախասցի ՚ի հանգստեան իւրում, և ա՟միւ ինքեան անձամբ ասասցէ՝ Տ՟ր ո՞ նմա՛ն է քեզ: Եւ զի՝ այսոքիկ ճշմարի՛տ այսպէս՝ և մեք մխիթարեսցուք մերովք վտանգի՛ւքն: զի թէ՝ ընդ փա՛յտ դալար այս է՝ ասէր Ք՟ս, իսկ՝

ընդ չորս, զի՞նչ լինիցի. Արդ՝ եթէ ընդ Սուրբն Ա՟յ, և որք 'ի թագաւորութե՟ն զինքեանս՝ յաղագս Ա՟յ նուաստացուցին՝ այսքան. զի՞նչ բան մեր առ Ա՟յ յաղագս 'ի ձեռն վտանգիցս. որոց վտանգք՝ և աղքատու՟ն սեպհականն է։ Այլ սակա՛յն՝ ասասցից. ո՞վ ոք 'ի ձեռն թոշակս՝ յաղագս մեր. ո՛վ ոք վարդապետա՛յն մաղթանս. ո՛վ ոք բան յօժարեցուցանօղ՝ կամ՝ յորդորական. ո՞վ ոք՝ յերթա՛լն մերում բեռնաբարձ. ո՞վ ոք՝ 'ի գալն մերում հանգիստ. ո՛վ ոք՝ տո՛ւն, կամ՝ օթանոց մե՛զ պատրաստեաց. թողի՛ց զայլն։ զի՝ և ո՛չ զլեզո՛ւս չարիս՝ և զտգիտութեանն հանդերձ սնոտի փառամոլութ՟բ, և կատաղի լեզուանութ՟բ սանձահարեցիք. այլ՝ նի՛ւթ նոցա անմտութե՟ն զձե՛ր ուսումնատեանցդ տալով բարս, բորբոքեցէք առաւե՛լ՝ քան՝ զԲաբիլոնի հնոյն։ Ս՟ա որոյ՝ խուրաքանչիւր ոք առանձին՝ է՝ Քուրմ, և Պաշտօն, ո՛րպ՝ ասէ Պ՟ւլր. որ է ըստ այժմուցս 'ի դէպ, որ բազո՛ւմ խօսողք յԱստուածայնոյն՝ և զօրու՟ն միայն ո՛չ հասուք. և խօսողք՝ ո՛չ ըստ հաճոյից Հոգւոյն, այլ՝ ը՟ս օտարին

րին: վասն որոյ՝ հիացումն է ճառքս, և սարսափելի իմն՝ որոց միտս ունիմ. քանզի՝ խօսի, որ խօսին զԱստուծոյ՝ և զԱծայինսն, և խորհուրդք Խօսողին հայր յօտարս: զի՝ ոչ յաղագս որոյ խօսին՝ կրէ զաշխատութիւն, և ոչ մեղմով՝ և հեզիկ, որպէս ուսաւն՝ թէ՝ մի՛ ոք լուիցէ արտաքոյ զբարբառ նորա. այլ՝ յաղագս Փառաց Մարդկայնոյ, և ճայթելով՝ հնչեցուցանեն ՚ի լսելիս մարդկան: ուր շատ խօսութեան բանք՝ իբրև՝ յաղբիւրէ բղխեն, ո՛չ՝ ասացն ումն ՚ի հնոցն, և զկծեցուցանեն զգինարբուս՝ և զհրապարակս: ո՞վ ոք՝ զսոսա ո՛չ ողբասցէ՝ որ միտս ունիցի. և եթէ՝ ո՛չ ոք զչարիցի ասեմ. թէ և՝ որք յորդորեն զնոսա՝ այսպիսիս լինիլ՝ արգելում, ասելով զՔրիստոսին. տալ վրէժս յարենէն Աբելի Արդարոյ, մինչև յարիւնն Զաքարիայ. որ կայ ՚ի մէջ Տաճարին՝ և Սեղանոյն: այլ՝ աստանօր դադարեսցէ բանս, որպէս աշխատութիւ կրեալ՝ յականջս լինիլ խօսեցեալ մեռելոց: Այլ՝ Պատմութիւնս յաղագս՝ Արքային Տրդատայ ճշմարիտ է. քանզի՝ արբուցեալ նման դեղ մա հու, զրկեցան՚ի Լուսոյ Շնորհաց Ճառագայթից նորա. որ Թա գաւորեաց ամս՝ յիսուն՝ և վեց։

⁂

Աւարտեցաւ Հատոր Երկրորդ։

Այս երախտան՝ ամենա լէ·
Ճաշակողաց՝ յոյժ հաճե լէ։
Սիրոյ երկամբէք՝ յառաջա ծէ·
Շնորհել եղբարցըդ ցանկա լէ։
Թոճաւ՝ պատահեր յանցանա բաց·
Ենթակայեալ՝ Հերաց եալ մաց։
Հայցեմ յեղբարց տառաքն նեաց·
յիշել ըղհեշտ 'ի տարբե մը պաց։
Աշխատանօք յեր արտաքսն աց·
տանել հաղորդ՝ գէս ծըղբանաց։


ՀԱՅՐ
ՈՐԴԻ
ԱԾ
ՀՈԳԻ
սբ
ոչ է
է
է
ոչ է
ոչ է
է

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

Գլուխ ա̃ I

Մովսէսի Խորենացւոյ՝ Պատմութիւն մերոց Հայրենեաց.

ՈՉ ՀԵԱ ԽՕՍՈՒԹԻՒՆՔ ԵՂԵԱԼ մերոյ աշխարհիս, և ո՛չ ընդ ա̃մ ընդունականս անցանել ատակեալ՝ սակս՝ կարճութե̃ ժամանակիս. նաև՝ ո՛չ Մատենագրութիւնք Գրեգորի հո՛ւպ են առ մեզ. զի 'ի նմանէ պահելով զա՛կն անմոռաց՝ ընդ բնաւն անցանեաք. զի՝ մի՛ ինչ 'ի մեզէն մընասցէ 'ի գլխաւորա՛ց՝ և 'ի պիտանեաց, և արժանի յիշատակի մերոց Պարագրութեանցս. այլ՝ որչափ ջան, և յօժարութի̃ բաւեցին՝ պատմեցաք ստուգապէս, 'ի Մեծէն Աղեքսանդրէ մինչև ց'վախճան Սրբոյն Տրդատայ, յո՛յժ կանուխ՝ և հեռի ժամանակօք. վասն որոյ՝ մի զմեզ այպանեա՛լ՝ պարսաւիցես. զի՝ ահա՛ որ ինչ առ մերովքս ժամանակօքս եղև. կամ՝ դո՛յզն ինչ հեռի, զրուցեցից քեզ անսխալ: Երրո՛րդ առնելով գիրս՝ որ ինչ յետ Սրբոյն Տրդատայ մինչև 'ի սպառումն Արշակունեաց ազգին 'ի Թագաւորութենէն. և Զաւակի Սրբոյն Գրիգորի 'ի Քահանայութենէ. հառաջակա՛ց խօսիւք անցանելով ը̃ Պատմութիւնս. որպէս՝ զի մի՛ երևեսցուք 'ի պերճաբանութիւնս գրաւել առ փափագ. այլ՝ ճշմարտութե̃ բանից մերոց կարօտեալ՝ ստէպ ստէպ՝ և անյա՛գ առնիցեն՝ զընթերցօղսն Պատմութե̃նէս մերոյ Հայրենեացն:

Պրակ Գ̃ 2

Որ ինչ յետ վախճանին Տրդատայ՝ ընդ Մեծն Վրթանէս, և ընդ Նորին Նախարարութեանն անցք:

Ի Ժամանակի Վախճանի Տրդատայ՝ հանդիպեցաւ Մեծն Վրթանէս 'ի Վկայարանի Սրբոյն

Յո

Յովհաննու՝ որ 'ի Հօրէ նորին՝ շնորհեալ էր 'ի Տարօն. ուր նենգագործեալ լերինն այնորիկ Բնակչաց 'ի սադրելոյ Նախարարացն, կամեցան սպանանել. որք անըմբռնելի ձեռամբ կապեալ՝ որպէս՝ առ Եղիսէիւն այնուիկ 'ի Հնումն՝ կամ, առ նորին ինքեան Ք՟ի Ա՟յ մերոյ զարկուցեալ Հրէայքն։ անվնաս անցեալ՝ գնայր յԵկեղէց Գաւառ՝ 'ի Թիլն յԱւանն, որ էր հանգստարան նորին եղբօրն Արիստակեայ. Եւ սգացեալ 'ի վ՟ր աշխարհիս Հայոց՝ որք յանիշխանութե՟ մնացեալք, յարեան ազգ յազգի վերայ՝ կոտորել զմիմեանս. ուստի՝ երեք Տոհմքն, որք զԲզնունականն, և Մանաւազեանն՝ և որ Գունին անուանելին, սպառեալ՝ բարձան 'ի միջոյ։

Պրակ Գ 3

Կաթողիկոսութիւն Սրբոյն Գրիգորիսի 'ի Բար եարոնոյ։

Մեծաւ ակնածութ՟բ առնէր վրէժխնդրութ՟ի հաւատոյ՝ և փառաց Երանելին Տրդատ. առաւել այնոցիկ՝ որք 'ի բացեայ կողմանքն էին՝ յիւրում իշխանութ՟են.

վասն որոյ՝ եկեալ Գործակալք կողմանցն Արեւելից Հիւսիսոյ. Վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի՝ Փայտակարան, ասեն ցԱրքայ. եթէ՝ կամիցիս ուղղութբ վարիլ կողմանցն այնոցիկ՝ ըստ այսմ հաւատոյ՝ առաքեա՛նց Եպիսկոպոս ՚ի Զաւակէ Սրբոյն Գրիգորի, զի՝ յոյժ փափաքելով խնդրեն. և դիտեմք հաստատի, զի՝ ՚ի հռչակեա՛լ անուանէն Գրիգորի, ակն ած իցեն և ՚ի նորին Զաւակացն։ Այսմ հաւանեալ Երանելին Տրդատ, տայ նոցա Եպիսկոպոս զՄանուկն Գրիգորիս՝ զԵրէց որդին Վրթանիսի. Թէպէտ՝ և յանկլութիւն աւուրցն հայելով՝ պարականոն զնորին վարկանէր, այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն. զմտաւ ածեալ՝ զՍողոմոն երկոտասանամեայ թագաւորեա՛լ Իլի. առաքէ՛ բազում համարձակութբ՝ հանդերձ Սանատրկաւ ոմամբ յիւրմէ՝ ազգէն Արշակունեաց։ Սորա երթեալ՝ օրինակ բարեաց լինէր. հայրենականօքն վարելով առաքինութբք։ այլ՝ կուսութբ գեր՚ի վերոյ, քան զՀայրն. և պատժականաւ՝ զոյգ ը թագաւ որին։ Իսկ՝ 'ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, 'ի դաւելոյ նորին Սանատրկոյ, և այլոց ոմանց հանապազասուտ արանց Աղուանից, սպանին զԵրանելին ընթադրեալ ձիովք Բարբարոսքն 'ի Վատնիանեան դաշտին՝ մերձ 'ի Կասբիականն կոչեցեալ ծով՝ զոր բարձեալ Սարկաւագայն նորուն՝ բերեալ 'ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարէն Աւանին։ Իսկ՝ Սանատրկոյ՝ թագ կապեալ ինքեան՝ ունի զքաղաքն Փայտակարան, զօրութե͞ օտարազգայ՝ խորհէր տիրել բոլորում Հայոց։

Պրակ Է 4

Որոշումն Բակուր Բդեշխին 'ի միաբանութենէ Հայոց. և խորհուրդ Նախարարացն թագաւորեցուցանել զԽոսրով։

Որպէս՝ յԱ͞ծայինսն գտանեմք՝ ասացեալ Պատմութի͞ւ Եբրայական ազգին, յետ Դատաւորացն 'ի ժամանակի անիշխանութե͞ն, և առանց խաղաղութեան՝ ոչ լինելոյ թագաւոր, և առն ըստ հաճոյից իւրոց գնալ. սապէս՝ և 'ի մերումս էր տեսանել աշխարհիս։ Քանզի՛ յետ վախճանի Երանելոյն Տրդատայ, մե՛ծ Իշխանն Բակուր, որ՝ Բդեա՛շխ Աղձնեա՛ց կոչիւր, տեսեալ՝ զՍանատրուկ թագաւորեալ ի՛ Փայտակարան, զնո՛յն ինքն խորհեցաւ. թէպէտ՝ եւ ո՛չ թագաւորել՝ զի՛ ո՛չ Արշակունի էր, այլ՝ Տիրագլուխ կամեցաւ լի՛նիլ։ Ձեղքեալ ՚ի միաբանութէ Հայոց, ձե՛ռս ետ յՈրմիզդ՝ Պարսի՛ց Արքայ. ուստի՝ ուշ ՚ի կո՛ւրծս անկեալ, եւ ՚ի միտս եկեալ Նախարարո՛յն Հայոց, ժողովեցան առ Մեծն Վրթանէս. եւ առաքեցին երկո՛ւս ՚ի պատուականս իշխանաց, զՄա՛ր՝ Իշխանն Ծոփաց, եւ զԳա՛գ՝ Իշխանն Հաշտենից. երթալ ՚ի Նախագահ Քաղաքն՝ առ Կա՛յսր Կոստանդոս՝ որդի Կոստանդիանոսի՝ Հանդերձ պատարագօ՛ք, եւ թղթով՝ որ ունէր օրինակ զա՛յս։

Պրակ Ե 5

Պատճէն Թղթոյն Հայոց։

Եպիսկոպոսապետն Վրթանէս՝ եւ որք ընդ նովաւ Եպիսկոպոսունք, եւ մե՛ծ Նախարարք Հայոց Մեծաց. Տեա՛ռն Մերոյ Ինքնակալի Կոստանդեա՛յ Կայսեր՝ խըն խնդա՛մք: Յո՛ւշ լիցի քեզ պայման ուխտի Հօր քոյ Կոստանդիանոսի, որ առ մերում Թագաւորին Տրդատայ: և մի՛ տայցես զաշխա՛րհս քո Պարսից՝ անա՟ծից. այլ՝ օգնեսցես մեզ զօրօք՝ Թագաւորեցուցանել զորդի՛ Տրդատայ՝ զԽոսրով: քան զի՝ Ա՟ծ ո՛չ միա՛յն զձե՛զ Հռոմայ, այլ և՝ զմ՟ Միջերկրեա՛յցս Տիրեցոյց. և ա՛հ զօրութեան ձերոյ եհաս մինչև 'ի ծագս երկրի: և մեք խնդրեմք առաւե՛լ քան զառաւել տիրե՛լ ձեզ ո՛ղջ լերուք: Այամ լսող եղեալ Կոստանդեայ՝ առաքեա՛ց զԱնտիոքոս՝ Յարդարիչ իւրոյ Պալատանն զօրա՛ւ ծանու՝ և ծիրանիս հանդերձ Պսակաւ, և Թուղթ՝ որ ունէր օրինակ զա՛յս:

Թուղթ Կոստանդեայ:

Օգոստոս՝ Ինքնակա՛լ Կայսր Կոստանդոս. Մ՝եծի՛ Արթանիսի՝ և համօրէն աշխարհակա՛նաց քոց խնդա՛լ: Առաքեցի ձեզ զօր յօգնականութիւն, և հրամա՛ն՝ Թագաւորեցուցանել ձեզ զԽոսրով՝ որդի Արքայի ձերո՛յ Տրդատայ. ո՟չ զի՝ 'ի բարեկարգութիւն հաստատեա՛լ մեզ ծառայեսջի՛ք մտերմութ՟բ: ո՛ղջ լերուք:

Պրակ զ 6

Գալուստն Անտիոքոսի՝ եւ գործք նորին։

Եկեալ Անտիոքոս՝ թագաւորեցոյց զԽոսրով, եւ չորեսին Սպարապետսն մատոյց ՚ի նոյն իշխանութիւն զօրու՝ զորս կացուցեալ էր Տրդատայ յիւրում կենդանութեան յետ մեռանելոյ Պայեկին իւրոյ Արտաւազդայ Մանդակունւոյ, որ Միագլխապետ էր ամ̃ Հայոց Զօրավար։ Առաջին՝ Բագարատ ասպետ, զօրավար ամ̃ գնդին Արեւմտեայ կողմանն. Երկրորդ՝ Միհրան՝ Առաջնորդ Վրաց՝ եւ Բդեաշխ Գուգարացւոց՝ Սպարապետ Հիւսիսային զօրուն. Երրորդ՝ Վահան Նահապետ Ամատունեաց՝ զօրավար Արեւելեայ գնդին. Չորրորդ՝ Մանաճիհր Ռշտունեաց՝ Սպարապետ Հարաւային զօրուն։ Եւ բաժանեալ ետ նց̃ զիւրաքանչիւր զօրս. եւ առաքեաց զՄանաճիհր Հարաւային զօրօք, եւ զԿիլիկեցիս զօրս ընդ նմա՝ զկողմամբք Ասորեստանի, եւ Միջագետաց. եւ զՎահան՝ Նահապետ Ամատունեաց՝ Արեւելեայ գնդաւն, եւ զԳաղատացի զօրս ընդ նմա, ա-

ռա

ռաքեաց Ատրպատական 'ի պահ ունիլ յԱրքայէն Պարսից. և իւր թողեալ զԹագաւորն Խոսրով՝ քանզի՝ փոքր էր յանձնէ, և անօսր ոսկերօք, և ոչ գոլ 'ի նմանութի պատերազմական հասակի. առեալ ընդ իւր զՄիհրան, և զԲագարատ՝ իւրեանց զօրօք, միահամուռ ընդ Յունականաւն՝ խաղաց 'ի վր Սանատրկոյ. Իսկ՝ նորա Պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան, ինքն առ Շապուհ փութացեալ անկանի հանդերձ Աղուանից Նախարարօքն. զոր տեսեալ Անտիոքայ, եթէ՝ ոչ 'ի խաղաղութիւն հնազանդութե նուաճեցան, հրաման տայ՝ առ իւր զիշխանութի պառակտելոցն նուաղեցուցանել. և իւր ժողովեալ զհարկս՝ առ Կայսրն գնաց.

Պրակ Է 7

Յանցանք Մանաճիհրի առ Մեծն Յակոբ՝ և մահ.

Երթեալ Մանաճիհր Հայոց Հարաւային գնդաւն, և Կիլիկեցւոց զօրօք՝ զկողմամբք Ասորեստանի. Ճակատս տուեալ ընդ Բակուր Բդեշխի սաստակէ զնա և զզօրս նր՟, և զՊարսիկս՝ օգնականս եկեալ նման՝ հալածականս առնէ. և զորդի Ռակրոյ՝ զՇեշայ՝ ձերբակալ արարեալ՝ հանդերձ երկաթի կապանօք առաքէ Խոսրովայ. և զգաւառս իշխանութ՟ե նր՟ սրով դատէ յանխնայ. ոչ միայն՝ զՄարտիկսն, այլ և՝ զՄամ՟կ շինականս. և բազում գերի առեալ՚ի կողմանցն Մծբնայ: Ընդ որս՝ և սարկաւագունս ութ սրբոյ Եպիսկոպոսին Յակոբայ. զորոյ զհետ եկեալ Յակոբայ, համոզէ զՄանաճիհր՝ արձակել զգերութիւնն Մամկին, իբրև՝ զոչինչ մեղուցելոց: Որում ոչ հաւանեալ Մանաճիհր, պատճառէ զՌուքայ: և Յակոբու դէմ եդեալ առ Ռուքայ, առաւել ևս՝ զչարն Մանաճիհր, և՚ի սադրելոյ Գաւառականայն՝ զութեսին Սարկաւագունն նր՟, ուր՚ի կալանսն՝ հրամայէ՚ի ծով ընկենուլ. զոր լուեալ մեծին Յակոբայ՝ դառնայ՚ի տեղի իւր լի բարկութ՟բ, որպէս Մովսէսն՝ յերեսաց փարաւոնի: և ելեալ՚ի լեառն ինչ՝ յորում երևէր Գաւառն ա՟մ, անէծ զՄանաճիհր, և զգաւառն ա՟մ: և ոչ յամեցին՝ Դատաստանք Ա՟ծայինք հասանել'ի վ՟ր. և նման Հերովդի սատակի մանաճիհր. և պտղաբերութ՟ի ջրաւորա՛ց գաւառին՝ դարձաւ յաղտաղտուկ. եղեալ'ի վ՟ր երկինք պղնձի՝ ըստ գրեցելումն. և ծով հակառակեալ՝ յինքն ընդունէր զսահմանս անդաստանաց. զոր լուեալ մեծին Վրթանայ՝ և Արքային Խոսրովայ, ցասուցեալ հրամայեն արձակել զգերեալսն, և առնոյն այր մաղթել ապաշխարութ՟բ, զի՝ դարձցի սրտմտութ՟ի Տ՟ն. զոր՝ յետ ելից Յակովբայ յաշխարհէս ժառանգորդի մանաճհրի գեղեցիկ ապաշխարութ՟բ՝ ուժգին արտասուօք՝ և հառաչմամբ, նորին բարեխօսութ՟բ գտեալ բժշկութ՟ի ինքեան, և գաւառին:

Պրակ Է 8

Յաղագս Թագաւորելոյն փոքր Խոսրովու, և փոխելոյ զարքունիսն՝ և տնկելոյ զանտառն:

ՅԵրկրորդ ամի Յազկերտի Արքայի Պարսից: և յութերորդ ամի Ինքնակալութ՟են Կոստանդեայ, յօգնականութ՟ե նորին Թագաւորեաց Խոսրով: ո՛չինչ արութ՟ի քաջութ՟ե ցուցեալ, ոչ՝

զհայրն, այլ՝ և ոչ վասն հատուածելոց կողմանցն հակառակեցաւ ինչ՝ յետ միոյ նուագին, զոր 'ի Յունականացն կրեցին զօրացն. այլ՝ 'ի կամս թողեալ զարքայն Պարսից՝ խաղաղութիւն ընդ նմա առնէ. բաւական համարեալ՝ մնացելոց սահմանացս տիրել. ամենևին ոչ ունելով փարել աշխարհական մտածութիւնս. զի թէպէտ էր մարմնով փոքր, այլ ոչ որպէս Մակեդոնացին Աղեքսանդր, որ միայն երեք կանգնոց ունելով չափ հասակի. և ոչ զհոգւոյն խափանէր աժխոյժս։ Իսկ՝ նր՟ զքաջուն՟, և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ. զբօսանաց՝ և հաւորսութե՟ց, և այլոց որսոց պարապեալ։ Նորին աղագաւ՝ և անտառս առ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նր՟ կոչի մինչև ց'այսօր ժամանակի։ Նա և զարքունիսն վերոյ անտառին փոխէ յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ՝ որ ըստ Պարսկական լեզուին՝ Դուին կոչի, որ թարգմանի՝ Բլուր. քանզի՝ 'ի ժամանակի յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, և օդք ջերմայինք պղտորեալ ժանտահոտութեամբ փչէին. յորմէ ոչ կա

րա

րացեալ ժուժել՝ որք յԱրտաշատ բնակեալ էին, կամաւ յանձնառու էին զփոփոխումն։

Գլուխ Թ 9

Որ ինչ յաւուրս սորա, ՚ի Հիւսիսականաց ազգաց արշաւանք ՚ի մեզ՝ եւ Նահատակութիւնք Վահանայ Ամատունւոյ։

Յաւուրս սորա՝ միաբանեալ Հիւսիսոյ Բնակիչք Կաւկասու, գիտացեալ զթուլասրտութիւն նորա. եւ առաւել ՚ի հրապուրելոյ մաղթանաց Սանատրկոյ՝ գաղտնի ՚ի հրամանէ Շապհոյ՝ Պարսից արքայի, արշաւեալ ՚ի միջոց աշխարհիս մեծաւ ամբոխիւ, որպէս թէ երիւք բիւրովք։ Որոց պատահեալ պատերազմաւ Արեւելեայ, եւ Արեւմտեայ մեր զօրուն Հայոց՝ հանդերձ Զօրապետօքն Բագարատաւ Ասպետիւ, եւ Վահանաւ Ամատունեաց Նահապետիւ։ զի Հարաւային մեր զօրք առ արքային Խոսրովայ էին յաշխարհին Ծոփաց. եւ զՍինհրան սպանանէ՝ եւ զՀիւսիսային մեր գունդն հարեալ ՚ի թիկունս կեցեալ թշնամեացն, եւ հասեալ ՚ի դրունս Վաղարշապատու՝ պաշարէին։ Որոյ յանկարծ ՚

՚ի վե՛ր հասեալ Արևմտեա՛յ՝ և Արև
ելեա՛յ մե՛ր զօրուն, և անտառի՛ մերձե՛լ
զօշակա՛ն առապարա՛ւն՝ ո՛չ ետուն
ժամանել՝ ճապաղել ՚ի նետաձգու
թի՟ս, ըստ օրինի իւրեանց սովորու
թե՟ն, երագեալ սաստկապէս՝ զհե՛տ
ունելով քաջաձիո՛ցն ՚ի դժուարս
քարանց՝ և ՚ի վիմո՛ւտ տեղիս. մինչև
յո՛չ կամից գումարեալ թշնամեա՛ցն
՚ի ճակատ. և Զօրագլո՛ւխ նոցա
կաւորա՛ց լեալ անուա՛մբ ո՛մն Վկայ վա
ռեա՛լ թաղաւ կաճեայ, բոլորո՛վ
ա̃միւ պարածածկեցեալ՝ շահատա
կէր ՚ի մէջ զօրացն. յորմէ ակնակա
ռոյց լեալ՝ մինչև զօրավի՛գն օգնակա
նութեան ո՛չինչ կարէին վնասել.
քանզի՝ հարեա՛լ նիզակաւ՝ ճա՛խր
առնոյր կաճեա՛յն: Յայնժամ, Քա
ջին Վահանայ Ամատունւոյ՝ հայե
ցեա՛լ յԵկեղեցին Կաթուղիկէ, ա
սէ՝ օգնեա՛ ինձ Ա՟ծ, որ զԴաւթեա՛յն
պարսաքա՛րն դիպեցուցեր ճակա
տու Այլազգւոյ՝ խրոխտացելո՛յն
Գողիադու. ուղղեա՛ և զնիզա՛կս իմ
ական հզօրի՛ս այսորիկ: և ո՛չ վրիպե
ցաւ ՚ի խնդրոյն՝ ընդ գաւա՛կ ձիոյն
հարեալ՝ յերկի՛ր կործանեաց զա
հագի՛ն վիրա՛գն: այսպիսի դիպու

ած ՚ի փախուստ յորդորեա՛ց զթշնամին, և ՚ի յաղթութիւն զՀայոց գունդն զօրացոյց։ Եւ աստէ դարձեալ յաշխարհն Ծոփաց, Բագարատ՝ վկայ հաստատուն՝ առանց նախանձու՝ լինի առ Արքայն Վահանայ քաջութեան՝ և առաքինութեն դիպուածոյն. վասն որոյ՝ պարգևէ նմա Արքայ զտեղի ճակատուն՝ զՕշական՝ ուր ինքնակամ դիմագրաւ նահատակ եղև. և փոխանակ Միհրանայ կարգէ զԳարջուլ՝ Նահապետ Խոռխոռունեաց ՚ի վերայ զօրուն։

Պրակ Ժ 10

Վախճան Խոսրովու, և պատերազմ Հայոց ընդ Պարսս։

Յետ այսր՝ գիտացեալ Խոսրովու՝ թէ, ձեռն Շապհոյ Պարսից Արքայի՝ է ը՟ թշնամիսն, լուծանէ՛ զխաղաղութիւնն՝ որ ընդ նմա. և զմասնաւոր հարկն արգելու ՚ի նմանէ, տալով և զայն Կայսեր. և ածեալ զզօրս Յունաց՝ ը՟դիմանայ արքային Պարսից. բայց՝ ոչ յերկարեալ զկեանս իւր, վախճանի՝ թագաւորեալ ամս ինն. և

բար

բարձեալ զնա՝ թաղեցին յԱնի՛ առ Հօրն: Եւ ժողովեալ մեծին Վրթանիսի զա՟մ ՙՆախարարս Հայոց՝, հանդերձ զօրօք՝ և զօրապետօք, յանձն առնէ զաշխարհս Արշօրի Կամսարականի, ո՟պ՝ Գլխաւորի, և յոյժ Պատուականի՝ յետ Արքայի. և իւր առեալ զՏիրան՝ որդի Խոսրովու՝ զնոյն առ Կայսր, զի՝ Թագաւոր Հայոց, 'ի տեղի Հօր իւրոյ կացուսցէ: Բայց՝ արքայն Պարսից Շապուհ, իբրև՝ լուաւ զմահն Խոսրովայ, և եթէ որդի ն՟ր Տիրան, առ Կայսր գնաց, գումարէ զօրս բազումս, 'ի ձեռն ՙՆերսեհի՝ Եղբօր իւրոյ, ո՟պ՝ զի թագաւորեցուցանել զնա Հայոց՝ խորհեցեալ. և առաքէ յաշխարհս՝ մեր, իբր՝ Անառաջնորդ զնա վարկուցեալ: Որոց պատահեալ Արշօրի Կամսարականի՝ հանդերձ ա՟մ Հայաստանեայց Զօրօք, Ճակատ տուեալ 'ի Մռուղն անուանեալ դաշտի. և թէպէտ՝ և բազումք 'ի ՙՆախարարացն անկան 'ի պատերազմին, սակայն՝ յաղթեալ գնդին Հայոց՝ փախստական առնէին զզօրս Պարսիցն. և պահէին զն՟ս՝ մինչև ց'գալն Տիրանայ 'ի Հայս:

Յա

Գլուխ Ժ͞Ա 11

Յաղագս՝ թագաւորելոյն Տիրանայ, և գովելոյ յաշխարհէս Մեծէն Վրթանեսէ՝ և փոխանորդելոյ զԱթոռն Սրբոյ Յուսկանն։

ՅԼօթն, և 'ի տասն ամի Ինքնակալութ͞ե իւրում, Օգոստոս Կոստանդեայ՝ որդի Կոստանդիանոսի, թագաւորեցուցանէ զՏիրան՝ որդի Խոսրովու, և առաքէ 'ի Հայս՝ հանդերձ Մեծաւ Վրթանաւ։ որոյ եկեալ՝ ունի զաշխարհս մեր խաղաղութ͞բ. հաշտութ͞ի ընդ Պա՛րսս առնելով, և ո՛չ պատերազմունս. հարկելով Յունաց, այլև՝ մասնաւո՛ր ինչ Պարսից։ կա՛յր 'ի հանդարտութեան, իբրև զՀա՛յր իւր. ո՛չինչ արութ͞ի քաջութեան՝ և մ͞ի ցուցեալ, և ո՛չ Հայրենի առաքինութեանն հետևեալ, այլ՝ թուլացեալ յ͞ոյժ բարեպաշտութենէ, գաղտնի, ո՛չ իշխելով համարձա՛կ պատուել՝ զա՛խտոն, 'ի Մեծէն Վրթանայ։ Իսկ՝ յե՛տ ընլոյ տա՛սն, և հինգ ամ Եպիսկոպոսութեան Մեծին Վրթանայ, փոխի՛ յաշխարհէս՝ յերրորդ ամի Տիրանայ. և 'ի հրամանէ՛ նորին, տարեալ՝ հանգուցանեն 'ի

Գեօղն Թորդան։ Իբր՝ Մարգարէական ակամբ հայեցեալ․ որ՝ զկնի բազում ժամանակաց, և Հօրն՝ ՚ի նոյն տեղւոջ հանգուցան՛ Նշխարքն․ և յաջորդէ զԱթոռն՝ Յուսիկ՝ նորին որդի,՚ի չորրորդ ամի Տիրանայ յոյժ հեռաւոր եղեալ Հարցն առաքինութեան։

Գլուխ ԺԲ 12

Պատերազմ Շապհոյ ընդ Կոստանդեայ։

Բայց՝ Շապուհ Որմզդեան առ Տիրան՝ մեր արքայ՝ առաւել սէր հաստատեաց, մինչև՝ զօրավիգն օգնականութե՟ եղեալ՝ Թափէ՛ զնա՛ յարձակմանէ Հիւսիսականացն ազգաց, որք միաբանեալ՝ էին արտաքս, քան՝ զկապանն Ճորայ, և բնակեցան ՚ի սահմանս Աղուանից՝ ամս չորս։ Եւ զա՛յլս յոլո՛վս թագաւորս նուա՛ճեալ Շապհոյ՝ և զա՛զգս Բարբարոսաց՝ բազո՛ւմս ՚ի սատարութի՟ կալեալ՝ յարձակեցաւ՚ի Միջերկրեայսն՝ և՚ի Պաղեստինէ։ Իսկ՝ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս՝ սպառազինեցաւ ընդդէմ Պարսից, և տուեալ ճակատս՝ երկոքին կողմունքն պարտեցան

ցան. քանզի՝ բազո՛ւմք յերկաքանչիւրոյն, և ո՛չ մի՛ 'ի միւսոյ թիկո՛ւնս դարձոյց. մինչև՝ 'ի հաւանութ̃ի եկեալ՝ արարին խաղաղութ̃ի, ամ̃ս սակաւս։ և դարձեալ 'ի Պարսից Կոստանդեայ՝ հիւանդացեա՛լ յերկա՛ր, վախճանեցաւ 'ի Մոմփեւստին՝ Քաղաքի Կիւլիկեցւոց, թագաւորեալ ամ̃ս 23։ 'Ի ո̃ր աւուրս՝ երևեցաւ Խա՛չ լուսեղէն յերկնից յԵ̃ղմ, ամենայն քաղաքին, հաւատացելոց՝ և անհաւատից, առ Երանելեաւն Կիւրղիւ։

Պրակ ժ̃գ 13

Եթէ՝ չէ որդ Տեառն էջեալ ընդ առաջ Յուլիանոսի՝ պատասխանի տայ։

Յայսու ժամանակաւ՝ թագաւորեաց Յունաց՝ Ամպարի՛շտն Յուլիանոս, և ուրացաւ նա զԱ̃ծ, և պաշտեաց զԿո՛ւռս, և յարոյց հալածանս՝ և խռովութ̃ի Եկեղեցւոյ. և բազմադիմի ջանա՛յր չեջուցանել զՀ̃աւատս Քրիստոնէութեան. բայց՝ ո՛չ բռնութ̃բ հաւանեցուցանէր, այլ՝ խորամանկեա՛լ հնարէր, զի՝ զՔ̃ի Պաշտօնն խափանեսցէ՝ և Կռոց երկրպագեսցեն.

և յորժամ, զնա՛ ընդդէմ Պարսից երաւո՛ւնքն զինեցին, և անցեալ ը̃ Կիւլիկեայ՝ հասանէր ՚ի Միջագետս. և զօրացն Պարսից կողմնապահաց՝ հատեալ զչուան կաւա̀ն կամրջին Եփրատու՝ զգուշանային անցիցն: Իսկ՝ Տիրան մե՛ր Թագաւոր՝ իջեալ ընդ առա՛ջ Յուլիանու՝ դիմէ ՚ի վ̃ր Պարսիցն զօրաց՝ և հալածական առնէ. և հարեալ սպասաւորութ̃ի՝ անցուցանէ զամբարիշտն Յուլիանոս՝ հանդերձ բազմութ̃ե ա՛յր ու ձիոյն, և մեծարի ՚ի նմանէ յո՛յժ. և խնդրե՛ս առնէ՝ զի մի՛ տարցէ զնա ՚ի Պա՛րսս ընդ իւր, իբր՝ անկա՛ր գոլ ձիավարե՛լ. և յանձն առեալ Յուլիանոս՝ խնդրելո՛վ ՚ի նմանէ զօ՛րս՝ և պատանդս: և Տիրանայ խնայեալ յԱրշակ՝ որդի իւր Երկրորդ, տա՛յ նմա զորդի իւր՝ զՏրդատ զԵրրո՛րդ, հանդերձ կընաւ՝ և որդւո՛վք. և զԹոռն իւր՝ զՏիրիթ, զորդի մեռելոյն Արտաշիսի՝ որդւոյ իւրոյ Անդրանկանն. զորս առեա՛լ Յուլիանու հետայն առաքէ ՚ի Բիւզանդիոն. և զՏիրան արձակէ յիւր յաշխարհս. և տա՛յ զիւր պատկերն՝ նկարեալ ՚ի տախ տանկս, յորում և զդիւաց ոմանց է՟ նմա. և հրամայէ՝ յԵկեղեցւոջ կանգնել յԱրևելից կուսէ, ասելով, թէ՝ որք միանգամ ընդ Հռոմայեցւոց իշխանութ՟ են՝ դո՛յնպէս առնել: Զոր յանձին կալեալ Տիրանայ՝ առեալ բերէ, ո՛չ ածելով զմտաւ, եթէ՝ խաբէութ՟՝ Դիւաց երկրպագելին պատկերք:

Գլուխ ժդ՟ 14

Վկայութիւն Սրբոյ Յուսկանն, և Դանիէլի:

Արդ՝ հասեալ Տիրանայ 'ի գաւառն Ծոփաց՝ յիւրում Արքայական Եկեղեցւոջն կամեցաւ՝ կանգնել զպատկերն. զոր յափշտակեալ Սրբոյ Յուսկանն 'ի ձեռաց Արքայի, և ընկեցեալ յերկիր՝ կոխեալ՝ մանրեաց, զգացուցանելով Արքայի զիրին խորամանկութիւն. որում ո՛չինչ ունկնդիր եղև Տիրան, զմտաւածեալ՝ 'ի Յուլիանոսէ ինքն մեռանիլ, իբրև՝ զկոխօղ Թագաւորական Պատկերի. և յաւելեալ բորբոքումն չարութե՟ն՝ զոր ունէր ընդ Սրբոյ Յուսկանն, յաղագս՝ հանապազորդ յանդիմանութեան իւրոց յանցանաց. հրամայեաց՝ ջալոտիւք հարկանե՛լ յերկար, մինչև 'ի հարկանելն աւանդեաց զհոգին. և յե՛տ կատարման նր, Թշնամանեա՛լ լինէր անիծիւք Տիրան 'ի Ծերունւոյ Քահանայէն Դանիէլէ, որ էր աշակերտ՝ Սրբոյն Գրիգորի և Հիւպերբե՛տ հրամայեաց՝ զնա խեղդամա՛հ առնել. զոր բարձեալ աշակերտացն՝ Թաղեցին 'ի Միայնարանի նորին, որ կոչի՝ Հացեա՛ց դրախտ. իսկ՝ զմարմին Սրբոյ Յուսկանն՝ բարձեալ՝ տարան առ Հա՛յրն, 'ի գեօղն Թորդան. որ եկաց յեպիսկոպոսապետութեան՝ ամս 6.

Գլուխ ԺԵ 15

Վ՞ՐԷ, ըստ որդ՝ Զօրայ [illegible] Ռշտունեան, [illegible] 'ի Յուլիանոսէ, և պատկերին աղագաւ:

Յետ սպանման Սրբո՛յ Յուսկանն՝ և քրտմնջե՛լ Նախարարացն, եհա՛ն առ Նահապետն Ռշտունեա՛ց Զօրայն. որ՝ փոխանակ Մանաճհրի, Սպարապետ էր Հայոց՝ Հարաւային գնդին, և հրամանաւ Տիրանայ՝ զօրօք զհե՛տ Յուլիանոսի. որոյ լուեալ զայսպիսի համբաւ, ասէ ց՚ զօրս իւր. մի՛ վարեսցուք հրա հրամանաւ այնորիկ, որ գայթակղութ՟իս արկանէ յԵրկրպագութ՟ին Ք՟ի, և սպանանէ զՍ՟բս ն՟ր. և մի ճանապարհակցեսցուք այսմ ամբարիշտ թագաւորի. և համակամ իւր արարեալ զզօրսն՝ դառնայ, և եկեալ ամրանայ 'ի Տմորիս՝ մինչև՝ տեսցէ, թէ՝ զի՞նչ արասցեն այլ Նախարարքն. բայց՝ սուրհանդակքն Յուլիանու յառաջ ժամանեն, քանզի՝ գային նորա, բերելով Տիրանայ թուղթ, որ ունէր օրինակ՝ այսպէս.

Թուղթ Յուլիանոսի առ Տիրան

Ինքնակալն Յուլիանոս՝ Սնունդ 'ի Նաքարայ Արամազդայ որդի, և յանմահութիւն ճակատագրեալ. Տիրանայ Գործակալն մերում խնդալ. զզօրս՝ զոր արձակեցէր ընդ մեզ, առեալ Զօրագլխին նոցին՝ 'ի բաց դարձաւ. և մեք բաւական էաք՝ յանթիւ գնդաց մերոց զհետ առաքել՝ ունիլ զնա, այլ՝ թոյլ տուաք, վասն երկուց պատճառաց. առաջին, զի՝ մի ասասցեն ըզմէնջ Պարսիկք, եթէ՝ բռնութ՟բ, և ոչ կամաւ՝ ածեր զզօրսն. երկրորդ, փորձեալ զքո միամտութիւնդ. արդ՝ եթէ ոչ 'ի քումմէ կամաց ա-

րար

րա՛ր նա զայն, սատակեսցես զնա ազգաւի՛մք, առ 'ի չթողո՛ւլ մնացորդ, ապա թէ ո՛չ՝ երդուեա՛լ 'ի Ոաս, որ զթագաւորութ՟իս շնորհեաց մեզ՝ և յԱթենաս, որ զյաղթութիւնն, զի 'ի դառնա՛լն իմում, անպարտելի՛ զօրութ՟բ իմով, վանեցի՛ց զքե՛զ՝ և զաշխա՛րհդ: Տեսեա՛լ զա՛յս Տիրանայ՝ և յո՛յժ զարհուրեալ, առաքէ զՄարդպետն կոչեցեալ՝ Հա՛յր, հանդերձ երդմամբ, և կոչէ՛ առ ինքն զՕուրա՛: Իսկ՝ զօրա՛ց ն՟ր տեսեալ՝ եթէ, լուեա՛լ կան ամենա՛յն Նախարարքն, ըստ սովորական անժուժութեան մերո՛յ ազգիս, ցրուեցան իւրաքանչիւր 'ի տո՛ւնս իւրեանց, և միայնացեալ Օուրայ՝ գա՛յ առ Արքայ ո՛չ կամաւ. և Արքայի զՕուրա՛ 'ի բո՛ւռն առեալ, ունի և զամո՛ւր նոցին զԱղթամա՛ր, և բառնայ զամենեսին սատակմամբ. բայց զմանուկ մի՝ որդի Մեհենդակայ, եղբօր ն՟ր, փախուցեալ Պայեկա՛ցն՝ ապրեցուցին. իսկ՝ Արքայ փոխանա՛կ նորա կարգէ զՄաղմո՛ւթ՝ Տէր Անձտայ:

Գլուխ Ժզ 16

Յաղագս՝ մահուան որդւոց Յուսկանն, և յաջորդելոյ զԱղբիան Փառներսեհի:

Բայց՝ ՚ի Տիրանայ խնդրէին Նախարարք Հայոց այր արժանի՝ կացուցանել յԵպիսկոպոսութի՟, փոխանակ Յուսկանն. քանզի՝ որդւոց նորին ո՛չ գովելի վա՛րս ստացեալ, անարժանք եղեն առաքելականին այնորիկ շնորհի. այլ և՝ մա՛հ ևս հասեա՛լ նոցա յաւո՛ւրսն յայնս, յո՛յժ ահագին, և սարսափման՝ Լսողաց արժանաւոր: ՚Ի միում տեղւոջ շանթահա՛ր լեալ երկոցունց, որոց Պա՛պ՝ և Աթանագինէ՝ կոչէին անուանք. ո՛չ թողլով զաւակ հասակեայ՝ պատշաճ այնմ: Բայց՝ մանուկ մի՝ որդի Աթանագինեի, որում Ներսէս անուն ճանաչիւր՝ որ ՚ի Կեսարիայ էր՝ ՚ի հրահանգս. և զայնու ժամանակաւ գնացեալ ՚ի Բիւզանդիոն՝ առնուլ կին զդուստր Ապիոնեայ ուրումն Մեծի Իշխանի. և վ՟ն՝ ո՛չ կալոյ այր յազգէ Գրիգորի, ընտրեցին զՓառներսէհ ոմն յԱշտիշատից Տարօնոյ. և կացուցին Քահանայապետ ՚ի տասներորդ ամի Տի

րա

Գլուխ ԺԷ 17

Սրբէ՝ ողջ արբ 'ի Շապհոյ խաբեցաւ Տիրան՝ երթալով 'ի կոչ՝ նորա, և կուրացաւ 'ի նմանէ։

Յետ այսր ամի՝ ամբարիշտն Յուլիանոս՝ արժանի չար իւրոյ խորհրդոյն, վէրս ընկալեալ 'ի փորոտիսն՝ սատակի 'ի Պարսս. դարձեալ թագաւոր ունելով զՅովբիանոս, որ 'ի ճանապարհի վախճանեալ՝ ոչ ժամանեաց 'ի Բիւզանդիոն։ Իսկ Արքային Պարսից՝ Շապհոյ՝ զհետ նոցա կրթեալ, և խաբկանօք կոչէ զՏիրան առ ինքն. գրելով թուղթ՝ այսպէս։

Թուղթ Շապհոյ առ Տիրան։

Մազդեզանց քաջ, և Արեգակնակից արեգական՝ Շապուհ՝ Արքայից Արքայ. 'ի բարւոջ մտրում յիշեալ, եղբայր սիրելի Տիրան՝ Հայոց Արքայ, ողջոյն շատ։ Ճշմարտիւ 'ի վերայ հասաք՝ եթէ զսէրն հաստատուն պահեցեր՝ ոչ գալով ընդ Կայսեր՝ յաշխարհս Պարսից. այլև՝ զգունդն, զոր ետու 'ի քէն՝ զհետ յղեալ, կոչեցեր 'ի բաց։ և զա զառաջինն՝ զոր արարե՛րն՝ գիտե՛մք զի մի ընդ աշխա՛րհ քո անցանիցէ՝ արարեր, զոր ինքն իսկ առնելո՛ց էր. ուստի՝ և մեր պահապանքն գնդին վատասրտեալ ՚ի բա՛ց եկին՝ զքեզ պատճառելով. վ՟ որոյ՝ մե՛ր ցասուցեալ՝ սալարի ն՟ց ցլո՛ւ արիւն արբուցաք. և քո՛ւմ թագաւորութե՟դ՝ ո՛չ ինչ վնասեցաք, երդուեալ ՚ի Սե՛հր՝ մե՛ծ Ա՟ծ. միա՛յն փութա՛, տեսանե՛լ զմեզ՝ զի խորհեա՛լ ինչ՝ թողցուք զքեզ, վասն հասարակա՛ց օգտի: Զայս տեսեալ Տիրանայ, խելագարեալ՝ գնա՛ց առ նա. քանզի՝ արժանն տանէր զնա՛ ՚ի տեղի հատուցմանն՝ զոր տեսեալ Շապհոյ՝ կշտամբեա՛ց զնա բանիւք, ՚յանդիման իւրոյ զօրացն. և զա՛չս ն՟ր կուրացոյց՝ ո՟պ՝ զՍեդեկիայն: այնու թէ և արդեօք՝ վրէ՛ժս ընդ Սրբոյ Աըննն այնորիկ պահանջեցաւ, որով լուսաւորիւր աշխարհ, ըստ Աւետարանին ձայնի՝ գոլ Լոյս աշխարհի. յորմէ խաւարեցոյց Տիրոնդ Հայս, խաւարեցաւ և ինքն, կալեալ զթագաւորութիւնն՝ ամս տասն՝ և վեց:

Գլուխ ԺԸ 18

Յաղագս՝ Թագաւորեցուցանելոյ Շապհոյ զԱրշակ, և արշաւանս 'ի Յոյնս։

ԲԱյց՝ Շապուհ Թագաւորեցոյց փոխանակ Տիրանայ՝ զորդի նորին զԱրշակ, ակնածելով 'ի զօրացն Հայոց. զի մի՝ խափանիչ առաջի արկելոց իւրոյ գործոցն լինիցին. այսպէս իմն պատեհ համարեալ։ բարերարութիւն առնելով՝ իբր հաստատելով զաշխարհս. նուաճեաց և զմեծ Նախարարացն, պատանդս առնելով յամենեցունց. և փոխանակ Վահանայ Ամատունւոյ, Սպարապետ կացուցեալ Հայոց՝ արևելեայ զօրուն՝ զհաւատարիմ իւր զՎաղէնակ Սիւնի, և նմա յանձն արարեալ զՀայս, ինքն զհետ Յունական զօրուն կրթէր։ և հասեալ 'ի Բիւթանիա, և նստէր ամիս յոլովս, և ոչինչ կարացեալ առնել. սիւն առ ծովուն կանգնէ՝ և առիւծ 'ի վերայ դնէ՝ մատեան ընդ ոտիւքն ունելով. որ նշանակէ այսպիսի ինչ. քանզի՝ առիւծ հզօր է՝ 'ի գազանս, նոյնպէս՝ և Պարսկականն՝ 'ի Թագաւորս. և մատեան՝ ժողովիչ իմաստ մաստութեան, որպէս՝ Հռովմայեցւոց Տէրութիւնն։

Պրակ ԺԹ 19

Թէ՝ որպէս արհամարհեաց Արշակ զԹագաւորն Յունաց։

Ընդ այնոսիկ այսմ ժամանակս յարեաւ խռովութիւն Շապհոյ Արքայի Պարսից՝ 'ի Հիւսիսականաց ազգաց. և Յունաց Թագաւորեալ Վալենտինեանոս. և զումարտակ 'ի միջերկրեայս առաքել հալածական առնէ զզօրս Պարսից. ապա՝ առաքէ առ Արշակ մեր Թագաւոր Թուղթ։

Թուղթ Վաղենտինեանոսի՝ առ Արշակ։

Ինքնակալ Վաղենտինեանոս Օգոստոս, հանդերձ աթոռակցաւ մերով, և Թագակցաւ Վաղէսիւ Կայսերաւ. Արշակայ՝ Հայոց Արքայի՝ խնդալ։ Պարտ է յիշել քեզ զչարիսն՝ որք անցին ընդ ձեզ 'ի Պարսից անաստուածից. և զերախտիսն՝ որ 'ի մէնջ 'ի վաղնջուց մինչև ց'քեզ. և հեռանալ 'ի նոցանէ, և մօտիլ 'ի մեզ. որպէս՝ զի խառնեալ ընդ զօրս մեր մարտիցես ընդ նմա. և հանդերձ գոհացողական բանիւք մերոց զօրավարացդ՝ առա առաքեսցես զհա՛րկս աշխարհիդ. և առեալ զեղբայր քո, և որ ընդ նմա վտարանդիքս ՚ի բաց ածցին։ ո՛ղջ լե՛ր՝ ամ՟ հնազանդութ՟ Հռովմայեցւոց Տէրութեան։ Իսկ՝ Արշակ և ո՛չ պատասխանի առնէ թղթոյն, այլ՝ նշկահեալ՝ արհամարհեաց զնա։ Նա և ո՛չ՝ զհետ ճ՟ապհոյ միտեցաւ՝ ամ՟ սրտիւ, այլ՝ անձնահա՛ճ եղեալ՝ պարծելով հանճ՟զ ՚ի գինեբրբուս՝ և յե՛րգս վարձկանաց, քա՛ջ, և արի՛ երևիլ՝ քան զԱքիլլաս, իսկ՝ արդեա՛մբք Թերսիտեա՛յ նմանեալ՝ կաղի, և սրագլխոյ։ վտարանդեալ յիւրոց՝ Նախագլխացն, մինչև՝ զամբարտաւանութեան ընկալաւ վարձ։

Պրակ Ի̅ 20

Յաղագս՝ Մեծին Ներսեսի՝ և բարեկարգութեանն՝ որ ՚ի նմանէ։

ՅԵրրորդ ամի՝ Թագաւորութեանն Արշակայ, եկաց Եպիսկոպոսապետ Հայոց՝ Մեծն Ներսէս, Որդի Աթանագինի, Որդւոյ Յուսկանն, Որդւոյ Վրթանայ, Որդւոյ Մեծին Գրիգորի։ և դարձեալ՚ի Բիւզանդիայ՝ ՚ի Կեսարիայ, և եկեալ՚ի Հա՛յս, զամ՟ն կարգս ուղ ուղղութե̃՝ իւրոյ Հայրենեացն՝ նորոգեաց. այլև՝ առաւել ևս. քանզի՝ զհարեպաշտութի̃ Յունաց աշխարհին՝ զոր ետես, մանաւանդ ՚ի Թագաւորեալ քաղաքն, ՚ի սմն նորոգէ: ժողով արարեալ Եպիսկոպոսաց՝ և համօրէն աշխարհականօք՝ կանոնական սահմանադրութ̃ հաստատեաց զողորմածութի̃. խլելով և զանգթութենն արմատ, որ բնաբոյր սովորութ̃ էր յերկրիս մերում: ք̃զի՝ բորոտք հալածեալ լինէին, իբր պիղծ յօրինացն համարեալ. զուրուկս փախստեայս առնէին, զի մի՛ յայլս փոխեսցի ախտն. որոց դադար՝ անապատք, և ամայիք. և ծածկոյթ՝ վէմք, և մացառք. ոչ յումեքէ գտանելով մխիթարութիւն թշուառութեանց: առ այսոքիւք՝ և հաշմք անդամովք՝ ոչ հաշուեալ լինէին. և Հիւրք անձանօթք՝ ոչ ընդունէին. և Օտարք՝ ոչ ժողովէին: Իսկ՝ նր̃ հրամայեալ՝ ըստ գաւառաց՝ գաւառաց՝ շինել Աղքատանոցս՝ ՚ի խորշս, և՚ի զերծս տեղիս. զի՝ փոխանակ Հիւանդանոցայն Յունաց՝ լինիցին, ՚ի մխիթարութի̃ մարմնոց վշտացելոց. և բա

ժա

ժանեաց 'ի նոսա զաւանս՝ և զագարակս, պտղաբերեալ յարդեանց անդաստանաց, և 'ի կթոց արօտականաց, և 'ի գեղմնից. զի պաշտեսցեն զնոսա հարկաւ բացէ՛ 'ի բաց. և նոքա մի՛ ելցեն՝ ըստ բնակութեան իւրեանց. և յանձն արար Խադայ ուսմանն, որ էր 'ի Մարգաց Կարնայ, Սարկաւագ իւր։

Սահմանէ՝ և յամ գեօղս՝ Մանս շինել, զի լիցի Օտարանոցք, և Տեղի Սննդեան Որբոց՝ և Այրեաց, և անունողաց տածումն։ Շինէ և յանապատս՝ և յանմարդ տեղիս Եղբայրանոցս՝ և Մենաստանս, և առանձնակեացս խրճիթս. և Հայր՝ և Տեսուչ նց՝ կարգէ զՇաղիտա, և զԵպիփան, և զԵփրեմ, և զԳինդ որ յազգէն Սլկունեաց, և զայլս ոմանս բազումս։ Եւ զերկուս զայսոսիկ 'ի Նախարարութեանց բառնայ յազգաց. մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վս ագահելոյ սեփհական ազատութեն՝ առնէին. և միւս՝ որ 'ի վր մեռելոց գործէին օճիրս, ըստ սովորական հեթանոսութեն. և էր այնուհետև՝ տեսանել զաշխարհս մեր, ոչ որպէս՝ զբար

բա

բարուս պղանդակեալ, այլ՝ ներև զքաղաքացիս համեստացեալ:

Գլուխ ի̅ա̅ 21

Սպանումն Տրդատայ՝ եղբօր Արշակայ, և երթալ Սրբոյն Ներսէսի 'ի Բիւզանդիոն՝ և դարձուցանել զպատանդսն:

Սաստի՛կ, և յոյժ ահաւո՛ր էր 'ի վերայ անիրաւաց Վաղէնտինեանոս: ուստի՛ և զբազո՛ւմ Իշխանս վ̅ն յափշտակութե̅ սաստակեաց. և զՌոդանոս Ներքինապետ՝ այրեա՛ց կենդանւոյն. քանզի՛ երկիցս հրամայեալ՝ ոչ դարձոյց զյափշտակութի̅ կնոջ միոյ այրւոյ: Նա՛ 'ի նմին աւուր՝ հասեալ ա՛յնց հրեշտակաց, զորս 'ի Հա՛յոց առաքեաց՝ ցասուցեալ առաւե՛լ, զրուցով խորոխտալոյն Արշակայ. և վասն զի՝ 'ի ժամուն յա՛յնմիկ առ ձե՛ռն ունէր զբարկութիւնն, հրամայէ՝ զՏրդատ՝ եղբա՛յր նորա՝ զՀա՛յր Գնելոյ՝ սպանանել. և Թէոդոսի՝ զօրու ծանու՝ 'ի վ̅ր Հայոց դիմել. որոյ հասեալ 'ի սահմանս Հայոց՝ զարհուրի Արշակ. և առաքէ ը̅ առա՛ջ նր̅, զՄեծն Ներսէս՝ որոյ երթեալ, և 'ի հանդարտութի̅ զԹագաւո՛րն շրջեալ, մեծարի 'ի նոցա նէ յոյժ. նա եւ՝ զպատանդան խնդրեալ, առնու՝ եւ դառնայ։ եւ Կոյս մի՝ անուն Ոլոմպիադայ՝ յազգէ կայսեր՝ կին ածէ Արշակայ։ Բայց՝ կայսերն բարերարութիւն արարեալ Մանկանն Գնելոյ՝ յաղագս զուր 'ի նոցանէ մահու հօրն նորա Տրդատայ. տայ նմա զպատիւ հիւպատոսութե̃, եւ գանձս յոլովս։ Ընդ որ՝ խանդացեալ Տիրիթ, խորհէր նմա չարիս հանապազ, ըսպասելով 'ի դիպող աւուր։

Գլուխ իբ̃ 22

Եթէ՝ որպէս եղեւ խռովութիւն Արշակայ ընդ Գնելոյ, եւ մահ Տիրանայ։

ԻՍԿ՝ Գնել եկեալ յաւանն Կուաշ, որ յոտին Արագածն կոչեցեալ լերինն՝ առ կուրացեալ հօրն իւր Տիրան, զի՝ ց'այնժամ կենդանի էր։ եւ Տիրանայ սգացեալ՝ ողբալով դառնապէս զՏրդատ՝ որդի̃ իւր՝ զհայր Գնելոյ, իւր զինքն ունելով պատճառս՝ սպանմանն նորա. վ̃ս որոյ՝ տայ Գնելոյ զա̃մ ինչս իւր, եւ զկալուածս գիւղից՝ եւ Դաստակերտաց. եւ 'ի նմին աւանի 'ի Կուաշ՝ հրամայէ բնակել։ Ապա առնու

Գնէլ իւր կին՝ զՓառանձեմ տ̃կն անուն՝ յազգէն Սիւնեաց, և թագաւորապէս արարեալ հարսանիս, տայ առատապէս պարգևս՝ ամենայն Նախարարացն. որոց հաճեալ ընդ նա՝ և սիրեալ՝ ետուն զզաւակս իւրեանց, զոր առեալ՝ մեծապէս հանդերձեաց զինու՝ և զարդու. և յաւելին՝ ևս սիրել զնա: Աստանօր՝ եգիտ Տիրիթ պատճառս քսութ̃ե. և մատուցեալ առ արքայն՝ հանդերձ բարեկամաւ իւրով՝ Վարդանաւ՝ Զինակրաւ արքայի, որ 'ի Մամիկոնեան Տոհմէն էր, ասեն՝ ո՞չ գիտես՝ զի խորհեալ է Գնելոյ՝ սպանանել զքեզ, զի ինքն փոխանակ թագաւորեսցէ. ահա՛ տե՛ս՝ Արքայ՝ զնշան իրին. զի՝ բնակեցաւ յԱրարատ՝ 'ի կալուածս ձեր թագաւոր̃ց. և սիրտ ամ̃ Նախարարացն՝ եղև ը̃ նմա. քանզի՝ Կայսերքն նիւթելով զայդ, ետուն նմա զպատիւ Հիւպատոսութեանդ. և գանձս սաստիկս՝ որով պատրեաց զՆախարարսն:

Երդնոյր Վարդան յարևն արքային և ասէր, իմովք ականջօք լուայ 'ի Գնելոյ՝ զի ասէր. թէ՝ ո՛չ թողում Հօր Եղբօր իմում, զվրէժ մահուան Հօր Իմոյ՝ որ վ՟ դորա եղև։ Այսմ հաւատացեալ Արշակ, յղէ զնոյն իսկ Մարդան առ Գնէլ, թէ ընդէ՞ր բնակեցար յԱյրարատ՝ և լուծեր զկարգ Հայրենեաց։ Քանզի՝ սովորութիւն էր յԱյրարատ բնակել միայն Արքայի, և որդւոյ նր՟ միոյ՝ զոր փոխանորդ թագաւորին պահէին, և այլոց Արշակ ունեաց բնակել՝ 'ի Գաւառս Հաշտենից, և Աղիովտից, և Առբերանւոյ, հանդերձ ռոճկօք, և մտովք յարքունուստ։ և արդ՝ ընտրել է քեզ՝ կամ, ընդունել զմահ, կամ՝ գնալ յԱյրարատոյ՝ և արձակել զուստերս Նախարարացդ 'ի քէն։ զայս լուեալ Գնէլոյ՝ արար զհրամանս Արքայի, և գնաց յԱղիովիտ՝ և յԱռբերանի։ Բայց Տիրան՝ Հայր նր՟՝ պատգամս խիստս յղեաց՝ առ որդին իւր Արշակ։ վ՟ որոյ՝ հեղձամահ եղև յիւրոց Սենեկապետացն՝ 'ի գաղտնի հրամանէ Արքայի, և 'ի նմին աւանի Կուաշ՝ թաղեցաւ՝ ոչ արժանի եղեալ հարցն գերեզմանաց։ Թէ արդեօք՝ զփոխարէն Դանիէլի մահուանն ԱԾ՟, հատոյց։ որովք չափով՝ չափեաց, չափեցաւ եղև ըստ գրոյն։

Պրակ իգ 23

Գրգռեալ՝ խանդաւ Արշակայ ընդ Գնելոյ՝ և սպանանել զնա։

Ապա՝ եղանէ Արքայ զթիկամբք Սասեաց՝ առնել որս յիւրում սիրեցեալ գաւառի՝ 'ի Կոմգայովտի, և եղեւ որս առատիկ, ուրախացեալ Արշակ՝ 'ի գինիս պարծէր, մինչ այլոց ուրուք 'ի թագաւորաց՝ մեռանիլ այնչափ բազմութ̄ի Կրեաց՝ 'ի միում ժամու։ Աստանօր, նորոգեն զնենգութ̄ին, Տիրիթ՝ և Վարդան ասելով, Գնելոյ բազում երէս՝ քան զայս՝ ունիլ ընդ նմին աւուրս յիւրումն երկրին, որ՝ Շահապիվան անուանի· որ 'ի մայրենի հաւուն իւրոյ՝ Գնելոյ Գնունւոյ հասեալ էր ց'նա· վս̄ որոյ՝ առաքէ առ նա հրովարտակ այսպէս։ Արշակ Արքայ՝ Հայոց մեծաց, Գնելոյ որդւոյ իմոյ՝ խնդալ։ Տեսցես տեղիս քաջ երէս 'ի լերինս ծաղկաց զպուրակացեր ջրով, և պատրաստեսցես· զի՝ եկեալ՝ ը̄դ արժանեօք թագաւորաց՝ հանդիպեսցուք որսոց։ Եւ երանդզհետ հրովարտակին երթեալ Արշակայ· խորհէր՝ եթէ ոչ ըստ հրամանին գտցէ արարեալ Պօնէլոյ, պատճառս 'ի վ՟ր եղեալ՝ իբր թէ չարակնեալց զուրախանալն արքայ ի՝ կասպեցէ՛ զնա. այլ՝ իբրև ետես՝ զոր չե՛ր երբեք տեսեալ՝ այնպիսի պատրաստութ՟ի որսոց, և բազմութ՟ի էրէոց, խոցեալ խորհրդովք նախանձու՝ և կասկածանաց. հրամայեաց 'ի նոյն որսին սպանանել զՊօնէլ. իբր թէ՝ ընդ խամբս ինչ վրիպական էրէոյ կամելով ձգել, նմա պատահեաց նետն. որոյ առեալ զայսպիսի հրամանն՝ վաղվաղակի կատարէ. ո՛չ այնչափ՝ յաղագս հրամանի թագաւորին, քանթէ՝ վ՟ն կամացն Տիրիթայ՝ իւրոյ սիրելւոյ։ Իսկ Արշակայ հանդերձ Նախարարօքն, իջուցեալ 'ի դաշտ մի Աղիովտի՝ զդին Պօնէլոյ՝ թաղեաց յԱրքունական Բաղչաքին Օարիշատի, 'ի չքմեղի՛կս եղեալ՝ կոծ մեծ առնէ։

Պրակ ի՟դ 24

ՍՌԷ՝ որպէս խորհեցաւ Արշակ՝ առանձնաւ
չէին Պօնէլոյ, յորմէ եղև Պատ։

Թէպէտ՝ և Արշակ կարծեց՝ գործել զանխուլ զչարիսն, այն՝ որ ո՛չ ծածկի յամենատեսն ականէն Ա. Ծ, յայտնի և աշխարհի՝ առ ՚ի մեղուցելոյն սպանուցումն, որպէս՝ զմահն Տիրանայ՝ և Գնելոյ:

Քանզի՝ գիտացեալ ծմ ուրուք, իմացաւ զայս՝ և Մեծն Ներսէս, և անէծ զԱրշակ՝ և զառիթ սպանմանն: և գնացեալ՝ նստաւ ՚ի սուգ, զաւուրս բազումս՝ ոպ̃ Սամուէլ՝ վ̃ս Սաւուղայ: Իսկ Արշակ ոչ՝ զղջացեալ՝ ապաշաւեաց, այլ՝ անամօթեալ՝ ագահելով ՚ի գանձս սպանելոյն՝ և ՚ի ժառանգութիւն յաւել՝ առնուլ զկին նորին՝ զՓառանձեմ, յորմէ եղև պատանի մի՝ որ անուանեցաւ՝ Պապ: Այս Փառանձեմ գործեաց՝ և զանլուր և զանկասկածելի չարիս, և զսարսափման լսելեաց արժանաւորս: անարժանիւ ոմամբ սուտ անուն՝ Քահանայիւ, ՚ի Կենաց Դեղն՝ զմահացուն խառնեալ՝ ետ Ողոմպիադայ, առաջին կնոջ Արշակայ՝ և ելոյծ ՚ի կենցաղոյս՝ սակս տիկնութեանն մախանաց: Նոյնպէս՝ և զՎաղինակ տայ Արշակայ սպանանել, և փոխանակ կարգել զիւր հայրն՝ զԱնտիոքոս:

Պրակ իե՟ 25

Սպանումն Տէրէնտեայ ։

Իբրև եղև խաղաղութի՟ շապհոյ 'ի հիւսիսականաց ազգաց, և պարապ առեալ 'ի պատերազմացն, յայտնեաց զցասումն՝ զոր ունէր առ Արշակ՝ վասն ոչ նմա, այլ Կայսեր հարկելոյ՝ զայնքան ամս • սակս որոյ՝ առաքէ առ նա Արշակ զՏիրիթ՝ և զնորին սիրեցեալն՝ Սարդան, արժանի պատարագօք՝ խնդրել զհաշտութի։ Բայց՝ քանզի քինախնդիր՝ անցելոց մարտից՝ կամեցել լինիլ՝ շապուհ, ինքն ելանէ պատերազմել ընդ Յոյնս • որոյ աղագաւ՝ խնդրէ զԱրշակ՝ մեր թագաւոր՝ հանդերձ ամ՟ զօրօքն՝ ընդ իւր լինիլ։ Իսկ՝ Արշակ՝ ոչ կամեցաւ իւրովին երթալ, այլ՝ բարձուրս եդեալ՝ առաքէ դոյզն գունդ՝ զկնի շապհոյ • և իւր բարկացեալ Տիրիթայ՝ ընկենու զնա 'ի պատուոյն, ո՟պ զի՝ թէ 'ինչ հրապուրանաց եղև այն՝ յաղագս ատելութեանն՝ զոր ունէր առ Յոյնս. և առաւելևս՝ գրգռէ զարքայ Սատակ զինակիրն ն՟ր, նախանձ պահելով ընդ եղբօրն՝ վ՟ս աղջկան միոյ հար ձի։ Վ՟ն որոյ՝ նախատեաց զն՟մ Արքայ՝ անմօթալեօք բանիւք՝ և կսկծեցուցանողօք։ որոց ո՛չ կարացեալ տանել՝ այնպիսում վատթարութեան՝ և պարսաւանաց, դէ՛մ եդեալ՝ գնացին առ Շապուհ հատուա՟ծ։ Ընդ որ՝ առաւե՛լ ևս՝ զայրագնեալ արշակ, հրամայէ նոյն Վահակայ՝ զհետ կրթել բազմաձեռն՝ դնդաւ՝ զիո՛ւր և հասցէ՝ սպանցէ զն՟մ. զոր՝ ո՛չ հեղգացաւ կատարել Վահակ, Թէպէտ՝ և եղբայր նր՟ էր Վարդան։ և խնդրեցաւ արիւն անպարտ ՚ի Տիրիթայ ամպարշտէ՝ ըստ անիծիցն Ներսեհի. և Վարդանայ ՚ի հարազատէն իւրմէ, մեռանիլ յեղբօրէ։

Պրակ ի՟զ 26

Պատումն Շապհոյ ՚ի Տիգրանակերտի։

ԱՅԼ Շապուհ գայ՝ հասանէ ՚ի Տիգրանակերտ՝ մեր քաղաք։ կան ընդդէմ նր՟ Քաղաքացիքն՝ հանդերձ գումարտակ գընդաւն. քանզի՝ Անտիոքոս՝ Նահապետ Սիւնեաց՝ որ՝ աներ էր Արշակայ՝ և Վերակացու քաղաքին, հրամայեաց աղխել ընդդէմ շապհոյ։ և ո՛չ միա՛յն՝ արգել, այլ՝ և ո՛չ հրեշտակս առաքեաց առ նա՛, եւ ոչ՝ զնորայն ընկալաւ։ եւ հզօր կուռոյ եղելոյ՝ զբաղո՛ւմն 'ի Պարսից՝ սպանանեն. եւ 'ի պարտութ՟ն մատնեալ գնդին շապհոյ, դառնայ անդրէն 'ի Մծբին. եւ հանդիստ առեալ զօրացն՝ եւ արծարծեա՛լ յաշխատութենէն՝ խնդրէ՛ր առնուլ զՏիգրանակերտ. եւ ոչ թուլացուցին նմա յառաջախաղա՛ց գունդք, եւ Լրտեսք պատաղէ՛լ զայնու, իբր թէ՝ Յունա՛ց հանդարտեցի գործ. եւ շապհոյ յառաջ անցեալ՝ գրէ առ նոսա օրինակ զայս։

Մազդեզանց Վռա՛մ Շապո՛ւհ՝ Արքայից Արքայ, Տիգրանակերտեցեաց, որք՝ ոչ եւս էք անուանելոց 'ի մէջ արեա՛ց՝ եւ անարեաց։ Ես կամէի 'ի ձէնջ սկսեալ յա՟մառաջին կո՛յ քաղաքս խաղաղութ՟ե՝ եւ քաջօրէն ազատութ՟ե զմուտն առնել. եւ եթէ դուք Տիգրանակերտեա՛յք՝ որք առաջին էք, ոչ շահաստանութ՟ե ասե՛մ, այլ՝ 'ի մտէ՛ ուղկորութ՟ես, ը՟դէ՛մ կացէք ինձ. 'ի ձէնջ ուսցին՝ եւ ա՛յլք զդո՛յն առնել. այլ 'ի դարձին իմում, ո՛յնպէս բարկութ՟ե վանեցի՛ց զձեզ, զի՝ կրկին եղիջիք օրինակ խեռեա՛լ ստահակելոց։

Գլուխ Իէ 27

Եթէ որպէս՝ Արշակաւան շինեցաւ՝ եւ կործանեցաւ, եւ ապա Անէ:

Բայց Արշակ եւս ժպրհեցաւ՝ առնել գործ անմտութեան: 'ի թիկանց կուսէ լերինն Մասեաց՝ շինէ Ձեռակերտ, ժողով մարդկան մեղաւորաց: Եւ հրաման՝ որ ոք անկեալ՝ անդր բնակիցէ, մի՛ լիցին 'ի վե̃ նր̃ իրաւունք դատաստանի. եւ նոյն ժամայն՝ ծովացեալ՝ լցաւ մարդկութբ̃ հովիտն ա̃մ. քանզի՝ Աւանդառուք՝ եւ Պարտականք, եւ Ծառայք, եւ Վնասակարք՝ եւ Գողք՝ եւ Սպանողք, եւ Կնահանք, եւ այլք այսպիսիք՝ փախուցեալք՝ անդր անկանէին, եւ ոչ կայր նց̃ այց՝ եւ խնդիր: եւ բազումանգամ, բողոքեալ Նախարարացն, ոչինչ լուաւ նոցա Արշակ. մինչեւ՝ առ Շապուհ ունել նց̃ բողոք: եւ եղեւ 'ի դառնալն Շապհոյ 'ի Յունաց, առաքեաց զմի 'ի Սպարապետաց իւրոց, եւ Հայ գունդ ը̃ նմա՝ թէ դէպ լինիլ ունիլ զԱրշակ. եւ նա խոյս ետ 'ի նոցանէ զկողմամբք Կաւկասոյ՝ Արաց միաբանելով: Իսկ Սպարապետն Պարսից

ե

եղեալ ՚ի Հայս, ՚ի ձեռնտու լինելոյ Նախարարացն, առնու զամուրն Անի. և գերէ զա̃մ գանձս արքունի՝ որ ՚ի նմա. այլ և՝ զոսկերս Թագաւորացն. ոչ գիտեմ, թէ՝ վ̃նախատինս առնելոյ Արշակայ. եթէ՝ վասն Հմայից Հեթանոսականաց. զոր ապա միաղթեալ Նախարարացն՝ թափեցին, և թաղեցին յաւանին յԱղձս՝ որ՝ յոտին Արագածն կոչեցեալ լերին. քանզի՝ ոչ գիտացին ընտրել զոսկերս հեթանոսացն՝ և հաւատացելոցն, զի՝ ը̃ միմեանս էր խառնակեալ Պերոզայն. յաղագս այնր՝ ոչ արժանի համարեցան, ՚ի դերս Սրբոցն թաղել ՚ի Վաղարշապատ քաղաքի։ Եւ Նախարարացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ՚ի վ̃ր Արքունական Ձեռակերտին՝ Արշակաւանի՝ և հարին զնա սրով սուսերի՝ յառնէ մինչև ց՚կին, բայց ՚ի տղայոցն սարնդխացեաց. քանզի՝ դառնացեալ էին ՚ի վ̃ր ծառայից իւրեանց՝ և յանցաւորաց։ զոր թէպէտ վաղ՝ գիտացեալ Մեծին Ներսիսի, ոչ յառաջ՝ քան զկատարելն՝ ժամանեաց հասանել. այլ ՚ի կատար գործոյն՝ հասեալ եգիտ բաժանեալ

զտղայ

զաղայս կոտորելոյն, զի՝ վարեսցեն 'ի գերութիւն, ոմ՝ զհեւաւոր Թշնամեաց. զորս Թափեալ Մեծին՝ Ներսէսի՝ հրամայէ կրել որթովք 'ի գոմ մի. և դարմանս, և մնուցօղս նոցին կարգեալ. որք՝ յետոյ անուանեցեալ անուանեցան Որթք՝ այնորիկ աղագաւ։

Պրակ ԻԸ 28

Վասն Տիգրանակերտի՝ և բնաբարձ ման դոան։

ԻՍԿ Շապուհ եկեալ 'ի Տիգրանակերտ, դարձեալ աղխեցին՝ ընդդիմանալ նմա. և ելեալ 'ի պարիսպն՝ աղաղակէին. գնա 'ի մէնջ՝ Շապուհ, զի մեք չարիս յերկրորդումն ընդ քեզ՝ առաւել ես՝ քան զառաջինն՝ անյուսացանիցեմք պատերազմաւ. և նա պատասխանեաց, ո՜վ Պաջքդ 'ի Հայոց, որք զանձինս արգելեալ՝ պահէք ընդ պարսպօք Տիգրանակերտի՝ և արտաքս ձայն արկանէք ապառնալեաց. զի՝ քաջ արանց է՝ յընդարձակ, և 'ի դաշտի կռուել. և՝ կանանց գործ է՝ արգելուլ՝ փակել զինքեանս՝ յերկիւղէ, առ հանդերձեալ կռուին. և զայս ասացեալ՝ դար ձաւ առ Յոյնսն գերեալս՝ զինուորս, ասէ՝ թէ՝ ձերով մարտիւ առից զքաղաքս, զամենեսեան զձեզ արարից ազատս՝ հանդերձ ընտանեօք ձերովք. և Պարսկական զօրուն՝ շուրջ զքաղաքաւն՝ հրամայեաց ընթանալ՝ և նետիւք խոցոտել զ'ի վեր պարսպին. և Յունայն մատուցեալ՝ բռնութե̄ յեցուցին 'ի պարիսպն՝ զկոչեցեալ էշան. և այս գործի մեքենայից անուանաւոր, յերից երից արանց մղելով տարեալ: 'ի ներքուստ ակրովք, և երկբերանովք՝ և կտցաւոր մրճովք փորելով զհիմունսն. և նգահարս արարեալ զայն՝ որ 'ի Հայկազնւոյն Տիգրանայ՝ հոծեալ՝ և յարմարեալ որմունք. քակեալ՝ ընկեցին, և հուրս 'ի դըրունսն վառեալ. և յամ կողմանց՝ հուր՝ և քարինք՝ և նետք, և տէգք՝ ձգեալ լինէին. և խոցոտեալ մերքն՝ յապուշ դառնային: և'ի նեղքս մըտեալ բոլոր զօրն, և ձեռն Պարսկական ոչ զօրէր բազմախողխող երկաթն՝ արեամբ արբուցանել՝ մինչև՝ ապաժոյժ արիւն սպանելոյն լցեալ 'ի հիմունս՝ ծաւալէր: այլ՝ Յունականն ձեռն՝ 'ի քթթել ա-

կան

կամ՝ հրձիգ զա՟մ երկիրն առներ զփայտակե՛րտսն. և շապուհ զմնացեալսն 'ի կոտորածէն գերեալ, դառնա՛յ՝ չուէ՛ր 'ի Պարսս. և հրեշտա՛կս՝ առ որ 'ի Հա՛յս գո՛ւնդքն էին առաքեալ. ապա՝ ազա՛տ զՍիւնեա՛ցն հրամայէ առնել զՏոհմս։

Պրակ ի՟թ 29

Յաղագս՝ պատերազմին Արշակայ ընդ Նախարարս իւր, և Հաշտարարութե երանելւոյն 'ի [illegible]։

Դարձեալ յարեան խռովութիւն Հայոց 'ի նոյն ազգաց, և խաղաղութի՟ 'ի Յոյնս շրջեցաւ։ սոցա՛ խաղաղութիւն 'ի նոցա՛ խռովութի՟, և նոցա՛ խռովութի՟ 'ի սոցա՛ խաղաղութե՟. որզան, վախճան միոյն, միւսոյն լինին սկզբունք. քանզի՝ հիւանդացեալ Վաղենտինեանոս 'ի բերդին՝ որ կոչի՝, Բերգիտոն վճարեցաւ 'ի կենցաղոյս։ եղբօրն փոխանորդելով զտէրութիւնն։ յետ բարեբախտագոյն Վաղէսի, պատերազմաւ Գոթա՛ցն,՝ յաղթութբ՟ դարձին։ և սա՛յն հետայն՝ առաքել զօր 'ի Միջագե՛տս՝ և 'ի Հա՛յս՝ յաղագս տու՛ելոյ զօրու՛ն յօգնութիւն

շապ

շապհոյ․ բայց՝ Արշակայ եկեալ՝
Մրայլէ գնդաւ՝ ժողովեալ զսա
կաւս՝ և յի՛ւր մտերմաց, և տա՛յ պա
տերազմ՝ ընդ Նախարա՛րսն՝ ընդ այ
նոսիկ՝ խնդրելով զվրէ՛ժ ձեռակեր
տին իւրոյ, Արշակաւանու։ Մխա
բանեա՛լ և նոցա՝ առաջնորդութ̃բ
Ներսեհի՝ որդւոյ Կամսարայ՝ ընդ
դիմանան Արշակայ պատերազմաւ։
Եւ հզօ՛ր մարտի եղելոյ, բազումք
յերկաքանչիւրոցն անկան 'ի կող
մանցն։ Քանզի՝ ո՛րք դիպեալ ա
րանց, ո՛չ ոք զպարտութիւն յանձն
առնոյր։ և մինչ դեռ՝ յա՛յսմ էին՝ հա
սանէին զօրք Կայսերականք․ ապա՝
տեսեալ Արշակայ՝ եթէ՝ թշնամիք
են նր̃ Շապուհ, և Մաղէս՝ և իւր
Նախարարքն, տարակուսեալ յամե
նեցունց, յղէ՛ առ Մեծն Ներսէս՝
բազո՛ւմ անգամ՝ աղաչելով, խոս
տանայր՝ դառնալ յա̃մ Ճանապար
հաց չարեաց, և լինել ըստ կամա՛ց
նր̃, և ապաշխարել 'ի քո՛ւրձ, և 'ի մո
խիր․ միայն՝ զինա եկեսցէ, և արաս
ցէ խաղաղութ̃ի, և թափեսցէ զնա
'ի ձեռաց հզօրա՛յն Յունաց․ սա՛պէս
և 'ի Նախարարա՛ցն ստէպ ստէպ՝
զմիմեանց զկնի գային մաղթանքն՝

նո

նորին աղագաւ. նմա և՝ Եպիսկոպոսացն ժողովարարեալ՝ պաղատանս մատուցանէին, զի մի՛ անփոյթ արասցէ զկորստենէ իւրոյն վիճակի:
Ապա հաւանեալ Մեծին Ներսիսի եկն 'ի մէջ նց, և արար խաղաղունի· լսելով նմա Թագաւորին, և Նախարարացն, բայց 'ի Նահապետէն Արծրունեաց Մեհրուժանայ, և 'ի նորին քեռ առնէն՝ Վահանայ Մամիկոնէի, որք անլսող եղեալ՝ գնացին առ Շապուհ: Իսկ այլ Նախարարքն ամ հաստատեցին ուխտ՝ զի յայնմհետէ Թագաւորն վարեսցէ ուղղութբ, և նոքա ծառայեսցեն միամտութբ, և այս 'ի մէջ նոցա:
Նաւ առ զօրսն Յունաց երթեալ Սրբոյն Ներսիսի, աղաչէր՝ մի ինչ աշխարհիս մեղանչել, այլ առնուլ զհարկս՝ և զորդի Արշակայ՝ զՊապ հանդերձ ամ Նախարարացն որդւոց՝ պատանդս՝ և դառնալ. որում լսող եղեալ՝ Բաղցր՝ և Մեծն Թէոդոս Զօրավար, դառնայ առ Կայսրն, պատանդօքն հանդերձ ը իւր տանելով զՄեծն Ներսէս՝ Թղթովն Արշակայ՝ որ ունէր օրինակ զայս:

Թուղթ Արշակայ առ Վաղէս։

Արշակ Արքայ Հայոց Մեծաց՝ և ա՟մ Նախարարք Արամեան ազինս։ Տեառն իմոյ՝ Ինքնակալ Վաղէսի Օգոստոսի՝ և որդւոյ քում՝ Գրատիանոսի Կայսեր՝ խընդա՛լ։ Մի՛ դիցէ Ինքնակալդ 'ի մտի՝ եթէ՝ առ ատե՛լ զձեզ նշկահեցաք, կամ՝ իբրև զհզօրս ինչ վարկանելով, արձակեցաք գո՛ւնդ՝ հէ՛ն՝ յերկի՛ր Յունաց. այլ մեծի՛ խռովուե՟դ՝ որ 'ի ձերում միջի շարժեցեալ եղև, գիտա՛կ եղեալ՝ երկուցեա՛լ 'ի Շապհոյ՝ եթէ՝ ո՛չ ոք թափէ՛ զմեզ 'ի ձեռա՛ց ն՟ր, օգնեցաք նմա դո՛յզն գընդաւ. այլ՝ ո՛չ ես ինքն Արշակ՝ եկի՛ ընդ նմա, զմիամտութիւն ձեզ պահելով. վ՟ որոյ՝ աւերեա՛լ գերել զաշխա՛րհս մեր, մինչև զոսկե՛րսն անգամ զհա՛րցն, բրեաց 'ի գերեզմանա՛ցն։ և արդ՝ հաւատացեա՛լ ձեր եղելոյս, զառաջին սէ՛րն առ մեզ հաստատո՛ւն պահեցէք. և մեք՝ առ ձեզ մտերի՟մն հատուսցուք ծառայութ՟ի։ Իսկ՝ Վաղէս ո՛չ զթուղթ՟ն ընթերցաւ, և ո՛չ ետե՛ս զՄեծն Ներսէս, այլ՝ բացէ՛ 'ի բա՛ց արտասահմանել զնա՝ հրամայէ, և որոյ զամենայն պատանդսն մատնել։

Գրակ Է 30

Յաղագս արտաքսման լինելոյ Մեծին Ներսիսի, եւ անկանել պատուհասեալ 'ի Աշշէ անբնակ։ Նաւբէ՝ որպէս հերահերեալ լինէին 'ի վերին խնամոցն։

Ի ժամանակին յայնմիկ՝ էր յաթոռ Եպիսկոպոսութեան Բիւզանդացւոց, Հոգեմարտն Մակեդոն։ եւ իբրեւ՝ էր հրաման արքունուստ, ոմ՝ զմի՛ անգամ խաբօղ եւ դրժօղ արքայի. մատուցեալ առ նա՝ ոմանց 'ի Հերձուածողաց, Աղանդոյն Արիոսի՝ ասեն. եթէ՝ դաւանես ընդ մեզ, թափէ զքեզ՝ Հայրն մեր Մակեդոն։ որում ոչ հաւանեալ՝ աքսորեցաւ։ 'ի նաւ ուղե՛ղն լինելոյ՝ ըստ խստաշունչ օդոյ ձմերայնոյն, ընկեցեալ 'ի կղզի ինչ՝ անապատ՝ ջարդեաց զնաւն. եւ Նաւորդացն՝ ոչ իշխեցեալ՝ մակուկաւն նաւել, մնացին տագնապեալ՝ ուտելով զարմատ անտառին. այլ 'ի տեսչութենէն Աստուծոյ՝ կերակրեալ լինէին ամիս ութ 'ի ձկանց՝ զորս ծով ընկենոյր կենդանիս։ Բայց Պապայ յանձնառեալ, հանդերձ

պա

Պրակ լա 31

Թէ՝ որպէս նորոգեաց Արշակ զամենայն Նախարարութիւնսն. Եւ վասն՝ Վարդոյ Մամկոյ Նահատակութեան:

Ի հաւանեալ Մեծին Ներսիսի, ատեաց Արշակ զամ Նախարարաց ուխտին, զոր եդ ընդ նոսա, և խնդրեաց զքէն Ձեռակերտին իւրոյ՝ Արշակաւանու: և կոտորեաց զբազում Նախարարս: Մանաւանդ՝ զազգն Կամսարականաց բառնայ 'ի միջոյ՝ չարակնելով ագահել յամուրն Արտագերս, և 'ի քաղաք Ոստանի նց Երուանդաշատ. և կոչեալ առ ինքն 'ի լքեալ արքունիսն Արմաւիր՝ իբր զազգականս իւր՝ 'ի պատճառս պատուոյ, և մեծարանաց. միահաղոյն՝ զայրս և զկանայս՝ հանդերձ մանկամբքն, հրամայեաց կոտորել, և ոչ ոք 'ի նոյանէ ապրեցաւ: Բայց՝ Սպանդարատ՝ որդի Արշօրի՝ քանզի՝ ունէր երկրորդ կին Արշակունի. որ և՝ բնակեցաւ 'ի նորին ժառանգութեան, 'ի կողմանս Տարօնոյ, և Հաշտենից. իբր՝ տրտունջ զհօրեղբօրենն եղեւ զՆերսեհէ. որոյ աղագաւ՝ և ո՛չ ՚ի կատարման նշ՟ դիպեցաւ. այլ՝ լոկ զբօթն՝ հանդերձ որդւովքն՝ Տաւարշաւ, և Գաղաւոննիւ, և բոլոր ընտանեօք՝ գնաց փախստական ՚ի Յոյնս:

Բայց ՚ի գնալն Մեծի Ներսիսի ՚ի Յոյնս, էր ձեռնադրեալ ըզՍարկաւագն՝ զԽադ՝ յԵպիսկոպոսութի՟ Բագրեւանդայ, և Արշարունեաց, և հաւատայց ՚ի նմա զգործս Վերակացութե՟ ամ՟ աշխարհին՝ ցըժամանակ իւրոյ դարձին: Այս Խադ՝ յամ՟ի նմանօղ եղեալ Մեծին Ներսիսի, առաւել ևս՝ ՚ի տեսչութի՟ աղքատաց. որոյ և շտեմարանքն իսկ՝ աղբերացան սքանչելապէս, իբր՝ առ Եղիայիւ, և Եղիսէիւ. և ՚ի յանդիմանել զԱրքայ՝ ահաւոր սաստիկէր, և աներկիւղ: և ո՛չ եղև կամագիւտ ՚ի նմա Սատանայ, բայց՝ առ միոյ Նուագի, զի՝ էր պճնող՝ առ հանդերձս, և ձիասէր. զոր պարսաւեալ՝ այպանէին փոխանակաբանեալ, որք ՚ի նմանէ յանդիմանեալք լինէին. վասն որոյ՝ թողեալ այնուհետև զպերճագոյն հանդերձսն՝ խարազնազգեստ եղեալ՝ իշաւ շըր ջէր, մինչև ց՚օր մահուան իւրոյ։

Գլուխ ԼԲ 32

Յաղագս որդւոյ՝ Արշակայ հրամայելոյ քարշել զԱրտանէմն զՍատ՝ և քարկոծել զնա կոճեր, առնելս յանդիմանութիւն նորոց յանցանաց։

Իսկ եղև 'ի սատակել Արշակայ զազգն Կամսարականաց, հրամայեաց զդիակունս նց քարշել՝ և ընկենուլ անթաղ՝ կերակուր լինել շանց. և ինքն՝ ոպ մեծաւ յաղթութբ պսակեալ՝ բարեկենդանութե կատարէր աւուրս. կուտել մրթերել զնոցայն հրամայելով՝ համբրս. զորոց պեղեալ երկուց խորս՝ յոյժ քաջախորս, և սաստկապէս լայնս՝ որ 'ի շինելն Նախճաւանին բերին սայլովք նոցին աւանի։ Իսկ Սայլորդայն՝ տեսեալ զոսկերս մարդկան գազանակուր եղելոյ՝ ցրուեալս առ եզերբ փոսին. հարցեալ՝ ուսան՝ իւրեանցն լինել Տերանց. հաւաքեալ 'ի սայլսն՝ ներքոյ եղեգանն, բերեալ թաղեցին 'ի նոյն խորս. զոր գտացեալ Արշակայ՝ հրամայէ, զՍայլորդան 'ի վր խորոցն կախել զփայտէ։ Բայց Խադայ՝ ոչ պատահել յառաջնում նուաղին, այսու ժամու հասանէ. և սկսեալ կշտամբել զարքայ՝ բանիւք յանդիմանութե՟: հրամայեաց Արշակ՝ քարշել զնա, և քարկոծ առնել: և քանզի՝ էին դստերա՛ց նր՟ տագերք 'ի մեծ նախարարութե՟ցն, 'ի կորովի՝ և 'ի քա՛ջ ազգէն Ապահունեաց, սուսեր հանեալ՝ կիսախողխող զքարշօղսն առնէին. և յափշտակեալ զԽադ 'ի ձեռա՛ց նոցա, յիւրեանցն գնացին Գաւառ. և Արշակայ՝ ո՛չ 'ի հակառակս մտեալ՝ դողէր, զի մի՛ խռովութի՟ ամ՟ Նախարարացն յուզեսցի:

Գլուխ ԼԳ 33

Յաղագս՝ Թագաւորելոյն Թէոդոսի Մեծի, և ժողովելոյն՝ որ եղև վասն Հոգեմարտին:

ԲԱյց՝ Վաղէսի Կայսեր, ըստ արժանի անօրէն իւրո՛ց խորհրդոց, զյաւիտենական գեհենին աստէն բերելով զօրինակ, հրկէզ եղեալ յԱնդրիանուպօլիս՝ սատակեցաւ. և առնու զթագն Թէոդոս: Սա՛ քակեաց զՄեհեանս Կռոյն՝ մինչև յատակս, զփակեալսն միա՛յն 'ի Սրբոյն Կոստանդիանոսէ, զանուանեալն՝ Արեգական, և Արտեմեայ, և Ափրոդիտեայ 'ի Բիւզան

դի

դիւղն։ աւերեաց նոյնպէս՝ և զտաճարն Դամասկոսի, և արար Եկեղեցի. նոյնպէս՝ և զտաճարն 'ի Լիու քաղաքի, զԼիբանոսի զՄեծ, և զՀռչակաւոր զԵրեք քարեանն։ Սա՛ դարձոյց զա̃մ Հարս Սբ̃ս, որք՝ յաղագս ուղղափառութ̃ե՝ արտասահմանեալք էին, և 'ի Մետաղս. ընդ որս՝ և զՄեծն Ներսէս՝ ածեալ առ իւր 'ի Բիւզանդիոն՝ պահէ մեծաւ պատուո̂վ, մինչև ճշմարտութ̃են ստուգեցաւ հաւատ՝ որք յաղագս ամբարշտին Մակեդոնի հայհոյութ̃եցն։ զի՝ ոչ Տր̃ խոստովանէր զՀոգին Սբ̃, և ոչ՝ երկրպագելի՝ և փառաւորեալ ընդ Հօր, և ընդ Որդւոյ. այլ՝ Օտար յԱյ̃ բնութենէն, և Ստացական, և Պաշտօնեայ, և Ազդուածն ինչ, և ոչ Էութիւն Անձնաւոր։ Եւ ժողովեալ Սբ̃ Հարքն, 'ի Թագաւորեալն Բիւզանդիոն, Դամասոս Հռօմայ. Նեկտարիոս՝ Կոստանդնուպօլսի. Տիմոթէոս, Աղեքսանդրի. Մելիտոս՝ Անտիոքու. Կիւրղոս՝ Եր̃մի. Գրիգոր, Նիւսիա՛. Բասիլիոս՝ Կեսարու. Գրիգորիոս՝ Նազիազու. Անփիլաքսիոս՝ յԻկոնիու. և այլք

Ն

Եպիսկոպոսք՝ միանգամայն հարիւր և յիսուն Հարք, որք նզովեալ՝ մերժեցին զՄակեդոն՝ և զամենայն Հոգեմարտս։

Պրակ ԼԴ 34

Ակամայ երթալն Արշակայ առ Շապուհ, և անդարձ լինել։

ՊԱրծեալ՝ սպարապ առեալ Շապհոյ 'ի պատերազմացն, առաքէ 'ի վ՟ր Արշակայ զԱլանայ Ոզան ոմն, Պալհաւիկ՝ հզօր գնդաւ որ էր ազգակից Արշակայ. իսկ Արշակ Թափուր 'ի բազմացն մնայր նախարարաց. որոց ձեռն տուեալ Ալանայ Ոզանն, կամաւ երթային առ Շապուհ։ տաղտկացեալք յիւրեանց Տեառնէն Արշակայ. և մեծարեալք 'ի Շապհոյ՝ դառնային յաշխարհս մեր։ ուստի՝ տարակուսեալ Արշակայ՝ յղէ պատգամ առ իշխան զօրուն Պարսից, եթէ՝ դու արեան իմ, և հարազատութիւն, ընդէ՞ր՝ այդպիսեաւ վարես զիս ջերմութեամբ. Թէպէտ՝ և ակամայ զգալուստ քո գիտեմ, ո՛չ կարացեալ սայթաքել զհրաման Շապհոյ, գալ 'ի վ՟ր քո ազգականիս. այլ արդ՝ Թուլայ ինձ, ղօղել ուրեք՝ վայրկեան մի ժամանակի, մինչև՝ ոդճառեալ կարացից անցանել յերկիրն Յունաց. և դու կալցես զաշխարհս, և բազմաց յինէն հանդիպիցիս բարութեանց, ոչ արդարև՝ 'ի մտերիմ հարազատէ։ Դարձուցանէ Ալանայ Ոզան Արշակայ՝ այսպիսի պատասխանիս. ասէ, թէ դու ոչ խնայեցեր յազգայինն մեր Կամսարականն, որք՝ առաւել քան զիս՝ էին քեզ հարազատագոյնք, Դենի ձերոյ՝ մասամբ, և աշխարհաւ համաբնակաւ. զի արդ՝ յինէն ունիցիս ակն 'ի քեզ խնայել՝ հեռացեալ յինէն Դենիւ, և բնակութբ̃. և որով օրինակաւ՝ ես 'ի քոյին յուսալով բարիս, որ անյայտ է, թէ առից, զգտեալն յիմմէ թագաւորէն՝ կորուսանիցեմ։ Ապա՝ այնու հետև Արշակ յոյժ նեղեալ, յոչ կամաց երթայ առ Շապուհ, և 'ի պահեստի լինի 'ի նմանէ։ և բռնութբ̃ հարկաւորեալ՝ գրէ՝ զի Փառանձեմ, կին նր̃, 'ի դուռն եկեսցէ։ և շապուհ հրամայէ ամենայն մեծամեծացն, զի՝ ընդ Փառանձեմայ եկեսցեն։

Գլուխ ԼԵ 35

Յաղագս զօրացն Շապհոյ՝ որք անցին ՚ի Հայս, և մահն Արշակայ.

Արդ՝ գիտացին Նախարարք Հայոց, այնք՝ որոց յառաջագոյն քան զԱրշակ՝ ձեռս տուեալ էր ՚ի Շապուհ՝ արքայ Պարսից. եթէ՝ և զնոցա կանայս խնդրեալ է, իբրև զայնս՝ որք առ արշակայն՝ էին միամիտք: և զայն ևս տեսին՝ եթէ գնաց Ալանայ Ոզանն, և գունդ փոքր է՝ որ՝ յաղագս այնորիկ՝ եկեալ էր, միաբանեալ՝ հալածեցին զնոսա. և իւրեանց առեալ զկանայս՝ և զորդիս, փախեան յաշխարհն Յունաց. նա և՝ ոչ Գնելոյն Փառանձեմ գնաց՝ ՚ի կոչ առնն իւրոյ, այլ՝ հանդերձ գանձիւք՝ անկաւ յամուրն Արտագերից, լուր առնելով՝ առ որդին իւր Պապ, յուսայր ապրիլ՝ ՚ի ձեռաց արքային Պարսից. ընդ որ զչարեալ Շապուհ, կապէ զոտս Արշակայ՝ երկաթեղէն շղթայիւք՝ և տայ տանել յերկիրն Խուժաստանի յԱնյուշն կոչեցեալ՝ բերդ. և զօր բազումգումարեալ՝ ՚ի ձեռն Մեհրուժանայ Արծրունւոյ, և Վահանայ

Մա

Մամիկոնէի՝ Ուրացողայ զՔ՟Ս, արձակէ յաշխարհս Հայոց·՝ որք եկեալ՝ նստան շուրջ զբերդաւն Արտագերից։ և թէպէտ՝ ոչ ինչ կարէին առնել, վ՟ս անմատչելի ամրութեանն. բայց՝ զի բարկութիւն Ա՟Յ էր, 'ի վ՟ր Արշակայ, մարդիկք ամրոցին ոչ անսացին մնալ համբաւուն Պապայ. այլ՝ անձնատուրք եղեն 'ի կամաց՝ և ոչ 'ի բռնութենէ. զորս գերեալ՝ հանդերձ գանձիւք՝ և Տիկնաւն Փառանձեմաւ, խաղացուցին յԱսորեստան, և անդ՝ ընդ սայլի ցից հարեալ՝ սատակեցին։ 'Ի նմին ժամու՝ եհաս հրաման 'ի շապհոյ յարքայէ, զի քանդեալ՝ աւերեսցեն զա՟մ ամրութ՟ի քաղաքաց, և զՀրէայսն խաղացուցանել 'ի գերութիւն. և զայն Հրէայսս, որք նովին օրինօք կային 'ի Վան, Տոսպայ. զորս ածեալ էր Բազափրանայ Ռշտունեաց՝ յաւուրս Տիգրանայ. զորս բնակեցոյց Շապուհ յԱսպահան։ գերեցին և զայն Հրէայս՝ որք յԱրտաշատ, և'ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ Արքայի. որք յաւուրս Սրբոյն Գրիգորի, և Տրդատայ՝ հաւատացեալ էին 'ի Ք՟Ս. Է որս՝ և զԶուիթայ՝ Երէց Արտաշատու, և մատուցեալ առ Շապուհ Մեհրուժանայ՝ չարախօսեաց ըզ Զուիթայ Երիցու Արտաշատու՝ եթէ՝ յայնսակս՝ էին ը̃ գերեալսն, զի՝ խրատեսցէ զնոսա, պինդ ունիլ զհաւատսն Քրիստոնէութեան. վ̃ն որոյ՝ չարչարեալ զԶուիթայ՝ հրամայեաց Շապուհ, զի՝ թողցէ զօրէնս Քրիստոնէութեան. որում ոչ հաւանեալ՝ կատարեցաւ: Զայս ա̃մ աղէտս թշուառութեան տեսեալ Արշակայ, Սաւուղաբար՝ անձինն արար, որ թագաւորեաց ամս 30:

Պրակ ԼԶ 36

Աղնոյք ընդ մեղ չարեացն՝ որ ՚ի Մեհրուժանայ. և թագաւորել Պապայ:

ՅԵտ մահուանն Արշակայ, դումարեալ Շապուհ զօր բազում ՚ի ձեռն Մեհրուժանայ՝ և արձակէ ՚ի Հայս, և՚ ի նմա հաւատայ զաշխարհըս, և տուեալ նմա կին՝ զքոյր իւր զՈրմզդուխտ՝ և Հրովարտակս բազումս շինից՝ և Դաստակերտաց՝ ՚ի Պարսից աշխարհին: և խոստացաւ նմա տալ զթագաւորութիւն Հայոց, միայն թէ՝ զՆախարարսն նուաճես ցէ, և՚ի դէն Մազդեզանց՝ զա͞ն դարձուսցէ. որոյ յանձն առեալ՝ և եկեալ՝ զբազում Նախարարաց կանայս կալեալ՝ ՚ի բերդս տայր պահել, զդարձ արանցն յուսալով՝ և զա͞մ կարգ Քրիստոնէութեան ջանայր խափանել. զԵպիսկոպոսունս՝ և զՔահանայս՝ հարկաց պատճառաւ՝ կապեալ, յերկիրն Պարսից տայր տանել: և զոր միանգամ, գիրս գտանէր՝ այրէր. և հրաման տայր՝ մի՛ ուսանիլ դպրութ͞ի Յունարէն, այլ՝ Պարսիկ. և մի՛ իշխեսցեն՝ խօսիլ Յոյն՝ կամ Թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ՝ զի ամենևին մի՛ լիցի Հայոց ընդ Յունի ծանօթութ͞ի՝ և հաղորդութ͞ի սիրոյ. բայց՝ Ճշմարիտ խափանել զՔրիստոնէութ͞են ուսումն. զի՝ յայնժամ Գիր Դպրութ͞ե Հայոց՝ չև ևս էր լեալ. և Յունականաւն՝ կարգ Եկեղեցւոյ վարէին: Արդ՝ իբրև լուաւ Մեծն Ներսէս զչարիսն, որք հասին ՚ի վ͞ր Հայոց, և զմահն Արշակայ, աղաչեաց զԻնքնակալն Թէոդոս՝ խնդրելով ՚ի նմանէ օգնականութիւն, և թագաւորեցուցանել զՊապ՝ որդի Արշակայ: և ընդ նմա գումարեաց զօր բազում՝ 'ի ձեռն Ստրատելատին Մեծի, Տերենտիանոսի։ և Մեծին Ներսիսի՝ առեալ զա՟մ Նախարարսն՝ որք կամակից էին ընդ Տէրութե՟ն Պարսից՝ և որք ոչն. և զապրեալն Կամսարական Սպանդարատ, միաբանութ՟բ ածէ զՊապ յաշխարհս Հայոց։ և եկեալ՝ գտանեն զամբարիշտն Մեհրուժան՝ պետացեալ՝ կալեալ զաշխարհս Հայոց. և հալածական արարեալ՝ յինքեանս Թափեն։ Բայց Մեհրուժան հրամայէ Պայկացն զբերդիցն պարսպաց կախել զկանայս Նախարարացն՝ մինչև մեռցին. և Թողու նոյնպէս 'ի կախաղանին զդիակունսն, զի լուծեալ՝ անկցին՝ գետն՝ կերակուր լինիլ Թռչնոց։

Պրակ Լէ 37

Յաղագս Մեծի պատերազմին՝ որ եղև 'ի Ձիրաւ և սատակմանն ամբարշտին՝ Մեհրուժանայ։

ԱԶդ արարեալ Մեհրուժանայ՝ յերկիրն Խորասանայ առ Շապուհ՝ զա՟մ օգնականութ՟ն Թէոդոսի՝ զոր արար առ Պապ։ Ելանէ հրաման 'ի Շապհոյ ա՟մ զօրացն Պար

Պարսից՝ երթալ ՚ի պատերազմ ը̅ Մեհրուժանայ ՚ի Հայս։ Նոյնպէս՝ ազդեն Ինքնակալին Թէոդոսի Պապ՝ եւ Տերենտիանոս զՇապհոյ եթէ ամ̅ զօրացն հրամայեաց՝ եկանել ՚ի վերայ մեր, բայց միայն ՚ի Գրանկացն։ ապա՝ եւ Օգոստոսն Թէոդոս հրամայեաց Ադդէի կոմսին Մեծի՝ երթալ յօգնականութիւն Պապայ, առնուլ զամ̅ զօրս Յունաց. մի՛ զոք թողուլ՝ զոր ոչ առցէ զկնի. այլ եւ՝ զհետեւակս պահապանս քաղաքացն, որք զմետաքսեայս ունէին զվերշապս։ եւ խմբեց̅ու պատերազմն ՚ի դաշտին՝ որ կոչի Ձիրաւ։ եւ մատեան ճակատ՝ առ ճակատ։ եւ Մանկունք քաջ Նախարարաց Հայոց՝ ինքնակամ նահատակեալք՝ մտին ՚ի մէջ ճակատուցն առաջնորդութեամբ Սպարապետին իւրեանց՝ Սմբատայ Ասպետի՝ որդւոյ Բագարատայ, որ յազգէն Բագրատունեաց։ Եւ էին՝ եւ ՚ի զօրացն Պարսից համամտիք ն̅ց, եւ խաղացին ՚ի մէջ ճակատուցն՝ եւ ցիրք ը̅ ցիրս լինէին։ եւ ՚ի դառնալ Մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ ն̅ց. օրինակ իմն՝ ո̅չ փո

Թո

Թորէնկ յանտառէ տերևաթափից. երանգ՝ յերկնաւորացն առեալ նիզակօք դի ցուրտ յերկիր ընկենուին՝ ո՛չ կարելով նոցա՝ յիւրեանց ճակատն մնանել։ Իսկ յորժամ Պարսիկքն զմերն շրջէին, ն՟ք ՚ի վահանափակն Յունաց՝ իբր՝ յամուր քաղաք մտանէին՝ առ ո՛չինչ վնաս առնելոյ. քանզի՝ այնպէս արար Գորգիանոս Իշխան հետևակ զօրուն. իբր՝ պարսպօք պատեաց վահանօքն զճակատն պարսպայ. քանզի՝ զօրքն Յունաց վառեալ էին ՚ի զէնս ոսկւոյ՝ և արծաթոյ. և երիվարք ն՟ց՝ նոյնպէս զարդու։ և էր տեսանել իբր՝ զպարիսպ ինչ, յորոյ յոլովք ՚ի ջլեայ՝ և ՚ի կաշեայ պահպանակաց զգեստուն ըղ կարծրութեան՝ վիմաց բերէր երևոյթս. և ՚ի վերայ նոցա՝ անխալանտգէօք նշանս արձակեալք, իբր՝ զսաղարթս ինչ հովանաւոր ծառոյ. բայց՝ զվիշապացն մանուածս՝ ահագին բերանաբացութ՟բ՝ ուռուցեալ ՚ի փչմանէ օդոյն՝ ո՛չինչ ուրեք, կարեմ նմանեցուցանել, այլ միայն՝ իբրև՝ զլեառն ինչ անդամանդեայ՝ խոնարհել ՚ի ծով զբովանդակ ճակատն Յունաց, ՚ի Պարսկա կան զօրսն. քանզի՛ եւ զնոսա էր տեսանել՝ որպէս զհզօր ինչ գետ, առ՚ի կողմն, ՚ի լո՛յն ծաւալեալ. արդարեւ՝ ջրագո՛յն զրահազգեստա՛ցն բերէր զնմանութիւն։ Արդ՝ իբրեւ ետես Մեծն Ներսէս զա՛յն ա՟մ, ե՛լ նա ՚ի կատար լերինն Նպատայ՝ եւ ամբարձ զձե՛ռն իւր յերկինս, անխոնարհելի՛ պահելով ՚ի խնդրուածս՝ հանգոյն Նախամարգարէին Մովսէսի, մինչեւ՝ պարտեցաւ երկրո՛րդն Ամաղէկ։ Իսկ՝ ՚ի ծագե՛լ արեգականն ընդդէմ մերո՛ց զօրացն, ՚ի պղնձապա՛տ վահանացն՝ նշո՛յլք զլերա՛մբքն փայլատակէին, իբրեւ՝ յամպոյ մեծէ։ եւ ՚ի նոցանէ՝ ՚ի դո՛ւրս ոստչէին ՚ի մերոց Նախարարացն՝ Քաջք զրահաւորք՝ ոպ՟ փայլատակմա՛ցն Ճառագայթք. յորոց ՚ի տեսութենէն միայն՝ զանդիտացեալ Պարսկական գունդ, սակաւ ինչ՝ եւ մերն, վ՟ն ո՛չ կարել՝ հայիլ ընդդէ՛մ արեգականն ծագմանն։ Իսկ՝ ՚ի բաղխել զմիմեանս, եղեւ ՚ի վերայ՝ հովանի՛ ամպոյ՝ եւ հո՛ղմ սաստիկ ՚ի մերոցն կուսէ՝ ընդդէ՛մ Պարսկականին փըչեալ. եւ ՚ի խառնակե՛լ մարտին, պատահէ Կամսարականն Սպանդա րատ՝ խմբիւ մեծի՝ յորում էր Քաջն շերգիր, Լեկաց արքայ. զգլուխն՝ միջին գնդին՝ պնդութ̃բ զտեղի ճակատուն կալեալ. և յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ ըզխումբն, ոպ̃՝ զշանթահար՝ յերկնէր կործանէր զքաջն, և պատուտեալ զխումբն, 'ի փախուստ դարձուցանէր ։ և այսպէս՝ 'ի վերին օգնականութէն զօրացեալ, առ հասարակ զօրքն Յունաց, և Հայոց՝ դիկամբք թշնամեացն՝ լցին զդաշտն ամ̃. և զմնացորդսն ամենայն 'ի փախուստ շրջեալ՝ հալածեցին ։ ընդ որս՝ և զՈւռնայր՝ Աղուանից Արքայ՝ խոցոտեալ 'ի Մուշեղայ՝ որդւոյ Վասակայ Մամիկոնէի՝ հանին 'ի պատերազմէն ։ Բայց՝ ամբարշտին Մեհրուժանայ վիրաւորեալ ձին՝ ոչ կարաց երագել ընդ փախստեայսն. որում աճապարեալ՝ հասանէ Սպարապետն Հայոց՝ Սմբատ, և զորս ընդ նմայն էին՝ կոտորեալ, ձերբակալ առնէ զվատաշուէրն՝ յեզեր շամբին Կոգաւիտի. և զմտաւածեալ, թէ՝ գուցէ թափիցէ զնա Մեծն Ներսէս, այնորիկ աղագաւ՝ ոչ ածէ 'ի բանակն. այլ՝ զտեղւոջն գտանէ

պատ

պատրաստական առ՚ի կորուստ ամբարշտին՝ զոմանս Խորանաւորս՝ հուր լուցեալ, և շամփուր երկաթի՝ միս խորովելոյ. զոր ջեռուցեալ՝ կրկնեալ բոլորեալ՝ որպէս պսակ, և յոյժ արտաշէկ արարեալ, ասէ. պսակեմ զքեզ՝ Մեհրուժան. քանզի՝ ՚ի խնդիր էիր թագաւորել Հայոց. և ինձ Ասպետիս պարտ է զքեզ պսակել. ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց։ և մինչդեռ՝ տաքն էր իբրև՝ զհուր, եդ՚ի գլուխն Մեհրուժանայ. և այնպէս՝ սատակեաց զչարն։ և յայնմ հետէ՝ խաղաղացաւ երկիրն՝ ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ։

Դրակ ԼԸ 38

Եթէ՝ որպէս Պապայ դեղ մահու արբուցեալ՝ Մեծին Ներսիսի։ և եղծ ՚ի կենաց։

Յետ՝ սպառելոյ պատերազմացն, և խաղաղանալոյ երկրին. Մեծն Ներսէս դնէր վկայութիւն ՚ի մէջ Արքային Պապայ, և ՚ի մէջ Նախարարացն, գնալ յամենայն ճանապարհս արդարութեան. զի՝ վկայեսցեն՝ ըստ հաւատոց Քրիստոնէութեան՝ և գործքն. և զի՝ Արքայն՝

մի՛ Հօրն իւրում նմանեցի՝ անիրաւել, և զրկել. այլ՝ վարեցի՛ ուղղութեամբ, հայրաբար խնամովք առ Նախարարսն. և նոքա մի՛ ևս՝ յաւելցեն՝ վտարանդել նշկահելով ըզնա. այլ՝ ծառայել միամտութ՟բ։ Յայնժամ՝ Արքայն Հայոց Պապ, դարձոյց 'ի Կամսարականն Սպանդարատ՝ զա՟մ ինչ, զոր յափշտակեալ էր հօր իւրոյ Արշակայ. զԳաւառն Շիրակայ՝ և Արշարունեաց՝ որ լեալ էին ազգին Կամսարականաց. ոչ իբրև՝ զանիրաւ ագահութ՟ի հօր իւրոյ Արշակայ, այլ՝ իբրև զարդեա՝ ըստ վաստակոց Քաջին Սպանդարատայ, որ էապան զՊ եկաց Արքային. բայց՝ և զայլոց Նախարարացն դարձոյց զզրկանս, և յոյժ անընչաբար ցուցանէր զսէր ախորժակս, և առատաբար կեայր. բայց՝ զի ամօթալի ախտիւ զազրագործ էր, և յանդիմանեալ՝ կշտամբիւր 'ի Մեծէն Ներսիսէ, ընդ ակամբ հայէր նմա, խորհելով 'ի չարիս. և ոչ իշխէր յԻնքնակալէն Թէոդոսէ՝ յայտնի ինչ առնել նմա չարութ՟ի. դեղ մահու՝ գաղտնի արբուցեալ Սրբոյն Ներսիսի, ելոյծ 'ի կենցաղոյս. որ կալաւ զԱթոռ Եպիսկոպոսութե՟ն ամս երեսուն՝ և չորս։ և փոխեալ յաշխարհէս՝ Երանելին Ներսէս, 'ի Գաւառին Եկեղեց, 'ի Գեօղն՝ որ կոչի՝ Խա՛խ։ բարձեալ զմարմին ն՟ր Արքայի՟ն Պապայ՝ Թաղեաց 'ի Թիլն յԱւանին, զանխլաբա՛ր ունելով զեղեալսն։

Գլուխ լթ 39

Յաղագս անուանակոչութեանն Սահակայ, և սպանման Պապայ 'ի Թէոդոսէ։

ԱՊա՝ տեսեալ Թագաւորին Պապայ՝ սգացեալ զամ՟ Հայս 'ի վերայ Երանելոյն Ներսիսի, Հարկաւորեալ՝ յուզեաց, և եգիտ զոմն՝ յազգէ, և 'ի ժառանգութե՟ Աղբիանոսի՝ որում անուն՝ Սահակ կոչէր՝ ո՛չ հեռի 'ի գովութենէ. զոր կացոյց փոխանակ Ներսիսի, առանց Մեծի Արքեպիսկոպոսին Կեսարու, որ կալաւ զաթոռն՝ ամս դ։ Բայց Պապայ լուեալ, եթէ՝ մեծն Թէոդոս ել 'ի Բիւզանդիայ՝ 'ի Հռոմ կոյս, և մտեալ 'ի Թեսաղոնիկ՝ հանդերձ Սպայիւն. և յաղագս իջավանաց՝ եղև խռովութի՟, ընդ նա և ընդ Քաղաքացիսն, և մտրտ

խու

խռովութե̃. և յաղթեալ Ինքնակալին, սատակեա՛ց ՚ի Քաղաքացեացն ա՛րս՝ տասն՝ և հինգ հազարս։ զայս լուեալ Պապայ՝ վարկուցեալ՝ յերկարել այսպիսւո՛յ խռովութե̃, արհամարհեալ՝ նշկահեաց. և գըրգռեալ զնա՝ կորստեանն իւր, հալածեաց զՏերենտիանոս հանդերձ զօրօքն, և սկսաւ պատրաստե՛լ ՚ի պատերա՛զմ։ և հասեալ հրամանն ՚ի մեծէն Թէոդոսէ, ընդ կրո՛ւնկ դարձաւ Քա՛ջն Տերենտիանոս. և ըստ իւրո՛ւմ պատահման բախտի՝ յանկարծակի՛ անկեալ ՚ի բանակն. և զոմանս կոտորեալ, և զոմանս փախստեայս արարեալ. ուր սաստկապէ՛ս նահատակեալ քաջութե̃՝ ընդդիմամ՛բ լինէր Գնէ՛լ Նահապետն Անձաւացեաց, և Սպարապե՛տն Պապայ՝ արևելեա՛յ զօրու. զոր յաղթողին Տերենտիանոսի՝ իւրովի՛ արարեալ կիսակոտուր զգո՛ւնդն. ըմբռնեալ զԹագաւորն զՊապ. և Պապայ յաղե՛րս աղաչանաց անկեալ՝ զի մի՛ մեռցի, այլ՝ յանդիման լինիլ Արքայի, և քաջին Տերենտիանոսի գթացեալ՝ շնորհեա՛ց նմա զմաղթանան. և երկաթեղէն կապանօք

եր

երթեալ առաջի Մեծին Թէոդոսի. ըստ խրո՛ւմ անզգամութեան, սակրաւ մձարի: Թագաւորեալ ամս, եօթն:

Գլուխ Խ̄ 40

Յաղագս՝ Թագաւորելոյն Վարազդատայ, և կապանաց նորին:

ԲԱՅՑ՝ Օգոստոս բարեպաշտօ՛ն՝ Թէոդոս՝ որ և՝ Մեծն, ՚ի քսաներորդի ամին իւրոյ՝ թագաւորեցոյց փոխանակ Պապայ՝ զՎարազդատ ո՛մն, ՚ի նմին Տոհմէ Արշակունեաց: Այս Վարազդատ՝ էր տիօք՝ Մանուկ, Սրտեայ, Ընձնեայ, Ուժեղ՝ Լի ա̃մ գործովք բարութե̃ և յոյժ Կորովի Նետաձգութե̃. որ ՚ի ժամանակի՝ ՚ի փախստենէն Շապհոյ՝ գնացեալ ՚ի դուռն Կայսեր՝ նահատակեցաւ: Նախ՝ ՚ի Պիսա՛կս՝ զԲռնամարտիկն յաղթեալ դարձեալ ՚ի Յարէգ քաղաքի՝ Հելլադացւոց, որ համարակի կոտորեց առիւծս. որում, փառս Ոլիմպիական հանդիսի՝ Ի մրցամարտկա՛ցն երևե՛լ, և յարգի: այլ՝ որ առազգին Լանկուարտա՛ց՝ նորա՛ արութիւնք քաջութե̃, համարձակիմ

ա

տանել՝ հաւատար Արքայն Տրդատայ. քզի՝ զհինգ Նահատակսն, 'ի թշնամեացն ընդդէմ իւր յարձակեալ՝ 'ի վերայ իրերաց եսպան սուսերաւ. և 'ի բերդ լինչ զխմեալ՝ 'ի վն պատուարին՝ արս եօթն, և տասն նետիւք հարեալ վիրաւոր 'ի վայր հոսեաց, միմեանց զկնի, իբր՝ 'ի սաստիկ մրրկէ՝ վաղահասուկ 'ի թզենեաց: որ եղև յաշխարհս մեր՝ 'ի յիսուն, և 'ի Ե ամի Շապհոյ. առաջին մարտի պատահէ՝ Աւազակաց՝ 'ի դժուարս Գրաբանագւոյ, և փախստեայ արարեալ՝ հետամուտ լինէր. իսկ նոքա անցեալ ընդ նեղուց կամրջին Եփրատայ ընկեցին զփայտն զկնի իւրեանց. այլ նա հասեալ՝ վազեաց զԵփրատաւ, առաւել քան զԼակոնացին Քիոնեայ՝ վազմն 22 կանգնոց չափ: և անդ՝ էր տեսանել զայն Աքիլլէս՝ ընդ Սկամանդրոս գետ վազելով: յորմէ զարհուրեալ Աւազակայն 'ի ձեռս անկան, զէնընկէց լինելով: Յաղագս որոյ՝ արբեալ 'ի մանկութե յարութի, առասպելիւք՝ և 'ի թագաւորութե, ոչ հնազանդէր խրատու Վերակացուե՝ Զօրավարացն Յունաց: վասն որոյ, առաքէ հրեշտակս տամկս առ Շապուհ, զի՛ տայցէ 'ի դստերաց իւրոց՝ նմա կնութե̃, և նա դարձուսցէ առ նա զաշխարհս Հայոց։ զոր զգացեալ Զօրավարացն Յունաց՝ ազդ առնեն Կայսեր։ Իսկ՝ Կայսրն Թէոդոս հրամայեաց զնա́ ունիլ՝ եթէ, ո́չ իւրովք կամօք երթիցէ 'ի կո́չն Ինքնակալին։ Սակս որոյ՝ հարկեալ երթալ իւրովք կամօք, յուսացեալ՝ 'ի սուտ հանել զՕգոստոսն։ այլ՝ Կայսրն, և ո́չ տեսութե̃ արժանի արար, այլ՝ երկաթեղէն կապանօք՝ ե́տ տանել զնա 'ի Թուղիս Կղզի Ովկիանու։ որ թագաւորեացն ամս դ̃։ Բայց՝ յերկրորդ ամի Վարազդատայ, եկաց Եպիսկոպոսապե́տ Հայոց Զաւէն, 'ի նո́րին ազգականութենէ Աղբիանոսի, ա́մս՝ չորս։

Գլուխ խա̃ 41

Թագաւորութիւն Արշակայ, և Վաղարշակայ։

Ապա՝ փոխանակ Վարազդատայ Թագաւորեցոյց Հայոց Թէոդոս Մեծ՝ զերկուս որդիսն Պապայ, զԱրշակ և զՎաղարշակ, այսպիսի ինչ խորհեալ· եթէ՝ ո́չ

մի

միաբանեցին երկոքեան յապստամբութիւն. և անդէն պահելով ընդ Մայր Մանկանցն, արձակէ զնոսա հանդերձ Վերակացւօք յինքենէ, արամբք հաւատարմօք, և զօրու. որք եկեալ՝ կալան զաշխարհս մեր, և տիրեցին ամս արիաբար՝ մարտիւք ը̃ Պարսս. և առին իւրեանց կանայս, Արշակ՝ զդուստր Բաբկան Սիւնեաց Նահապետին, և Վաղարշակ՝ զդուստր Սահակայ Ասպետի, որ ՚ի նմին ամի վախճանեցաւ:

Բայց՝ յերկրորդ ամի Արշակայ՝ եկաց յԵպիսկոպոսութիւն Հայոց Ասպուրակէս, ազգական Շահակայ, և զաւեննայ՝ ամս հինգ:

Իսկ Մեծն Թէոդոս՝ ելեալ ՚ի պատերազմ ՚ի Միզուդանոն՝ հիւանդացեալ՝ մեռաւ, թողլով զթագաւորութիւնն իւր՝ որդւոց իւրոց, Արկադեայ՝ զԲիւզանդիոն, և Հօնորեայ զՀռովմայն. որք՝ ոչ գովելիք, և արժանիք Հայրենականացն՝ գտան առաքինութեանց:

Յաղագս՝ բաժանելոյ Հայոց ընդ երկուս՝ ՚ի ձեռն երկուց Թագաւորացն Արշակունեաց, 'ի ծառայութիւն երկուց Արքայից, Պարսից՝ և Յունաց։

ԻՄացեալ Շապհոյ, եթէ՝ թեր ուղիղ է Արկադ, խոտէր ընդ նմին զխաղաղութիւն, քանզի՝ էր պարտեալ հարեալ 'ի հօրէն նորա, Մեծ էն Թէոդոսէ։ յանձնառնու՝ և Արկադ, առնել զհաշտութիւն՝ առաւել յիւրոց Օժանդակսն. զի թէպէտ և էր յԱյ̃ պարգևեալ ընդ յաղթութիւն՝ յամս կենաց երանելոյն Թէոդոսի, սակայն՝ զօրագլուխքն վատթարեալ՝ ձանձրացեալ լինէին յաշխատութէ̃ համապազորդ պատերազմացն։ Վասն որոյ՝ հաւանեալ՝ կամաւ յանձնառուին՝ բաժանել զՄիջագետս՝ և զՀայոց աշխարհս՝ կրկին սահմանադրութ̃բ։ Վ̃ն որոյ՝ թողեալ Արշակայ զԻւրն թագաւորական՝ հօրց իւրոց Այրարատ, և զա̃մ մասն բաժնին Պարսից, գնաց՝ տիրել արևմտեայ կողմանց աշխարհիս մերոյ, որ 'ի մասնի բաժնի Յունաց, ոչ միայն՝ Մօրն ազգաւ՝ որ էր 'ի Կայսերական քաղաքին, այլ՝ լաւ համարեալ՝ նուազ կողմանն թագաւորել՝ և ծառայել Քրիստոնէից Թագաւորի, քան՝ յո

ր

ռովմէից իշխել, և մտանել ընդ լծով Հեթանոսաց: գնացին զկնի նորա՝ հանդերձ կանամբք, և որդւովք՝ և ʻՆախարարութիւնք, որ 'ի բաժնի մասինն Շապհոյ, թողլով զիւրաքանչիւր արօրս՝ և զգեօղս՝ և զդաստակերտս: ընդ որս՝ զչարացեալ շապհոյ՝ յղէ առ Արշակ, թէ՝ ընդէր գրգռեցեր զպատերազմ, 'ի մէջ իմ, և Կայսեր՝ տանելով զՆախարարութիւն իմոյ բաժնին. և պատասխանի լաէ Արշակայ՝ եթէ՝ վասն զի ոչ համբերեին ընդ Պարսիկ Առաջնորդաւ վարիլ՝ եկին զկնի իմ. և արդ՝ եթէ՝ հաւատաս յիս զմասինդ քո զիշխանութի, ո՛չ՝ և Կայսր զիւրոյ, պատրաստ եմ 'ի պաշտել ըզքեզ, ո՛չ՝ զԿայսր. ապա՝ եթէ ոչ է հաճոյ քեզ այդ, և իւրեանց կամաւ դարձցին առ քեզ ʻՆախարարքս ոչ արգելում: Զայս լուեալ Շապհոյ՝ թագաւորեցոյց Հայոց՝ 'ի վր իւրոյ բաժնին՝ զԽոսրով ոմն, 'ի նմին ազգէ Արշակունեաց. և առ ʻՆախարարս՝ իւրոյ մասինն, որ ելեալ էին զհետ Արշակայ, գրեաց Հրովարտակ, որ ունէր զայս.

Թուղթ Շապհոյ առ Նախարարս:

Դիւցազանց՝ Քաջ Շապուհ, Արքայից արքայ: Նախարարաց Հայոց, որոց կալուա՛ծ՝ իշխանութեան յի՛մբաժինս հաստատեա՛լ՝ ողջո՛յն շա՛տ շնորհեմ ձեզ: Թէպէտ՝ և ձեր ո՛չ ազատաբա՛ր արարեալ՝ Թողէք զիւրաքանչի՛ւր իշխանութ̃ն, և մեզ՝ ո՛չինչ նւազէր, սակայն՝ ըստ տիրաբա՛ր խնամոց՝ գթացա՛ք 'ի ձեզ, և յաշխա՛րհս ձեր. զմտաւ ածեալ, եթէ՝ ո՛չ կարեն հօ՛տք՝ առանց հովուաց լինել, և հովիւք՝ առանց բարւոք Վերակացուի· վասն որոյ՝ թագաւորեցուցա՛ք ձեզ զԽոսրով ոմն, 'ի Դենէ՛ ձերմէ՛՝ և յազգէ՛ բնիկ ձերոյ Տէրութե̃դ: արդ՝ դարձեա՛լ ձեր՝ յիւրաքանչի՛ւր արարս իշխեցէք, որպէս՝ և այժմ: երդուեալ 'ի հո՛ւր՝ և 'ի ջուր՝ և 'ի փա՛ռս անմահից իմոց Նախնեացն, զի՝ առանց նենգութեան, և պատրանաց արարա՛ք զայդ՝ և անշրջելի պահեմք· իսկ այնք՝ որք ո՛չ լուիցեն մերոյ հրամանաց, զտո՛ւնս նոցա՝ հանդերձ գեօղի՛ւք, և դաստակերտօք՝ յարքունի՛ս ունիլ՝ հրամայեցաք· ո՛ղջ լերուք:

Պրակ ԽԳ 43

Յաղագս՝ ծոծոխման Նախարարացն Հայոց՝ ձեռբափանկեալք ժառանգութեանց ՚ի պաշտօն Երկոցունց Թագաւորացն ։

Իբրև՝ լուան Նախարարք Հայոց այ՛նք, որք ունէի՛ն զիշխանութիւն ՚ի Գաւա՛ռս բաժնի՛ն Պարսից, եթէ՝ կացոյց Շապուհ՝ Թագաւոր հաւատացեալ Արշակունի· և զմուրհա՛կ ուխտի՛ն տեսի՛ն· Թողեալ զԱրշակ՝ դարձան ՚ի բնակութիւն իւրեանց, բա՛յց՝ յերի՛ց պատանեա՛յն մննդակցա՛ց Արքայի, և ՚ի մօտաւոր մերձաւորաց· Գարա՛մ՝ որդի՛ Բաբկայ՝ Տ՟ն Սիւնեաց, որ էր՝ Անե՛ր Արշակայ· և Գաղաւո՛ն՝ որդի Սպանդարայ՝ Տ՟ն Շիրակայ՝ և Արշարունեաց· և Պերո՛զ՝ յազգէն Գարդմանացւոց, և ՚ի նոսի՛ն յարեցեալք· Արտա՛մ՝ յազգէն Գնունեաց· Կենան՝ յազգէն Ամատունեաց· Սուրա՝ յազգէն Մոկաց· Առաւաստա՛մ, Առաւէնեան· և՝ Այլք անյա՛յտք ոմանք։ վ՟ս որոյ՝ զժառանգութիւնս՝ կալա՛ւ Խոսրով յարքունի՛ս հրամանաւ Շապհոյ· և ո՛չ եթող զկալուածս որդւոյ՝ առ հայր, և ո՛չ

զեղ

զեղբօր յեղբայր։ Բայց՝ էին Ամատք և 'ի Նախարարացն՝ որք ունէին զիշխանութիւնս իւրեանց՝ 'ի բաժնին Յունաց առ Արշակայ. և խնդրեցին՝ գալ առ Խոսրով. այլ՝ Սահակ Ասպետ, որ էր Աներ Վաղարշակայ՝ Եղբօր Արշակայ, ընդ որում՝ խեթիւ հայէր Արշակ հանապազ, հրապուրեալ 'ի կնոջէն իւրմէ. այլ թէ՝ զմարդ արքունական ունիլ նմա՝ 'ի փեսայէն իւրմէ ստացեալ։ ապա՝ յայնժամ եղև քսութիւն զնմանէ սուտ՝ յազգականաց իւրոց 'ի Սպեր Գաւառէ. վասն որոյ՝ չարչարեաց զնա Արշակ արքայ, և անկեալ առ Խոսրով. և խորհրդակիցն նմին իբր գործակցեալ լինէին. Սուրէն Խորխոռունի, և Վահան Առաւեղեան՝ և Աշխարադայ տոհմն՝ յազգէն Դիմաքսենից։ Բայց՝ 'ի գնալն նորա՝ ոչ ժամանեցին նոքա՝ խափանեալ 'ի զօրացն Արշակայ, թաքուցեալ՝ ղօղեցին ընդ կեղծաւորութեան առագաստաւ՝ սպասելով դիպող աւուր։

Գլրակ խդ 44

ՆԲԷ՝ որպէս մեծարեաց Խոսրով զՍահակ Ասպետ. և Նահապետութեան նորին 'ի Յե

րու

ըռուղան ազգէն Մանանդացւոց.

Իսկ՝ Խոսրով մեծապէս ուրախ եղեւ ընդ գալն Սահակայ Ասպետի, եւ Սպարապետ զնա 'ի վ՛ր զօրաց իւրոց կարգեաց. դարձոյց զնա 'ի կալուածս հայրենիս, եւ այլ աւանս՝ հանդերձ ագարակօք՝ պարգեւեաց նմա յիւրոցիկ ժառանգութ̅է՝ որք 'ի բաժնոյն Պարսից, որ առ Արշակոյ մնացին։ Զայսու աւուրբք՝ Սմանք՝ յազգէն Մանանդացեաց, ապստամբեցին 'ի Խոսրովայ, եւ՝ ո՛չ յոք ապաւինեցան, այլ՝ ամրացան 'ի մայրիս իւրեանց լերանցն՝ եւ յանձուկս տոյոց քարանց, յելուզակաբար արշաւանօք. յիշխանութ̅ի երկոցունց Թագաւորացն Հայոց՝ խռովէին զաշխարհս՝ եւ անհանգիստ պահէին։ յորոց 'ի վ՛ր չոգաւ Սպարապետն Խոսրովայ՝ Սահակ Ասպետ, եւ զբազումս 'ի նոցանէ սատակեաց, եւ զբազումս փախստեայ արար 'ի կողմանս Չորրորդ Հայոց. զի՝ ո՛չ յերկիրն Խախտեաց՝ անկան 'ի Յոյնս ապաւինելով. եւ ո՛չ՝ առ Թագաւորն Արշակ անցին, այլ՝ իբր զաւազակս ոմանս, որ 'ի կողմանս Չորրորդ Հայոց էին՝ 'ի սահմանս

Ասո

Ասորւոյ դիմեցին՝ ապաստան առնել: քանզի՝ Մանանդացիքն զաւազակութե̃ գործ՝, մեծաւ յանկութե̃բ գործէին. ո՛չ՝ ուղիղ իրք՝ ախորժելի թուէին նոցա. զորոց ձիգ զհետ մտեալ Սահակայ՝ վարէ յերկար՝ մինչև ՚ի սահմանս Մանանաղւոյ:

Պրակ խե̃ 45

Յաղագս գալոյն առ Խոսրով, Սուրենայ Սահակայ և Աշխարադայ՝ հանդերձ գանձիւք Արշակայ:

ՍՈւրենայ Խորխոռունւոյ, և Սահակայ Առաւեղենի, և Աշխարադայ Դիմաքսենի՝ գտեալ ժամպատեհ, զի՝ էր հանեալ զգանձն Արշակայ՝ յամրոցէն ՚յԱնւոյ՝ տանել յաշխարհն Ծոփաց. զոր յափշտակեալ՝ և կամեցեալ՝ անցանել առ Խոսրով, ոչ ժամանեցին: քանզի՝ աճապարեալ Սամուէլի Մամիկոնէի՝ մտերմի Արշակայ՝ յոլովաձեռն գնդաւ, զհետ հասեալ՝ փախստեայս արկանէր ՚յայրս ինչ ամուր՝ որ ՚ի Գաւառին Մանանաղւոյ. յոր մուտ ոչ գտանէր, բաց ՚ի կողմանէ՝ դոյզն ելք էին առ ՚ի թաւալ. և առաջի դրանց այրին՝ սեպեր ուղորդ միապա ղաղ· և 'ի վերուստ պաղ, անձաւ. քուաւոր՝ որ հայի յանդունդս խորաձորոյն· և որ ինչ զերծանիցի՝ յահագին ուխս սաստկութե՟ անկանի՝ անդադար հոլովմամբ գլեալ, ոչ ուրեք գտանել ոտն կալ։ Վ՟ն որոյ՝ տարակուսեալ Սամուէլ՝ վարանէր առ անհնարութեան տեղեացն· և ապա արարեալ Արշակայ հրամայեաց՝ արկղ գործել երկաթապատ, և քաջ արանցն 'ի ներքս մտանել, և այնպէս՝ շղթայատող կարիւք իջուցանել վերուստ՝ 'ի վայր՝ 'ի դուրս այրին· սակայն՝ և ոչ այն՝ ինչ վնասեաց· քանզի՝ յոյժ 'ի բացեայ պահէր ցերդն։ և մինչ դեռ՝ նոքա յայնմ էին, լինէր իմն՝ ըստ դիպուածոյ բախտի՝ հասանիլ անդր Սահակայ Ասպետի՝ բովանդակ զնդաւն Խոսրովայ· որով՝ հետամուտ յեղուզակացն էր, թողեալ զնոսա՝ դիմէ 'ի վ՟ր այնոցիկ՝ որք ընդ այրին մարտնչէին· և հալածական արարեալ՝ հանէ զՍուրէն, զՎահան, և զԱշխարադուն՝ հանդերձ գանձիւք՝ փոյթ ը՟ն փոյթ հասանէ առ Արքայ։ Իսկ Խոսրովայ առեալ՝ 'ի գանձուցն մասն հա նէ Շապհոյ. և հրամայեաց՝ տալ գեօղս, և դաստակերտս ընտիրս՝ և յաւանս, յայնոսիկ 'ի ժառանգութէ՟ որք 'ի բաժնէն Պարսից՝ մնացին առ Արշակայ։ և այս եղև ըսկիզբն պատերազմի Արշակայ, և Խոսրովայ։

Գլուխ խզ 46

Պատերազմն Արշակի պարտեալ 'ի Խոսրովայ՝ հնազանդեցուցեալ մեռանի։

ԹԷպէտ՝ և ոչ եղեն ձեռնտուք Շապուհ, և Արկադ՝ Խոսրովայ, և Արշակայ՝ լինել զօրավիգն օգնականութեամբ՝ առ 'ի տալ ընդ միմեանս պատերազմ. սակայն՝ և ոչ արգելին զնա. և սպառեալ պատգամաւորութեամբն. և ժողովեալ Արշակայ զզօրս իւր, խաղայ 'ի վե՟ր Խոսրովայ։ գնայ և Խոսրով 'ի բանակէն իւրմէ առ եզր ծովուն Գեղամայ՝ զոր Սօրսն կոչեն՝ ընդ առաջ Արշակայ, զի՝ մի՛ 'ի սահմանս իւր իջցէ։ և ոչինչ՝ այնչափ աճապարեաց սաստակել, մինչև՝ եգիտ զԱրշակ՝ իջեալ յիւր սահմանս՝ 'ի Գաւառին Մանանդայ. և պատահեն միմեանց 'ի դաշտին՝ զոր կոչեն՝ Սրեւել։ և տան ընդ միմեանս պատերազմ սաստիկ յոյժ. հարկանի զօրն Արշակայ. մեռանի և Սպարապետն նր ՙԳարամ Սիւնի 'ի պատերազմին, և փախստական լինի Արշակ սակաւուք. և զհետ մտեալ նորա ՙՔաջին Սահակայ` Ասպետին Խոսրովայ` վարէր սաստկապէս։ ուրանոր` ահագին ՙՆահատակութիւնս ցուցեալ` Գազաւոնին` որդւոյ Սպանդարատայ բազում անգամ, դարձեալ յարձակմամբ զրուհէր զհետամուտն, և տայր պարապ ժամ` գնալոյ Արշակայ։ և դարձաւ Խոսրով 'ի տեղի իւր, և գնաց Արշակ յԵկեղեց, և հիւանդանայ` Սաշարայական ախտիւք, ջերմանի հիւծմամբ, թագաւորեալ ամ Հայոց` ամս հինգ. և կիսոյն Հայոց, ամս` երկուս` և կէս։ և այնուհետև` ոչ կացուցին Յոյնք 'ի բաժնի իւրեանց Թագաւոր, այլ Առաջնորդ ՙՆախարարաց կողմանցն մնացին` ՙՔաջն Գազաւոն. և աշխարհին իւրեանց մասինն` կացուցին Յոյնք Կոմէսս Իշխանս։

* * *

Գլուխ ԽԷ 47

Յաղագս՝ Երանելւոյն Մեսրոպայ։

Տեսեալ թէ՝ 'ի վերջ է հասեալ Թագաւորութիւնն Հայոց, և զխռովութիւնս, նիւթ իւրոյ համբերութեանն գտեալ Մեսրովբայ՝ որ էր 'ի Հացեկաց Տարօնոյ, սնեալ՝ և ուսեալ առ Մեծին Ներսիսի. և յետ՝ ելից նորա յաշխարհէս՝ 'ի դուռն Արքունի կարգեալ՝ Արտաւազդի։ Սա սիրեաց զմիայնակեցութեան վարս. որպէս՝ ասաց ոմն՝ թէ՝ 'ի նաւահանգիստ փութայ նաւ խռովեալ, և անձն ժուժկալ՝ խնդրէ զանապատ. նոյնպէս՝ և նա փախուցեալ յաշխարհական զբաղմանց, և ընկեցեալ յետս՝ զմարմնական պատիւն, զհետ ընթանայր երկնաւորին։ և երթեալ 'ի Գաւառն Գողթան՝ զմիայնակեցութեան վարս ստացեալ՝ բնակէր։ և որ 'ի նմին զօղեալ Աղանդն Հեթանոսական՝ թաքուցեալ յաւուրցն Տրդատայ՝ մինչև՝ յայն ժամանակս, և ապա՝ յայտնեցաւ, 'ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց, զայն երկրորդ՝ օգնականութեամբ Իշխանին Գողթան՝ որում անուն էր

Շամ

Ճամբիթ: ուր՝ նշանք Ա՛ծայինք լինէին՝ որպ՝ առ Սրբոյն Գրիգորիւ, հալածական լեալ՝ մարմնաւոր տեսլեամբ՝ դեւքն, անկանէին 'ի կողմանս Մարայ: և ոչ ինչ պակաս յայնցանէ արարեալ գտանի, և 'ի Սիւնեաց աշխարհին՝ ձեռնտուութ՟բ Իշխանին՝ որում անուն էր՝ Վաղինակ: Եւ 'ի վարդապետէն Երանելոյն Մեսրովբայ, ոչ փոքր կրէր վտանգս, քանզի՝ ինքն էր ընթերցող՝ և Թարգմանիչ. և եթէ՝ այլ ոք հանդիպէր, որ ընթեռնոյր, ուր՝ նա ոչ լինէր, զանխուլ 'ի ժողովրդոյն լինէր, յաղագս՝ ոչ լինելոյ Թարգմանիչ: վ՟ն որոյ՝ եդ 'ի մտի հնարս՝ գըտանել նշանագիրս Հայոց Լեզուիս: և արկեալ զանձն 'ի ջան, պէս պէս հնարիւք՝ տաժանիւր:

Գլուխ ԽԸ 48

Դարձ առ Խոսրով Նախարարացն՝ որք էին առ Արշակայ:

Տեսեալ Նախարարացն Հայոց եթէ՝ ոչ կացուցին Յոյնք 'ի վ՟ր նոցա Թագաւոր. և դժուար վարկուցեալ՝ զանառաջնորդն լինել՝ խորհեցան, կամաւոր՝ հնազանդ լինել

Թա

Թագաւորին Խոսրովու։ Սմին երի գրեն առ նա թուղթ՝ օրինակ զայս.

Ստրատելա՛տ Գազաւոն, եւ ա՟մ Նախարարք Հայոց մասին Յունաց, Տ՟ն մերոյ Խոսրովայ՝ Արքայի՝ կողման Արարատոյ խնդա՛լ։ Ինքնին՝ Տէր՝ գիտես զմիաբանութ՟ի մեր առ յիշեցեալ թագաւորին մերոյ Արշակայ, զոր մինչեւ՝ ց՚օր վախճանի նո՟ր՝ անշրջելի՛ պահեցաք. եւ արդ՝ խորհեա՛լ եմք, նոյնպէ՛ս՝ ծառայել քեզ միաբանութ՟ե, եթէ՝ հաստատեսցես առ մեզ դաշամբք՝ զերկ՟ս զայսոսիկ։ Առաջին, չյիշե՛լ զյանցանս, զոր պատերազմեցա՛ք ընդ քեզ ՚ի հարկէ, եւ ո՛չ ՚ի կամաց. Երկրորդ՝ զի դարձուսցես առ մեզ զամենայն ժառանգութ՟իս մեր, որք ՚ի մասին Պարսից՝ զոր հատէ՛ք յարքունիս. Երրորդ՝ հանել, թափե՛լ զմեզ ՚ի Կայսերէ, զի՝ մի՛ վրդովեսցեն զբնակութ՟իս մեր՝ որք ունի՛մք զիշխանութ՟ի յա՛յսմ բաժնի. եւ զա՛յս պայման ուխտի գրեալ՝ եւ Խա՛չ հաստատեա՛լ՝ կնքեսցես, զոր տեսե՛լ՝ փութասցուք ՚ի ծառայութ՟ի ձեր։ Ողջ լեր Տ՟ր մեր։ Գ.րէ՝ եւ Խոսրով պատասխանի։

Քա՛ջ Արանց՝ Խոսրով Հայոց

Ար

Արքայ, Ստրատելատիդ Գաղաւո
նի, եւ ամ՟ Նախարարացդ՝ ողջոյն
շա՛տ: ուրա՛խ լերուք՝ զի մեք, ողջ
եմք. զի՝ եւ մեք ուրախացաք ընդ լուր
ողջունի ձերոյ. եւ առաքեցաք՝ ըստ
խնդրոյդ ձեր՝ զայս պայմանն ուխ
տի: Առաջին՝ չյիշել զյանցանս ձեր,
զոր չունէաք առ յանցանս իսկ. այլ՝
առ երախտաւորս զմխամտելն՝ առ
Թագաւորին Արշակունեաց՝ զոր
պաշտէիքն, զոր եւ առ մեզ՝ զնոյն
յուսամք լինել: Երկրորդ՝ դարձու
ցանել 'ի ձեզ զժառանգութ՟ի ձեր՝
զոր ունիմք յարքունիս, բա՛ց յայն
մանէ՝ զոր ումե՛ք ումեք պարգեւե
ցաք. զի՝ ո՛չ շրջին պարգեւ՛ք Թա
գաւորաց՝ առանց վնասու. մանաւ
անդ 'ի Գիւղն Հօրն Սերոյ՝ Տ՟ն
Շապհոյ՝ Արքայից Արքայի՝ եմուտ,
այլ՝ փոխանակ ընդ նո՛ր յարքու
նուստ ընտամք, եւ զձերո՛յն պակասու
թ՟ի: Երկիր՝ թափեմք զձեզ 'ի Գոր
ծակալո՛ց Յունաց՝ թէպէտ պատե
րազմա՛ւ ընդ Կայսեր, թէպէտ խա
ղաղութ՟ե: Եւ զքե՛զ՝ Գաղաւոն՝
Արիւն Իմ, եւ Հարազատութ՟ի. ո՛չ՝
ըստ վաղնջուց ազգականութ՟ե այլ՝
ըստ արդեանս, որ 'ի Սորէ քումմէ

Արշ

Արշանուշայ Արշակունւոյ, հանել զքեզ 'ի Հայրենեաց քոց Կամսարականաց, և 'ի Մայրենիս քոյ՝ ինձ առեալ ազգ, Արշակունի անուամբ պատուեցից։ զայս տեսեալ Պաղաւտնի՝ ընդ հուպ դարձուցանէ զընծաւ Նախարարան առ Արքայն Խոսրով. և բարեբախտիկ եղեալ՝ քաջախառութբ̃ հանդիպի ա̃մ խնդրոյն, և խոստմանցն։ Բայց՝ Սամուէլի Մամիկոնէի՝ յինքն ընդունել զթուղթն Խոսրովու, և զՊատճէն թղթոյն Նախարարացն՝ զատուցել 'ի Նախարարացն, գնաց առ Կայսրն Արկադ․ քանզի՝ էր սպանեալ նորա զՀայրն իւր Վարդան՝ յաղագս ուրացութեն, և զՄայր իւր՝ Տաճատուհի․ և երկնչելով 'ի Պարսից՝ և 'ի Քեռեաց իւրոց Արծրունեաց, ոչ 'ի Յունաց իշխէր զատչիլ։ Իսկ Արկադ նմա բարիս արարեալ, հրամայէ՝ զհաւաստար թղթոյն՝ Հելլէն գրով, 'ի Դիւան իւր դնել՝ զի՛ պահեսցէն յիշատակք ազգաց ապստամբողաց, որ կայ՝ մինչև ց'այսօր։

Պրակ Խթ 49

Մեռանել Հայոց Խոսրովայ, և ունել

ԽԹ. Յաղագս Եպիսկոպոսութեանն Մեծին Սահակայ:

Իբրեւ՝ տիրեաց Խոսրով ամենայն Նախարարացն Հայոց՝ որոց ցանկայրն. յղէ առ Արկադ, եւ խնդրէ 'ի նմանէ՝ հաւատալ յինքն զմասն Յունաց՝ որ 'ի Հայս: զորս չէին կալեալ՝ հարկիցեն տալ նմա անսխալ, ոպ՟՝ նորին Գործակալաց: եւ կասկածեալ Արկադեայ 'ի միաբանութենէ Նախարարացն Հայոց, թէ միաբանութբ՟ հատանիցեն 'ի նմանէ 'ի Պարսս զբաժինն զայն, կատարէ զխնդիրսն Խոսրովայ: Յետ այսորիկ՝ վախճանեալ Եպիսկոպոսապետն Ասպուրակես, 'ի տեղի ն՟ր յաջորդէ Խոսրով զՍահակ՝ որդի Մեծին Ներսիսի, որդւոյ Աթանագինի, որդւոյ Յուսկանն, որդւոյ Վրթանիսի, որդւոյ Սրբոյն Գրիգորի: Սա՝ ամ՟ առաքինութբ՟՝ Հարցն նմանեալ, աղօթից մասամբ առաւելեաց: Քանզի՝ ստացաւ աշակերտս վաթսուն, ըստ նմանութեան Մայրաքաղաքացն՝ Սպուդէից. Արք կրօնաւորք, Խարազնազգեստ, Երկաթապատք, Բոկագնացք, որք՝ յար ընդ նմա շրջէին. որովք՝ մշտըն

ջե

ջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս՝ զայնս, որք յանապատոն էին. և հոգայր զաշխարհս, թող՝ զայնս, որք յաշխարհի էին։ Առ նա եկեալ Մեսրոպայ յաղագս՝ խնդրոյ՝ Նշանագրաց Հայոց, եգիտ զնա՝ առաւել փափագող այնմ. և յետ՝ բազում ջանից, և ոչինչ օգտելոյ՝ դարձեալ յաղօթս ապաւինել յԱյ խնդրելով. և մեկնեալ ՚ի միմեանց՝ գնայ Մեսրոպ ՚ի դադարս իւր, և յանձն առեալ զխստամբերութի վարուց՝ ճգնէր առաւել քան՝ զկար։

Գլուխ Ծ 50

Կապումն Խոսրովայ՝ և փոխանորդել ըղ Մեծն Սահակ Շապուհ եղբայր Նէ։

Բայց Շապուհ էր ցասմամբ ընդ Խոսրովայ՝ բարեկամանոյն Արկադեայ անձամբ, և յան հրաման կարգել յԱնպխկապատուի զՄեծն Սահակ։ վն որոյ՝ յղեալ մեղադրութի՝ հանդերձ սպառնալեօք։ Ամբոստացաւ Խոսրով, և խրոխտամամբ վէս կամ պատասխանեաց՝ և արձակեաց զՊատգամաւորսն անարգանօք. և ինքն խօսեցաւ

ցաւ ընդ Արկադեայ, զի՛ լուծեալ զհաշտութիւն ընդ Շապհոյ՝ օգնեսցէ նմա զօրու, և սա՛ դարձուսցէ առ նա զբոլո՛ր աշխարհս. այլ՝ շապուհ՝ 'ի հրապուրելոյ գուշակութեան Նահապետաց մերոց՝ նո՛յն հետայն առաքէ զԱրտաշիր՝ զորդի իւր՝ զօրու մեծաւ 'ի Հայս. և՛ 'ի հրաժարել Արկադեայ 'ի կուսակցելոյն Խոսրովայ, և՝ ո՛չ զօք յօտար ազգաց գըտեալ 'ի սատարութիւն, անկարացեալ ընդդիմանալ, կամ խուսել 'ի նմանէ՝ չոգաւ առ նա. և Արտաշիր ընկեցեալ զնա 'ի Տէրութենէ, փոխանակ կացուցանելով զՎռամշապուհ, զեղբայր նորին. ո՛չ ըզՄեծն Իսահակ, և ո՛չ զօք 'ի Նախարարացն՝ կարգեցելոյն 'ի Խոսրովայ՝ վրդովեաց 'ի պատուո՛յ իւրաքանչիւրոյ: նա և՝ հրամայեաց և՝ ընդ Յոյնս զնո՛յն կա՛րգ ունիլ. և թողեալ գո՛ւնդ ստուար, ինքն 'ի Տիսբոն՝ փութայր հասանիլ, 'ի ծերութէ Հօրն՝ ակն ածեալ. ընդ իւր ունելով զԽոսրով, դնել յԱնուշն կոչեցեալ՝ բերդին. որոյ թագաւորեալ ամս՝ հինգ. ընդ նմին տարեալ՝ և զԳազաւոն կապանօք, կասկա ծեալ յառնն քաջութե՟ն. և զտունն ն՟ր ունել յարքունիս. նոյնպէս՝ և զեղբօր Շաւարշայ, և զՊարգևայ Ամատունւոյ. քանզի՝ զինուորօք նր կատարեալ՝ որսացան զյաջողութիւն ժամու՝ 'ի ճանապարհի Կարաւանին՝ զերծուցանել զԱրքայն իւրեանց Խոսրով. և ոչ աջողեցաւ 'ի պարաւանդելոյ ոտից ն՟ց շղթայս. և հզօր մարտիկ եղելոյ՝ սպանման շաւարշ՝ և Մանուէլ՝ որդի Պարգևայ, և բազումք ընդ նմա։ Իսկ՝ Պարգև՝ 'ի կապանս ըմբռնեալ՝ ածաւ առաջի Արտաշրի. և տիկ տեսակագործեալ ուռուցմամբ, հրամայեաց դընել առաջի Խոսրովայ հանապազ։

Պրակ ծա 51

Երթ՟ Մեծին Սահակայ 'ի Տիզբոն, և դարձ մեծարանօք՝ և պատուով։

Սուրբք ոմանք՝ և Երևելիք Առաջինք 'ի Նախարարացն՝ և 'ի Վարդապետաց աշխարհիս՝ լուսաւորութե՟ պատճառք որդէծնութե՟՝ իջեալ ց'Մեծն Սահակ. դադարումն եղև ուսուցմանց ն՟ր. ունելով դուստր մի Սահակ Անոյշ՝ անուն. որ տուաւ յամուսնութի Հա

մա

մազասպայ Մամիկոնէի. և 'ի մեռանիլ՝ Առաջին Իսահակայ Սպարապետի, 'ի տեղի ն՟ր աղաչէր Սե՟ն Իսահակ՝ կարգել զնա Խոսրովայ Արքայի. և զկնի կապանաց ն՟ր, եղբօր ն՟ր Վռամ Շապհոյ. այլ՝ սա հրաժարէր՝ առանց հրամանաց Արքայից Արքային՝ առնել զայն. յիշելով՝ եթէ՝ սակս այսպիսեաց իրաց՝ կրէ զվիշտս եղբայր ն՟ր Խոսրով. վասն որոյ՝ առեալ 'ի նմանէ թուղթս, 'ի թախանձելոյ Դստերն նորին՝ չոգաւ առ Արտաշիր՝ Պարսից արքայ. (որ՝ յետ եօթանասնամեայ թագաւորութեան Հօրն՝ կալաւ զթագաւորութիւնն՝ ամս չորս) և մեծարի 'ի նմանէ յոյժ. Նախ՝ վասն՝ Առաջատոհմիկ ազգին Պալհաւկաց. դարձեալ զի՝ և առաջի անհաւատից՝ Յարգոյ և Պատուական ցուցանէ Ա՟ծ զծառայս իւր. որոյ զբնաւն կատարեալ զխնդիրսն. Նախ՝ վ՟ն փեսայի նորա Համազասպայ. և դարձեալ՝ վ՟ն մեղուցելոյն նմա ազգայն Կամսարական և Ամատունի, որք սուզեալք՝ ղօղել էին յանյայտ տեղիս. վ՟ն որոյ՝ մաղթեաց գթալ, իբր՝ յԱ՟ծային հրամանէ՝ ոչ համարել որդւոց զայն ցանս հարց. մանաւանդ՝ զի և հարքն, որք մեղանն, նոքին սակս այնր՝ և մեռանն. որոց մնացելոցն պարգևեաց զկեալ: Հրամայեաց՝ զտունս իւրաքանչիւրոցն՝ զկալեալսն յԱրքունիս՝ դարձուցանել ՚ի նոսա. բայց միայն՝ ՚ի գահ հայրենի ոչ հաստատել, այլ՝ խնամոյ քան՝ զբազումս մատուցեալ Նախարարս ՚ի Գահս կրսերագունից պատրաստեալ: Իսկ՝ զազգն համազասպայ՝ որ է Տոհմ Մամիկոնեան՝ ՚ի վեր մատուցանել, զի՝ կարգիցեն ունել զհինգերորդ գահ Նախարարացն Հայոց. և՛ ՚ի Դիւանի իւրում գրել: Զի զայս զերկուս՝ այսպէս պահէին սովորաբար, զի՝ յորժամ նստէր Արքայն, որ նոյն ժամայն փոխէին ըզդրամ՝ գտեալ ՚ի գանձս Արքունի՝ զնորայն տպաւորելով Պատկեր. և զգիր Դիւանին՝ յայլ փոխեալ նոր անուամբ՝ սուղ ինչ զանազանեալ՝ ոչ բառնալով զհինն: Իսկ՝ եթէ, յամեսցէ ՚ի Տէրութեանն ամս բազումս, և արասցէ աշխարհագիր նոր, թողուին զայն, որ ՚ի հնոյն փոխեցաւ, զի՝ միայն նորոյն վերագրեսցի անուն: Արդ՝ Արտաշիր՝ ոչ ժա

մա

մանեալ՚ի կարճութենէ աւուրցն՝ յա՛յլ աշխարհագիր, ՚ի յայնմ, որ յառաջնո՛ցն փոփոխեաց՝ իւր անուամբն հրամայեաց՝ գրել զա՛յն ա̃մ, և տալ գահու, և պատուոյ՝ հանդերձ իշխանութբ̃ գիւղից, և դաստակերտաց Համազասպայ, և որում ցանկա՛յրն զՍպարապետութի̃ն Հայոց. Հրովարտակ առ Վռամշապուհ՝ մեր Թագ̃ւր՝ գրել զայս։

Մազդեզանց Վռամ Արտաշիր՝ Արքայից Արքայ. առ եղբա՛յր Վռամ Շապուհ՝ Թագաւոր Հայոց, ողջոյն շատ։ Ընկալայ զգրեալս որ էին՝ վ̃ս Եպիսկոպոսիս Իսահակայ. և յիշեցի զերախտիս Նախնեաց Հա՛րցն դր̃՝ որք էին Նահապետք Սուրենեան Պալհաւայ. և կամաւ յանձն առին զՏէրութի̃ իմոց Նախնւոյն, և Համանուանն Արտաշրի. և ա՛յնչափ՝ սիրեալ զնա քան զիւրեանց ազգայինսն, մինչ զի՝ ո՛չ շատացան միայն՝ ՚ի Պարսից աշխարհիս մարտնչիլ ընդ նոսա, այլ՝ և ՚ի ձե՛րդ եկեալ՝ նորին աղագաւ, սպանին զԽոսրով քո Նախնին. և ըզտո՛յժ սպանութեանն իւրեանց հատուցին մահուամբ։ Իսկ՝ որդի ըս

պաս

պանողին Գրիգոր՝ զկեանս, և զԹագաւորութիւն՝ կորուսեալ հիւանդութե՟ Տրդատայ՝ վերստին ետ իւրով բժշկութե՟· և առաւել՝ առ ձե՛զ Երախտաւոր· վ՟ն որոյ՝ զորդիացեալ դմին զՀամազասպ կացուսցես 'ի վ՟ր զօրացդ Սպարապետ, մե՛ր հրամանաւ· և ազգի դորա տացես զԳահն հինգերորդ պատուոյ՝ Նախարարացդ· և զգեօղս՝ և զդաստակերտս, զոր տուեալ է Նախնեաց քոց՝ Հա՛րց դ՟ր, կալցին դոքա· սմպէս՝ և զտունս մնաստակարա՛յցդ ազգաց, զոր կալաք յարքունիս՝ Թողցես 'իւրեանց, աներկիւղաբար ժառանգե՛լ նոցին մնացորդաց· բայց՝ Գահու Հայրենականաց պատուոյն՝ մի՛ արասցես արժանի· զի, և մեք՝ 'ի մերում Դիւանի՝ հրամայեցաք գրել· ո՛ղջ լեր։ Բայց՝ յորժամ եկն Մեծն Սահակ, և զա՟մ պարգևեալսն 'ի յԱրտաշրէ հաստատեաց, մեռաւ Արքայն Արտաշիր· և փոխանակ ն՟ր՝ Թագաւորեաց Վռամ, որ և՝ Կրմանն կոչեցաւ՝ ամս տասն· և զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ աշխարհիս Հայոց, և ընդ Թագաւորին մերոյ՝ Վռամշապհոյ, և ը՟

Մե

Մեծին Սահակայ, և է՛ր խաղաղութ՟ի 'ի մէջ Վռամայ, և Արկադեայ։ և Վռամ Շապուհ ունէր զա՟ս մեր, և ծառայէր Թագաւորա՛ցն երկոցունց՝ տալով զհա՛րկս. զմասինն Պարսից՝ Վռամայ. և զմասինն Յունաց՝ Արկադեայ։

Գլուխ ԾԲ 52

Յաղագս՝ Դանիէլեան Նշանագրացն։

ՅԱյնմժամանակի՝ հիւանդացեալ Արկադ. և շարժմանց ահագնից, և հրկիզութեանց եղեալ 'ի Բիւզանդիոն՝ որ յաղագս Մեծին Յոհաննու, չփոթեա՛լ լինէր Թագաւորութիւնն Յունաց, և զօրքն ընդ միմեանս պատերազմէին և ընդ Պարսիցն։ վ՟ն որոյ՝ Վռամ հրամայեաց՝ Վռամ Շապհոյ մերում Թագաւորի, իջանել 'ի Միջագետս, զի խաղաղացուցեալ՝ կարգեսցէ զն՟ո. և համար երկաքանչիւրոցն՝ հատցէ Գործակալաց։ և իջեա՛լ նր՟՝ և կարգեալ զա՛յս ամ՟, ո՛չ փոքր ինչ կրէ աշխատութիւն՝ յաղագս Քարտուղարի. զի՝ մինչև գնա՛ց Մեսրոբ յարքունական դրանէն, ո՛չոք 'ի Ճարտարաց գտանիւր անդ՝ ՚ի Պարսից, քանզի՝ Պարսկականաւն վարէին գրով. վ՟ս որոյ՝ մատուցեալ ո՛մն առ Արքայն Հաբէլ՝ անուն կոչեցեալ՝ խոստանայր Հայկազանցս առնել Նշանագիր Լեզուացս, յարմարեալ Դանիէլէ Եպիսկոպոսէ՝ յիւրմէ մերձաւորէ. զորով անփոյթ արարեալ Արքայի. և եկեալ ՚ի Հայս՝ գտանէ ժողովեալ առ Մեծն Սահակ, և Մեսրոպ զԵպիսկոպոսունս ամ՟, հոգալ զգիւտ Դպրութե՟ Հայոց. զոր Արքայն զգացուցին, և նմա պատմեաց զասացեալսն Վանականին. զոր իբրև՝ լուան՝ թախանձէին զնա՝ փոյթ զայնպիսեացն առնել պիտոյից. վ՟ս որոյ՝ առաքեաց հրեշտակութե՟ զայր մի՝ Պատուական յաշխարհէս, և հաւատարիմ իւր՝ Խադունի ազգաւ, Վարճիճ անուն, յոյժ փափագող նորին գործոց՝ առ Հաբէլն այն զոր առեալ, և երթեալ նովաւ հանդերձ՝ քաջ հմտացեալ ՚ի Դանիէլէ, կարգել՝ ըստ ձևոյ օրինակի Յունականին, զվաղնջուցն գրեալս շարագիր տառից. եկեալ ետուն ցը՛ Մեծն Սահակ, և ց՛ Մեծն Մեսրոպ. որոյ՝ ուսեալ՝ և Թևակոխեալ՝

ածելով ընդ նմ՟ տղայոց զամս սակաւս. տեղեկացեալ՝ գիտացին ոչ լինել բաւական՝ այնու նշանագրօք՝ ստոյգ հոլովել զհեգենայ բառից Հայկականաց հագներգաբար, մուրացածիւն այնորիկ գծագրութ՟բ։

Գլուխ ԾԳ 53

Յաղագս Մեսրոպեայ Աշակերտացն ՚ի Վերնոյն պսակեցելոց Շնորհաց։

Զկնի այսորիկ՝ ինքնին Մեսրովբ իջանէ ՚ի Միջագետս՝ հնդերձ աշակերտօք՝ առ նոյն Դանիէլ, և ոչ՝ աւելի ինչ գտեալ՝ քան զառաջինն. անցանէ յԵդեսեայ առ Պղատոս ոմն՝ Ճարտասան Հեթանոս, Իշխան Դիւանին. և նր՟ խնդութե՟ ընկալեալ, և զոր ինչ միանգամն՝ ՚ի միտ առնոյր քան Հայերէն՝ յինքն առեալ, և շատ ջանացեալ՝ և ոչ օգտեալ, զոգիտութիւն խոստովանեցաւ Հռետորն, և զայլ ոմն ասելով՝ յոյժ հասու՝ Վարդապետ իւր լեալ յառաջագոյն, և ապա առեալ զՃարտարուացն գրեան ՚ի նոյն Դիւանէն Եդեսեայ՝ և գնացեալ՝ Քրիստոնէութե՟ հաւատոց, որոյ անուն՝ Եպիփանոս, զոր խնդրեա՛լ՝ գտցես լցուցանել զփափա՛գդ քո։ Յա՛յնժամ Մեսրոպա՛յ՝ օգնականութիւն 'ի Բաբելոնէ Եպիսկոպոսէ՝ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէ՝ 'ի Սամոս դիմէ․ քանզի՝ Եպիփանու վախճանեալ զկենցաղս, թողեալ լինի աշակերտ մի անուանեալ՝ Հռուփանոս՝ հրաշալի արուեստիւ Հելլէն գրչութե՟՝ որ 'ի Սամոս էր միայնացեալ։ առ սա՛ երթեալ Մեսրոպայ՝ և յա՛յսմ ևս անշահ մնացեալ, յաղօթս ապաւինի։ և տեսանէ ո՛չ 'ի քուն՝ երազ, և ո՛չ յարթնութեան՝ տեսիլ․ այլ 'ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց․ թա՛թ ձեռին աջոյ՝ գրելով 'ի վր՟ վիմի, զի՝ ո՟պ 'ի ձեա՛ն վե՛րջք գծին ունէ՛ր քա՛րն։ և ո՛չ միա՛յն՝ երևութացաւ, այլ՝ և համադամանք ամենայնիւն, ո՟պ՝ յաման ինչ՝ 'ի միտս նորա հաւաքեցաւ։ և յարուցեալ յաղօթի՛ցն՝ եստեղծ զՆշանագիրս մեր՝ հանդերձ Հռուփանոսիւ, կերպաձևեալ զգիրն՝ առ ձե՛ռն պատրաստ։ Մեսրոպայ փոխադրելով զհայերէն Ր․թութա՛յսն՝ ը՟ անսայ Թաքութե՟ Սիլլաբայիցն 'ի Հելլէնացւո՛յն։ և իսկո՛յն՝ 'ի Թարգմանու

թի

Թէ ձեռն արկեալ խորհրդաբար, ակնեալ յԱռակացն՝ բովանդակելով զքսան՝ և զերկու յայտնիսն, և զՆոր կտակս՝ հեղուլ ՚ի Հայ բան։ Նա և Աշակերտք նր՟ Յոհան Եկեղեցացին, և Յովսէփ Պաղնացին. միանգամայն՝ և զարուեստ գրչութե՟ ուսուցանել տալով Մանկագոյն իւրոց Աշակերտաց։

Գլուխ ԾԴ 54

Յաղագս Պատրիարքութեան Հայոց՝ Վրաց, և Աղուանից։

Վախճանեալ Արկադեայ, փոխանակ նր՟ Թագաւորէ նորին Որդին որ կոչեցաւ Թէոդոս Փոքր. և զնոյն բարեկամութի կալաւ ընդ մերում աշխարհիս՝ և ընդ արքայիւն մերոյ՝ Վռամշապհոյ. քայց զմահն իւր ոչ հաւատաց նմա, այլ ինքեան կալաւ Գործակալք և խաղաղութի արար ընդ Յազկերտի՝ արքայի Պարսից։ Ընդ նոյն ժամանակս՝ եկեալ Մեսրոպայ՝ և բերեալ զՆշանագիր Մերոյ Լեզուիս. և հրամանաւ Վռամշապհոյ՝ և Մեծին Սահակայ՝ ժողովեալ Մանկունս Ուշեղս՝ և Արագուսանս

Փափ

փափկաձայնս, և յերկարաձգիս, և Դպրոցս կարգեաց յամենայն գաւառս. և ուսոյց զբնաւ կողմն Պարսից բաժնին, բայց Յունաց մասնէն, որք ընդ ձեռնադրութեամբ տուգանեցան, վիճակեալք յԱթոռն Կեսարու, վարեալ Յունական Դպրութեամբ, և ոչ Ասորւոց: Իսկ Մեսրովբայ երթեալ յաշխարհն Վրաց, առնել նոցա Նշանագիր՝ Տուիցելոյն ՚ի վերուստ Շնորհաւն, համանդերձ Ջաղայիւ ումեմբ՝ Թարգմանաւ Հելլէն, և Հայ Լեզուաւ՝ ձեռնտու լինելով նմա Արքային Բակրոյ, և Եպիսկոպոսին Մովսիսի: և ընտրեալ մանկունս, և յերկուս բաժանեալ դասս, և Վարդապետս Թողու յաշակերտաց իւրոց, զՏէր Խորձենացին, և զՄուշէ Տարօնացի. և ինքն յԱղուանս իջեալ առ Արսուաղէն՝ Թագաւորն նոցին՝ և առ Եպիսկոպոսապետն Երեմիա. որոց կամաւ յանձն առեալ զՎարդապետութիւն նորա, ետուն մանկունս ընտիրս: և կոչեալ զԲենիամին ոմն, շնորհաւոր Թարգման, զոր անդ արձակեաց մանուկն Վասակ Սիւնեաց Տէր, ՚ի ձեռն Անանիայ՝ իւրոյ Եպիսկոպոսի, որովք

րովք էստե՛ղծ զՆշանագիրս, Կոկորդախօս, Աղխաղձուր, Խժական՝ Խեցբեկագունեն ա՛յնորիկ Գարգարացւոց Լեզուին· և վերակացու թողեալ զաշակե՛րտ իւր զՅովնաթան· միանգամա՛յն և Քահանա՛յս կացուցեալ Դրանն Արքունի՝ ինքն դառնայ 'ի Հա՛յս· և գտանէ զՄեծն Սահակ թարգմանութե՟ պարապեալ յասորւոյն՝ յո՛չ լինելոյն Յունի· քանզի՝ նա՛խ 'ի Մեհրուժանայ՝ այրեցեա՛լ էին գրեանք հանո՛ւր աշխարհիս Յո՛յն Գիրք· դարձեալ 'ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային Պարսիկ Վերակացուքն Յոյն ուսմունք՝ ուսանե՛լ Դպրութի՟ յիւրեանց մասինն, այլ միա՛յն Ասորի։

Պրակ ԾԵ 55

Կրկին Թագաւորելն Հայոց Խոսրովայ, և յետ նորա Շապհոյ՝ Պարսկի։

ՎՌամ Շապուհ թագաւորեաց ա՛մս, քսան՝ և մի՛, մեռանի, թողլով որդի տասնամեայ՝ անուն Արտաշէս։ Յա՛յնմ ժամանակի՝ երթեալ մեծին Սահակայ 'ի դուռն Արքային Պարսից Յազկերտի՝ խնդրել զկապեալն Խոսրով որ՝ զկնի մահուանն Արտաշիսի լուծեալ՝ պահեցաւ արձակ յԱնիունն՝ կոչեցեալ բերդի՝ յաւուրս Առամայ։ և Յազկերտի հաւանեալ, կատարէ զհայցուածսն, տալով նմա զՏէրութիւնն՝ արձակել 'ի հայս։ Սա խնդրեաց զհրաման՝ որդի Պազաւոնի, զոր՝ յետ հօրն մահուան՝ համնեալ յանյիշելի ամրոցէն, անդր ևս քան՝ զՍագաստան էր գումարեալ· զոր ոչ ժամանեաց տեսանել Խոսրով, մի և եթ՝ 'ի կրկնումն՝ Թագաւորեալ ամ. յետ որոյ՝ Յազկերտի ոչ ևս՝ 'ի Նոցունց, այլ՝ զշապուհ՝ զորդի իւր թագաւորեցուցեալ Հայոց, հնարս դառնութ͞ե խորհելով· իբր թէ՝ այնպէս հանապազ առ Նմա լինելով Նախարարքն յանկչիցին, խոստմունք, տուր՝ և առիւք, խրախճանութեամբ, և զբօսանօք որսոց· այլ և՝ եկամուտ հարազատութ͞բ մերձաւորեսցին խնամաւորութ͞բ· զի՝ մարթ լիցի՝ զնոսա 'ի Դէն մազդեզանց սաղապեցուցանել, որով ամենևին իմբ՝ զատցիցեն 'ի Յունաց· ոչ գիտելով անմիտն, թէ Տ͞ր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց։ Թէպէտ, առ ժամայն՝ յաջո ղեցաւ. քանզի՝ մեռեալ Համազասպայ, և՛ի սգի՛ մեծի եղեալ Սահակայ, ոչ ոք 'ի միաբանութ̅ի հաւաքեց զզօրս հայոց. վ͞ս որոյ՝ դիւրամուտ յաշխարհս եղև Շապուհ, ընդ իւր ածելով զՀրահատ, և զա͞մն վտարանդիսն. սակայն՝ ոչ կարաց զմիտսն հաճել Նախարարացն, ամենեցուն ատեցեալ զնա. և ոչ արքայօրէն մեծարէին զնա՝ յորս, կամ՝ 'ի խաղու: Որ երբեմն՝ զհետ երամակաց ցռուց յանդգնագոյնս արշաւել ը͞ն խորտաբորտս, և ընդ վիմուտ տեղիս, յորմէ կասել սկսաւ շապուհ: Իսկ՝ Ատոմայ Մոկացւոյ եպերեալ զնա՝ ասէ, գնա՛ գնա Ա͞ծորդիդ Պարսից, եթէ՝ այր իցես. և նա՝ ասէ, դու երթիջիր. զի՝ 'ի քարինս Դիւաց է շահատակել: Դարձեալ՝ յայլում ժամու՝ դիպեցաւ 'ի շամբս կինձ որսալ հրով, և Շապհոյ ոչ համարձակեալ 'ի թաւուտն քաջարշաւ լինիլ, մինչև՝ շրջապատէր հուրն. և նորա զհայեցուածսն յերկուս բաժանեալ՝ այսր անդր բերեալ լինէր երկվարաւն. միւսանգամ ասէ՝ Ատոմ, Աստուածորդիդ Պարսից, ահա Հայր քո, և Ա͞ծ. ըն-

դէր

դէ՞ր զանդիտես։ Իսկ՝ շապուհ ասէ, Թողեա՛լ 'ի բաց զկատակե՛րդ, յանցանել ընդ հո՛ւրդ դարձի՛ ըզքեզ՝ որ և ես զկնի՛ քո. քանզի՝ յառաջե՛լն՝ ձի՛ս իմ խրտչի. յա՛յնժամ՝ այպանեա՛ց զնա Ատոմ, ասելով՝ մի՞ Թէ՝ ա՛յդ քարի՞նդ խցեն, զի՝ ես յառաջեցից։ և արդ՝ եթէ դու զմոկացիս կոչես՝ Գիւղազգի՛, ես զՄասանեանդ կոչեմ՝ Կնամարդիս. և մորկեալ զերիվա՛րն, իբրև՝ ընդ հովի՛տ ծաղկանց՝ անցանէր ԺԲ հո՛ւրն՝ զերծուցանելով զշապուհ։ և յետ ա՛յնր՝ գիտացեալ, Թէ՝ նմա լուա՛չ լինի, անցեալ՝ 'ի մոկա՛ցն գնաց յաշխարհ։ Ա՛յլ երբեմն՝ 'ի մականական խաղուն՝ երկնից պատահեաց շաւասպա՛յ Արծրունւոյ՝ զգնտա՛կն հանել 'ի Շապհոյ. և նր ածեալ նըմա մականաւն, ասէ՛, ծանի՛ր զքեզ։ Իսկ՝ նր պատասխանեալ՝ Թէ՝ այո՛, ասէ՝ Ճանաչեմ ես զիս՝ Արքայորդի 'ի սերմանէ Սասանայ, և ունիմ իշխանութիւն ընդ եղբարս քո՝ զբարձն Արքայի համբուրել՝ որ անուանակոչեալս եմ. և զայս ասացեալ յո՛յժ քամահաբար՝ 'ի ձիարձակարանէն՝ արփայագնա՛ց լինէր։

Պար

Պարծեալ ուրեմն 'ի խընճոյս ուրախութեն, Խոսրով Պարդմանացի 'ի գինւոյ զեղխեալ՝ առաջի Շապհոյ զօրէն սեղեխմ տուփեցելոյ զհեմտ ջնարահամր կնոջ կրթէր· ընդ որ՝ ցասուցեալ Շապհոյ՝ հրամայէ ունել զնա՝ և 'ի դահլճին պահել· այլ նա 'ի վաղակաւորն հաստատեալ զանձն, նոյնպէս՝ գունակ Տրդատայ Բագրատունւոյ՝ յիւր տունն անցեալ՝ գնայր։ ոչ ուրուք 'ի Սպասաւորացն Արքունի համարձակեալ՝ արկանել 'ի նա ձեռս, յառաջագոյն գիտելով զփորձ սորին։ և զայս պատմել մեզ՝ քոյդ հարկաւորեաց ընդ վայր խնդիրք։

Գլուխ ԾԶ 56

Որ ինչ եղեն գնալոյն 'ի Հայոց Շապհոյ, և անիշխանութեանն յետ նորա։

ՅԱմս չորս՝ անարգաբար թագաւորեալ Հայոց Շապհոյ, հասանէ նմա համբաւ հիւանդութեան հօրն, և գնաց փութանակի իւրում Նստեղակալին, հրամայելով Օզրագլխի՝ ունել զմեծամեծս Հայոց՝ և տանել 'ի Պարսս· բայց՝ եղև ընդ հասանելն Շապհոյ 'ի Տիզբոն, մեռաւ հայրն նր̃ Յազկերտ՝ թագաւորեալ ամս՝ մետասան։ 'Ի նմին աւուր, և նա անդէն 'ի Պուրան մարդկանէն նենգեալ՝ սատակեցաւ. իսկ՝ 'ի ձեռն Քաջին, և Բարեբախտին Ներսեսի՝ Ճիճրակացւոյ՝ Զօրագլուխ եղելոյ՝ ժողովեալ Նախարարացն Հայոց՝ հանդերձ զօրօք իւրեանց՝ տան ը̃ գնդին Պարսից պատերազմ. հարկանեն զզօրսն, և ըսպանանեն Ապրամ Սպանդունի զզօրագլուխն. և ինքեանք ցրուեալ՝ Անտիրդլոյ՝ Անձնապահապետք յա̃մ Լերինս շրջէին, և յԱմուրս. յորում Համօրէն Սանանդացիք երևեցան նահատակեալք քաջու̃թ։ ուստի՝ ազմկաւ, և բազմում խռովութե̃ մնացեալ աշխարհ մեր յանիշխանութե̃՝ ամս երիս, աւերեալ ամայանայր. վ̃ որոյ՝ պակասեալ լինէին Հարկք Արքունի. և հատեալ ճանապարհք Սամկաց, և ամ̃ բարեկարգութի̃ վրդովեալ՝ ապականիւր։ ընդ նոյն աւուրս՝ թագաւորեաց Պարսից՝ Սուամ Նարկորդ։ և ըզքէն վրիժուց խնդրեաց 'ի մերմէ աշխարհէս. խաղաղութի̃ առնելով ը̃ Յոյնս, ոչ 'ի բաժինն նր̃ Հայի։

Ա

Պրակ ԾԷ 57

Առաքումն Մեսրովբայ 'ի Բիւզանդիոն։ և Պատճէն Թղթոյն հնգից։

Իսկ՝ իբրև ետես Մեծն Սահակ զայս ա͞մ չարիս 'ի մասինն Պարսից, գնայց նա զկողմամբք Արևմտից մերոյ աշխարհիս 'ի բաժինն մասինն Յունաց. և՝ ոչ ը̃ արժանեաց իւրոց՝ եղև ընկալեալ. վ͞ս որոյ՝ յղէ զՄեսրովբ, և զՎարդան՝ Թոռն իւր՝ 'ի Բիւզանդիոն՝ առ Կայսրն՝ Թէոդոս՝ հանդերձ թղթով՝ որ ունէր օրինակ զայս։

Թուղթ Իսահակայ՝ առ Թէոդոս։

Խաղաղասէրն Կայսեր՝ Տ͞ն իմում, Օգոստոս Թէոդոսի։ Սահակ Հայոց Եպիսկոպոս՝ 'ի Տ͞ր խնդալ։ Գիտեմ, զի՝ համբաւ նեղութեա մերոյ հասեալ է 'ի Ներող Լսողութիւն Ինքնակալիդ. սակս որոյ՝ յուսալով 'ի Բարեգթածութ͞ե Բարերարութեանդ քո՝ դիմեալ ապաւինեցայ յոտս Ձեր, և ոչ հանդիպեցայ ընդունելութ͞ե յիմում Վիճակիս 'ի հրամանէ Վերակացուացձ͞ց. այնչափ ատեցեալ զմեզ, մինչև՝ ըզՆշանագիրս անգամ ոչ ընկալան, զոր եբեր նոյն այր՝ զոր առաքեցի առ Ձեր Բարերարութիւնդ. բազումանգամ ճգնեալ դորա յԱսորուց աշխարհին: Արդ՝ թուիցի Ձերում Տէրութեանդ՝ ոչ անիշխան առնել զմեզ ՚ի Մերում Վիճակիս՝ հրամայեալ, ընդունիլ ընդ մեզ, և Վարդապետութիւն մեր.

Ողջ լեր:

Թուղթ Սահակայ առ Ատտիկոս:

Սահակ Եպիսկոպոս Հայոց: վարդապետ Մեր Ատտիկոս՝ Եպիսկոպոս՝ Աշխարհամուտ Գրանդ՝ Օրհնութ՟ Ողջոյն: Յուսացեալ ՚ի Ձեր սրբութիւնդ, առաքեցաք զՈւսուցող մերոյ աշխարհիս՝ զՄեսրոբ, և զԹոռն Իմ Վարդան, ո՟պ՝ զի լուեալ Քո ՚ի դոյժնէ զաղէտս նեղութեան մերոյ, բարեխօսեալ առ Մեծն Թագաւորին՝ օգնեսցես մեզ: որպէս՝ արդարև Եղբայր Սիրելի. Ողջ լեր:

Գիրք և առ Անատոլիս զօրավար զօրաց Յունաց:

Սահակ Եպիսկոպոս Հայոց: Քաջի Զօրավարի Անատոլեայ՝ խընդալ: Շնորհ ունիմ Ա՟ծ, յաղագս զքեզ պատրաստել մեզ յապաւինութիւն: Վ՟ս որոյ՝ զգացուցանեմ, զի՝ 'ի հայթայթանս մերոյ նեղութե՟՝ առաքեսցի զՈւսուցանօ՛ղդ մեր զՄեսրոբ, և զԹո՛ռն իմ զՎարդան 'ի Դո՛ւռն Արքունի։ և ա՛ղաչեմ զքո Քաջութիւնդ՝ ձեռնտո՛ւ լինիլ Ճանապարհիդ. Ո՛ղջ լեր։

Զա՛յս տեսեալ Անատոլեայ, միանգամա՛յն՝ և զլո՛ւր առաքինութե՟ն Մեսրովբայ լուեալ՝ որ յառաջագոյն հնչեցեա՛լ էր զնմանէ, ո՛չ փոքր ինչ արա՛ր նոցա ընդունելութիւն. մինչև՝ 'ի ձեռն փոփոխ ընթացից դրով զգացուցեալ Կայսերն. առնու հրամա՛ն՝ արժանա՟պ առաքե՛լ փութով. վ՟ն որոյ՝ արգելեա՛լ 'ի քաղաքին 'ի Մելիտինէ ըդ բազմութե՟ն Աշակերտացն, զորս ը՟ ինքեան ածեալ՝ հանդերձ գլխաւորա՛ւ նոցին Ղեւոնդիւ առ Եպիսկոպոսին Ակակա՛յ թողու։ և իւր առեա՛լ զՄեսրոբ, և զՎարդան, տա՛յ ց'Եպիսկոպոսն Դերջանո՛ւց Դինդ. և բարեփառութ՟բ զն՟ա յուղարկէ, որով մտին 'ի Բիւզանդիոն, և յանդիման եղեալ Մեծի՛ Թագաւորին։ առին, և զոր յուսային, և զոր ո՛չն յուսային, և դարձան հանդերձ թղթով այսպիսեա՛ւ։

Թուղթ

Թուղթ Թէոդոսէ առ Սահակ

Ինքնակալ Թէոդոս՝ Օգոստոս՝ և Կա՛յսր Հռոմայեցւոց։ Մեծի Սահակայ՝ Եպիսկոպոսի՛ Հայոց, խնդալ։ Հրամայեա՛լ մեր տեսանել զթո՛ւղթս, վերահասու եղաք գրելեա՛ցս առ 'ի քէն․ և մեղադի՛ր եմք յո՛յժ, զի՝ ա̃մ սրտիւ մատեցար զհե՛տ Հեթանոս Թագաւորաց․ և մեզ՝ և ո՛չ թղթո՛վ՝ բաւականացա՛ր ծանօթանալ․ և առաւել՝ յա՛յսմ մեղադի՛ր եմք, զի՝ արհամարհեալ զՃարտարօ՛քս՝ որք 'ի մերո՛ւմ քաղաքիս, յասորեա՛ց ոմանց խնդրէիր զԻմաստի՛ց գիւտս․ վասն որո՛յ՝ ջեա՛լ էաք, ընդ մերոյ ծառայիցդ արհամարհե՛լ զայդպիսի ուսումն, բայց՝ զի յետոյ՝ պատմեա՛ց մեզ Մեսրովբ, եթէ՝ կատարումն արուեստիդ 'ի Շնորհաց Վերնոց եղև, գրեցաք, զ̀ի՝ ա̃մ փութով ուսցին, և զքեզ պատուեա՛լ ընկալցին, ո̃պ՝ զարդարեա՛լ Վարդապետ իւրեանց՝ հանգոյն Ր՝ր̀ք Եպիսկոպոսին Կեսարու։ և դարմանք՝ և ծախք յարքունուստ եղիցին։ և հրամայեցաք՝ քաղաք շինել յաշխարհիդ Հայոց, յապաւինութիւն ձեզ՝ և մերոց զօրացդ. և վասն քո՝ արարաք զՎարդան Ստրատելատ՝ զորդի որդիացելոյ քոյ. և յԱռաջին վարդապետարն գրեցաք զՄեսրովբ. Ողջ լեր։ Գրեաց և Մեծ Եպիսկոպոսն Ատտիկոս զայս ինչ։

Թուղթ Ատտիկոսի առ Սահակ։

Ատտիկոս՝ Ինքնագլուխ Եպիսկոպոս Կոստանդինուպօլսի։ Տեառն Սիրելոյ՝ և Աթոռակցի, Սահակայ Եպիսկոպոսի Հայոց 'ի Տէր խնդալ։ Բազում Գոհութի՟ Այ՟ մատուցանեմք յաղագս՝ Քոյ Բարեհամբաւութեդ 'ի մէջ այդպիսի Բարբարոս Ազգի. այլ ոչ ազատ 'ի մեղադրանաց թողումք, որ ոչ կանխաւ յիշատակեցեր զՍիրելութի՟ Գրիգորի, և 'Ներսեսի՝ Երանելեաց՝ Քոց Հարցն։ և առաւել՝ ը՟ այս զարմանամք. եթէ՝ զի՞րդ՝ թողեալ զաղբեւրն Եկեղեցւոյ՝ ըզՀայրն Մեր, Սուրբ Յոհաննէս. որ՝ ոչ միայն Տիեզերական Մայրաքաղաքիս, այլ և՝ ամ՟ն Ազ՟ Քրիստոնեայք, և ընդհանուր աշխարհս 'ի նմանէ լուսաւորեցան վարդապետութ՟բ. ուստի՝ և Ոսկեբերան՝ զնա կոչեցին. և ձեր զանց զնովաւ արարեալ՝ կամեցայք 'ի սահմանական ջրոց՝ փափագ ծարաւոյ յագեցուցանել. մինչև՝ Ամենագիտին տեսեալ զանոտի աշխատութիւնն, բղխեաց 'ի ձեզ զՇնորհս Հոգւոյն. ընդ որ՝ այժմ ուրախեմք: Իսկ՝ այդ հրամանաւ Ինքնակալի Օգոստոսի տուեալ լիցի քեզ իշխանութի̃ Վարդապետել զկողմդ մեր. և Աղանդոյ Բորբորիտոսաց, կամ՝ հաւանեցուցանել, կամ՝ հալածել 'ի քումմէ Վիճակէդ: և զառաքեալս 'ի քէն՝ զՄեսրոպ՝ ձեռնադրեցաք՝ լինել Եկկլէսիաստիկոս:

Պրակ ծը 58

Վասն՝ զԱրևմտեայս մեր Վարդապետելոյ, և խաղաղանալոյ բոլորովին և Թագաւորելոյն Արտաշիսի:

Եկեալ Մեսրովբայ, և Վարդանայ Ստրատելատի՝ գտին զՕօրավարն Անատոլի՝ հուպ 'ի մերս եկեալ Սահման. որոյ եկեալ՝ զՀրամանն Արքունի առաւել յոխորտաբար, և քաջափոյթ ձեռնարկութ̃ե՝ զգործն 'ի կատարումն աւարտեաց. ք̃զի՝ Իշխանք, և Գլխաւորք, և որք միանգամ Յայտնիք էին

՚ի կողմանն՝ ՚ի մի՛վայր եկեալ՝ հասանէին հանդերձ ամ՟ Քահանայական ազգաւն՝ ինքնակամ, իբրև՝ յԱ՟ծաւա՛ք ձայնէ՝ հրաւիրեալք. զորս՝ անյապաղաբա՛ր սկսեալ ուսուցանե՛լ. երագապէս Վարդապետեցին զկողմն Արևմտեա՛յ, ո՟պ՝ զԱրևելեա՛յն: Յա՛յնժամ՝ գային՝ հասանէին ՚ի բազում՝ Նախարարացն Կոչնականք զՄեծէն Սահակայ, զի՝ ՚ի մէջ ն՟ց անցեալ՝ ՚ի միաբանութիւն զա՟մն հաւաքիցէ. քանզի՝ դիտացեա՛լ Արքային Պարսից՝ վռամայ, եթէ՝ ոչ առանց Նախարարացն Հայոց՝ մարթի ունե՛լ զաշխարհս, հաշտութ՟ի խօսեցեալ՝ ը՟ ձեռն Սմբատայ Ասպետի: վ՟ որոյ՝ թողեալ ՚ի վ՟ր Վարդապետութ՟ե կողմանն Արևմտից, և առ նմա զիւր Թոռունսն՝ զՀմայեակ՝ և ըզՀամազասպեան՝ զԵղբարս Վարդանայ Ստրատելատի՝ հրամայէ, քննել զՔանդագործ Բորբորիտոնսն. և եթէ՝ ոչ հեզութ՟բ, և ոչ սաստիւ դարձցեն յուղղութ՟ի, չարչարանօք հալածել. զի, ո՟պ՝ թշնամիք ՚ի թշնամեաց վրէ՛ժ առնուցուն, և խայտառակեսցին իրաւացի մահու ամբ անիրաւ մահ Հոգւոյ. Եւ ինքն եկեալ՝ անցանէ յԱրարատեան գաւառն՝ կուտեալ զամենայն Նախարարազունսն, առաջի զՍմբատ Ասպետն, և զՎարդան Ստրատելատ՝ զթոռն իւր՝ ՚ի Դուռն Արքային Պարսից. և նոր հաստատեալ զհաշտութիւն, և Սուրհակ մոռացման յանցանաց կնքէ՝ ըստ խնդրոյ նորա թագաւոր կացուցանելով զԱրտաշէս՝ Որդի Վռամ Շապհոյ. և փոխեալ զանունն, Արտաշիր կոչելով, զաշխարհս Հայոց ՚ի նմա հաւատաց առանց Պարսիկ վերակացուին, որ տիրեաց ամս՝ վեց.

Գլուխ ԾԹ 59

Շինուած Կարնոյ քաղաքի՝ որ կոչի Թէոդուպօլիս:

Անատոլեայ Զօրավարի ընկալեալ զհրամանն արքունի, և եկեալ յաշխարհս մեր՝ և շրջեալ ընդ բազում կողմանս մեր, հաճի ՚ի Գաւառին Կարնոյ՝ շինել զքաղաքն. արգաւանդահող, շատաջուր, և բերրի, իբր՝ միջոց վարկուցեալ զվայրան ոչ կարի ՚ի բացեայ՝ ՚

'ի տեղեայն, ուր Եփրատայ մասինն ինչ բղխեն աղբիւրք, և հանդարտ գնացիւք յառաջանան ծովացեալ Սօրաբար երևութիւք, յորումանն բաւութի ձկանց, և գազանս հաւուց ջրակաւորաց. յորոց 'ի ձուայն միայն կերակրեալ լինէին բնակիչքն. և զեզերբք Սօրին` շամբք, և բազմութիւն եղեգանց. և դաշտքըն ունին զթանձրութի խոտոյ, և զքաջաբերութի սերմանաւոր պըտղոց. և լերինքն լի են երեօք կճղակաբաշխիւք, և որոճայնովք, նա և զանազանոց պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջամարմինս, և յիւրս ցուցանեն համակեալս 'ի գիրութի. և առ ստորոտով մի` գեղեցկանիստ, և մանունս բղխեալ. ընդ տեղեադրեաց զքաղաքն. զորով շրջափակեալ խորափոսիւ, անդնդալըր հաստատեաց զհիմունս պատուարին. և 'ի վր̃ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց. յորոց զառաջին, Թէոդոս` անուանեաց, 'ի պատիւ Թէոդոսի. և 'ի նմանէ, և անդր շինեաց աշտարակս ժայռաւորս, իբրև` զնաւացուցս, և առանցս գօգաւոր խորշիւք, որք ընդդէմ լերինն հայելն. սա՛ ալէս, և՝ ընդդէմ դաշտին հիւսիսոյ՝ ընդ դէմ Արևելից, և՝ ընդդէմ Արևմտից կանգնեաց աշտարակս բոլորաձևս. և՚ի մէջ քաղաքին, ՚ի բա՛րձրաւանդա՛կ վայրի մի՝ մըթերանոցս բազմապատի՛կս շինեաց, և Օգոստիոն անուանեաց, ՚ի պատիւ Օգոստի. և, ա՛յլ ջուրս, Է յոլով տեղիս ածեալ՝ մտոյց ա՛նյա՛յտ գնացիւք. և ելից զինու, և պահապան գնդաւ զքաղաքն, և անուանեաց՝ Թէոդոսուպօլիս. զի՝ յիշատակաւ քաղաքին՝ անմա՛հ լիցի անուննն. և ՚ի վե՛ր ջե՛րմ բղխեա՛լ աղբեւրացն՝ յա՛րկս վիմատաշ քարանց շինեալ:

Գրակ Կ 60

Սրչէն Առեփարանէջ ենել Մեսրոպայ, և երբ Թարգմանչացն ՚ի Բիւզանդիոն:

Մեսրովբայ կացեալ ՚ի յանապա՛տ, և ՚ի հովանաւոր տեղիսն՝ որ Ծաղգումքն անուանին, բովանդակեաց զվարդապետութիւ առաջին առելոց խմբա՛յն: քանզի՝ ո՛չ, ոպ՟՝ Արուեստ ուսուցանէր, այլ՝ իբրև՝ զհոգի Առաքելաբա՛ր Աշակերտա՛ցն տայր: յե՛տ որոյ՝ Թողեա՛լ

վե

վերակացուս յիւրոց Աշակերտաց 'ի նմին տեղւոջ զՂևոնդ. և զԵնոք 'ի Սպեր. իսկ 'ի Դերջան զնոցին Եպիսկոպոսն զԳինդ. և յԵկեղեց՝ զԴադամն: Ինքն եկեալ յԱյրարատ, անցանէ յառաջնոյ բնակութեան Գաւառն Գողթն: քանզի մնացեալ Աղանդ դառնութ՟ե Հեթանոսական Աղանդոյ, 'ի ժամանակի անիշխանութեանն, 'ի վերերևեալ՝ 'ի բազում տարածեցաւ. զորս՝ բնաքարձ արարեալ Երանելւոյն՝ հանդերձ օգնականութ՟ե Հօրաքաղաքոյն Գիտայ՝ որդւոյ Շաբիթայ Իշխանի Գաւառին. տեղեկանայր ևս, եթէ՝ չարեաց Վարդապետացն Նախագոյնք 'ի Բաղասականն են կողման, ուր երթեալ՝ զբազումս յուղղութ՟ի ածէ, և զստակաւսն՝ անդարձս՝ յիշխանութ՟ի Հնոց՝ հալածական առնէ. Հաւատալով զՎարդապետութիւն կողմանցն նոցին Եպիսկ՟պսին որում Մուշէ՝ կոչէին: Ինքն դառնայ ըզ Գարդմանայ ձորոյն. զի՝ և 'ի նմա լուեալ լինիլ յԸնկերացն նորին Աղանդոյն. զորս գտեալ՝ ածէ զն՟ս 'ի գիտութ՟ի Ճշմարտութեան՝ հանդերձ

վեր

վերստին ուղղութեամբ Իշխանին Գարդմանաց՝ որում անուն էր Խո՛րս Հրաւէր, հրաւէրն անտի 'ի Բդեշխէն Գուգարացւոց Աշուշայէ յաղագս՝ նորին գործոյ՝ գալ յիւր իշխանութ̃ի՝ 'ի Գաւառն Տաշրաց․ ուր երթեալ՝ լաւագոյնս Վարդապետեաց՝ և հաստատագոյնս, քան՝ զիմ Աշակերտելոյն։ աւ որով ժամանակաւ՝ Արձիլ ոմ̃ն՝ էր կացեալ Թգ̃ւր վրաց 'ի մասնկին յայնմիկ։ Ապա՝ եկեալ՝ և առեալ Մեսրովբայ՝ և Մեծին Սահակայ՝ զնոյն Աշակերտ զՅովսէփ, և միւս Ընկեր նորին՝ 'ի Կողբ Գեղջէ՝ որում անուն՝ Եզնիկ կոչիւր․ առաքեն 'ի Միջագետս՝ 'ի քաղաքն Եդեսեա, զի՝ որ միանգամ գտցէ անդ գիրք՝ աստացեալ Սուրբ Հարցն Առաջնոց, Թարգմանեալ 'ի Մեր Լեզու բերցեն փութով, զի՝ յետ այնր՝ 'ի Բիւզանդիոն առաքեսցին՝ 'ի նոյն գործ։ որոց ընկալեալ զհրապուրական թուղթս՝ սուտակասպասաց ոմանց, իբր թէ՝ պատրաստին Մեծն Սահակ, և Մեսրոբ զայլք առաքել 'ի Բիւզանդիոն․ վ̃ս որոյ՝ առանց հրամանի Վարդապետացն

իւ

իւրեանց, նո՛յն ընդ նոյն չուեալ՝ գնացին 'ի Բիւզանդիոն. Նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց. և քա՛ջ վարժեալ Հելլէն Դպրութե՟՝ ձեռն արկեցին 'ի Թարգմանել, և 'ի գրել: և ընդ նա՟ նախանձեալ իւրեանց Աշակերտակցաց, որոց անուանքն՝ Ղեւոնդ՝ և Կորիւն կարդային՝ յիւրեանց կամաց ելին 'ի Բիւզանդիոն: ապա՝ ելանեն անդր Յոհան, և Արձան, զորս կանխագոյն առաքեալ էր Մեծին Սահակայ, և Մեսրովբայ. որոց յուլաբա՛ր յուղևորել՝ և ծուլապէս դեգերեալք, պատաղեցան 'ի Կեսարիա: որոց ընդունելութի՟ մեծապէս ամենեցուն արար Մաքսիմիանոս Եպիսկոպոս Բիւզանդացւոց:

Դրակ կա՟ 61

Յաղագս Ժողովոյն Եփեսոսի, որ՝ վասն Ամբարշտին Նեստորի՝ եղև:

Ընդ այն ժամանակս՝ եկաց յԱթոռ Եպիսկոպոսութե՟ն Բիւզանդացւոց անարժանաբար Ամբարիշտն Նեստոր. և Հրեական իմացմանց հետևեալ, հայհոյեաց զԱմենասուրբ Կոյսն՝ Մարդածին

լի

լինել՝ և ո՛չ Ա՟ծածին: քանզի՝ Ծընեա՛լն 'ի Նմանէ՝ առեալ սկիզբն, Այլ Որդի՝ ասէր՝ Շնորհօք 'ի Մարիամայ, և Այլ Որդի՝ 'ի Հօրէ՝ յառա՛ջ. ու՟ղ, զի՝ լինել Երկուս Որդիս, որով Երրորդութիւնն՝ Չորրորդութիւն լինի: Սա որոյ՝ ժողովեալ Սրբոց Հա՛րցն յԱսիա՛, 'ի Ծովահայեա՛ցն Եփեսոս՝ Գրաւորական Մերժանութբ՟: Չելէստինոս Հռովմայ. Կիւրղո՛ս՝ Աղեքսանդրու. Յոբնաղիոս՝ Ե՟ղմի. Յովհաննէս՝ Անտիոքայ. Մեմնո՛ն՝ Եփեսոսի. Պօղոս՝ Հեմեսու. Թէոդոտոս՝ Անկիւրեայ. և ա՛յլ բազում. համանգամայն երկերիւր Հարք. Նզովելով զՆեստոր, խոստովանեցին Մի՛ Որդի՝ զՏ՟ր մեր Յ՟ս Ք՟ս. և Ա՟ծածին՝ զԱմենասուրբ Կո՛յսն Մարիամ: և զի՝ ո՛չ համդիպեցան յա՛յնմ ժողովոյն՝ մեծն Իսահակ, և Մեսրոպ. գրեն առ նա Կիւրեղ Աղեքսանդրացի՝ և Պրոկղոս Կոստանդինուպօլսի, և Ակա՛կ Մելտինեա՛յ Եպիսկոպոսք, զգուշացուցանելով զնա: քանզի, լուա՛ն եթէ՝ ոմանք 'ի Չարափառա՛ցն Աշակերտաց առե՛լ զԳի՛րսն Թէոդորոսի Մամոստա ցւոյ՝ զՎարդապետին Նեստորի, և զաշակերտին Դիոդորի գնացին յաշխարհն Հայոց։ Ապա՝ եկեալ Թարգմանիչքն մեր, զորոց զանուանս յիշատակեցաք յառաջագոյն, գտին զմեծն Սահակ, և զՄեսրովբ յԱշտիշատ Տարօնոյ. և մատուցեալ զԹուղթսն, և զԿանոնս Ժողովոյն Եփեսոսի, Վեց սահմանեալ Կանոնաւ, և զՕրինակս Սուրբ Գրոց։ զոր առեալ մեծին Սահակայ, և Մեսրովբայ, դարձեալ թարգմանեցին զմիւսանգամ թարգմանեալսն. փութանակի հանդերձ նոքօք՝ վերստին յօրինել Նորոգմամբ։ Բայց, քանզի Անգէտք էին մերում Արուեստի, ՚ի բազում մասանց թերացեալ գործըն գտանիւր. վասն որոյ՝ առեալ մեծին Սահակայ, և Մեսրովբայ ըզմեզ առաքեցին յԱղեքսանդրիա ՚ի Լեզու պանծալի. ՚ի սոյն ՚ի յօդանաւ Ղեմորանին Մերծանութ

հարո

ւեց

՚ի Մարդարեան՝ չինեն, և ՚ի ձեռնադրութ
ՐԷ տանմանն։ օրինակս Նորինոյին Օ

Գ. Նորահետեւողք Իմաստասիրացն՝ ՚ի Մերհայեցողք չափա փաբերապէս Մակագրութեանց, զաստեղս 'ի լուսոյ ասեմ՝ ընծայիլ, և զլուսին՝ արեգակամբ ուռճացեալ. և զբոլոր արեգականն՝ յՈրփայինն Եորկնէ· հիկեն, Որփոյն, հեղեալ զծագումն յերկաքանչիւր գօտիսն· և զանցսն իւր գօտիքն՝ 'ի ձեռն արեգական ընծայեն, ըստ դասու, ըստ ջերման, ըստ ամանակի։ Օրինակ իմն՝ այսպէս, և մեք՝ յաւէտախաղաց շնորհիւ՝ յոլովացեալ յիմանալի ճառագայթից Հոգևոր Հարցն, ըստ Հարաւային մասանց պարայածելք՝ յԵդեսացւոյն հասանէաք քաղաք, թեթևակի ը̃ խորս Դիւանինն նաւեալ անցաք 'ի Սբ̃ տեղիսն երկրպագել, և մնաւ վայրկեան 'ի Պաղեստինացւոց Հրահանգս· և այնպիսեաւ սաղապաձեմարարաք, մտաք ը Եգիպտոս, յաշխարհն համբաւաժենչ· յանչափից հրաժարեալ ցըրըս, և տօթոյ, 'ի հեղեղացն՝ և յերաշտան՝ 'ի գեղեցկում մասին երկրի նուսրն ունելով· ամենազան պտղովք առլցեալ, և անձեռագործ պարսպին Նեղոսիւ· որ՝ ոչ պահպանութիւն միայն, այլ և՝ կերակուրն նմա բաւական՝ մատուցանել ընաւո րեաց. և յինքենէ ուղղմամբ Տե՛ր գոլ պատահեալ՝ և չորութե՟՝ և խոնաւոյ առ երկրին գործաւորութ՟ն. և զանեղս 'ի նմա՛ դիւրածել գետոյն բլուրիւք հանդիստ Կղզւոյն՝ առատագիւտ առնէ շուրջպարունակելով. և ընդ ամ՟ հոսելով՝ ոռոգմամբ երկոտասանից վտակա՛ցն. բարեյարմա՛ր 'ի մեծն Աղեքսանդրեա՛յ շինեալ քաղաք, բարէժամանա՛կ 'ի մէ՛ջ ծովուն, և ձեռագո՛րծ լի՛ճ կառուցեալ. յորոց օդո՛յն քաղցրախառնութիւն փչեցեալ՝ որ 'ի լճէն բերանք արձակին 'ի ծո՛վն. և որք 'ի ծովէ՛քն մօտեցելո՛յն, որք ելանեն ստէ՛պ ստէպ սղո՛խք օդոյ, անօսրո՛ւնք ա՛յն որ 'ի ծովէն՝ և թանձունք ա՛յն՝ որ 'ի լճէն, որոց խառնուա՛ծն առողջագոյն զհաստատութի՟ կենաց գործէ։ Սր՟ առաջին՝ ա՛յժմ, ո՛չ անցեա՛լ նստի Պղոտենէոս հնգակատա՛մբր գագաթա՛մբքն՝ զանսպա՛ռ ջ՟ պատելով, այլ՝ Մարկոս Աւետարանական Քարոզութե՟ն. և ո՛չ Ա իշապին Գ՝ճեց Գերեզմանք, այլ՝ Սրբո՛յն Ա այելչական Ա կայարանք. և ո՛չ՝ 'ի քսան և'ի հինկն՝ Տուբի՝ տօնի աղձատանք զբեռնաբա՛րձս պսակելով գրա՛ստս, եւ պաշտօն տայ առնել լրտուեանց, եւ աթերայց առնել բաշխումն, այլ՝ ՚ի մեծատանն նորին Տուբի՝ յայտնութեանն Տն կատարի տօն։ զՅաղթօղ՝ Նահատակս գովել, եւ Օտարաց առնել ընդունելութիւն, եւ յԱղքատս տուրս. եւ ոչ՝ զոհել չար դիւին Սարապեայ, այլ՝ զՔի Արիւնն մատուցանել Պատարագ. եւ ոչ՝ խնդրել հրամանն պատասխանւոյ ՚ի Սանդարամետէն Ապրոդիտեայ, այլ՝ ուսանիլ զզօրութիւն Իմաստից ՚ի Նորն Պղատոնէ, ՚ի յիմն ասեմ՝ Վարդապետէ. որում՝ ոչ անարժան գտայ՝ Աշակերտ, եւ ոչ՝ անկատար վարժմամբ ՚ի յանկ ելեալ արուեստից ինքն։ անցաք յԱղլադամ նաւելով՝ յԻտալիա բռնութեամբ հողմոյ անկաք. եւ ողջունեալք ՚ի Հանդխտ Սրբոցն Պետրոսի, եւ Պօղոսի. ոչ բազում ինչ՝ ՚ի Հռովմայեցւոցն կացեալ քաղաքի, անցանելով ընդ Հելլադա յԱտտիկէ, սակաւ ինչ՝ մնացաք յԱթէնս, եւ ՚ի կատարիլ ձմերայնոյն, դէմ եդեալ ՚ի Բիւզանդիոն ելանել, փափաքեալ Մերոյ Հայրենեացն։

Գլուխ կգ՟ 63

Յաղագս՝ չար դժնդակութեանն Հայոց, 'ի խորհուրդ նորոգեան անձանց։

Բայց՝ Թագաւորն Հայոց Արտաշիր՝ անհուն սկսաւ՝ ողողանիլ յանառա՛կ ցանկութի՟ս, մինչև՝ տաղտկանալ 'ի նմանէ ամ՟ Նախարարացն որոց եկեալ առ Մեծն Սահակ՝ զբողոք բարձին, հրաւիրելով և զնա յօգնականութի՟ իւրեանց՝ չարախօսել առ Արքայն Պարսից․ 'ի բա՛ց ընկենուլ զիւրեանց Թագաւորն, և Պարսիկ ածել ունօղ աշխա՛րհին։ այլ՝ Նա ասէ՝ ո՛չ առ սուտս ունիմ զձեզ. ի՛մ իսկ՝ լուեալ զայդպիսի աղէ՛տս ամօթալեաց, և բազում անգամ յանդիմանեալ՝ ուրացա՛ւ. և արդ՝ պա՛րտ է փոքր մի տանել թերութեան առնն, մինչև՝ զե՛լս իրացն խորհիլ մարթասցուք Կայսե՛րբն Յունաց Թէոդոսիւ. և ո՛չ անօրինաց մատնիլ՝ 'ի ծա՛ղր և յայպանու՛մն. և նոքա ո՛չ կամէին, այլ՝ ջանային համախորհուրդ իւրեանց՝ զնա առնել. այլ՝ Նա ասէ, ինձ քաւ լիցի մատնե՛լ Գայլոց զիմ Մոլորեալ Ոչխար, և ո՛չ պատել զբե

կեալ

կեա՛լ, կամ՝ զհիւանդացեալ. զի, եթէ՝ էր հաւատացեալ Թագաւորի առաջի, փութայր, և ո՛չ յապաղէր՝ յուսալով զկանգնումն գլորելոյն. այլ՝ հեթանոսաց յառաւել կործանումն ո՛չ առնում յանձն. Ո՜վ ա՛յնմ, թէ՝ մի՛ մատներ Պարսկաց զանձն Խոստովանող քեզ. քանզի՝ դրոշմեա՛լ է աւազանաւ՝ թէպէտ և անառակ է. պոռնի՛կ է, այլ՝ Քրիստոնեայ է. գիջացեալ է մարմնով, այլ՝ ո՛չ անհաւատ ոգւով. զե՛ղխ է վարուք, այլ՝ ո՛չ Կրակապա՛շտ. տկա՛ր է ՚ի կանայս, այլ՝ ո՛չ ծառա՛յ է տարերցս։ և զի ա՞րդ՝ լինիցի այդ փոխանակել զիմ ախտացեա՛լ ոչխարն՝ ընդ առողջ գազանին, որոյ առողջութ͞ին՝ և մեզ պատուհաս։ Իսկ՝ Նախարարայն զմտաւ ածեալ, իբր թէ՝ խաբկանօք իցէ գործն՝ յապաղել զնոսա, զի՝ զԹագաւորն պատրաստեցուսցէ ինքեան. վասն զի՝ ո՛չ համակամեցա՛ր չԹագաւորե՛լ նմա, արդ՝ և մեք կամեցուք չՔահանայանա՛լ մեզ։ և միաբանեալ ամենեքին՝ անցին առ Արքայն Պարսից՝ հանդերձ Սուրմակաւ ոմա՛մբ Արծակեցի, փառամոլ Իրիցաւ, չարախօսել զԱրքայէն իւրեանց՝ զԱրտաշրէ, և ըզ Մեծէն Իսահակայ՝ զՅունօք գըլեալ խորհրդոյն։

Պրակ կդ՟ 64

Յաղագս՝ բառնալոյ Թագաւորութեանն Հայոց՝ իւրեանց կամաւ, և անարգելոյ Աթոռոյ Եպիսկոպոսապետութեանն։

ՅԱյնժամ՝ Արքային Պարսից՝ Վռամայ, կոչեալ ՚ի Դուռն զԹագաւորն Հայոց՝ զԱրտաշիր և զՄեծն Իսահակ. և խնդրէին ՚ի նմանէ զամբաստանել զԱրտաշրէ. և նա հրաժարէր բնաւ ասել ինչ չա՛ր, կամ՝ բարի. այլ՝ հրամայեաց Հազարապետին Արեաց որ էր՝ Սուրէնն Պահլաւ, զի հաւանեցուսցէ զնա խրատու սիրելու՟ն, ոպ՟ զԱզգային։ և Նորա անկեալ ՚ի բանս հրապուրանաց՝ ասելով. զի՝ արիւն իմ ես՝ և հարազատութիւն, զբարին քո խորհելով՝ ասեմ, եթէ՝ միա՛յն ա՛յժմ, միաբանեսցիս ը՟ Նախարարդ, և մեծարեալ լիցիս յԱրքայէն Արքայից. և զԹոռն քո՝ զՎարդան կարգեսցէ ՚ի վր՟ Հայոց՝ Ուգահաւասար Թգ՟ւրին, և Համապատիւ։ Այլ՝ նա ո՛չ առնոյր յանձն. ասելով, զի ա՞րդ՝ վ՟ն մնափառութ՟ե, և իշխանասիրութեան չարաբանիցեմ զընկերէ. կամ՝ ընդէր ձեր այդպիսի՛ յօժարութի՟ն՝ ընկենո՛ւլ զԱրտաշիր. զի՛ ես զնորա ամբաստանութեան ինչ խորհուրդ ո՛չ գիտեմ։ այլ եթէ՝ վ՟ն անառա՛կ վարուց՝ զոր նոքա ամբաստանեն, պատուո՛յ արժանի՛ է ’ի ձէնջ՝ ըստ ձերում անմաքրասէ՛ր օրինացդ, թէ պէտ՝ ըստ մերո՛ւմն՝ դատապարտի. բայց սակայն՝ յինէն ո՛չ ինչ էք լսելոց ամենևին։ Ապա՝ զայրացեալ Վռամայ, ’ի Մեծի Հրապարակին արարեալ Քննութիւն. և ո՛չ դնելով ունկն Արտաշրի, յօժարութ՟բ լսէր Նախարարացն. առաւե՛լ ևս՝ յոյժ աղտեղութեան բանիցն Սորմակայ. քանզի՝ զԱթոռ Եպիսկոպոսութեանն էր խոստացեա՛լ նմա Նախարարո՛ցն՝ Թշնամանականա՛ցն, և Ստախասիրա՛ցն։ Վ՟ն որոյ՝ ինքնասիրութ՟բ պատրաստեաց զԼեզուն իւր՝ Սուսեր սատակիչ. մինչև, հրամայեաց Վռա՛մ՝ առնուլ զթագաւորութիւնն՝ յԱրտաշրէ, և անդէն արգելուլ զնա, և զտ՟ն ինչս՝ նորա ազգին՝ ունել յարքունիս։ Նոյնպ՟

և զՄեծն Սահակ, և զտունն Կաթուղիկոսական՝ ունիլ յարքունիս, և տալ փոխանակ նորա՝ յԱթոռ Եպիսկոպոսութեանն՝ զՍորմակն զայն։ և մեծապարգև զՆախարարսն արձակեաց՝ Պարսիկ Սարզպանաւ՝ որում անուն էր՝ ՎեհմիհրՇապուհ։ Բայց՝ Սորմակայ՝ ոչ աւելի տևեաց՝ քան՝ զմի ամ, 'ի նոցին Նախարարացն հալածեցաւ յԱթոռոյն. որ ապա՝ զիւրոյ Գաւառին զԵպիսկոպոսութիւն Բզնունեաց 'ի Պարսից Արքայէն եգիտ ունիլ ազգաւ։ Իսկ՝ Նախարարքն մեր խնդրէին 'ի Վռամայ Այլ Աթոռակալ։ Ետ նոցա զԲրքիշոյ ոմն՝ Ասորի։ Սա եկեալ՝ վատթար ընկերակցօք, ածեալ ընդ ինքեան կանայս տնակալուչս անժուժաբար, և աւելորդօք, և յափշտակութե̄ վախճանեցելոցն վիճակաց, վարեաց ամս՝ երիս. որում ոչ կարացեալ տանել Նախարարացն, դարձեալ աղաչէին զՎռամ՝ փոխել զնա, և տալ զայլ ոք՝ ըստ կամաց նոցա, և Կիսոցն 'ի նոցանէ՝ զՄեծն Սահակ։

Գլուխ կե 65

Արձակումն ՚ի Պարսից Մեծին Իսահակայ, հանդերձ Շամուէլաւ Աթոռակալաւ։

Որպէս ասացաք՝ երկուս բաժանեալ՝ Նախարարքն Հայոց. յերկաքանչիւրոցն առաքեցին՝ խնդրել Աթոռակալ յԱրքայէն Պարսից։ Վաչէ՝ Արծրունեաց Տէր, և Հմայեակ՝ Աշոցաց Տէր, զոր ոք՝ և կամիցի Արքայ։ Իսկ՝ Մաձէն՝ Ապահունեաց Տէր, և Սպանդարատ՝ Արշակունեաց Տէր, զՄեծն Սահակ. նմ և Զօրավարին Յունաց Անատոլեայ ՚ի Կարնոյ զՀաւածուկ Կուսոյ Առձոյ, զի եթէ՝ ո՛չ իցէ նմ հաճոյ՝ ունիլ յիւրում բաժնին, տացէ զնա մասինն Յունաց։ Յղեցին և բազմութիք Եպիսկոպոսացն՝ հանդերձ Երանելեաւն Մեսրովբաւ, և բովանդակ Ուխտիւ Եկեղեցւոյն մաղթանս, զՔահանայն Տիրուկ՝ զորդին Մովսէսկան ՚ի Զարիշատէ Վանանդայ։ Մն որոյ հաւանեալ վռամայ՝ զերկաքանչիւրոցն կատարեաց խնդիրս. տուեալ յԱթոռ Եպիսկոպոսութե զայլ ոմն Ասորի Շամուէլ անուն, զի լիցի ընդդի-

մա

մափառ Մեծին Իսահակայ, և Հակառակաթոռ. և գործ նմա՛ զատուցանէ՝ զընկերե՛լ Մարզպանին, կալ 'ի վե՛ր բաշխի՛ց հարկաց խնդրեցելոց, և դատաստանաց՝ և ա՛յլ աշխարհական կարգաց. և զՄեծն Սահակ արձակեալ՝ թողու 'ի նա գեօղս սակա՛ւս 'ի Նորին Տանէ, զի՝ նստցի միա՛յն յինքեան, իշխանութիւն ունիլ՝ միա՛յն Վարդապետութե՟ Սովորական Կրօնից, և ձեռնադրութե՟ զայնոցիկ՝ զորոց և շամուէ՛լն յանձն առնուցու: Բայց՝ յարձակե՛լն զնա՝ յանդիմանն իւր արարեալ 'ի Բազմակոյտ Ատենին, ասէ. երդմնեցուցանեմ զքեզ 'ի քոյին հաւատ, միամիտ կալ 'ի ծառայութե՟ մերում, և ո՛չ խորհիլ ապստամբութե՟ պատրիլ 'ի մոլա՛ր Հաւատակցութիւնն Յունաց, և լինել պատճառ կորստեան 'ի մէնջ Հայոց աշխարհիս, փոխել զբարերարութի՟ն մեր 'ի չարութիւն: Յա՛յնժամ կանգնեա՛լ կացեալ Մեծին Սահակայ՝ պարկեշտ՝ և նազելի զինքն ցուցեալ 'ի Բեմասացութեան ձեւի՝ համեստ հայեցուածովք, համեստագոյն ևս ձայնիւ՝ սկսաւ ճառել զերախտիս ծառայութ՟են, և պապերախտիս 'ի նոցանէ լինել. ընդ նմին՝ և զկեղծաւո՛ր քաղցրաբանութ՟ի նո՟ց յանդիմանելով, և զդառնութ՟ի խորհրդոց՝ և զգո՛րծս չարաչա՛րս. յարելով 'ի նոսին՝ զընդդիմաբանե՛լ անմիտ հայհոյութեանց արտաճառեցելո՛ց, զոր ասաց Մոլա՛ր Հաւատացութ՟ի. և զնոցա՛յն խայտառակելով զպաշտամունս՝ կատարել 'ի Հրաշալի Ած՟աբանութ՟ի՝ ըստ հանդուրժելոյ հեթանոսական լսելեաց. և ո՛չ բովանդակ զբանին պայծառութիւն՝ անհաւատի՛ցն արկանել առաջի՝ յայպանո՛ւմն, ո՟ր՝ զմարգարիտ 'ի խոզից կոխումն. այլ՝ ա՛յն չափ կայծակնաճաճանչ ցուցեալ, որով գաղաղացան Մոգո՛ւցն լեզուք: և հիացեա՛լ՝ պակեաւ ինքն Թագաւորն, և ա՟մ բազմութ՟ի հրապարակին անձնագեղո՛ցն Պարսից յակճի՛ռս կալով ց'ականջէ՛լ. մինչև՝ հրամայեաց Վռա՛մ՝ արծաթ բազում տա՛լ նմա,՝ իբրև՝ Քաջաբան, և Ուժգնասի՛րտ Առնն՝ Համարձակախօսողի առաջի Այնքանոց Թագաւորի: այլ՝ նո՟ր ո՛չ առեալ՝ ասէ, ց'Համազգին իւր՝ Սուրէն Պալհաւ, արծա՛թ նորա՝ նմա լիցի.

բայց՝ դու հաւանեցուցանես զնա՝ տալ ինձ զերկուս զայս միայն։ զՆախադահ՝ Նախարարացն Հայոց, որպէս՝ կարգեալ յԱրտաշրէ՝ վարեցան մինչև՝ ց'այժմ, նորին օրինակաւ. հրամայեսցէ և առ յապայ, զի՝ Մարզպանք Պարսիկք մի կրասցեն ծանուցումն՝ սակս այնր առնելով ինչ գերազանցօրէն՝ փոփոխել՝ ըստ կամաց իւրեանց։ և միւս, զի՝ դարձուսցէ զՏուն Ազգականի Իմ, և Վրո՝ զՍանկանն Պաշաւոնի՝ զոր դւայն Հրահատայ. Թէ և ոչ՝ յիւրումէ, ետեղ զԱրշակունին յաշաղելով անուն, գէթ 'ի կարգն կեցեալ՝ Ը այլ՝ Նախարարաց Թուեսցի, յորում ետեղինքն կամեսցի, ո՛չ՝ Համազինքն Կամսարական, կամ՝ զԱմատունին, Թափեալ 'ի Հարցն պատուոյ, և յառաջամասինն Պահոյէ 'ի ստորնակայինն։ և կամ՝ գըրէ Թէ, իբրև՝ զարքունի գործակալութի նմա հաւատացէ, և նորուն զաւակայ համանմանակի ընտանութը. մինչև՝ Ած քաղցրասցի դարձուցանել 'ի կարգ հայրենի ընդ ձեռն՝ որ և է Թագաւորի։ արդ՝ ջանաջիր դու՝ Թուլելով զօրէն Համո

ղա

զակե՛ր Թովչի։ Ա՛յնմ լսօղ եղեալ Վռամայ, հրամայէ՝ զամենայնն կատարել։ և դարձեալ՝ հաստատելով զԹոռն նո՟ր՝ զՎարդան Ստրատելատն՝ 'ի Տէրութի՟ իւրոյ ազգին Մամիկոնէից՝ արձակէ 'ի Հայս։ Բայց թէ՝ ասիցէ ոք՝ պա՛րտէ մեզ՝ զասացեա՛լն Մեծին Սահակայ 'ի Պարսից Հրապարակախօսութե՟ն գրել. գիտասցէ, զի՝ ո՛չինչ 'ի լսելիս մեր հասեա՛լ է բովանդակն ճշմարտութե՟ յումեքէ, և ո՛չ մեք 'ի Պատմութեանս հիւսել հաւանիմք. զի, և ես ա՛յր եմ ծերացեալ, և հիւանդոտ, և անպարա՛պ 'ի Թարգմանութե՟ց, և զերադէ՛լն միա՛յն խոկացի, ո՛չինչ մաքրադունից պարապեալ բանից. զի՝ և քո՛ կամքդ կատարեսցին, և ես ձողոպրեցայց 'ի քոց հարկեցուցանօ՛ղ բանից՝ և աղաչանաց. մա՛րդ զքեզ վարկանելով՝ կամեկցութեամբ մե՛զ հաւասարել. և որպէս՝ Բերթօղքն ասեն, Մերձազաւա՛կք, և Մօտաւե՛րք գոլ. և Նոյնասերմանք Աստուածոց Իշխանք։

Գործք

Գլուխ կզ 66

Գործք Շամուէլի՝ անարժան Համ Իշխանին ։

Եկեալ Շամուէլին՝ կալաւ զԱթոռ Եպիսկոպոսութեանն՝ հետևեալ վարուցն Բրքիշոյի, և առաւել ևս՝ ագահութեանն մասամբ. զի՝ նա՛ զվախճանեալ Եպիսկոպոսացն միա՛յն յափշտակեաց զվիճակ, այլ՝ սա՛ և զկենդանեացն. քա՛ն զի՝ և փոխանորդ մեռելոցն՝ ո՛չ տայր թոյլ՝ ձեռնադրել Մեծին Սահակայ։ և զկենդանեացն դո՛յզն ինչ գտեալ պատճառս խափանման Հարկացն Արքունի՝ հալածական առնէր՝ յինքն կորզելով զամենեցո՛ւն տունս։ վ՟ որոյ՝ ատեցեալ 'ի Նմա Եպիսկոպոսա՛ցն՝ արհամարհեա՛լ լինէր. զի՝ թէ և՝ բիւրապատի՛կ չարիս 'ի նմանէ՛ կրէին, ո՛չ երբեք՝ չարիս 'ի նմանէ կրէին, բա՛յց 'ի Սորմակա՛յն յայնմանէ, զորոյ և մեծացոյց իսկ՝ զվիճա՛կն՝ Արքունի Հրամանաւ, հանեա՛լ զբազմա՛ց՝ նմա՛ հաւատայր. ընդ որ՝ նախանձեալ՝ և այլ Եպիսկոպոսացն ժպրհեցան՝ զնո՛յն առնել՝ խնդրելով 'ի Պարսից Ար-

քայ

քայէն՝ օգնութե̃ Իւրաքանչիւր Իշխանաց։ Այլ մեծն Սահակ ոչ ինչ կասեաց՝ զհոգևոր կաթնն դիեցուցանել Մանկանց Եկեղեցւոյ՝ հանդերձ Մեսրովբաւ, զոր թողեալ՝ խորտխեաց յԵկեղեցւոջն Կաթուղիկէ, որ 'ի Վաղարշապատ Քաղաքի. ինքն կալով 'ի Բագրևանդ Գաւառն 'ի տեղւոջն, ուր Ծագեաց Լոյս յԵրկնից՝ 'ի Մկրտել Սրբոյն Գրիգորի զՏրդատ Արքայ, և զբոլոր Հայս։ Բայց Սամուէլ կեցեալ ամս՝ հինգ, մեռանի 'ի մերում աշխարհիս։ Յայնժամ, միասին ժողովեալ ա̃մ Նախարարացն՝ չոգան առ մեծն Սահակ, և զմեղանս յանձնառեալ՝ աղաչէին զնա՝ դարձեալ ունել զաթոռն. խոստանային՝ 'ի Պարսից Արքայէն հաստատել զնա. Մուրհակ ամենեցուն կնքեալ ազգաւ տալ Թոռանց ն̃ր զնոյն իշխանութիւն, այլ նա ոչ առնոյր յանձն։ և 'ի բազում թախանձելոյ նոցա, հարկաւորեալ՝ պատմեաց զտեսիլն, որ յառաջ քան զբազում ժամանակս՝ երևութա̃ցւ նմա 'ի քուն ապագայիցն յայտնութե̃ք. զոր լուեալ Նախարարացն, և գիտացեալ, թէ՝ յԱծային հրամանէ դադարեաց յԱղգէ նր՟ Քահանայապետութիւնն, յարտասուս հարեա՛լ՝ աւաղելով զինքեանս՝ ըստ Աւետարանին բանի, թէ՝ հա՛րկ է՝ գալ գայթակղութեն, բայց՝ վա՛յ այնոցիկ, ընդ որ ձեռն գայցէ գայթակղութին. Թո՛յլ ետուն նմա։

Գլուխ ԿԷ 67

Փոխումն յաշխարհէս Մեծին Սահակայ՝ և Մեսրոբայ Երանելւոյ։

Զքսան, և զմի՛ ամ թագաւորեալ Պարսից՝ Վռամ Երկրորդ, մեռանի՝ թողլով զՏէրութիւնն՝ որդւոյ իւրում Յազկերտի. որոյ մոռացեալ զհաշտութիւնն, ե՛ւս՝ և իսկ ընդ թագաւորելն՝ դիմէ 'ի վ՟ր Յունաց զօրուն, որք առ Մծբնին. հրամայելով՝ Գնդին Ատրպատականի 'ի մեր աշխարհս ելանել. որք՝ եկեալ անկարգապէս բանակեցան առ Բագնա՛յցն Աւանի։ Յայնժամ, հասեալ Մեծին Սահակայ հիւանդութիւն մահու, և առեա՛լ զնա՛ Աշակերտացն՝ տարան 'ի Գեօղն, որ կոչի՝ Բլուր, ո՛չ թէ՝ 'ի վա՛յր՝ և յընտանեգո՛յն՝ և 'ի զերծ-

տե

տեղի մատուցեալ՝ 'ի զօրա՛ցն Պարսից՝ կոտորողա՛ց զնոսա, ուր և՝ եհաս վախճան· կեցեալ Եպիսկոպոսութ̃՝ ա՛մս յիսո՛ւն՝ և մի։ սկսեալ՝ յերրո՛րդ ամի Վերջնոյ Խոսրովայ՝ Արքայի Հայոց, մինչև ց'սկի՛զբն Երկրորդին ամի Յազկերտի՝ Պարսից եղելոյ թագաւորի, յե՛լսն ամսոյն Նաւասարդի՝ յաւուր իւրոյ ծըննդեանն, որ մահկանացո՛ւ ծնեալ՝ անմահ զի՛ւրն յիշատակ եթող։ Պատուեա՛ց զՊատկերն· պատկառեաց 'ի Կոչնականէն· փոխանորդեա՛ց զԿեանս, և ո՛րքան կենցաղաւորեաց իբր՝ զի ո՛չ պակասութ̃ի երեք մասն 'ի ծերութ̃էն եղանիլ, և ո՛չ՝ առ 'ի յախտի՛ց առ 'ի յընդունիլ։ զորմէ պա՛րտէր մեզ հրաշափառագունի՛ւ անցանել բանիւ՝ ըստ արժանի՛ Սրբոյ Հօրն՝ Պրուսատից, այլ՝ զի մի յերկարութ̃ի ճառիցս լինիցի ձանձրութիւն Ընթերցողաց· այլո՛ւմ տեղւոյ, և ժամանակի՝ յայնոսիկ թողցուք՝ արտաքոյ ա՛յսց գըրոց, ո՛ւր սկզբանն հրաւիրեցաք առնե՛լ թելադրութ̃ի։ Բայց՝ զպատուեա՛կան մարմին նր̃ բարձեալ Սարկաւագապետին նորին Երեմիայ՝ հանդերձ Աշակերտակցօքն, և Տիկնաւն Մամիկոնէից՝ նորին Եուաւ որում անուն էր՝ Գատիկ, կին Վարդանայ Ստրատելատի, տարեալ Հանգուցին յիւրեանց Գեօղն Աշտիշատ՝ որ է՝ ՚ի Գաւառին Տարօն ։ և ցրուեալ Աշակերտաց նր՝ Կրօնաւորաց՝ Սպուդէից ՚ի Գաւառս իւրաքանչիւր, շինեցին Վանորայս ։

Եւ զկնի՝ վեց անցանելոյ ամսոց՝ կատարման Սրբոյն Իսահակայ. ՚ի տասն, և Երեքն Մեհեկանի՝ Երանելին Մեսրոպ յաշխարհէս փոխեցաւ, ՚ի Վաղարշապատ Քաղաքի. գերազանցեալ քան զամ, որք զայնր ժամանակաւ էին առաքինիք. քանզի՝ ամբարտաւանութի, և մարդահաճութի առ ՚ի նորա վարս տեղի գտանել ամենևին ոչ կարացին. այլ՝ Բարերար՝ և Հեզ՝ և Երկարախորհուրդ գոլով. և Երկնայնոյն զարդարեալ սովորութք՝ զինքն բոլորից ցուցանէր. զի գոյր Տեսլեամբ Հրեշտակակին՝ Մտօք Սննդական Բանիւ Պայծառ, Գործովք Ժուժկալ՝ Մարմնով Արտափայլեալ՝ Սատիւք Անձառ, Խորհրդակցութք Մեծ, Հաւատով Ուղիղ՝ Յուսով

Համ

Համբերողական, Սիրով Անկեղծաւոր, Ուսուցանելով Անձանձրոյթ: այլ, քանզի՝ զբոլոր նր՟ ուղղութ՟իս, ոչ եմ բաւական ասել, 'ի հանգիստ նր՟ Նշխարացն դարձուցից զբանս, որ՝ լուայ 'ի բազմաց, և 'ի Հաւաստի Արանց, եթէ՝ եկաց Լոյս Շողապէս ընդ աղօտ նշան Խաչի 'ի վե՟ Տանն, ուր Երանելին զՀոգին աւանդեաց. ոչ փոյթ՝ է՟ փոյթ լեալ՝ էանց ծագումն, կամ՝ սակաւուց տեսանելի, այլ՝ ամենոյն բազմութե՟ն, մինչ շատից մկրտիլ յանհաւատից: Յայնժամ, լեալ աղմուկ շփոթի ամբոխութե՟ն բաժանելով յերկս գունդս՝ վասն հանգուցանելոյ զՊարկեշտ զայն զՍարմին, և նախ քան՝ զմահն կրթեալ 'ի մեռելութ՟ի: Կէսքն ասէին՝ տանել 'ի Բնագաւառն իւր Տարօն. և ոմանք՝ 'ի Նախ Աշակերտեալն Գողթն: և այլքն՝ անդէն 'ի նմին՝ 'ի Վաղարշապատ Քաղաքի, 'ի Սրբոյն Գ՟իրս: Բայց՝ յաղթեաց Քաջն Վահան Ամատունի. զի՝ էր Օօրաւոր հաւատովք, և Զօրութ՟ մարմնաւորաւ. վս՟ զի՝ 'ի ժամանակին յոյնմիկ՝ նմա էր հաւատացեալ

'ի

՚ի Պարսից Հազարապետութի՟ աշխարհի՛ս Հայոց։ Որով բարձեալ՝ տարաւ զնա՝ արժանի՛ յուղարկմամբ յիւր Գեօղն Ոշական. և նո՛յն Տէսին Լուսեղէն Խաչին ՚ի վ՟ր երթալով Դագաղա՛ցն յանդիման ա՟մ ժողովրդեանն, մինչև՝ ՚ի հանդիստ զնա փոխեցին Վահան, և Թաթիկ՝ նորին Արբանեա՛կք. և ապա՛ նշանն աներևո՛յթ լինէր։ Իսկ՝ զԱթոռ Եպիսկոպոսութ՟են ետեղափոխութ՟բ՝ յաջորդեաց Հրամանաւ Երանելոյն Մեսրովբայ՝ նորին Աշակերտն Յովսէփ Քահանա՛յ՝ ՚ի Վայոց Ձորոյ ՚ի Հողոց Գեղջէ։

Պրակ կը՟ 68

Ողբք՝ վասն բառնալոյ Թագաւորութ՟են Հայոց՝ յԱզգէն Արշակունեաց, և Հայրապետութեանն՝ յԱզգէ Սրբոյն Գրիգորի։

ՈՂբա՛մ զքեզ՝ Հայո՛ց աշխարհ, ողբա՛մ զքեզ՝ Հանուրց Հիւսիսականա՛ց Վերագոյն. զի՝ բարձաւ Թագաւոր, և Քահանայ, Խորհրդական, և Իմաստուն Ուսուցող. Վրդովեցա՛ւ Խաղաղութիւն. Արմատացա՛ւ անկարգութ՟ի. Դրդուեցաւ Ուղղափառութիւն. Կայկայեցաւ տգիտութեամբ Չարափառութիւն: ողորմիմ քեզ՝ Եկեղեցի Հայաստանեայց, խորթնացեալ 'ի բարեզարդութենէ Բեմին. 'ի Քաջէն զըրկեալ 'ի Հովուէ, և 'ի Հովուակցէ: ոչ ևս տեսանեմ զԲանաւորքո Հօտ՝ 'ի վայրի դալարւոջ, և ոչ՝ 'ի ջուրս հանգստեան տածեալ, և ոչ՝ 'ի փարախ հաւաքեալ՝ զգուշանալով 'ի գայլոց. այլ՝ ցրուեալ ց'անապատ, և դահավիժութեանց: Երանի առաջնոյ, և երկրորդի փոփոխմանն. զի՝ էր ինչ ժամանակ հեռանալոյ Փեսային, և Փեսաւորին, և Հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով, որպէս Ածն, նախ քան զմեզ՝ իմաստասիրեաց: Դարձեալ՝ մինչ երբեմն՝ Ածն սեղեխաւար յանդգնեալ՝ յարձակեցաւ յանարժան առագաստդ, և Հարսնդ ոչ աղտեղացաւ. Թէպէտ՝ և բռնութիւն զՓեսայն 'ի բաց վարեաց որդւոց բարձրացելոց անարգելով զԾնողն. համայն՝ և խորթոցն, ըստ արժանեաց՝ զօտար Հայրն, և զեկամուտ յօրայն. սակայն՝ դու և ոչ յայնմ ամենայնի զքեզ բոլորիցն

ցու

ցուցեր, զանդրէն քոյոյն յուսալով գալստեան. դա՛րձ Հովուակցաւն, ոչ ոմ՟՝ Տագերք, այլ՝ որպէս նոյնազաւակ զուգահայրք զմանկունսն փայփայեցեր: Իսկ՝ յերկրորդ հեռանալս, ոչ է ակնկալութիւն դարձի. լուծեալ 'ի մարմնոյ ընկերաւն, գործակցաւն. ընդ Ք՟ի լաւ է նոցա բնակել՝ և յԱբրահամեան հանգչել 'ի գոգս, և զհրեշտակային տեսանել պարաւորութիւնս: Բայց՝ անհոգող դու այրութե, և եղկելիք մեք, որք զրկեալք եմք 'ի Հայրենի Վերակացութենէն: Որ՝ ոչ ոմ՟ 'ի Հնումն ժողովրդեանն, այլ՝ առաւել մերս է Թշուառութիւն. վ՟ս զի՝ Մովսէս բարձեալ լինի՝ և Յեսու ոչ յաջորդէ՝ առաջնորդել յերկիր Աւետեաց. Ռոբովամ մերժեցաւ յիւրմէ ժողովրդենէ, և փոխանորդեաց որդին Նաբատայ, և զա՛յրն Ա՟Յ ծախեաց՝ ոչ առիւծ, այլ կատարածումն ժամանակի. Եղիա՛ համբարձաւ, և Եղիսէոս ոչ մնաց կրկին ոգւով օծանել զՅէու. այլ և՝ Ազայէլ հրաւիրեցաւ 'ի կոտորել զԻ՟էլ. 'ի գերութի՟ վարեցաւ Սեդեկիա՛, և Զօրաբաբէլ ոչ ու րեք գոյ, որ նորոգէ՛ զպետութ՟ին. Անտիոքոս բռնադատէ թողուլ զՕրէնս հայրենիս, և Մատաթիա՛ ոչ ընդդիմակցէ՛. պատերա՛զմ մեզ շուրջ պաշարեալ, և Մակաբէ ոչ փրկէ։ Այժմ, մարտք ՚ի ներքուստ՝ և արհաւի՛րք արտաքուստ. արհաւիրք ՚ի հեթանոսաց, և մարտք ՚ի հերձուածողաց. և Խորհրդականն չէ՛ ՚ի միջի որ խրատէ՛, և յարդարէ ՚ի պատերազմ։ Աւա՛ղ զրկանացս. աւա՛ղ թշուառական Պատմութ՟ես. ո՞րպէս՝ զա՛խտս հնդուրժեցից բերել. զի՞ արդ՝ զմի՛տս իմ, և զլեզուս պնդեցից, և հատուցից զբան հա՛րցն, փոխանակ ծննդեանն, և սննդեանն։ քանզի՝ ծնան զիս իւրեանց Վարդապետութեամբն, և սնուցին զիս՝ առ այլս առաքելով աճեցուցանել. և մինչ՝ նոքա զմե՛րն յուսային դա՛րձ, և պատուասիրել խմով ամէն իմաստարուեստիս, և կատարելագոյն յարմարութ՟բ. համա՛յն և մեք փութապէս դիմեալք ՚ի Բիւզանդիոն, յուսացեալք հարսանեայ պարել անվեհեր երագութ՟բ՝ կրթեալք, և առագաստի ասել երգս։ Արդ՝ փոխանակ խրախճանութ՟ե, ՚ի վ՟ր գերեզմանի ողբս ասել ողորմելի հառաչեմ. ուր՝ և ո՛չ տեսութե̃ ժամանեցի և աչացն կափուցման. և լսել զվերջին բանն, և զօրհնութիւն. Եյապխսեաւ անձկաւ հեղձամղձուկ եղեալ՝ փղձկիմ կարօտութե̃ մերոյ Հօրն. Ո՛ւր է քաղցր աչացն հանդարտութի̃՝ առ ուղիղս, և ահաւորութի̃՝ առ թիւրս. Ո՞ւր է զուարթ շրթանցն ժպտումն՝ առ բարի աշակերտացն հանդիպումն. Ո՛ւր է խնդամիտ սէրն՝ ընդունող աշակերտացն. Ո՞ւր է երկայն ճանապարհացն յոյսն, և հեշտացուցիչ աշխատութեանց հանգուցանող. Կորեաւ Ժողովիչն. Թաքեաւ Ժողովողն՝ Թաքեաւ Լուսահանդիստն. Ելէք Օգնականն. Լուեաց Ձայնն Յորդորեցուցիչ. Ո՛վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն. Ո՞վ ուրախասցի ընդ առաջադիմութե̃ աշակերտիս. Ո՞վ զՀայրականն բարբառեսցի զուարձութիւն՝ մասամբ յաղթահարեալ յորդւոցս. Ո՞վ կարկեսցէ զյանդգնութի̃՝ է̃ դէմ առողջ Վարդապետութեան հակառակ յարուցելոցն. որք ա̃մ բանիւ քակտեալք, և քայքայեալք.

յոլովս փոփոխեն Վարդապետս, եւ բազում Գիրս. որպէս՝ ասաց ոմն ՚ի Հարցն՝ առ ա՟մ բան նմանապէս դժուարին. եւ չար օրինակ անձանց գրեն զարար՝ զծիծաղելն զմեօք՝ եւ զարհամարհելն, իբրեւ՝ զանհաստատնովք, եւ որ ո՛չ ինչ պիտանացու ունիցի արուեստ: Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով՝ եւ զմեզ ափոփեսցէ գովելով՝ եւ չափ դնիցէ բանի, եւ լռութեան: Ոմտաւ զայսոսիկ ածելով՝ հառաչումն յիս ՚ի ներքս ընթանայ, եւ արտօսր. եւ կամեցուցանէ՝ բարբառել Աան Տրիրական, եւ Սգաւոր. եւ ո՛չ գիտեմ, եթէ՝ զի՞ արդ՝ յարմարեցից զողբերգութիւնս. եւ կամ՝ զո՞վ արտասուեցից՝ զհէ՞քն իմ Մանուկ, եւ Թագաւոր՝ զխորհրդակցութ՟ն վատթար ազգաւ՝ ՚ի բաց ընկեցիկ՝ եւ նախ, քան զ՝մահուն մեռելութի՟, անփառութեամբ յԱթոռոյն ՚ի վայր կործանեալ: Եթէ՞ զիս ինքն. զի՝ վերացաւ ՚ի գլխոյս Փարթամացուցիչ Պսակն գեղեցիկ, եւ կենդանացող օգուտ: զՀա՛յրն, եւ Քահանայապետ զմիտս վսեմացնել. որ երթայր՝ տանէր կատարեալ բանն. որով վարէր՝ և յարմարէր. և զերեսանակ ՚ի բուռն առեալ՝ ուղղէր զդէպսն, և կամ, զվէպսն. և սանձահարէր զլեզուս ունայնաձայնեանս։ Եթէ՝ զնս թափուր ՚ի հոգւոյն մնացեալս խանտի, և ցականեալ։ Ծնօղն իմ, զաղբիւր վարդապետական զարդարութե ոռոգօղ, և հեղեղաւ զամբարշտութի արտաքս սահմանելով։ Եթէ զնս երաշտացեալ՝ և թարշամեալ պասքութբ արբուցմանց խրատու։ Զաշխարհիս եկեալ զաղէտս՝ եթէ, զապագայինս ակն կալութի։ Ո՞վ մեզ զայսոսիկ ճառակցէ. հաւասարելով տրտմութեանս. և օգնեսցէ ախտակցելով ասիցս. կամ՝ յարձանս փորագրել։ Զարթիր՝ զարթիր Երեմիա, զարթիր, և ողբա՝ հանդերձ մարգարէանալով՝ որ ինչ թշուառացաք, և որ ինչ թշուառանալոց եմք. գուշակեա զյառնել Հովուաց Տգիտաց. որպէս՝ երբեմն Զաքարիա Մարգարէ յԺԱ։ Վարդապետք՝ Տըխմարք, Ինքնահաճք. անձամբ առեալ պատիւ՝ և ո՛չ յԱյ կոչեցեալ. արծաթով ընտրեալ՝ և ո՛չ Հոգւով. Ոսկեսէրք, Նախանձոտք. Թո ղեալ զհեզութիւն, յորում բնակի Ա՟ծ. և Գայլք եղեալ՝ զինքեանց Հօտս գիշատելով։ Կրօնաւորք՝ Կեղծաւորք, Անձնացոյցք, Սնափառք, Պատուասէրք, քան թէ Աստուածասէրք։ Վիճակաւորք՝ Հպարտք, Դատարկակեացք, Սրաբանք, Ծոյլք, Ատեցողք արուեստից, և Վարդապետական բանից, և Սիրողք վաճառաց, և կատակերգութեանց։ Աշակերտք՝ Հեղգք առ՚ի յուսումն, և փոյթք առ՚ի վարդապետել. որ՝ նախ քան՝ զտեսութի՟, Ա՟ծաբանք։ Ժողովրդականք. Վէսք, Ստահակք, Մեծախօսք, Անվաստակք, Արբեցողք, Վնասակարք, Փախչողք ՚ի Ժառանգութ՟է։ Զօրականք՝ Անարիք, Սնապարծք, Զինատեացք, Պղերգք՝ Հեշտասէրք, Անժուժկալք՝ Կողոպտիչք՝, Գինարբուք՝ Յուզարկուք, Համաբարոյք Աւազակաց։

Իշխանք՝ Ապստամբք՝ Գողակիցք Գողոց, Կծրծիք կրծլիք, Ժլատք՝ և Ագահք, Յափշտակօղք՝ Աշխարհաւերք, ծառայից Համամիտք, Աղտեղասէրք։ Դատաւորք՝ Տմարդիք՝ Սուտք, Խաբօղք, Կաշառա առուք՝ Անընտրօղք իրաւանց, Անհաւատք՝ Հակառակօղք. և բարձումն՝ առ հասարակ յամենեցունց սիրոյ, և ամօթոյ: Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ. եթէ ո՛չ անտես առնել Այ. և տարերց փոխել զբնութիւնս իւրեանց:

Գարուն երաշտացեալ. Ամառն անձրևայոյզ. Աշուն ձմեռնացեալ. Ձմեռն սառնակառոյց՝ մրրկալից յերկարացեալ. Հողմք բքաբերք՝ ախտահաւաքք. Ամպք հրընկէցք՝ կարկտածուք. Անձրևք անժամանակք, և անպիտանք. Օդք դառնաշունչք, և եղեմնարկուք. Ջրոց առաւելուլ անօգուտ՝ և նուազելն անհնարաւոր. Երկրի անբերութիւն սպողոյ, և անաճելութիւն կենդանեաց. այլ և՝ սասանմունք, և դրղդմունք. և 'ի վերայ այսր ամի՝ խռովութիւնք յամ կողմանց. ըստ այնմ, թէ՝ չիք խաղաղութիւն ամբարշտաց: Զի՝ Թագաւորք տիրեալ խիստք, և չարաչարք. բեռինս բառնալով ծանունս, և դժուարակիրս. Հրամանս տալով խիստս՝ և անտանելիս: Վերակացուք անհարթարարք՝ անողորմք: Սերելք

դաւ

դաւաճանեալք՝ եւ թշնամիք զօրացեալք։ Հաւատ վաճառեալ ընդ մնոտի կենցաղոյս. Հէնք եկեալ անհնարք, եւ յոլովից կողմանց։ Կործանումն տանց, եւ յափշտակութիւն ստացուածոց։ Կապումն գլխաւորաց՝ եւ բանտք յայտնեաց։ Յօտարութիւն վտարումն Ազատաց. եւ անթիւ նեղութիւն Ռամկաց։ Առումն քաղաքաց՝ եւ քանդումն ամրոցաց։ Աւերումն աւանաց, եւ հրդեհումն շինուածոց։ Սովք անբաւք՝ եւ հիւանդութիւնք, եւ մահք բազմօրինակք։ Ածպաշտութիւն մոռացեալ՝ եւ ակնկալութիւն գեհենի։ Յորմէ պահեսցէ զմեզ Տ՟ր Ա՟ծ, եւ զամենեսեան՝ որք երկիրպագանեն նմա ճշմարտութեամբ. եւ նմա Փառք յաւիտեանս. Ամէն։

ԿԱՐԳ.

Կորզեալ հատուածք սոյն [illegible] [illegible].
և Մովսէսի Խորենացւոյ [illegible] հօրն։
Յորս և պատմէ [illegible] [illegible] մեր նախնեացն
[illegible] [illegible] [illegible] Յաբեթեան հօրն։

Որք տէրութե՟ երընէին հայկեայ զաշխարհս կալան·
Մինչեւ ց'Արշակ արքայ հզօր պարթեւեա կան։
Որդի ըշհայր փոխանակեալ հետեւեա կան·
Եարբեճախտեալ Նոցին զանուան յաջորդող կան։

Համառօտ ցանկ՝ և ցուցակ իրաց գլխաւորաց, որք պարունակին յայսմ գրքոյս Պատմութեանց։

Թուեալք են Ցանկոյս զնշանահամարն ցուցանեն։

Աբգար, կամ՝ Աւագայր, որդի Արշամայ, Թագաւորէ 165
Սա դառնայ յարևելից 171
առաքէ առ Մարինոս զարս գլխաւորս՝ որք տեսին զՓրկիչն 173
գրէ Թուղթ առ Փրկիչն, և առնու զպատասխանին· 174
գրէ և առ Տիբեր, առ Ներսեհ առ Արտաշէս, 178
Աբիւդենոս զինչ՝ սակս Նահապետացն ասէ։ 12
Ադդէի կատարումն, 185
Ազգաբանութիւն երից որդւոցն Նոյի, է՛ հաւասար ց'Աբրահամ, ց'Նինոս՝ և ց'Արամ, 17
Աժդահակայ տեսիլն· 87
Սա գրէ առ Տիգրան, սակս Տիկ

նու

նութեան Տիգրանուհւոյ. 91
Սորա նենգութիւնն առ Տիգրան, և մահն. 93
Ալանք արձակին 'ի Հայս՝ 210
Աղուանք, ընդէր այսպէս անուանեցան. 127
Ամասիա որդի Արամայիսայ, 46. ծնանի զորդիս Գեղամ, Փառոխարի՝ և Ցոլակ. 46
Ամատունիք՝ ոյք, ուստի, և որպիսիք. 224
Ամք Նախահարցն՝ և ծնունդք նոցա. 13
Այրարատ՝ ուստի կոչեցաւ. 61
Անակայ գալուստն. 255
Անան. 184
Անգիր հին գրոյք՝ որք պատմեցան 'ի մէջ Փիլիսոփայից Յունաց. 27
Անի ամուրն առաւ՝ և գերեցաւ գանձն. 352
Անիշխանութիւնն Հայոց. 417
Անոյշ առաջին կին Աժդահակայ՝ ընտանեօքն հանդերձ, բնակեցուցանի յայլ և յայլ տեղիս 'ի Տիգրանայ. 97
Անուշաւան սօսանուէր. 74
Անտոնիոս առնէ զԸ ամբաստ, 156 սմ խրոխտայ 'ի վերայ արտաւազդայ. 159.

Անտիոքու թագաւորեցուցանելն զԽոսրով, և այլ գործք. 316
Աշխարադ գայ առ Խոսրով. 390
Ապահունեաց նախարարութի. 130
Առաւեղենեաց տոհմն ուստի՞ սերեցաւ 225
Ասպահապետի Պալհաւ, 170
Աստղիկ քոյր Զրուանայ՝ Տիտանայ, և Յապետոսթի, լինի պատճառ խաղաղութեան. 25
Ած՝ ընդէ՞ր զեօթն ազգան ջնջեաց յերեսաց որդւոցն Իէլի։ 26
Ասքանազեան գունդ. 79
Արագած լեառն անուանի 45
Արամ որդի Հարմայ, յորմէ ազգ մե՛ր ասի Արմէն. 49
Արամայ գովասանք, և յաղթութի Մադեսայ Մեդացւոյ. 51
սա՛ լայնացոյց սահմանս Հայոց աշխարհին. 53
Արամենակ որդի Հայկայ, և ճառ նորին 43
Արայ գեղեցիկ, 57. սպանանի ՚ի Շամիրամայ. 59
Արայ արայեան. 74
Արգամ 200
սա՛ մեծարի յարտաշիսէ: 206
Նոյնս որդւովքն հանդերձ սպանանի. 204.

արե.

Արեւմտեայք ուսուցանէին . 424
Արիստակէս Սուրբն գտանի 'ի Նիկիայ . 295
վարք՝ և մահ սորին . 299
Արծրունիք՝ կամ արծուիունիք 124
Արմայիս որդի արամենակայ ծնանի 45
շինէ յիւր անուն զարմաւիր : 46
Արշակ մեծ՝ արքայ Պարսից, և Պարթևաց՝ ազգաւ Պարթև 30
սա թագաւորէ, և կոչի Քաջ 113
սա թագաւորեցուցանէ Հայոց զեղբայրն իւր զՎաղարշակ 115
Արշակ մեր առաջին՝ որդի Վաղարշակայ թագաւորէ 134
Արշակ որդի Տիրանայ թագաւորեցուցանի 'ի Շապհոյ : 336
սա արհամարհէ՝ զԹագաւորն Յունաց . 337
սմա կին ածի օղոմպիադ կոյսն 342
խռովութի̃ մ̃ր ընդ Գնէլոյ . 342
սա ժպրհի առնուլ զկին Գնէլոյ զՓառանձեմ, յորմէ եղև Պապ 346
սորին պատերազմ ընդ իւր Նախարարսն . 355
գրէ թուղթ առ վաղէս կայսրն 358
կոտորէ զա̃մ Նախարարսն . 360
հրամայեաց քարշել զԵրանելին Խադ . 362

եր

երթայ առ շապուհ անդարձ 355
Արշակ որդի Պապայ պատերազմաւ պարտեալ ՚ի Խոսրովայ, և հիւանդացեալ մեռանի. 393
Արշակաւան՝ որպէս շինեցաւ, և կոտորեցան բնակիչքն 351
Արշակունիք, յումմէ անուանեցան. 111
Արշամ, կամ արջամ թագաւորէ. 159
սա երկրպագէ Երուսաղէմի. 164
Արշաւիր Պարսիկ 168
Արշօր Պարսից թագաւոր. 159
Արշօր Սասանականն իշխէ Հայոց. 324
Արտաշատ քաղաք շինի 209
Արտաշէս որդի քաջին Արշակայ 114
Արտաշէս առաջին մեր թագաւոր որդի Արշակայ 137
խաղալն սորա ՚ի յարևմուտս պատերազմի աղագաւ 139
վկայութիւնք տիեզերակալութեանն սորա. 140
Արտաշէս որդի Արշօրի, ՚յաբգ՚րու թագաւորեցուցանի ՚ի Պարսից 169
Արտաշէս որդի Սանատրկոյ 191
աջողակի մտանէ յտ͞ իւր 200
խնամութ͞ի սորա ը͞ ալանաց 212
Արտաշէս որդի Արշակայ վերջնոյ
թա

Թգ՟ուր կացուցանէ Պարսից, 217
Արտաշէս ընդդիմանայ Հռոմայեցւոց Կայսեր Դոմիցիանոսի 220
Արտաշէս բազմամարդացոյց զաշխարհս Հայոց. 223
Արտաշիսի ժամանակագրութի՟ն. 225
Արտաշիսի մահն և պատուէլի Թաղումն 226
Արտաշիսի Պարսից Թագաւորի ցեղքն 248
Արտաշիր դիմէ ՚ի Հայս 260
սա՛ չինէ զՀայս 261
Արտաշիր գրէ առ Սուամ Շապուհ. 405
Արտաշիր՝ որ և Արտաշէս որդի Սուամշապհոյ Թագաւորէ 426
Արտաւազդ Թագաւորէ. 157
Արտաւազդ որդի Արտաշիսի Թագաւորէ 230
Ափրիկանոս 136
Բագարան. 195
Բագրատունիք Թագադիրք արշակունեաց. 116
Բագ՝ յորմէ Բզնունիք. 44
Բազափրան Ռշտունեաց Նահապետ, լինի Հայոց՝ և Պարսից Ասպարապետ. 152
Բակուր Բդեշխն՝ որոշի ՚ի միաբա

նու

նութենէն Հայոց։ 313
Բարքուայ, 227
Բերիոս՝ կամ, Բիւռոս արդարախօս սիբիլլեայ՝ զանցս յո̅յ քան զաշտարակաշինութ̅ին պատմէ, 24
Բզնունական նախարարութ̅ի 130
Բէլ՝ է Նեբրովթ. 29
սա հրաւիրէ զՀայկ 'ի հնազանդութիւն. 38
զօրս ժողովէ՝ փութալ պատերազմաւ 'ի վ̅ր Հայկայ. 39
վառեալ լինի սպառազինութ̅բ 40
նոյն Բէլս Տիտանեան կործանի 'ի Հայկայ։ 42
Բիւզանդիու ժողովք ընդդէմ Հոգէմարտի 364
Բիւրասպի աժդահակայ 103
Բրքիշոյի չարութիւնն. 441
Գառնւոյ շինուածք. 296
Գեղ՝ լեառն, Գեղաքունի շէնն, և ծովակն, յորմէ անուանեցաւ։ 47
Գեղամ որդի ամասիայ, 46
Գեղամէ, որ յետոյ Գառնի ասացաւ, շինեցաւ 'ի Գեղամայ, 48
Գերեզմանք, ուր անկաւ Բէլ՝ 42
Գնել տակառապետ՝ և գնունի 153
Գնել գտանէ զշնորհս 'ի Սայաւրէն. 342

սորա ընդ արշակայ խռովութն 342
սպանմանի 345
Գնթունիք · 123
Գնունիք 124
Գործակալք Հռոմայեցւոց հաստատեն զտունս գանձուց Եդեսեայ · 194
Գրիգորի Լուսաւորչին՝ ծնունդ, վարք՝ և որդիք ։ 266
արարք նորին, և մահն ։ 298
Գրիգորիսի կատարումն ։ 311
Դարեհ 206
Դանիէլ Սուրբն, աշակերտ Սրբոյն Գրիգորի վկայէ · 330
Դանիէլեան Նշանագիրք, 407
Դիմակսեան, ընդէ՞ր ասի · 206
Դպրութիւն Հայոց, Վրաց, և աղուանից · 411
Եդեսեա շինի 167
Ենան սուրհանդակ Աբգարու · 176
Ենանոս ասպետ, և թագակապ արշամայ · 160
Ենովս առաջին յուսացաւ կոչել զԱստուած ։ զինչ այս 14
Երասխ գետ յումմէ կոչեցաւ 46
Երուանդ սակաւակեաց 79
Երուանդ արշակունի · 190

շինէ զԵրուանդակերտ. 197
պատերազմի ընդ Արտաշիսի 201
Եւսեբի Պատմագիրք Թարգմանեցեալ 'ի Հայ Լեզու 136
Եփեսոսի ժողովն 431
Զամես, որ է Նինուաս, առ որով՝ աւուրք աբրահամու բաւեն 70
Զուրայ նահապետ գնունեաց 161
Զուրայ առեալ զզօրսն, դառնայ 'ի Յուլիանոսէ, և սատակի ազգաւ։ 330
Զրադաշտ Մոգ՝ և Նահապետ Մարաց. 66
Ընդէր, ոչ 'ի Պարսից՝ և ոչ 'ի Քաղդեացւոց, այլ 'ի Յունաց եառ քերթողն զիւր պատմութի. 4
Ընդէր՝ այլքն 'ի Պատմագրաց՝ ոչ միաբանեցան սակս Նահապետացն 11
Ընդէր՝ Նոյ միայն Որդի յորջորջեցաւ։ 15
Թագադիրք մերոց արքայից, Բագրատունիք 123
Թագաւորք՝ և բնիկք աշխարհին Հայոց. 78
Թագաւորաց ցեղք, յորոց Պարթեւք. 246
Թադէոս առաքեալ 176

Թարգ

Թարգմանիչք չուեն 'ի Բիւզանդիոն. 430
Թէոդոսն մեծ թագաւորէ 363
Թուղթ Ս. Որթանիսի, առ Կոստանդոս Կայսր 314
Թուղթ Կոստանդեայ առ Ս. Որթանէս. 315

Լիկիանոս պարտի. 289

Խադայ Եպիսկոպոսի վարք 360
Սա՛ քարշիւ, և քարկոծիւ հրամայեցաւ 'յարշակայ, 362
Խոռ, յորմէ Նախարարութիւն Խորխոռունեաց. 43
Խոսրով որդի Վաղարշակայ՝ թագաւորէ 244
այլ՝ և այլ արշաւանք սորա՛ 251
Խոսրովիդուխտոյ գովասանք։ 272
Խոսրով փոքրն՝ թագաւորէ, փոխէ զարքունիս, և տնկէ զանտառն՝ 319։ սա՛ վճարի, 323
Խոսրով մեծարէ զՍահակ ասպետ 388։ Սա՛ միապետէ Հայոց, 398 կապի՝ 400։ կրկին թ՟գւրէ 413
Խորենացւոյն յառաջաբանութ՟ի առ 'ի Սահակ Բագրատունին, 1

Ծննդոց անտառ. 196
Ծոփաց Նախարարութ՟ի 130

Կադմոս փախստական՝ 'ի Բելայ՝ առաքէ՛ առ Հայկ զքաջընթացն 38
Կամսար ազգական Տրդատայ՝ գայ առ Տրդատ․ 287
ու՛՝ ընդէր ասի Կամսար, 288
Կասպխականքն ապստամբեն յարտաշիսէ մերձ 217
Կարէն որդի Արշօրի, 169
Կարենի Պալհաւ, յորմէ Կամսարականն․ 170
Կարնոյ քաղաք հիմնի՝ և շինի 426
Կիւրոս սիրով միաբանի ընդ Տիգրանայ, 85
Կղէոպատրայ դշխոյ եգիպտացւոց 157
Կոշմ դուստր Արշօրի 169
Կոստանդիանոս առնէ կին զՄաքսիմինոսայ․ և թէ՝ որպէս հաւատայ 'ի Քս̃, 275
Կոստանդնուպօլիս շինի 289
Կրասոս զօրաւոր հռոմայեցւոց 150
Համեմատութ̄ի երից ազգացն․ Աբրահամու, Նինոսայ, և Արամայ․ 72
Հայկ ապստամբի 'ի Բելայ․ 36
Հայկաշէն գեօղ․ 37
Հայկ խստութեամբ պատասխանէ պատգամաւորացն Բելայ 38
Ամ հանդերձ արամբք քաջօք,

որդւովք, և Թոռամբք իւրովք չուէ ընդդէմ անձոռնի զօրութեանն Բելայ 39
սորին ծնունդք՝ և գործք նց 43
Հայկայ հայք, ուստի անուանի: 43
Հայք դաստակերտ, և Հայոց ձոր 42
Հայք մասնաւորին ընդ հարկաւ Հռոմայեցւոց. 160
սոքա՛ բաժանին յերկուս, և ծառային երկուց ազգաց 384
սոցա՛ չար միաբանութիւն ՚ի խորհուրդ կորստեան անձանց 437
բարձաւ թագաւորութիւնն ինքեանց կամաւ՝ և անարգեցին զաթոռ Եպիսկոպոսապետութեն 439
անիմաստասէր բարքն հայոց 7
Հարմա՛ որդի Գեղամայ՝ ծնանի 47
Հարք. 37
Հեղինէ կին Աբգարու, 187
Հերովդէս անցանի առ Հռոմայեցիս, 155: լինի թագաւոր յԱնտոնինոսէ Կայսերէ Հրէից 156
բազո՛ւմ շինուածս առնէ՝ և գրժտի ընդ Արշամայ 163
Հինքն՝ ոչ ամենևին հաւասար Մօսիսի ձաւեն 22
Հիւրկանոսի ձառն, 153
Հրաշէայ ընդդէր ամ 79

Հրաս

Հրատան ։ 49
Ճենաստանաց գովասանք 270
Ճենազն Մամգոն՝ սատակէ զՍլկունիս ։ 277
Մաժաք, 55 ։ անուանի Կեսարեա․ 151
Մամիկոնէից ազգ՝ ուստի 269
Մանաւազ՝ յորմէ ազգն Մանաւազեան 44
Մանաւազեան՝ նախարարութի 130
Մանաճիհր մեղանչէ Յակոբայ, և սատակի 317
Մանդակունիք՝ յորմէ ասացան 130
Մանդակունեաց ազգն՝ կատարի յԱրտաշրէ․ 263
Մանեայ Այր՝ ընդէ՞ր ասի 298
Մանովազայ հայր Աբգարու, եղբայր Տիգրանայ, որդի Արտաշիսի 160
Մասիս լեառն՝ ուստի անուանի 47
Մարմէտ զի՞նչ՝ և զմէ ասի 204
Մարտն անպարտելի Բէլայ՝ և Հայկայ․ 41
Մեհրուժան ընդ Վահանայ Մամիկոնէի գան 'ի գերել զաշխարհ Հայոց․ 368
չարիքն սորա 'ի Հայս․ 369
մահ ամպարիշտ սատակի ։ 376

Մեա

Մեստրայիմ, մեծրայիմ, այսինքն Եգիպտոս իմանի 20

Մեսրոպայ Երանելւոյ՝ վարք 394
սորին Նշանագիրքն 'ի վերնոց շնորհաց. 409
տաղքումն 'ի Բիւզանդիոն, 419
կրկին Աւետարանելով Հայոց, գայ 'ի Գաւառն Գողթան 428
փոխումն յաշխարհէս. 451

Միհրդատ քեռորդի Տիգրանայ, ապստամբէ 'ի քեռւոյն իւրմէ 151

Մծբին Նորոգի. 181

Մորփիլիկեայ տայ պատերազմ ընդ Վաղարշակայ. 138

Մովսիսի քերթողի պնդխտութն 433

Յազկերտ Պարսից Թգւոր 449

Յուլիանոս գրէ առ Տիրան 331

Յուսիկ որդի Վրթանիսի յաջորդէ զաթոռն 326
մահ որդւոց սորին. 333

Նախարարքն Հայոց յիւրաքանչիւր ժառանգութի փոփոխին 387
որք էին առ Արշակայ, դառնան առ Խոսրով 395

Ներսիսի Սրբոյ, վարք՝ և բարեկարգութք, 338. արտասահման լեալ՝ անկանի յանբնակ կղզի 359
մահու դեղով լուծանի 'ի կենցաղոյս, 377.

Նե

Նիկիոյ ժողովն. 293
Նինոս ո՛չ է Բէլ՝ եւ ո՛չ որդի Բելայ 20
Նինուաս որդի Շամիրամայ՝ եւ
Նինոսի, սպանանէ զմայր իւր, եւ
թագաւորէ Ասորեստանի. 68
Նոյ միայն որդի անուանի 15
Նունի պատճառ փրկութեան վրաց 282
Շամբաթ, որ եւ Սմբատ, յորմէ
ազգն Բագրատունի 80
Շամիրամ պատերազմաւ սպանա-
նէ զԱրայն գեղեցիկ, 58
շինէ զքաղաք՝ եւ զապարանս 61
կոտորէ զորդիս, փախստական լի-
նի 'ի Զրադաշտէ, եւ մեռանի
յորդւոց իւրմէ 66
զնմանէ առասպելի։ 69
Շամուէլի չար գործքն 447
Շապուհ պարտի՝ եւ Հնազանդի
Կոստանդիանոսի՝ 386։ պատե-
րազմի ընդ Կոստանդեայ 326
խաբէ զՏիրան՝ գրէ նմա ըղ
թուղթ յորմէ կուրացաւ Տիրան 335
պարտի 'ի Տիգրանակերտի 349
գրէ առ Տիգրանակերտեցիս 350
բնաբարձ քանդէ զՏիգրանա-
կերտ՝ 353. չարիք սորա՝ որք
անցին 'ի Հայս 367
գրէ առ Նախարարս Հայոց 386

Շապուհ Պարսիկ՝ Հայոց թագաւորէ, 415. եպերի յԱտոմայ 415
Շարայ որդի Արմայիսայ յորմէ Շիրակ Գաւառն. 46
Ոլիմպոս լեառն՝ որ վա՛ղ Դիւց ընկէց կոչիւր. 25
Ոլոմպիոդորոս Փիլոսոփոս պատմէ իմաստասիրա́ց զանգիր զրոյցս 27
Ողբերգական մեղադրութիւն ազգին Հայոց 304
Ո՛ղբք՝ վասն բառնալոյ Թագաւորութեանն Հայո́ց՝ և Եպիսկոպոսապետութեանն 453
Որ ինչ՝ յետ վախճանին Տրդատայ ընդ Մեծն Վրթանէս. 310
Պալհաւկաց առասպելք. 249
Պակարո́ս՝ Հա́յր Ասորուաց թագաւորէն, ընդ առաջ լինի Բարզափրանայ. 152
Պա́պ որդի Արշակայ թագաւորէ 371 սա́ դե́ղ մահու տա́յ Սրբոյն Ներսիսի, և լուծանէ զնա́ 'ի կենաց 376. սպանանի 'ի Թէոդոսէ 379
Պատճէն թղթոյն Հնդկից 178
միւս ևս, թղթո́յն Հնդկից 419
Պատմութի Տոհմիցն Հայո́ց գտաւ 'ի Մատենէ Մարիբաս Կատինայ. 30

Պարոյր · 75
Պարսիկք պատերազմեն ընդ Հայոց · 324
Պարսից՝ և Յունաց խաղաղութի 261
Պերմելեանայ պատմութիւն · 258
Պտողոմէոս Եղբայրասէրն զայլ ազգեաց Մատեանս 'ի Յոյն լեզու փոխարկեաց · 5
ընդէ՞ր սա՝ Եգիպտացւոց լեալ Թագաւոր, Յունաց անուանի 5
Պրոմիթէոս զի՞նչ՝ և ո՞վ · 29
Պրոտոս Արմէնիա · 55
Պոմպէոս զօրավար Հռովմեցւոց· 148
Սաթինիկ Օրիորդ Ալանաց 212
Սահակ Բագրատունին դումի 2 սա միայն խնդրեաց 'ի Քերթողէն զՊատմութիւն Նախնեաց Հայոց · 10
Սահակ Սուրբն փոխանակ Ներսէսի կացուցանի · 378: ունի զԱթոռ Եպիսկոպոսութեն · 399
երթայ 'ի Տիզբոն՝ և դառնայ պատուով · 402
արձակի 'ի Պարսից, հանդերձ Սամուէլիւ աթոռակալաւ 442
փոխի յաշխարհէս · 450
Սահակայ Ասպետի Նահատակութիք 'ի Վանանդացիս · 389

Սա

Սանասար որդի Սենեքերիմայ լնու զՍիմ լեառն 82
Սանատրուկ, 184: Թագաւորէ 186: ընդէ՛ր ասի սանատրուկ 188
Սանդխտայ վկայութիւնն. 184
Սիմ, որդի Քսիսութրեայ 27: 'ի սմանէ անուանի Սիմ լեառն 28
Սիսակ՝ որդի Գեղամայ, յորմէ Սիւնիք՝ կամ Սիսականք. 48
Սլկունիք, 130
Սմբատ Բագրատունի, 191
Թագաւորեցուցանէ՛լ խնդրէ զԱրտաշէս. 197: մեծարի յԱրտաշիսէ, 206: որպիսի լինիլն 216
Սուրէն որդի Արշօրի. 169
գի՛ր առ Խոսրով. 390
Սուրէնի Պահլաւ, յորմէ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն 170
Սպանդունի: 124
Վաղէնտինիանոս գրէ առ Արշակ 337:
Վահան գի՛ր առ Խոսրով 390
Վահանայ Ամատունւոյ՝ Նահատակութիւնք. 322
Վահունիք, յորմէ՛ ասացան 130
Վաղարշ որդի Տիգրանայ Թագաւորէ, 240
Վաղարշակ առաջին կարգեաց զԱ-
րև

ելևմուտս՝ և զհիւսիս մերոյ աշ
խարհին, 120։ չուէ 'ի Մծբին
122։ յորինէ զթագաւորութի
հայոց, և զթագաւորական՝ կախ
արարութեանս. 122
Վաղարշակ՝ և Արշակ, որդիք Պա
պայ՝ թագաւորեն. 382
Վայկունիք ուստի ասացան 147
Վան՝ ընդէր ասի. 204
Վասակ եղբայր Վարդանայ՝ փա
նանէ զՏիրիթ, և զՎարդան 349
Վարազդատ թագաւորէ. 380
սա երկաթեղէն կապանօք տա
նի 'ի Թուլիս Կղզի 382
Վարաժ, յորմէ տունն Վարաժն
ունի, 49. և 138։
Վարբակիս Մար 76
Վարդան՝ և Տիրիթ նենգեն ըզ
Գնէլ. 345
Վռամ Շապուհ եղբայր Խոսրո
վայ թագաւորէ 401
Վրթանէս գրէ առ Կոստանդու
կայսրն 314։ փոխի յա՟էս 32
Տարբան, որդի Քսիսութրեայ
յորմէ Տարոն՝ և Ցրոն 28
Տիգրան հուժկու՝ և յաղթող 8
միաբանի սիրով ը՟ Կիւրոսի 8
սորին զարմք՝ և ցեղք 99
Տիգ

Տիգրան միջին՝ որդի արտաշիսի 144 պատերազմի ը̅ Հռոմայեցւոց 149 միաբանի ընդ Արշկի Պարսից թագաւորի 151
Տիգրանայ Միջնոյ գործք, 237
Տիգրանակերտեցիք յաղթեն շապուհ, 349. բնաբարձ քանդին ՚ի Շապհոյ. 353
Տիգրանուհի քոյր Տիգրանայ լինի կին Աժդահակայ 85 ընդէր յուղարկեցաւ ՚ի Տիգրանակերտ. 96
Տիտան, այսինքն՝ Քամ, տիրէ մասին ժառանգութեանն Զրուանայ. ջ̅, Սեմայ: 25
Տիրան որդի Արտաշիսի թագաւորէ՝ 232
Տիրան որդի Խոսրովու թագաւորէ՝ 325. իջանէ ը̅ յառաջ Յուլիանոսի, և պատանդս տայ նմա, 327. կուրացաւ ՚ի Շապհոյ 335 մեռանի, 344
Տիրիթ սպանանի. 348
Տրայիանոս Կայսր թգ̅ւորէ 221
Տրդատ Բագրատունի՝ ուղխաճ ազգ. 234
Տրդատ՝ եղբայր Արշակայ՝ և հայր Գնելոյ, սպանանի ՚ի Կայսերէն 341

Գրոց 483
Տրդատայ՝ 'ի տիս մանկութե՛, նահատակութիւնք․ 254
սորին յառաջ քան՝ զհաւատալն նահատակութիւնք․ 272
առնէ ինքեան կին զԱշխէն, և հանդիպել հաւատոյ․ 274
պատերազմէ յաղթանս, և Թագաւորն Բասլայ միջակտոր առնէ․ 280
գովասանք, անցք՝ և մահն՝ 303
Տրունիս՝ ուստի՞ ասի։ 207
Ցոլակե՛րտ։ 47
Փառախոտ՝ ուստե՛ ասե՛՝ 47
Փառներսեհ յաջորդէ զԱթոռն․ 333
Փարսան Թագաւոր Վրաց 203
Փրկական Խաչն Քի գտանի 289

Վախճան ցանկի։

Ամենազօր Բանն. որով գոյացեալ հաստատեցան Էակք հանուրք, և անթուելեօք, և գեղապաճոյճ, չքնաղանկար զարդուք՝ և վայելչականօք շքեղութեամբք՝ եղան՝ կարգեցան՝ և կացին յիւրաքանչիւր կայանի՝ անվրէպ, և անայլթաք հպատակութ̃բ. որովք՝ յաւէտ, և անզրաւ յաւիտենից օրհնի, և փառաւորի անվախճան շնորհակալութ̃բ, և երկրպագութ̃բ Աստուածայինն Բան, հանդերձ Հարբ, և Ամենասուրբ Հոգւովն՝ անսպառ ամենակալ. Ամէն:

Յորմէ օժանդակութիւն, և նպաստաւորութիւն առընկալեալ Ես հմւակ յետին ՚ի դիրս Մանկանց Եկեղեցւոյ՝ տունկս սաղարթապաճոյճ, և անդաստանս տատասկաբեր, Թովմաս Եպիսկոպոս, ՚ի Գաւառէ Գողթնեաց ՚ի մասնէ Վանանդու. տարադրական հողմավարութ̃բ անցի ՚ի Կալուածս Եւրոպէու, և մեծաջան աշխատութ̃բ փութացայ ժամանել ՚ի գեղեցկադիր, և ամ̃ գովասանութ̃ե արժանաւոր քաղաքն յԱմստրդամ, առ՚ի յօրինել՝ և հոգալ զբուն գործին

Տպա

Տպագրութե՟, և զՏախտակսն Պ
ընծեաց՝ մ՟տ փորագրելոյ զԳիրս հա
մայնից Գաւառաց, զորս երկամբե
բազմօք, և յոգնակի ծախիւք կատա
րեցաք ընդ Մատթէոսի, որ է որդ
Եղբօր Մօր իմոյ, զոր նախ յղեցի 'ի
նոյն քաղաք, սակս պատրաստելոյ ըզ
պարագայս առաջիկայ Գործոց մե
րոց, և զկնի կազմելոյ՝ և յօրինելոյ
զոր պա՛րտն էր, և պատեհ. հաճեցայ
տպել զՄ տպագրութիւն Ազմ
երախտի Առն Մօախի Վերթա
ղաՀօրն, իբր՝ Առաջին Պտուղ Նա
րախտեա՛ց՝ իմոց աշխատութեանց,
և իմովք ծախիւք։ Այլ 'ի լընել
ձեռնամուխ սմին իրին՝ մինչև ցը
աւարտումն, կրեցաք՝ և արբաք
զյոգնազան, և զանբերելի դառնու
թիս, և զտուժանս 'ի մերայնոց Մ
տումնատեա՛ց, Հանապազատուտ՝ և
Զարարուէստ Արանց, որք մոր
թովք ոչխարենիւք պարուրեալ
զինքեանս, իսկ՝ 'ի ներքուստ յա
էին գիշատող քանզ՝ գայլս, և բե
րանք նոցա լիք դառնութե՟, և նեն
գութե՟՝ անհարազատ ամ՟ բարուց,
որոց կատարածն՝ ըստ գործոց իւ
րեանց։ Բայց սակայն՝ աղաչեմ մե

ծառ

ծաւ թախանձանօք զդասս Եղ
բարցդ Սրբազանից, 'ի պատահելն
ձե՛ր ամին, ընթեռնլով՝ և տեսանե
լով. եթէ՝ գտանիցի 'ի սմա սխա
լումն ինչ, ներել մաղթեմ։ զի՝ ո՛չ
հաւանութե՟ մերով եղան այնո
քիկ, այլ՝ յօրինակէն լե՛ալ ընկալ
ջիք. զի՝ զմի՛ միա՛յն ունէաք օրինակ,
և այն նոտր գրով էր։ վասն որոյ՝
կարեկցութեան սիրով՝ հայցեմ,
ներե՛լ մեզ։ Եւս՝ և կողկողագին
ձայնիւ՝ խնդրեմ, 'ի սրբութենէ
ձերմէ, յիշե՛լ զՊատկերս, և զԵն
թակայս յոգնազան ախտից՝ և ցաւ
ոց, զԹոմաս՝ զՏարաքեցեա՛լս 'ի
Մանկանց Եկեղեցւոյ Սրբոյ. և
զՀա՛յրն իմ զՆուրիջան Նուրիջա
նեան, և զՄա՛յրն իմ զԳիլդար հա
մեստակենցաղ, և զհամօրէն ըն
տանիս նոցա, զկենդանիս, և զհան
գուցեա՛լս. ընդ նոսին՝ յիշեցէք 'ի
Քս̅, և զԵղբա՛յրս իմ զԳրիգոր,
և զԱրիստակէս, որք հանգուցե՛լք
են 'ի Քս̅, և զՅակոբ՝ Կրտսեր
Եղբա՛յրն իմ կենդանի, և զՔոյրն
իմ հանգուցեա՛լ 'ի Քս̅, զՇանան.
նա՛ և՝ յիշե՛լ մաղթեմ, զՀարազատ,
և զՁեռնասո՛ւն Գործակալս իմ,

զՄաւ

զՄատթէոս՝ զկատարեալ հմուտն
յԱրուեստ Տպագրութեան, որ է
որդի Եղբօր Մօր իմոյ. և զԵղբօր
որդի իմ, զՂուկաս Փիլիսոփայ, որ
է Վարժ զանազան Լեզուաց. Յի
շեսջի՛ք և զԾնօղս նոցա 'ի Ք՛ս,
հանդերձ ընտանեօք իւրեանց.
ուստի՝ և զՏրիտուր սիրոյ ձե
րոյ, և երախտեաց՝ առաւե
լապէս հատուսցէ Քրիս
տոս՝ յաւուր աներեկի.
Ա
մէն.

Զանձամբ յառաջեաւ բեռամբել յանձնառելոյ ամենայն Ժողովրդեան
ես անպիտան Թովմաս Վարդապետ Վանանդեցւոյն.

* * *